

Գ. ԱՐԴԻՇՎԻԼԻ ՍԵԿ. և ԱՐԴԻՇՎԻԼԻ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԿՈՒՐՍ

ԱՐԱՋԻՆ ՄԱՍ

Ֆ. ՌՈՒԵԲՈՒՀ ՅԵՒ Ե. ՌՈՒԵԲՈՒՀ

541

հ-61

ՅԱՀԱՆԱԿԱՆ Հ. 1901 թ.

ՅԻՉԻԿԱԿԱՆ ԳԻՄԻԱՅԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԿՈՒՐՍ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԹՈՒԹԱՏՐՎԱՇ Ե ՈԽՈՅՑ ԼՈՒԺՔՈՂՈՍԱՏԻ ԿՈՂՄԻՑ
ՎՈՐՊԵՍ ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հ



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ 1938

A II
14931

В. Родебуш и Э. Родебуш
ВВЕДЕНИЕ
В ФИЗИЧЕСКУЮ ХИМИЮ
ИЗДАТЕЛЬСТВО ГОСУНТА

ԱՌԱԽԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԱՆԸ

Մեծ խղում գոյություն ունի ֆիզիկական քիմիայի արդի վիճակի և այդ գիսցիպլինի դասագրքերի միջև։ Համարյա ըոլոր դասազըրքերը աչքի յեն ընկնում միանդամայն վորոշակի նեխածությամբ, նրանք բոլորն ընգորինակում են կամ, լավագույն դեպքում, հետևում են վ. Ոստվագրի եպոխայի դասագրքերին։ Վոչ միայն բացակայում ե առանձին գլուխների միասնությունը, այլև մի քանի գլուխներ շարադրված են միանդամայն հնացած ձևով, աչքաթող անելով գիտության մի շարք խոշորագույն նվաճումները, Վորպես տիպիկ որինակ կարող ե ծառայել ուսմունքը լուծույթների մասին։ այստեղ վորպես կանոն տիրապետում ե ոսմոտիկ ճնշման մեթոդը, փորն իր ժամանակին պատմական մեծ դեր և խաղացել ֆիզիկական քիմիայի զարգացման գործում, բայց այժմ արգելակում ե ֆիզիկայի և քիմիայի այդ բաժնի ճիշտ ըմբռնումը։ Նույն վիճակումն են նաև քիմիական ինամակցության, ջերմումակության և այլ բաժինները։ Ֆիզիկական քիմիայի դասագրքերի մի այլ չափազանց տարածված բացն ել այն ե, վոր նրանք լեցուն են ելեմենտար տեղեկություններով ֆիզիկայից։ Դասագրքերի հեղինակներն այն կարծիքին են, վոր ֆիզքիմիայի սկսնակ ուսումնասիրողը կամ չի իմանում և կամ լիովին մոռացել և ֆիզիկայի կուրսը. բավական ե հիշել ուսմունքը գաղերի, մակերեսային լարվածության, ելեկտրական միավորների մասին և այն, տեսնելու թե ինչքան եղ և նվիրվում դասագրքում և ինչքան ժամանակ և խըլքում ուսանողից ֆիզիկայի այրութենք կրկնելու համար։ Բայց բացի ժամանակի կորուստից պետք ե նկատի ունենալ նաև, վոր տարրական գիտելիքների ըեռը դասագրքում ցած ե քաշում հեղինակին, հոգեբանորեն խանդարում և նրան բարձրանալու արդի գիտության մակարդակին։ Հիշենք, որինակ, թե ինչքան տեղ ե հատկացվում անհատ գաղերի սովորական ուսմունքին և վոչ մի խոսք չի ասվում գաղերի խառնուրդում տեղի ունեցող յերևույթների մասին, մանավանդ կրիտիքական մարդում։ առանց այս ուսումնասիրելու գժվաը ե հասկանալ գաղերի, արդի տեխնիկայում խոշոր գեր խաղացող խորը ցրացմանը ուղեկցող յերեսույթները։

Մոգերուշների ֆիզիկական քիմիայի դասընթացը խղում ե հին

տրագիֆիաների հետ և դրանում եւ կայանում գրքի խոշոր դրական
կողմը՝ Գրքում կան մի շարք հիանալի եջեր, վարսնք ցույց են տալիս
թե ինչպես պետք եւ շարադրել այս կամ այն հարցը Բայց այս դա-
սընթացը լրիվ չե, չափազանց համառոտ եւ և տեղ տեղ ել վոճը պահ-
պանված չե։ Գրքի թերությունն ենակ, վոր ատոմի ու մոլեկուլի հա-
մարյա արդի ուսմունքը չափազանց համառոտ եւ շարադրված և վոր,
տեհնակարեռն ե, զետեղված ե գրքի վերջում, հետևապես հավելվածի
դեր ե կտուարում և վոչ թե կազմում ե ամբողջ գասընթացը լուսա-
բանող, գրքի հետ որպանապես կապված մասը։ Այսու հանդերձ, այն
գնահատելին, վոր տալիս են Ռոդեքուշները պետք ե հասցնել մեր դա-
սատոններին և այլելի առաջավոր ուսմանողներին։ Վորպես դասագիրք
այս դիրքը կարող եւ պետք ե իր դերը խաղա Փիղիկական քիմիայի
մեր դասընթացները կազմելիս։

Ա. ՌԱԿՈՎՍԿԻ

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Կ.

Մեկ սերունդ սրանից առաջ ֆիզիկական քիմիան ուսումնասիրում եյին միմիայն մի քանի ուսանողներ, վորոնք առանձնապես հետաքրքրվում եյին այս առարկայով և վորոշ հակում ունեյին դեպի այդ գիտությունը։ Չնայելով այսպիսի համեստ սկզբնավորության, քիմիայի այս ճյուղն արագորեն զարգացավ և ժողովրդականացավ քիմիկոսների շրջանում։ Վերջին տասնամյակի ընթացքում նվիրությունը համալսարանում ֆիզիկական քիմիայի դասընթացն անցել են ավելի քան հազար ուսանողներ։

Այս գիրքն սկզբնապես առաջ երկել այն ձեռագրած դասախոսություններից, վորոնցից մի շարք տարիների ընթացքում, ոգտվել են նվիրությունը համալսարանում։ Աստիճանաբար նրանք ընդարձակվել—դարձել են դասարանական ձեռնարկ, իսկ հետո վիմագիր են հրատարակվել։ Հետագայում այս ձեռագրերը շարունակ վերանայվել և ընդարձակվել են այնքան, վոր ստացվել ե սույն դասագիրքը։ Հեղինակներն աշխատել են այս գրքում վորոշակի և պարզ վերարտադրել հիմնական սկզբունքները և այդ այնպես, վոր շարադրանքը խթանի ուսանողի հետաքրքրությունը դեպի ֆիզիկական քիմիան։ Բայց այս յերկու դիտավորությունները կարելի յե միատեղել վոչ միշտ։ Հեշտ չե առարկան շարադրել այնպես, վոր միաժամանակ շարադրանքը լինի և՛ խիստ ճշգրիտ, և՛ խթանի ընթերցողի հետաքրքրությունը։ Առարկան ձանձրալի շդարձնելու համար հեղինակներն առանց տատանվելու գոհել են շարադրանքի խստությունը։ Ուսանողին հետաքրքրելու համար գրքի մեջ մտցված ե դպալի քանակությամբ հայեցողական մատերիալ վորը թերևս կարէք ունենա վորոշ վերաքննման։

Այս գիրքը նախատեսված է կողեջի ուսանողության առաջին ուսումնական տարվա համար։ Յենթագրվում ե, թե ուսանողները յուրացրել են սովորական քիմիական գիտելիքները, լսել են ֆիզիկայի դասընթացը և ունեն վորոշ ունակություն գիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվներից ոգտվելու հաշիվները կիրառվել են, ավելի շուտ, վորպես անհրաժեշտություն, քան թե գիրքը պճապարհելու նպատակով։ Գիր-

Քը պետք ե լրացվի այնպիսի մի լաբորատորիական ձեռնարկով, ինչ-
պիս որինակ պրոֆեսոր Մակիլ և պրոֆեսոր Ֆրանսի ձեռնարկն ե-
Այս գրքում լաբորատորիական փորձերի նկարագրմանն ամեններն տեղ
չի հատկացված: Դիրքը կազմված ե Փիդիկական քիմիայի կուրսը
մեկ տարում անցնելու հաշվով, համենայն դեպք առաջին 7 կամ 8
գլուխները կարելի յե անցնել առանձին, մեկ սեմեստրի ընթացքում՝
շաբաթական յերեք պարապմունքով: Առաջադրած նյութը համարյա
լրիվ համընկնում ե Փիդիկական քիմիայի սովորական միջին կուրսի
հետ, չնայած վոր շաբաթրման կարդի մեջ մտցված են վորոշ նորու-
թյուններ: Այսպես, որինակ, քիմիական հավասարակշռության մասին
գիտելիքները տեղափորված են կուրսի համարյա սկզբում: Շաբաթը-
ման տրամաբանության տեսակետից այդ ներկայացնում ե զգալի
առավելություն և չի առաջացնում վորոն գժվարություն, քանի վոր
ուսանողն արդեն ծանոթ է դարձելի ռեակցիաների հետ՝ անորգանա-
կան քիմիայի կուրսից:

Այս գիրքը թերմոդինոմիկայի դասադիրք չի հանդիսանում, քա-
նի վոր վերջինս լրիվ ու գեղեցիկ շաբաթրված ե այդ առարկային դիւ-
րաբերող հատուկ ձեռնարկներում: Թերմոդինոմիկայի հարցեր շաբաթ-
րելիս հեղինակներն ոգտվել են պրոֆեսոր Լյուիսի և Ռինդիլի ընդու-
նած նոտացիաներից, սակայն յեղակացություններն ունեն ավելի
շուտ հոգեբանական քան թե տրամաբանական բնույթ:

Հեղինակներն հույս են տածում, վոր այսպիսով ուսանողը հեշ-
տությամբ կյուրացնի թերմոդինոմիկայի փորմուլները, իսկ այդ՝ լմ-
բըսման առաջին աստիճանն եւ Զնայելով, վոր մակերեսային յե-
րևույթների քիմիային մի ամբողջ զրուխ ե նվիրված, հեղինակները
նպատակահարմար են գտել կոլորիդ քիմիայի յերևույթներին կիրառ-
ութիւնի յուրաքանչյուր սկզբունք պարզաբանել այն գլխում, վորտեղ
շաբաթրված ե այդ սկզբունքը:

Գրքի հատուկ կարևորագույն կողմն այն ե, վոր յուրաքանչյուր
գլխի վերջում կցված են ինդիրներ: Այդ ինդիրները մեծ մասամբ
նոր են, և վոչ փոխ առնված, և բերվում են վոչ թե դժվարության
աճման կարգով, այլ ափելի շուտ նյութը համապատասխան գլուխների
մեջ տեղափորելու կարգով: Յուրաքանչյուր տիպի համար դրված ե
միմիայն մեկ ինդիր: Դասավանդողը հեշտությամբ կարող է ավելաց-
նել ինդիրների թիվը պայմանների մեջ ուրիշ թվական տվյալներ
գնելով:

Քանի վոր առաջադրված են միմիայն հաշվարկման խնդիրներ,
նրանց թիվը նկարագրական ընույթ կրող դուրիներում մեծ չեւ բա-
վականաչափ թվով կարևոր սկզբունքներ և նրանց կիրառումները
գրված են միայն ինդիրների ձևով:

Յանկալի կմիներ, վոր թվական տվյալներ վերցնելիս ուսանողներն ուղարկելիք առաջարկած է աշխատակիցներից, սակայն բազմանդամ լամարաններում այս հնարավորությունը ընականորեն չկատ:

Հաշվի առնելով այս հանդամանքը, հեղինակները գրքում տվել են անհրաժեշտ մեծությունների մի քանի աղյուսակներ, Վերջիններս, յիթև այդ մասին առանձին ծանուցումներ արված չեն, վերցված են International Critical Tables-ից: Հատուկ ուշադրություն է դարձված ճիշտ և ստուգված տվյալների ընտրության վրա, այս նկատառումով, վոր այս գիրքը ծառայի ուսանողի համար վորպես տեղեկատու, նաև դասընթացը վերջացնելուց հետո:

Այս ամենակարևոր ծառայությունն ե, վորը կարող ե անել մի դարագիրք:

Շատ դասատուներ հանգում են այն յեղրակացության, թե տարական դասադրքերում լայն չափով ժուռնալային գրականությունն նշելն անցանկալի յե: Մյուս կողմից՝ կարսոր ե, վոր գիրքը պարունակի ցուցումներ համապատասխան գրականության վերաբերյալ վորը պիտի ուսանողին վարժեցնի գրականությունից ոգտվելու գործում:

Հեղինակները տեղին են համարել մատնանշել այնպիսի գրականություն, վորն ըստ բովանդակության մատչելի լինի սկզբակ ուսանողին:

Ավելի մանրամասն տեղեկություն գրականության մասին ուսանողը կարող ե գտնել այնպիսի գրքերից, ինչպես Դր. Հուդո Թեյլորի "Treatise on Physical Chemistry" ձեռնարկն ե:

Մեր գրքից բաց ե թողնված սովորական փիլսոփայական ներածությունը, վորով լուսաբանվում են «ընության որենքները», «Փակտերը», «տեսությունները», «հիպոթեզները» և այլն: Ցանկության դեպքում դասատուն կարող ե այս բացերը լրացնել ինքն իսկ:

Հեղինակներն իրենց մանկավարժական փորձից գիտեն, վոր ուսանողները չեն տուժի այս բացից: Տարբական ձեռնարկը պետք ե լինի հակիրճ, այս պատճառով ել հնարավորություն չեղավ գրքի յերկրորդ մասում տալ տեղեկություններ թերմոդինամիկայի, ելեկտրո-, քիմիայի, կոլորիդ քիմիայի, ասումի ստրուկտուրայի (կառուցվածքի) և այլ ինդիբրների մասին այն չափով, վոր չափով այդ կցանկանային մի քանի ընթերցողներ:

Հեղինակները հավատացած են, վոր ընդհանուր հավանություն կպանի մեր շարադրության մեջ քիմիական ռեակցիաների արագության և մեխանիզմի ինդիբրների վրա արված շեշտը:

Հեղինակներն իրենց յերախտազիտությունն են հայտնում իրենց
բարեկամների քննադատական դիտողությունների համար. հատուկ յե-
րախտազիտություն են հայտնում նըանք Զիկազոյի համարսանի
պրոֆեսորներ՝ Տ. Ֆ. Ցունգին, Տ. Ռ. Հոգնեսին ու Վ. Խ. Զաքարիա-
շինին և Իլլինոյսի համալսարանի պրոֆեսորներ՝ Տ. Զ. Ֆիպսին և
Մ. Յ. Կոնեհին:

Ուրբանա Խլենոյս

Ապրիլ 1932 թ.

Վ. ՌՈԴԵԲՈՒՆ

Ե. ՌՈԴԵԲՈՒՆ

ԶԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՅԵԿ ՆՐԱՆՑ ՏԱՐՉԱՓՈՒՄԸ (ԴԻՄԵՆԶԻՈՆ):
C. G. S. ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս զբանում լու սկզբում գործ և ածվաւմ ընտական լոգարիթմների համար, իսկ
 log⁺ տասնորդական լոգարիթմների համար նրանց կառված են միմյանց հետ հե-
 տերակ հարաբերություններ՝

$$\ln a = 2,303 \log a$$

Ցեղարարյան (1)

Սանտիմետրը մետրայա ետարնի վրա արված յերկու գծերի միջև գտնվող
 առածություն $\frac{1}{100}$ մասն եւ Ստալոնը պահպամ և Զափերի և Կլիների Միջազ-
 գային Բյուրոյաւմ:

$$1 \text{ միկրոնը } \mu = 10^{-6} \text{ մմ} = 10^{-4} \text{ սմ}$$

$$1 \text{ միլիմիկրոնը } \text{մմ} = 10^{-7} \text{ սմ}$$

Լիորը (2) մեկ կգ ջրի ծագալն է $+4^{\circ}$ -ում, այսինքն ջրի մաքսիմալ խոռո-
 քային Բյուրոյաւմ:

$$1 \text{ լիոր} = 1000,027 \text{ սմ}^3$$

Մասսա (m)

Գրամը (m) $\frac{1}{1000}$ մասն և մեկ կգ ետարնի մասսայի, վորը պահպամ և Կլին-
 երի և Զափերի Միջազգային Բյուրոյաւմ:

Ժամանակ (t)

$$Վայրկյանը (t) միջին արևային որվա $\frac{1}{86400}$ մասն եւ:$$

Ուժ (մլ-⁻²)

Ուժի միավորը դինը—այն ույժն եւ, վորը մեկ գրամի մասսային հաղորդում
 և մեկ վայրկյանում մեկ սանտիմետր արագացում:

Եներգիա (մլ²·t⁻¹)

Երգը եներգիայի C. G. S. միավորն եւ նու հավասար և այն աշխատանքին,
 վորը կատարվում է, յերբ մեկ դին ույժի ազդամք ույժի կիրառման կետը տեղա-
 փոխվում է մեկ սմ-ով ազդման ուղղությամբ նա հավասար և նույնպես յերկու
 պրամ մասսայի կինետիկ եներգիային, յեթե այդ մասսան շարժվում է մեկ վայրկյա-
 նում մեկ ամ արագությամբ:

$$1 \text{ Զոռություն} = 10^7 \text{ երգի} = 4,185 \text{ կալորիայի}$$

$$1 \text{ կալորիան} (C18^{\circ}) = 4,185 \cdot 10^7 \text{ երգի}$$

Ճնշում (ml-¹t⁻¹)

Ճնշման C. G. S. միավորը 1 մմ² վրա 1 դին ույժի կատարած ճնշումն եւ նու
 կառված և նաև բար նորմալ առմունքին այն ճնշումն եւ, վոր 760 մմ մագիկի սյան
 առմամբ և 0° -ում:

$$1 \text{ ճնշում} = 1,013 \cdot 10^6 \text{ դին/սմ}^2$$

$$1 \text{ մմ } \text{անգիկի } \text{սյան } \text{ճնշումը} = 1334 \text{ դին/սմ}^2$$

Ավոգադրոյի թիվը

1 գրամ-մոլեկուլը կամ 1 մոլը = $6,06 \cdot 10^{23}$ մոլեկուլ

1 գրամ-տոննը = $6,06 \cdot 10^{23}$ տոննի

1 այնշտայնը = $6,06 \cdot 10^{23}$ քվանոնի

Տևմայնեառուր (T)

Մաքուր սառուցիչ նորմա համան կետը Յերսինսկի թերմոմետրի 0° է. և ԿԱ-վիճի 273, 2° -ը էսկ մաքուր ջրի յեռան կետը՝ 100° Յերսինսկի թերմոմետրից:

Գազային մոլեկուլը կոնստանտը $k = 1,37 \cdot 10^{-10}$ երգ/տոտ

Գազային մոլոր կոնստանտը $R = 8,31 \cdot 10$ երգ/տոտ = $1,99 \frac{\text{կալ.}}{\text{տատիճ.}}$

$R = 62,40$, յեթք ճնշումն արտահայտված է սնդիկի սյան միլիմետրներով, իսկ ծավալը՝ լիտրերով:

$R = 0,08207$, յեթք ճնշումն արտահայտված է առանձին միլիմետրներով և ծավալը լիտրերով:

Ելեկտրական միավարմեր.

Վոլտ ($\text{e}^{-1}\text{մ}^{-1}\text{s}^{-1}\text{t}^{-2}$)

Վոլտ տակազ հասկանում ենք միջազգային վոլտ, յեթք հատուկ վերապահումները չեն արգածեն Վոլտի մեծությունը հիմնված է Ռեկտոնի նորմալ ելեկտրական մագնիսարժության վրա, վորը 20° -ում հավասար է $1,01830$:

1 ելեկտրոստատիկ վոլտը = $299,8$ միջազգային վոլտի:

Կուլոն (c), Կուլոն տերմինը վերաբերում է միջազգային կուլոնին: Կուլոնը հավասար է ելեկտրականության այն քանուկին, որը վորոշ պայմաններում կարող է պարզաբեր կաթոզի վրա $0,0011180$ գրամ արժաք:

Ամպեր (c^{-1}) Ամպերը հոսանքի միավորն է: 1 ամպեր հոսանքը փոխազդում է 1 վայրկյանում մեկ կուլոն ելեկտրականություն: 1 ամպեր հոսանքը, անցնելով 1 սմ դիմորդության միջով, արտածում է 1 ջուրու ջերմություն 1 վայրկյանում (վատում):

Ելեկտրոնի լիցքը $c = 1,59 \cdot 10^{-19}$ կուլոնի,

$e = 4,77 \cdot 10^{-10}$ ելեկտրոստատիկ միավորի:

Դիէլեկտրիկ կոնստանտը կուլոնի որենքի Կ կոնստանտն է:

$$f = \frac{e_1 e_2}{k^2},$$

Վարաեղ է արտահայտված և դիներով e_1 և e_2 , ելեկտրոստատիկ միավորներով, իսկ սանակիմետրներով:

Ելեկտրականության 1 ելեկտրուլենուր = $96,490$ կուլոն:

1 վոլտ-կուլոնը = 1 ջուրուի:

1 վոլտ-ելեկտրունը = 29000 կալորիա,

1 վոլտ-ելեկտրունը = $1,59 \cdot 10^{-13}$ երգ:

Ելեկտրոնի մասսան = $9,0 \cdot 10^{-30}$ գրամ:

Պլանկի կոնստանտը, $h = 6,65 \cdot 10^{-34}$ երգ/վայրկյան:

Լույսի արտգությունը, $c = 2,998 \cdot 10^{10}$ սմ վայրկյան-1:

Հաճախությունը և ալիքի յերկարությունը կազմած են միմյանց հետ այսպես

$$c = \lambda v; \quad \nu = \frac{c}{\lambda}; \quad \lambda = \frac{c}{\nu}$$

այսեղ c , ν , λ արտահայտված են C. G. S. միավորներով:

$$1 \text{ Անգամարդ } (\text{Å}) = 10^{-10} \text{ սմ}$$

Ե ելեկտրոնի անդրանցման հետևանքով՝ կատարված առողջի ենթագիշտի փոփոխման և նրա համապատասխան սպեկտրու գծի ալիքի յերկարության միջև յեղած կտողն արտահայտվում է հետեւյալ հավասարմամբ:

$$V(v) = \frac{12340}{v},$$

Վարտեղ $V(v)$ ներկայացնում է ենթագիշտի փոփոխումը՝ արտահայտված զոլո-ելեկտրոններով, իսկ ալիքի յերկարությունը (v) անգամը յամենացով։ Վոլտ-ելեկտրոնի նշանակությունն երդիրով տված է վերևում։

Ցերե ալիքի արտահայտնք սկզբանական գործածինք հաճախությունն,

$$V(v) = \frac{\lambda}{2,43 \cdot 10^{-18}},$$

Սակայնի կոնստանտը սկ մակերեսի ճառագայթման համար հավասար են՝
 $\sigma = 5,73 \cdot 10^{-17}$ երդ սմ⁻² առավելագույն գրկ⁻¹,

Վերը բերած հիմնական կոնստանտների նշանակությունները հանված են Birge-ի ավալներից [Review of Modern Physics-ը (1929)], Նշանների թիվը ցույց է տալիս նըանց ձշության առաջնանքը հավանական սխալի միծության զերծքերում ցուցմունքները բաց են բողնված։

ԱՏՈՄ ՅԵՎ ՄՈԼԵԿՈՒԼ

Այն միաքը, թե մատերիան կազմված ե սկզբնական փոքրագույն մամուիկներից, շատ հին ե: Այդ միտքը մանրամասնորեն զարգացրել են հունական փիլսոփաներից մի քանիսը, առանձնապես Դիմոկրիտը և Սպիկուրը: Նրանց հայացքները շարադրել ե հոռմական գրող Լուկրեցիոսն իր «Իրերի բնության մասին» փիլսոփայական պոեմում:

Այդ պոեմը, վոր գրված ե մեր թվագրությունից մեկ դար առաջ, նշանավոր ե վոչ միայն իր վոճի գեղեցկությամբ և բնությունից վերցված շատ պատկերներով, այլ ավելի ևս նրանով, վոր գաղափարներն ատոմի մասին այնտեղ շարադրված են շատ մանրամասնորեն և շատ մոտ են արդի գիտուկան հայացքներին:

Լուկրեցիոսը, խոսելով մատերիայի ատոմիստիկ բնույթի մասին նախագուշակել ե մասսայի և ենիրգիայի պահպանման որենքները, գաղերի կինետիկ թեորիան, թերմոդինամիկայի յերկորդ որենքը և մինչև անգամ Հայզենբերգի անորոշության սկզբունքը:

Լուկրեցիոսի այդ պոեմն զգալի ազդեցություն է գործել Ռ. Բոյլի, Ի. Նյուտոնի, Զ. Դալտոնի և արդի գիտության բազմաթիվ այլ հիմնադիրների մասնության վրա:

Հունական փիլսոփաները երսպերիմենտատորներ չեյին, այլ իրենց հիպոթեզներն ստուգելու համար՝ սահմանափակվում ե յին բնության գիտողությամբ: Այդ պիտք ե բացարել նրանով, վոր այդ ժամանակվա տեխնիկայի բազան բավական զարգացած չի յեղեւ վոր պեսզի հնարավոր լիներ փորձեր կատարելու համար՝ համապատասխան ապարատուր կառուցել:

Այդ պատճառով ատոմիստիկայի քանակական կողմը, վորը հիմնական նշանակություն ունի արդի քիմիայի համար, հույների ուշադրությունը չի գրավել, Բայց և այնպես մեծագույն շփոթություն կլինի պնդել թե հույնների գաղափարներն ատոմի մասին վոչ մի հետաքրքրություն և նշանակություն չունեն արդի գիտության համար:

Կարելի յե ասել վոր արդի ատոմական թեորիան, վորը հիմ-

նված և քիմիայի քանտակական որենքների վրա, իր սկիզբն և առել Դալանի (1808 թիվ) աշխատություններով, Բաղադրության մայնության և բազմապատճեն հարաբերությունների որենքներն անմիջականորեն ատոմների գոյությունը չեն ապացուցում, բայց այդ որենքների բացատրման համար ատոմական թերիան միակ ամրողական դյուքը բանի թերիան եւ Ֆիզիկան ուսուցանում եւ, վոր զանազան պատճառների հետևանքներով ատոմը տեսնել անհնարին եւ այդ պատճառներից մեկն այն եւ, վոր ատոմի տրամագիծն անհամեմատ ավելի փոքր եւ, քան տեսանելի լույսի ալիքի յերկարությունը ջնայելով, վոր հարաբեր չեն մել միջըսկոպ կառուցել, վորով կարելի լինի ատոմը տեսնել, սակայն, որինակ, զրական ճառագայթներով և ռազիուսակտիվ նյութերի ռ-ճառագայթներով կատարված փորձերը և նույնպես բյուրեղներից ստացված ուսուագիտական ճառագայթների դիֆֆրակցիայի պատճենները մոտեցնում են մեզ ատոմը տեսնելու կարելիությանը:

Առամտական կեիո տերմինը զանազան իմաստներով և գործածվում քիմիայի մեջ, Սկզբում նա հարաբերության իմաստ եռ ունեցել: Այսպիսս, յեթե ատոմ ենք, թթվածնի ատոմական կշիռը 16 եւ, իսկ ջրածնինը՝ 1,008, մենք հասկանում ենք, վոր այդ յերկու ելեմենտների ատոմների կշիռները հարաբերում են այնպես, ինչպես 16 : 1,008, Բաղմաթիվ փորձերի հիման վրա գիտենք, վոր թթվածնի մեկ ատոմի իրական կշիռը $2,64 \cdot 10^{-23}$ գրամ եւ այդ մեծությունը կարելի յի անվանել թթվածնի ատոմի բացարձակ (աբսոլյուտ) կշիռ: Սակայն հարմար գործածության համար նա չափազանց փոքր եւ Այդ պատճառով մենք գործ ենք ածում մի ուրիշ մեծություն, վորը կարելի յի բնորոշել վորպես գործնական ատոմական կշիռ կամ գրամ-ատոմ, թթվածնի գրամ-ատոմը հավասար է 16 գրամի: Այսպես օ սիմբոլը քիմիական հավասարությունների մեջ նշանակում է վոչ միայն թթվածին ելեմենտը, այլև թթվածնի գրամ-ատոմը, այսինքն՝ 16 գրամ թթվածին:

Ցերեկն ատոմը մոլեկուլից չի տարբերվում, սակայն ընդհանուրապես մոլեկուլն ավելի բարդ եւ ներկայացնում է յերկու կամ ավելի ատոմների միացություն: Այսպիսս, որինակ, գազային թթվածնի բոլոր ատոմները 25° -ում չնշին բացառությամբ, միացած են միամյանց հետ զույգ-զույգ, զոյացնելով յերկատոմյա մոլեկուլներ. այդ պատճառով զազային թթվածինը քիմիական հավասարությունների մեջ նշանակվում է Օ₂ ֆորմուլով: Ըստհանրապես ֆորմուլը ցույց է տալիս մոլեկուլի բաղադրությունը, այսինքն թե վարքան և ինչպիսի ատոմներից եւ բաղկացած մոլեկուլը: Ցերեկ մոլեկուլի բաղադրությունը հայտնի չեն, կամ յեթե նա կարող է փոփոխվել գրում են

հասարակ և հնարավոր ամենապարզ փորձությ գնդունում են, վոր այդ տվյալ մոլեկուլի փորձությն եւ Վորպես մոլեկուլար կշիռների գործնական միավոր՝ մենք ունենք գրամ-միեկվոլը, կամ ավելի կարճ՝ մոլը, վորը, որինակ, թթվածնի համար նշանակում ենք O_2 սիմբոլով. նա ներկայացնում է 32 գրամ թթվածին:

Վորովինետև ջրածինն ամենափոքր ատոմական կշիռ ունեցող ելեմենտն եւ, սկզբում բնական և յերևացել ընդունել ջրածնի ատոմական կշիռը վորպես ատոմական կշիռների միավոր: Դրա հիման վրա թթվածնի ատոմական կշիռը փորձի սիմարանքի առնմաններում համարված և յեղել ուղղի 16։ Անցած գարբի վերջին տարիներում պարզվել եւ, վոր թթվածնի ատոմական կշիռի փորձնական վորոշման մեջ սխալ և սպրդել: Այժմ թթվածնի ճիշտ ատոմական կշիռը ջրածնի համեմատությամբ ընդունվում է հավասար 15,875: Բայց այս վերջնական նշանակություն համարել չի կարելի, այլ պետք եւ ճշգրի ժամանակի ընթացքում, վորովինետև նրա վորոշումը նշանակալի դժվարություններ և ներկայացնում: Վորովինետև ելեմենտների մեծ մասի ատոմական կշիռները հաշված են նրանց ոքսիգների բազագրության հիման վրա, այդ պատճառով ատոմական կշիռների աղյուսակում անհրաժեշտ պիտի լիներ կատարել մեծ թվով փոփոխություններ ամեն անգամ, յերբ ջրի բազագրության համար ստացվի նոր նշանակություն: Այդպիսի մեծ աշխատանք պահանջող դժվարին հաշվաներից խուսափելու համար վորոշել և թթվածնի ատոմական կշիռն ընդունել 16 և դրանով ջրածնի հանդեպ թթվածնին առավելություն տալ, վորպես ստանդարտ նշութի: Բացի դրանից, ժամանակի ընթացքում միշտ ավելի ու ավելի ճշտությամբ կատարված վորոշումների տվյալներից հետևում եւ, վոր ընթարությունն ունի ուրիշ առավելություն ևս. այդ այն եւ, վոր ելեմենտներից մեծ մասի ատոմական կշիռները մոտենում են ամբողջ թվերի:

Այդ ֆակտն ստիպում է մեզ առանձին ուշադրություն դարձնել Պրոուտի (1815) հետաքրքրական հիպոթեզի վրա, վորի համաձայն բոլոր ելեմենտների ատոմները կազմված են ջրածնի ատոմներց՝ ամբողջական թվերով: Սկզբում թվում եր, թե Պրոուտի հիպոթեզը կանգնած և մի անհաղթանարկի դժվարության առաջ այնպիսի ելեմենտների դեպքում, ինչպես, որինակ, քրորն եւ, վորի ատոմական կշիռը 35,46 և: Սակայն Աստոնը վերացրեց այդ դժվարությունը, ցույց տալով (1920), վոր քրորը ներկայացնում է յերկու ակտսակի ստոմիների խառնուրդ, վորնց ատոմական կշիռները համապատասխանում են 37-ի և 35-ի: Պրոուտի հիպոթեզի համար ամենալուրջ դժվարությունն այն ֆակտն է, վոր ջրածինն ունի կոտորակային ատոմական կշիռ: Յեթե թթվածինն ընդունենք վորպես ստանդարտ նշութ, վորի ատոմական կշիռը 16 եւ, այդ դիպքում ջրածնի ատոմական կշիռն ստացվում է ուղիղ:

1,0078, իսկ հետեւյալ ելեմենտի՝ հելիումի (He) ատոմական կշիռը 4,002 է:

Միակ յելքն այս գժվարություններից Այնշտայնի (1905) առաջադրած բացատրությունն է, վորի համաձայն մասսան և եներգիան միանույն ելության տարրեր յեղանակներով չափված արտահայտություններն են, և 1 գրամ մասսան եքվիվալենտ և $9 \cdot 10^{20}$ երդ եներգիայի: Այդ թիվը ($9 \cdot 10^{20}$) լույսի արագության (c) քառակուսին է, արտահայտված սանտիմետրներով 1 վայրկյանում: Ուրեմն մասսայի և եներգիայի եքվիվալենտությունն արտահայտվում և հետեւյալ հավասարումով:

$$E = c^2 m \quad (1)$$

Այդպիսով արդեն կարելի յե հասկանալ վոր յերբ ջրածնի 4 ատոմից գոյանում և մեկ ատոմ հելիում, 0,031 գրամ մասսա փոխվում և եներգիայի ամեն մի գրամ-ատոմ հելիումին հաշված:

Նորեքս գազերի մոլեկուլների զոլավոր սպեկտրների անալիզը յերևան բերեց ելեմենտների մեջ իդոսուպներ, այնքան փոքր քանակություններով, վոր նրանց հայտաբերումը դրական ձառագայթների մեթոդի օգնությամբ անհնար եր յեղել: Այսպես, որինակ, գտնվեց, վոր թթվածինը պարունակում և O^{17} և O^{18} -ի հատքեր¹:

Այդ իդոսուպները գտնվում են այնքան փոքր քանակությամբ, վոր վոչ մի անհրաժեշտություն չկա վորեն ուղղում մացնել ատոմական կշիռների աղյուսակում, վորի հիմքում դրված և թթվածնի ատոմական կշիռը:

1 աղյուսակում բերված ե ելեմենտների բաղադրությունն ըստ իդոսուպների պարունակության:

Ատոմական կշիռների ճիշտ վորոշումը շատ կարևոր նշանակություն ունի քիմիայում. դրա համար ել 19-րդ դարում քանակական անալիզը քիմիայի ամենակարենը և ամենահետաքրքիր ճյուղերից մեկն և յեղել: Ատոմական կշիռների վորոշումը խիստ դըժվարացավ նրանով, վոր վոչ բոլոր ելեմենտները ժիկություն վալենցն ունեն, և այդ գժվարությունը հաղթահարելու համար պահանջվեց յերկարատե ժամանակ ու համար հետազոտություն: Իրավ, բավական չե վորոշել ելեմենտի տոկոսային պարունակությունն ոքսիդների մեջ: Մենք պետք ե իմանանք նույնակես յերկու ելեմենտների վարենցը՝ այսինքն այն հարաբերությունը, վորով միանում են միմյանց հետ ովկյալ ելեմենտների տառմեջը, բայց միենալուն ժամանակ վարենցը չի կարելի վորոշել, յերբ զեռ հայտնի չե ատոմական կշիռը: Այդ հար-

¹ Giaugue and Jonston, J. Am. Chem. Soc., 51, 3528 (1929).

1 Ապյուսակի Ելեմենտների առաջնաժամկետ կազմը

<i>Ելեմենտ</i>	<i>Համարական</i>	<i>Առաջնաժամկետ կազմ</i>	<i>Իզոտոպների առաջնական կազմների դասավորություններում պարունակվելու կարգը*</i>
H	1	1,0078	1,2
He	2	4,002	
Li	3	6,040	7,6
Be	4	0,02	
B	5	10,82	11,10
C	6	12,000	
N	7	14,008	
O	8	16,0000	16, 18, 17
F	9	19,00	
Ne	10	20,183	20, 22, 21
Na	11	22,997	
Mg	12	24,32	24, 25, 26
Al	13	28,97	
Si	14	28,06	28, 29, 30
P	15	31,02	
S	16	32,06	32, 33, 34
Cl	17	35,457	35, 37
A	18	39,94	40, 36
K	19	39,10	39, 41
Ca	20	40,07	40, 44
Sc	21	45,10	
Ti	22	47,90	
V	23	50,96	
Cr	24	52,01	
Mn	25	54,98	
Fe	26	55,84	56, 54
Co	27	58,94	
Ni	28	58,69	58, 60
Cu	29	63,57	63, 65
Zn	30	65,38	64, 66, 68, 67, 65, 70
Ga	31	69,72	69, 71
Ge	32	72,60	74, 72, 70, 73, 75, 76, 71, 77
As	33	74,96	
Se	34	79,2	80, 78, 76, 82, 77, 74
Br	35	79,916	70, 81
Kr	36	82,0	84, 86, 83, 83, 80, 78
Rb	37	85,44	85, 87
Sr	38	87,63	88, 86
Y	39	88,02	
Zr	40	91,22	90, 94, 92
Nb	41	93,1	
Mo	42	96,0	
Ma	43	98?	
Ru	44	101,7	
Rh	45	102,91	
Pd	46	106,7	
Ag	47	107,880	107, 100
Cd	48	112,41	114, 112, 110, 113, 111, 116
In	49	114,8	
Sn	50	118,70	120, 118, 116, 124, 119, 117 122, 121, 112, 114, 115
Sb	51	121,77	121, 123,

A 14931
7587

<i>Ելեմնոն</i>	<i>Կարգավիճակ</i>	<i>Առաջակած էլեմնոն</i>	<i>Բարբառությունների ատոմական կյանքի հետագա դասավորությունն ելեմնատներում պարունակվելու կարգավ</i>
Te	52	127,5	
J	53	126,932	128, 130, 126
Xe	54	130,2	129, 132, 181, 184, 136, 128 130, 126, 124
Cs	55	132,81	
Ba	56	137,36	
La	57	138,90	
Ce	58	140,13	140, 142
Pr	59	140,92	
Nd	60	144,27	142, 144, 146
II	61		
Sm	62	150,13	
Eu	63	152,0	
Gd	64	157,26	
Tb	65	159,2	
Dy	66	162,46	
Ho	67	163,5	
Er	68	167,84	
Tm	69	169,4	
Yb	70	173,6	
Lu	71	175,0	
Hf	72	178,8	
Ta	73	181,5	
W	74	184,0	
Re	75	180,31	
Os	76	190,8	
Ir	77	193,1	
Pt	78	195,23	
Au	79	197,2	
Hg	80	200,61	202, 200, 199, 198, 201, 204
Ti	81	204,39	
Pb	82	207,22	208, 207, 206
Bi	83	209,00	
Rn	86	222	
Ra	88	225,07	
Th	90	232,12	
U	92	238,14	

ցում զեկավարող սկզբունքը, վորի վրա հենվեցին Դալտոնը, Բերցելիուսը և ուրիշ հետազոտողներ, ամենամեծ պարզության սկզբունքներ Այսպիս, որինակ, յմթե հիմք չի յեղել մի վորմեա ուրիշ յենթադրություն անելու, նրանք ընդունել են, վոր յերկու ելեմնատներից գոյացած մոյեկուլում յուրաքանչյուր ելեմնատներից միմյանց հետ կապված են մեկական ատոմ։ Այդ կանոնը լրիվ կերպով արդարացավ շատ գեղքերում, բայց նա անընդունելի դուրս յեկավ, որինակ, աղօսի ատոմական կշիռը նրա ոքսիդների բաղադրության հիման վրա վորոշելու համար։ Այդ կանոնի համաձայն նատրիումի ոքսիդի բաղադրությունից վորոշված նատրիումի ատոմական կշիռը հավա-

սար և գՅ-ի. Մի քանի ելեմենտների ատոմական կշիռների անորոշությունն անվստահություն առաջացրեց ելեմենտների ատոմական կշիռների ամբողջ աղյուսակի ճշտության վերաբերմամբ։ Այդ դրությունը շարունակվեց մինչև 1858 թիվը, յերբ իտալացի քիմիկոս Կաննիցարոն առաջարկեց մի գործնական կանոն, վորի ոգնությամբ երամենտների ատոմական կշիռները կարելի յեր սահմանել ամենայն վորոշությամբ։ Ճիշտն ասած, այդ հարցը լուծված եր արդեն 1811 թ. իտալական ֆիզիկոս Ավգուստոյի կողմից, բայց նրա աշխատությունն այս խնդրի մասին չգրավեց քիմիկաների ուշազրությունը։ Այդ ժամանակ Ավգուստոյն հրապարակել եր իր սկզբունքը, այն ե, թե՛ զանազան գաղերի հավասար ծավաները միևնույն պայմաններում պարունակում են մօլեկուլների միմնալու քիմիկան քիմիկան և նշել եր նույնակես, վոր ուսուվորական գաղերի մոլեկուլները բաղկացած են յերկուական ատոմներից։ Այսպես թթվածինը և աղոտի ոքսիդը պարունակում են մեկ մոլեկուլի մեջ ատոմների միևնույն թիվը։

Այդ հանգամանքը աննկատելի յեր մնացել քիմիկուների կողմից, դրա համար ել անհասկանալի յեր մնացել ծավաների պարզ հարաբերության որենքը՝ դաղերի ուսակցիաների մեջ։ Կամնիցարոն Ավգուստոյի աշխատությունը «գտավ» և նրա ոգնությամբ լուծեց ատոմական կշիռների վորոշման հետ կապված բոլոր դժվարությունները։ Ցեթեւ վորոնե ելեմենտ առաջացնում ե մի շարք ցնդող միացություններ (վորոնց մոլեկուլար կշիռներն այսպիսով կարելի յե վորոշել), ապա շատ հավանական ե, վոր այդ միացություններից մեկը կամ մի քանիսն իրենց մոլեկուլում ունենան մեկ ատոմ՝ տվյալ ելեմենտից։ Հետեւապես ելեմենտի ատոմական կշիռը կլինի այդ ելեմենտի գրամմների ամենափոքր քանակը, վորը մտնում ե նրա կազմած միացությունների գրամ-մոլեկուլի մեջ։ Այնչափ, վորչափ վոր մոլեկուլար կշռի վորոշումները, վորպես կանոն, շատ ճիշտ չեն լինում, Կամնիցարոյի մեթոդը տալիս է միայն ատոմական կշիռների մոտավոր նշանակությունը։ Բայց յերբ վոր ատոմական կշիռների մոտավոր նշանակությունը հայտնի յե, ավելի ճիշտ հաշվումը կարելի յե կատարել ելեմենտի միացության հիման վրա՝ յելնելով նրա տոկոսային պարունակությունից միացության մեջ։

Վերև շարադրված կանոնը, ի հարկե, թույլ չի տալիս բացարձակումն ստույգ յեղբակացություն անելու։ ԶԵ վոր ելեմենտի ցնդող միացությունների մեջ կարող և չգտնվել մեկը, վորը պարունակի իր մոլեկուլում այդ ելեմենտի միայն մեկ ատոմը։ Ինչպես հետազում կտեսնենք, այնպիսի հատկությունների զուտ ֆիզիկական հետազուտությունը ինչպես մոլեկուլար ջերմունակությունն ե, նույնակես և

վերջերս ատոմի սաբուկառուքի մասին ստացած տեղեկությունները վերացնում են այդ անորոշությունը:

Մի ուրիշ կանոն, վորոն ատոմական կշիռների վորոշման համար ոգտակար յեղափ, Միջերլիխի որենքն եր, վորի համաձայն միանման մոլեկուլային ստրուկտուր ունեցող միացություններն առաջացնում են իզոմարֆ բյուրեղներ: Այդ կանոնը միայն սահմանափակ կիրառություն ունի, բայց նա մի քանի դեպքերի համար բավական ոգտակար և հանդիսացներ Այսպիս մի կողմից իմանալով փոսֆորի ատոմական կշիռը և մյուս կողմից իմանալով, վոր նատրիումի փոսֆատը և արդենատը միասին գոյացնում են իզոմորֆ բյուրեղներ, հնարավոր յեղափ դուրս բերել արդենի ատոմական կշիռն արդենատի տոկոսային պարունակությունից, յելներով այն յենթադրությունից, թե այդ յերկու միացություններն իրարից տարբերվում են միայն այն բանով, վոր արդենատի մեջ փոսֆորի ատոմի փոխարեն գտնվում են արդենի ատոմը:

Ելեմենտների պարբերական սիստեմը գտնվելուց հետո վերջինս ավելի զգալի ոգնություն մատուցեց ատոմական կշիռների հաստատման գործին, վորովճետն ելեմենտը կարելի յեր զետեղել համապատասխան խմբի մեջ, հիմք ընդունելով նրանց մի շաբթ ուրիշ հատկությունները, իսկ դրանից հետո արդեն դժվար չե սահմանել ելեմենտի վայենցը:

Հարկավոր և նշել, վոր թեև ատոմական կշիռների աղյուսակը կազմելիս հիմք ե ընդունվել թթվածնի ատոմական կշիռը բայց վահեցը վորոշելու համար ջրածինը մնում ե վորպես ստանդարտ նյութ: Ելեմենտի երիվալեմտական կշիռ և համարվում նրա գրամմերի այն քանակը, վորը միացությունների գոյացման մեջ փոխարինում կամ միացնում և 1,008 գրամ ջրածին ելեմենտի երկվալենտական կշիռը հավասար և նրա ատոմական կշիռն՝ բաժանած նրա վալենցի միավորների թվով ավանդ միացության մեջ:

Նախորդ եջերում ասվածը շարադրելիս՝ հեղինակը յենթագրել ե, վոր ընթերցողը բավականաշատ ծանոթ ե այնպիսի գաղափարներին, ինչպիսին են, ելեմենտը, միացությունը, և մաքուր նյութը, վորպեսպի վերը բերած նյութը հասկանալու համար կարգավորությունը:

Այդ գաղափարների ավելի ճշգրիտ սահմանութերը կտրվեն հետագայում:

Խ Ն Դ Ի Բ Ն Ե Բ

1. Անհայտ ելեմենտի պահուղաց պարունակում և 18,1% քթվածին հաշվել նրա ատոմական կշիռը վորը համապատասխան լինի X_2O , XO , X_2O_3 , X_2O_5 փորմուներին:

¹ Ուստանողը պետք է աչքի անցկացնի ֆիզիկայի վարևել լավ դասագիրքը, հանձնարարվում է նույնպես կրկնել անորոշական քիմիան:

2. Մի եկամնաւը գոյացնում է մի շաբթ ցնդող միացություններ, վարսնց մոլեկուլար կախութ և տոկոսային բովանդակությունը տված և հետեւալ աղյուսակում.

մոլ կօփաք	ելումնների %/օ-այլին
1) 230	պարունակ.
2) 184	26,0
3) 168	17,4
	19,0

Ոքուկոչ պարունակում է 43,5% թթվածին, վորոշել սքսիդի ֆորմուլը և հաջկէ ելեմենտների ճիշտ տառական կցիուլը:

3. Հաշվել Cl^{18} և Cl^{37} տոկոսային պարունակությունը թլորի մեջ:

4. Հաշվել Cl^{18} Cl^{35} Cl^{36} Cl^{37} և Cl^{37} Cl^{37} մոլեկուլների տոկոսային պարունակությունը գոզային թլորում, ընդունելով, վոր պատահականությունն է, թե թլորի տառմը կմիանմ նման տառմի հետ, թե իրենից առընկը (իզոտոպի) տառմի հետ մոլեկուլ կազմելու համար:

Պատուի համապատասխանաբար՝ 59,3, 35,4 և 5,3%/_օ

Հաշվել թե ինչքան ջերմություն կպյանա հետեւալ ռեակցիայում:

$$4\text{H} = \text{He}$$

Ինչքան ածխածին հարկավոր կլինիկ այրել մինչև CO_2 այդ քանակությամբ ջերմություն ստանալու համար:

ՄԱՏԵՐԻԱՅԻ ԿԻՆԵՏԻԿ ԹԵՌԻԱՆ. ԳԱԶԵՐԸ

Նյութի հատկությունները, վորոնք շատ խճճած են թվում նրա կրած բարդ փոփոխությունների հետևանքով, ավելի պարզություն են ստանում, յեթե ֆիզիկական և քիմիական պրոցեսները քննվում են, վորագետ յերկու հակադիր ուղղությամբ գործող ֆակտորների (ազդակների) հետևանքով նրանցից առաջինը՝ ատոմների միջև գործող ձգողական ուժերն են: Այդպիս ատոմները միանալով կազմում են մոլեկուլները կոնդենսվելով, դառնում են կարծր կամ հեղուկ մասսաներ, ավելի լայն մասշտաբով՝ նյութական մեծ մասսաները ձգողական կոչվող ուժավ փոխազդում են անհամեմատ ավելի մեծ (տիեզերական) տարածության վրայով, պղնանետներ և արեգակնային սիստեմ գոյացնելով: Տարածության մեջ մեկուսացած յերկու նյութական մասների միջև գոյություն ունեցող ձգողական ուժերի գաղափարը բերում և պոտենցիալ եներգիայի գաղափարին, վորը խոշոր նշանակություն ունի ֆիզիկական գիտությունների համար:

Մյուս կողմից, կիմիստիկ հմերգիամ պայմանավորում և յերկրորդ ֆակտորը, վորը մենք հիմնական ենք համարում նյութի վարքի համար: Զերմությունն անհրաժեշտ է նյութի վիճակի փոփոխման համար: Բացարձակ զերոյում կարող են ընթանալ միայն շատ քիչ քիմիական ռեակցիաներ, յեթե առհասարակ նրանք հնարավոր են այդ տեմպերատորում: Առաջ յենթադրել են, թե ջերմությունը (վորը կալորիկ և կոչվել), մի անկշիռ հեղուկ ե, վորը կարող ե մի մարմնից մյուսին անցնել Ներկայումս հայտնի յե, վոր ջերմությունը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ նյութը կազմող ատոմների և մոլեկուլների անկարգ շարժման կինետիկ եներգիան: Այդ շարժման հետևանքով ատոմները և մոլեկուլները ձգուում են իրարից հեռանալ և քանդել ստրուկտուրները և ազդեցատաները, վորոնց մեջ ատոմները պահպան են փոխադարձ ձգողության շնորհիվ: Այսպես կարծր և հեղուկ մարմինները գուրշիանում են, իսկ մինուրափ գագերի ատոմները և մոլեկուլները ձգուում են ցրվել տիեզերական տարածության մեջ: Վորպեսզի մոլորակը կարողանա պահել իր մթնոլորտը, անհրաժեշտ ե, վոր

Նրա ձգողական ույժը նրա մակերեսի վրա մի վորոշ կրիտիկական մնեռությունից գերազանց լինի. Այդ կրիտիկական նշանակությունը կախված է դազի մոլեկուլար կշռից և մոլորակի մակերեսում գորություն ունեցող տեմպերատուրից. Որինակ, շատ հավանական է, վոր մերկուրը և լուսինը հենց այդ յեղանակով են կարցրել իրենց մթնոլորտից սովորական գաղերը և գորոշիները, Բարձր տեմպերատուրներում մոլեկուլները դիսոցվում են ատոմների, իսկ ավելի բարձր անմոքրատուրներում, ինչպես, որինակ, արեգակի վրա, ատոմները կորցնում են իրենց ելեկտրոնները. Մատերիայի այդ հատկությունը կորցնում են իրենց ելեկտրոնները. Մատերիայի այդ հատկությունը կորցնում է արեգակի անվանել և «ցրվելու տեսնենց» („escaping tendency“).


Քանի վոր մենք անկարող ենք դիտել առանձին ատոմի շարժություները և չենք կարող հուսալ, վոր հնարավորություն կունենանք հետեւյու ամենազգայուն կեռոքվ կղուած նրա նույնիսկ ամենափոքր քանակության մեջ պարունակվող աներևակայելի թվով ատոմների շարժություները, սովորված ենք կիրառել ստատիստիկական մեթոդը, յեթե ուզում ենք ուսումնասիրել նյութը ատոմիստիկ տեսակեաբից:

Ստատիստիկ մեթոդով ստացված արդյունքները կազմում են նյօրքի կիմիստիկ բնագիտական գովանդակությունը կիմիստիկ թեորիայի կիրառության համար նյութի ամենապարզ վիճակը փոքր խոռություն ունեցող գազի վիճակն է: Մոլեկուլ կարելի յե բնորոշել վորպես մի մասնիկ. Վորը կազմված է մեկ կամ ավելի ատոմներից և պահպանում է գազի մեջ իր ինքնուրույն դոյցությունը. Այն հարցը, թե մենք ինչ ենք հասկանում «ինքնուրույն գոյություն» ասելով, կարող է դժվարություններ առաջացնել և հետագայում ավելի մանրամասն վերլուծություն կպահանջի, բայց այնպիսի գագերի գեպքում, ինչպես թթվածինն և սովորական տեմպերատուրներում, այդ հարցին պատասխաննելլ վոչ մի դժվարություն չի ներկայացնում: Թթվածինը կազմված է այնպիսի մոլեկուլներից, վորոնցից յուրաքանչյուրը բաղկացած է յերկու տոտմից: Այդ մոլեկուլները շարժվում են իրարից անկախ և մնում են անփափոխ՝ յերկար ժամանակամիջոցում, վորի ընթացքում նրանք յենթարկվում են անհամար հարվածների՝ իրենց նման մոլեկուլների կողմից:

Քանի վոր մոլեկուլների միջև գործող ձգողական ուժերը նվազում են, վորչափ մեծանում են նրանց միջև յնդած տարածությունը, փոքր խոռություն ունեցող գաղերի մեջ մոլեկուլային ուժերը կարելի յե արհամարհել, և մենք պետք են գործ ունենանք միայն գաղերի կինետիկ ներգիայի հետ: Գաղը վոչ միայն ընդունում է այն անոթի ձևը, վորի մեջ նաև գանգում են, այլև լիփոլիզնում են անոթը և վորոշ ճնշում անում նրա պատերի վրա: Մեզ համար դըժ-

վար կլիներ բացատրել նյութի անսահման ընդարձակվելու ընդունակությունը, յեթե չընդունելինք, վոր նա կազմված է մոլեկուլներից, վորմանք այնքան ավելի յեն հեռանում միմյանցից, վորքան նա ավելի յև ընդարձակվում: Այդ մոլեկուլներն ունեն տեղաշարժման կինետիկ եներգիա: Այդ նշանակում ե, վոր նրանք շարժվում են ուղղագիծ, քանի դեռ չեն բաղսվել միմյանց և անոթի պատերին:

Այս դեպքում, վորը մենք հիմա քննարկում ենք, այսինքն՝ յերբ քիմիական ռեակցիա կամ աստղման աստիճանի փոփոխում չկա, բաղադրությունը միանդամայն առաձգական են. այդ նշանակում ե, վոր մոլեկուլ կինետիկ եներգիան լարացման բաղխումից նետ նույնն ե, իմչ վոր բաղխումից առաջ: Այնպես, վոր քանի դեռ դաղը վորպես մի տարողջություն իր եներգիան չի տալիս արտաքին միջավայրին, նրա մոլեկուլների քառային շարժումը չի նվազում: Ավելի եւ՝ այդ պրոցեսի ժամանակ առանձին մոլեկուլները չեն ըմաշվում, կամ ծերանում, այլ մոռւմ են անփոփոխ, նույնիսկ բազմաթիվ բաղխումներից հետո:




Նկ. 1 Արտադրյան կոմպոնենտները:

Գաղային մոլեկուլների շարժումը նկարագրելու համար հարմար ե ոգտագործել անալիտիկ մեքանիկայի դրաֆիկ մեթոդը և ներկայացնել յուրաքանչյուր մոլեկուլի արագությունը մի վեկտորով, տանելով վերջինս տարածական ուղղանկյան սիստեմի կոորդինատների ոկտրանակետից (Նկ. 1):

Վեկառորի ուղղությունը համընկնում և մոլեկուլների շարժման ուղղության հետ, իսկ նրա յերկարությունը վորոշ մասշտարով արտահայտում և մոլեկուլի արագության մեծությունը: Այդ վեկտորի պրոյեցիաները x , y , և առանցքների վրա ներկայացնում են մոլեկուլների արագության կամքնենթերը, յերեք համապատասխան առանցքների ուղղությամբ:

Եթե մոլեկուլի արագությունը նշանակենք v -ով, ապա նրա կիսեափեկան կարտահայտվի՝ $\frac{mv^2}{2}$, իսկ այդ նշանակում ե, վորկարելի յետուի նույնպես մոլեկուլի կիսեափեկ եներգիայի այն մեծությունների մասին, վորոնք համապատասխանում են V_x , V_y , V_z , առանձին կոմպոնենտներին: Համապատասխան կիսեափեկ եներգիաները կարտահայտվեն՝ $\frac{mv_x^2}{2}$, $\frac{mv_y^2}{2}$, $\frac{mv_z^2}{2}$ մեծություններով:

Կոորդինատների առանցքների ուղղությունը միանդամայն կամայական ե, և արագության առանձին կոմպոնենտների համապատասխան կիսեափեկան կիսեափեկ եներգիայի մեծությունները կախված են կոորդինատային սիստեմի որինացիայից, բայց այդ կիմետրի եներգիաների գումարը հավասար է մոլեկուլի լրիվ կիմետրի եներգիային:



Նկ. 3. Մեկ վայրկյանում արագության v_x կոմպոնենտով պատճ քառակուսի սանակիմետրը հարվածող մոլեկուլների թիվը հովատոր և նրանց այն թվին, վորը պարունակվում է մի ծավալի մեջ, վորի յերկարությունը հավասար է v_x -ի, իսկ ընդայնական հատվածը՝ մեկ քառ. սանակիմետրի:

Դազի դործ դրած ձևուման հաօգուտը Դազի ամենից ակնհայտ ֆիզիկական հատկությունը նշանակում է, վոր նա անում և անոթի պատերի վրա, վորի մեջ նա գտնվում է:

Այդ ճնշման գոյությունը կախված է գազի մոլեկուլների կիսեափեկ եներգիայից, և շատ ընդհանուր յենթադրություն անելով գազի բնույթի մասին, կարելի յետ արտածել մի պարզ հարաբերություն, վորով այդ յերկու մեծությունները կապված են միմյանց հետ:

Յենթագրնք, թե գաղի մոլեկուլներն ունեն անվերջ փոքր տրամադեր. այդ նշանակում ե, վոր նրանք հանդիսանում են կետեր, վորոնց միակ փիզիկական հատկությունը մասսա ունենալն եւ Այս յենթագրությունից հետեւում ե, վոր մոլեկուլները միմյանց չեն հարվածում, այլ զարկվում են միմիայն անոթի պատերին: Ընարենք չ առանցքն այնպես, վոր նա ուղղահայաց լինի գաղ պարունակող անոթի պատին (նկ. 2):

Ծնչումն այդ պատի վրա կախված ե պատը հարվածող մոլեկուլների մոմենտի և կոմպոնենտից: Ցեղակի հարվածը հազորը պատին միայն մի ակնթարթային իմպուլս, բայց անթիվ մոլեկուլների մի կարկուտ շարունակ հարվածում ե պատը, և մեկը մյուսին հաջորդող հարվածներն ստեղծում են վորոշ մասայուն ույժ: Համաձայն մեքանիկայի որենքներին, այն ույժը, վորը գործադրվում ե պատի վրա, արվում ե հետևյալ հավասարմամբ:

$$i = \frac{d(mv_x)}{dt}$$

Այսուղ ունչ մոլեկուլի մոմենտն ե և առանցքի ուղղությամբ:

Հավասարությունը ցույց է տալիս, վոր ույժը հավասար է մոմենտի (շարժման քանակի) փոփոխությանը ըստ ժամանակի: Ցեթե այդ ույժը հաստատուն ե, ապա նա հավասար է մոմենտի մեկ վայրկյանում կրած փոփոխության: Ցեթե վորու թվով մոլեկուլներ, վորոնց մասսան ու ե արագության կոմպոնենտն առանցքի ուղղությամբ՝ ունչ զարկվում են պատին, ապա անդրագառնարով պատից՝ նրանք կունենան արագության կոմպոնենտի միջին մեծությունը՝ ուշ, յեթե պատի տեմպերատուրը հավասար է նրանց տեմպերատուրին:

Կլինեն յեղակի մոլեկուլներ, վորոնք կանդրագառնան պիելի կամ պակաս արագությամբ, բայց ննչումը հաշվելիս մենք կարող ենք նկատի ունենալ միայն արագության միջին մեծությունը: Շարժման քանակի նշանակության փոփոխման միջին մեծությունը մի հարվածի ընթացքում հավասար է

2ունչ

Պատի մեկ քառ. սանաթիմեարին մեկ վայրկյանում զարկվող մոլեկուլների թիվը հաշվելու համար կարող ենք մոլեկուլները բաժանել առանձին խմբերի ըստ նրանց արագության և կոմպոնենտի մեծության: Դրանով մենք վոչ մի կամայականություն չենք մտցնի, վորովհետև կարող ենք մոլեկուլները բաժանել այնքան խմբերի, վորքան անհրաժեշտ և նրանց շարժումները ճիշտ նկարագրելու համար: Ցենթագրենք, մեկ խոր. սանաթիմետրում ու մոլեկուլներ կան, վորոնք ունեն և կոմպոնենտային արագություն ու: Ցենթագրենք, թե գաղի խտությունն

այնքան փոքր ե, վոր հարվածները մոլեկուլների միջև կարելի յե
 արհամարենի Նկար 2-ը գիտ քննությունից յերևում ե, վոր 1 խմբում
 այն մոլեկուլների թիվը, վորոնք հարվածում են պատի 1 քառ. սահ-
 միմետրը մեկ վայրկյանում, հավասար ե մեկ խմբի մոլեկուլների
 թիվին մի յերեակայական գլանում, վորի յերկարությունը հավասար ե
 չորսի, իսկ լայնական հատվածը՝ մեկ քառ. սահմատիմետրի, և այդ թիվը
 հավասար ե ու Վ. մի քանի մոլեկուլներ յ և շ կոմպոնենտ-
 ների առկայության պարբառով գլան սահմաններից դուրս կննան,
 քայլ նույն պատճառով մի քանի մոլեկուլներ ել դրսեց կընկնեն զլա-
 նի մեջ. Այսպես, վոր վոչ մի անհրաժեշտություն չկա արագության
 յ և շ կոմպոնենտները հաշվի առնելու Առաջին խմբի մոլեկուլների
 հարվածներից դոյացած ույժը, վոր ներգործում ե պատի 1 քառ. սահ-
 միմետրի վրա, հավասար ե մեկ վայրկյանում կտտարվող հարվածնե-
 րի թիվին, այսինքն ու Վ. Վ. բազմապատկան մի հարվածի շարժման
 քանակի միջին փոփոխմամբ՝ ու Վ. 2ՊՎ. կամ $2\pi_1\pi V_1^2 = 4\pi_1 \left(\frac{\pi V_1^2}{2} \right)$.

Ուրեմն, 1 խմբի մոլեկուլների հարվածների հետևանքով ազգող ույժն
 իր թվական նշանակությամբ հավասար ե 1 մմ-ում պարունակվող 1
 խմբի մոլեկուլների կինետիկ եներգիայի քառապատկին Քանի վոր
 զաղը բաշխված ե ամբողջ մոնոթում համաչափ կերպով, ու թիվը կա-
 րելի յե մնայուն համարել գազի ամբողջ մասսայի համար. Անոթի
 պատի մեկ քառ. սահմատիմետրի վրա ներգործող ամբողջ ույժը հավա-
 սար ե բոլոր ույժերի գումարին, վորոնք ստացվում են բոլոր խմբերի
 մոլեկուլների հարվածներից. Դումարելով, մենք ստանում կնք, վոր
 մակերեսի միավորի վրա ներգործող լրիվ ույժը հավասար ե 1 մմ-ում
 գտնվող բոլոր մոլեկուլների կինետիկ եներգիայի քառապատկին.

Այստեղ գազի մոլեկուլների կինետիկ եներգիայի մասին խոսելիս՝
 մենք նկատի ունենք վոչ թե նրա լրիվ կինետիկ եներգիան, այլ նրա
 այն մասը, վորը կապված ե չ առանցքի դրական ուղղությամբ կատար-
 ված շարժման հետ. Վորովհետև գազի մոլեկուլների շարժումն անկարգ
 ե (քառային), մենք արդարեն կարող ենք սպասել վոր միջին հաշվով
 նույն քանակով կինետիկ եներգիա յե կապված նույնպես շարժման չ
 առանցքի բացասական ուղղության հետ, և հավասարապես նույն
 քանակությունը կապված ե յերկու մյուս, յ և շ, առանցքների յու-
 րաքանչյուր ուղղության հետ. Դրա համար ել կինետիկ եներգիայի
 այն քանակը, վորի մասին խոսեցինք վերևում, ներկայացնում ե
 1 մմ գաղի լրիվ կինետիկ եներգիայի $\frac{1}{4}$ մասը, և հետևաբար այն
 ույժը, վորը ներգործում ե 1 մմ մակերեսի վրա, հավասար ե 1 մմ
 գաղի ամբողջ կինետիկ եներգիայի $\frac{1}{4}$ մասին կամ $\frac{1}{2}$ -ին. Հստ սահ-
 մանման այդ ճնշումը 1 մմ մակերեսի վրա ներգործող ույժն ե. ու-

բեմ մենք կարող ենք ասել վոր գաղի ճնշումը հավասար ե նրա միավոր ծավալի ամբողջ կինետիկ եներգիայի մասին: Այդ հարաբերությունը մաթեմատիկական ձևով կարելի յէ արտահայտել հետևյալ հավասարմաք:

$$P = -\frac{2}{3}\pi \left(\frac{\pi v^2}{2} \right) \quad (2)$$

$$\text{Այստեղ ո 1 ամ՝-ում գտնվող } m_{\text{ոլեկուլների}} \text{ թիվը և, } h_{\text{սկ}} \left(\frac{\pi v^2}{2} \right)$$

մոլեկուլների միջին կինետիկ եներգիան եւ թեթև կինետիկ եներգիան արտահայտենք երգերով, ապա (2) հավասարության մեջ ճնշման մեծությունը կարառահայտվի դիներով ամ՝ վրա:

Տեսպերառութի փառօւմը Կելվինի անգիրառառությին սկալան յակ հներգիայի հավասար բաօխման ուղենիքը: Ընթերցողը յերեկի ըստելացել ե սնդիկի թերմոմետրով տեմպերատուր չափելուն: Նրա տեմպերատուրային սկալան վորոշվում ե սնդիկի թերմիկ լայնացման գործակցով: Յեթև մենք գործածենք մի ուրիշ հեղուկ, որինակ, ավելույթ, կստանանք մի ուրիշ տեմպերատուրային: Սկալա: Իզեալական տեմպերատուրային սկալան պետք ե անկախ լինի թերմոմետրի համար գործածվող նյութի բնույթից: Թանի վոր ջերմությունը մոլեկուլների կինետիկ եներգիան եւ, տեսակերպարությունը կարելի յեւսահման ել վորպես գաղի մոլեկուլների միջին կինետիկ եներգիկ եներգիա: Կարելի յէ ընդունել վոր տեմպերատուրն իր մեծությամբ հավասար ե միջին կինետիկ եներգիային, բայց սանտիգրադ աստիճանի նշանակությունն անփոփոխ պահելու համար անհրաժեշտ ե հավասարման մեջ մտցնել մի գործակից: Տեմպերատուրը ըստ այսմ սահմանվում ե հետեւյալ հավասարումով:


$$\frac{3}{2}kT = \frac{\pi v^2}{2} \quad (3)$$

$\left(\frac{\pi v^2}{2} \right)$ արտահայտությունը ներկայացնում ե մոլեկուլների միջին կինետիկ եներգիան (2) հավասարման մեջ: (3) հավասարումից չի յերևում, վոր այդ յեղանակով վորոշված տեմպերատուրը անկախ ե դավի բնույթից: Կարելի յէր սպասելու վոր գաղի միջին կինետիկ եներգիան կախում ունի մոլեկուլի մասաւյից: Տեմպերատուրը պետք ե սահմանվի այսպես, վոր պնդվի, թէ յերբ յերկու գաղ սերտ դիպման մեջ են լինում, նրա նշանակությունն այդ յերկու գաղի համար պետք ե միենանույնը լինի: Այդ նշանակում ե այն, ինչ վոր իրոք տեղի յէ ունենում, յերբ յերկու գաղ գիպման մեջ են լինում կամ անջատված են լինում միմյանցից ջերմատար պատով, նրանցից յուրաքանչյուրի

միջին մոլեկուլար կինետիկ եներգիան ստանում և միջնույն մեծությունը Ռւսակ մնաք կարող ենք գրել՝

$$\frac{1}{2} \overline{m_1 v_1^2} = \frac{1}{2} \overline{m_2 v_2^2} \quad (4)$$

Այս հավասարումը մաթեմատիկական արտահայտությունն և շատ կարևոր ընդհանուր միջդրույթի, վորը հաճախ կոչում են են եր գիտ ի հավասար բար բար ի ման որենք Այդ որենքի եքսպերիմենտալ ապացույցը կտրվի քիչ հետո Յեթե եներգիայի հավասար բաշխման որենքը ճիշտ է, ապա միանգամայն ակնհայտ է, վոր տեմպերատուրի մեր տված սահմանութիւնների անկախ է դազի բնույթից Այդպես սահմանված տեմպերատուրային սկալան նույնանում և տեմպերատուրների իդեալական թերումում է բացարձակ տեմպերատուրի ի կելվինը և սովորաբար կոչվում է բացարձակ տեմպերատուրի ի կելվինի սկալա:



Նկ. 3. Մասայուն ծավալով զազային թերումների Ա անոթը խորասութվում և հաստատում տեմպերատուր ունեցող բաղնիքի մեջ հետո առնածնէ Ը հավաստիշով սնդիկը հասցնում է մինչև Բ նշանը Այնուհետեւ հաջումը կարդացվում է Ը մասնամերքի վրա:

Զազային արենքը Յեթե (2) և (3) հավասարութիւնները միացնենք, կստանանք գազ զերի որենքի հավասարումը՝

$$p = n k T$$


(3) հավասարման ձախ մասում գործակիցը $\frac{1}{2}$ մըտացվել եր՝ (5) հավասարությանը պարզ տեսք տալու համար Յեթե թ արտահայտենք դիներով 1 մմ² վրա ապա կ-ի թվական նշանակությունը կլինի $1,37 \cdot 10^{-16}$ վորը կոչվում է զազային մոլեկուլար կոնստանտ: Տեմպերատուրի կելվինի սկալան գործնականում հաստատվում է գազային թերմոմետրի միջոցով:

Նրա մեջ մենք չափում ենք զազի վորոշ քանակության ճնշումը, յերբ նրա ծագալը պահվում է անփոփոխ 100-աստիճանյա (սանտիգրադ) սկալա հաս-

տառելու համար անհրաժեշտ և թերմոմետրի գնդում գտնվող գազի ճնշումը չափել պեր աստիճանում և 100 աստիճանում, (Այդ կետերի վորոշման մասին նայել ք-րդ գլուխը): Յենթաղբենք, թէ P_0 և P_{100} համապատասխան ճնշումներն են: Այդ գեղքում 100-աստիճանյա սկալայի աստիճանը վորոշվում և վորպես տեմպերատուրի այն փոփոխությունը, վորն անհրաժեշտ և թերմոմետրի տված ճնշումը $\frac{P_{100} - P_0}{100}$ -ով փոփոխելու համար:

Նկար 4 ցույց և տալիս ակընքախ կերպով գազի թերմոմետրով վորոշված տեմպերատուրի կախումը ճնշումից: Եքսարապուելով զերոյական ճնշումն ստանալու համար՝ գտնում ենք, վոր տեմպերատուրի բացարձակ զերոն գտնվում ե-273,2°-ում: Այն յեզրակացությունը, վորի համաձայն ճնշումը բացարձակ զերո տեմպերատուրում պետք և համասարվի զերոյի, միանգամայն համընկնում և բացարձակ տեմպերատուրի մեր սահմանման հետ, վորի համաձայն նա համեմատական և կինետիկ հներգիային: Իրոք, բոլոր գազերը դեռ զերոյի չհասած խտանում են (կոնդենսվում են) հեղուկ կամ պինդ մարմինների:

Կելվինի և 100-աստիճանյա սկալայի հարաբերությունը այսու և հետևյալ հավասարմամբ $T^o(K) = t^oC + 273,2$: T և t սիմվոլները սույն գրքի բոլոր ֆորմուլներում նշանակում են տեմպերատուրի սատուրացիայի սկալայի սկալայի սկալայի:



Նկ. 4. Բացարձակ տեմպերատուր:

Գազային որենիք հավասարման գործնական ձևը: Յեթե (5) հավասարումը գրենք $P = \frac{P}{KT} \Delta t$, կաեսնենք, վոր գազի մոլեկուլների թիվը միավոր ծավալում կախված ե միայն ճնշումից ու տեմպերատուրից և անկախ է գազի բնույթից: Սա Ավոգադրոյի (1811) որենքն է: Նրա ոգնությամբ կարելի յետ տալ գրամ-մոլեկուլի (մոլի) վորոշումը: Դաղաղային թթվածնի գրամ-մոլեկուլը հավասար ե 32 գրամ թթվածնի: Ավոգադրոյի թիվը, այսինքն՝ մեկ գրամ-մոլեկուլի մեջ յեղած մոլեկուլների թիվը փորձնական վորոշումների համաձայն՝ 6,06. 10^{23} եր:

Աահամանենք դադային մոլար կոնստանտը՝ R, վորպես $6,06 \cdot 10^{23}$ կ. ո մեծությունը վորոշենք

$$n = \frac{N}{V} \quad (6)$$


հավասարումից, վորտեղ N ընդհանուր մոլեկուլների թիվն է, իսկ V նրանց գրաված ընդհանուր ծավալը. Դրա հետ միասին N' մոլերի թիվը արտահայտվում է՝

$$N' = \frac{N}{6,06 \cdot 10^{23}} = \frac{W}{M}, \quad (7)$$

վորտեղ ա գաղի կշիռն ե՝ գրամմերով, իսկ M մոլեկուլար կշիռը Տեղագրելով այս հարաբերությունը (5) հավասարման մեջ, ստանում ենք դադային որենքի գործնական ձևը,

$$pV = \frac{W}{M} RT = N' RT \quad (8)$$

Ցերե գործածենք C. G. S. միավորներ, ապա R-ի նշանակությունը կլինի $8,31 \cdot 10^7$ երգ. Ցերե ճնշումն արտահայտենք սնդիկի սյան միլիմետրներով, իսկ ծավալը լիտրերով, ապա R = 62,4:



Նկ. 5. Շաերնի տպարտակ սիեմը՝ մոլեկուլար արագությունները գործելու համար, մոլեկուլար ճառագայթների խստացման (թեքման) միջնորդ:


Եթե թաղրենք, թե հեղուկը պարունակող անօթն ամեն կողմից փակված ե, և նրա բոլոր կետերում տիրում ե միանույն տեմպերատուրը. Մոլեկուլներն անշատվելով հեղուկից՝ գոլորշիացման ընթացքում չեն կոնդենսանում, յերբ կարկվում են անոթի պատերին, այլ անզրագունում են հակառակ ուղղությամբ և ընկնում հեղուկից բարձր գտնվող արածության մեջ, վորտեղ նրանք մասում են, մինչև վոր պատահականորեն նորից ընկնում են հեղուկի մակերեսը. Համապատասխան փորձերով ցույց ե տված, վոր յերը մոլեկուլը հարգածում ե հեղուկի մակերեսը, նա կորցնում ե իր կինետիկ եներգիայի մեծ մասը

և մոռւմ և հեղուկի մակերեսում¹, լնթերցողի համար բոլորովին պարզ կլինի, վոր այդ հետևանքը բղխում է մեխանիկայի որենքներից, յեթե նա վերհիշի, թե ինչ և տեղի ունենում, յերբ բիլիարդի շարժվող գունդը հարվածում է բիլիարդի մի ուրիշ՝ հանգիստ առնող գնդի:

Ակնհայտ ե, վոր հեղուկի մակերեսում միաժամանակ տեղի ունեցող գոլորշիացման և թանձրացման հետևանքով հաստատվում և մոլեկուլների վորոշակի խտություն (մոլեկուլների թիվը 1 մմ³-ի մեջ), վորը մնում ե անփոփոխ, յերբ թանձրացման արագությունը հավասարվում է գոլորշիացման արագության:

Հեղուկների վրա գտնվող գոլորշին վարվում ե դագի նման և ճընշում և գործ զնում անոթի պատերի և հեղուկի մակերեսի վրա: Այդ ճնշումը կոչվում է հեղուկի գոլորշում ճնշում: Դա հեղուկի ցույց տված ճնշումը չե, այլ այն ճնշումն ե, վոր ցույց ե տալիս հեղուկի գոլորշին, վորն իրեն պահում ե վորպիս դագ:

Ցերե յենթազբենց, վոր Մաքսուելի արագությունների բաշխման որենքը (2-րդ գլուխ. (9) հավասարում) կարելի յե կիրառել հեղուկ վիճակում գտնվող մոլեկուլներին—իսկ այդ յենթազրությունը հավանաբար հեռու չե ճշմարտությունից—դրանից պետք ե հետևի, վոր մոլեկուլների այն մասը, վորոնց կինետիկ եներգիան գերազանցում է կրիտիկական մեծության, պետք ե շատ արագ (եքսպոնենցիալ կիրառվ) անի անմպերատուրի բարձրացումից, մինչեւու թանձրացման արագությամբ տեմպերատուրի բարձրացումից, մինչեւու թանձրացման արագությունը, վորը կախված է մոլեկուլների միջին արագությունից, մեծանում ե ավելի զանգաղ, այն ե՛ ուղիղ համեմատական տեմպերատուրի քառակուսի արմատին (II գլուխ. (3) հավասարություն), յեթե գոլորշությունը մնում է անփոփոխ: Ուրեմն, յեթե յերկու պրոցեսների արագությունները հավասարվում են, ապա գոլորշու մոլեկուլային խտությունը և, հետևաբար, հեղուկի գոլորշու ճնշումը մեծանում է տեմպերատուրի բարձրացման հետ: Հեղուկի գոլորշու և տեմպերատուրի փոխադարձ կախման հավասարումը կտրվի VI գլուխությունը, վորն ունի այն ճնշումը, վորնա կունենար, յեթե նույն տեմպերատուրում զիսման մեջ լիներ իր հեղուկի հետ փակ անութում, ինչպես նկարագրված է նախորդ պարագրաֆի մեջ, կոչվում է հետպահած, նույնիսկ այն գեպքում, յեթե հեղուկը բացակայում է անոթից: Ցերե հեղուկի բացակայության դեպքում, ճնշումն աստիճանաբար բարձրացվում է, տեմպերատուրը պահպելով անփոփոխ, ապա


¹ Դրա համար անհրաժեշտ ե, վոր հեղուկի մոլերեսը կտարելապես մոքուը մենք (14-րդ գլուխ.)

գոլորշին կարելի յե գերհագեցնել, սակայն այդ պրոցեսն առանձնապես յերկար տևել չի կարող առանց գոլորշու ամբողջ ծավալում կոնդին-սացում առաջանալու՝ մշուշի կամ հեղուկի մանը կաթիլներից բաղ-կացած սուսպենզիայի գոյացմամբ։ Այդպիսի մանը կաթիլները ձգու-տում են գոյանալ փողու կամ ելնկարական լիցքեր կրող մասնիկների վրա, վորոնք գործում են վորպես թանձրացման կիստրոններ։ Այդ յե-րկույթը կարելի յե ոգտագործել ու մասնիկների ուղին տեսանելի դարձնելու համար, ինչպես կտեսնենք XV դիմում։ Հետաքրքիր ե, վոր գոլորշու գերհագեցման ամենահեշտ յեղանակը յերենին հանդի-սանում ե ճնշման հանկարծակի նվազեցումը։ Գոլորշին լայնանալիս ցրտանում ե, մի պրոցես, վորտեղ ճնշման փոքր ցածրացումն առա-ջացնում ե տեմպերատուրի նշանակալի իջեցում, և վորովհետեւ հագե-ցած գոլորշու ճնշումը կախված է տեմպերատուրից, շատ շուտով հաս-նում ե մի տեմպերատուր, վորում հագեցած գոլորշու ճնշումն ավելի փոքր ե գառնում, քան այն ճնշումը, վորի տակ գտնվում և գոլորշին։

Գոգային յեկ հեղուկ վիճակների իզօրերմերը Յեթե գաղը սեղ-մնք, պահենով տեմպերատուրն անփոփոխ, ապա քանի ճնշումը թույլ ե, (8) հավասարման համաձայն, նա կանք ծավալը փոքրանալիս, բայց ճնշման հետագա բարձրացումն առաջացնում է խոտորումներ, վորոնք այնքան ավելի նշանակալի յեն դառնում, վորքան ճնշումն ավելի յե բարձրանում, Վերջինից մենք հասնում ենք հագեցած գոլորշու ճնշման, և հեղուկն ակսում է յերեալ Մավալի հետագա փոքրացման ընթացքում ճնշումը մնում և անփոփոխ, մինչև վոր ամբողջ գաղը հեղուկանում եւ Նեղուկի ծավալի հետագա նվազեցումը կարելի յե իրագործել միայն չտիպանց մեծ ճնշումներ գործադրելով, վորովհետև հեղուկը շատ քիչ ե սեղմկում, Մավալի և ճնշման կախման կորը հաստա-տում տեմպերատուրում՝ այսպես կոչված, ԲՎ—դիքաբանները ցույց են տրված 14 նկարում։ Այդպիսի կորը կոչվում է իզոթերմական կոր։

Շատ հետաքրքիր ե համեմատել Վան-դեր-Լաալի հավասարու-մից սաացված իզոթերմերը (նկ. 14, կետագծերը) փորձից ստացված կորերի հետ։ Այն մարդում, վորտեղ 2 ֆազերը միաժամանակ ներկա յեն լինում, Վան-դեր-Լաալի կորի ընթացքը շեղվում է փորձնականից, բայց նա տալիս է այդ մարզի յերկու կողմերի վորտակական պատ-կերը, ինչպես գաղի, նույնպես և հեղուկի համար։ Յեթե մենք կիրա-ռենք (8) հավասարումը (եջ 30) մի գաղի համար, վորը սեղմկած է մինչև հեղուկի խտությունը, համապատասխան ճնշման համար կտա-նանք աներեսկայելի բարձր նշանակություն, մինչդեռ Վան-դեր-Լաալ-սի հավասարման մեջ արտաքին ճնշումն ավելի քան կոմպենսվում է $\frac{a}{V^2}$ տերմով, վորը ներկայացնում է միջմոլեկուլային ձգողական ույ-


ԺԵՌ Այդ թույլ և տալիս պատկերացնել թե վորքան ամուլը են կապված մոլեկուլները միմյանց հետ հեղուկի մեջ՝ չնայած նրանց ցրվելու ձգումն։



Նկ. 14. Ածխածնի գիշերի կազմերմերը կը բարիկական մարզում։ Անընդհատ գծերը ցույց են տալիս փորձնական նշանակալիքաները, իսկ կետավորված գծերը վառ դիր վառակի հավատքումով հաշված արդյունքները առ գիծը ներկայացնում է հագեցած գոլորշու լիակատար մակերսը ժագաները, իսկ ծը կորը՝ հեղուկի մոլեկուլար ծավալները հեղուկի գոլորշու մնաման տակ։

Հագեցած գալացու համեմարյանները չետաքրքիր և նշել վոր գորշակից հեղուկի և գոլորշու խտությունները մոտենում են միմյանց, վորչափ տեսպերատուրը մոտենում և կը բարիկականին, նույնպես և այն

վոր նյութի բոլոր ֆիզիկական հատկությունները նույնանում են (իդենտիկ են գառնում) այդ յերկու վիճակներում կամ «ֆազերում»: Կայլը և Մաթիասը գտել են, վոր յեթե ուղղահայաց կոռոգինատուների ցանցի վրա, հեղուկի և գոյակից գոլորշու խտությունների միջին թվաքանականները նշանակվում են տեմպերատուրների գիմաց, ստացվում ե մի ուղիղ զիծ, ինչպես այդ ցույց և տված նկարում (15. նկ.): Այդ եմպիրիկ հարաբերությունը, ինչպես ցույց են տալիս փորձերը, շատ նյութերի համար գրեթե լրիվ արդարանում է: Նա հայտնի յե ուղղագիծ երամագծի որենք անունով: Նկարից (15. նկ.) պարզ յերեսում ե, վոր յեթե դադարին որենքը, ինչպես կա-




Նկ. 15. Կայլը և Մաթիասի որենքը

բելի յե սպասել կիրառելի յե հագեցած գոլորշիներին՝ կրիտիկական կետից շատ ցած տեմպերատուրներում, վորտեղ հագեցած գոլորշու հնչումը փոքր ե, ապա ավելի բարձր տեմպերատուրներում յերեան են դալիս խոստորումներ, վորոնք այնքան նկատելի յեն դառնում, վորքան տեմպերատուրն ավելի յե մոտենում կրիտիկականին: Որի՞նակ, կրիտիկական տեմպերատուրում, վորում գոլորշու խտությունը հավասարվում ե հեղուկի խտության, կրիտիկական ճնշման և ծագալի արտադրյալը, փոխանակ հավասար լինելու RT-ի, ինչպես պահանջում ե գագերի որենքը, հավասար ե միայն մոտ 0,27 RT-ի: Դառդային որենքից կատարվող այդ խոշոր շեղումների հետ միասին, նկատվում են, ինչպես պիտօք ե սպասել, հագեցած մոտիկ վիճակում գտնվող գոլորշիների տեսակարար ջերմությունների խոշոր շեղումներ կիսերիկ թերիայով նախատեսածներից: Զույգ թումանի գործակցի թվա-

կան նշանակությունը ավելի մեծ է և միշտ դրական. այդ նշանակում ե, զոր զորոշին բարձր ճնշումից լայնանալով մինչև ցած ճնշում, ցրտանում ե.

Դագերի հեղուկացումը Այսպես կոչված մասյուն գաղերի՝ ջրածնի, թթվածնի և այլ դաղերի—կրիտիկական տեմպերատուրները սովորաբար պատճող տեմպերատուրներից շատ ավելի ցած են լինում. այդ պատճառով հեղուկացնելու համար այդ գաղերը պետք ե կան-



Նկ. 16. Տարածական ձևելի սխեման, զորը ցույց է տալիս թ. V, և T ֆունկցիոնալ կատը ջրի համար նրա կրիտիկական մարզում:

խորեն այս կամ այն ձևով ցրտացնել օրտացման ամենահաստրակ, տեմպերատուրային բավական լայն ինտերվալի համար գործադրելի, մեթոդը Զուութուսոնի եֆֆեկտի հետևանքով առաջացող դաղի ցըրտացումն ե ամենաբարձր ճնշումների տակ վորքան զոր սրանք մեջնուկան կառուցման տեսակետից իրագործել՝ նու Հեղուկացնող ալպարատի գծագիրը տված ե 17. նկարում:

Հեղուներով, զոր ջերմության փոխանակումը բարձր և ցածը

ճնշման գազային հոսանքների միջև տեղի յեւ ունենում կատարյալ կերպով և վոր սխատեմը կատարելապես ջերմամեկուսացած և դրսից, մենք կարող ենք հաշվել հեղուկացվող գազի քանակությունն ուղղակի ջոռութումունքն եփելութիւնը:

Յենքադեմնեց, թե գոզը մանում և հեղուկացման աղաբարտաց C 25° -ում և մի այլպիսի ճնշման տակ, վոր ջոռութումունի եփեկակի հեղուկացման աղանում և 20 աստիճանի չափ աեմպերատուրի անկամ Այդ նշանակում եւ, վոր յեթե գոզն աղաբարտաց աւղակի բաց թողնված լիներ, որա աեմպերատուրը հավասար կլիներ 50 ։ առաջ, ճնշման տակ:

Սակայն գոզը աեղացման վենակիլին հասնելուց առաջ անցնում և ջերմության փոխանակչի վորը միջով, վորածի նու դուրս հոսող գոզից ցրտանում և մինչև համարյա հեղուկացման աեմպերատուրը թեղուցման վենակիլից յելնելուց հետո նա վորովելով ջերմության փոխանակչի վորածիները՝ ըստը աղանում և և ապամում և մինչև 25° այն մոծնենում, յերբ սկսում և հեղուկալ աղաբարտացից, Յենթագրեներ, թե ակնուցման վենակիլ միջով անցնում և $1 + \chi$ մոլ գոզ և վոր 1 մոլ աղաբարտաց դուրս և գոլիս 25° -ում, ինչ մոլ մասմ և աղաբարտամ, հեղուկի ձևով: Յեթե գոզի համար $C_p = 7,0$, աղա գուշու հասող գազին պետք և արզի 140 կալորիա ջերմության, վորովելով նու ապանա 5° -ից մինչև 25° Այդ ջերմությունը պետք և ստացվի և մոլ գոզի ցրտացումից 5° -ից մինչև թանձրացման (կոնդենսացի) աեմպերատուրը և այդ գոզի կոնդենսացմբը հեղուկ վիճակի հմանալով կոնդենսման ջերմությունը կարող ենց հաջիկ չ-ը: Յեթե կոնդենսված գոզը թթվածինն եւ, աղա Յ աղյուսակից նրա կոնդենսման ջերմությունը հավասար և 1620 կալ. մեկ մոլի համար: Ուստի ($7,0 \cdot 188 + 1620$) $\chi = 140$

$$x = 0,0475 \text{ մոլի:}$$

7 աղյուսակից յերևում եւ, վոր ջոռութումունի գործակիցը ջրածնի համար 20° -ում բացասական եւ Այդ պատճառով, վորպեսզի ջրածնը հեղուկ վիճակի բերվի, անհրաժեշտ և սեղմված ջրածինը կանխապես ցրտացնել հեղուկ ողով մինչև մի աեմպերատուր, վորում ջոռութումունի գործակիցը դրական եւ Նման կերպով, նախքան հելլումը հեղուկացնելը, անհրաժեշտ և ցրտացնել այն հեղուկ ջրածնով:

Աղյուսակ 7

Ջոռութումը ճնշման մեկ ամսովիք անկամ համար, յերբ գոզն ընդորժակվում և անցը միջով: Յեթե գոզը ցրտանում եւ, գործակիցը լինում և դրական Դրական գործակի մեծությունը փոփոխում և ճնշման հետ: Սարք բերված նշանակությունները վերաբերում են 1 առաջ:

Գոզեր	$0^{\circ} C$	$20^{\circ} C$	$40^{\circ} C$
Ջրածին	-0,013	-0,018	-0,023
Հելիում	0,0407	-0,044	
Աղա	0,888	0,291	0,250
Թթվածին	0,366	0,328	0,289
Ածխածնի բերքսիդ . . .	1,875	1,167	1,0054

Հելիումն առաջին անգամ հեղուկացրել եւ կամմերլինդ Ոնսեսը Ի.յ.դենի համալսարանում 1912 թ.: Այն ժամանակ հելիումի աղբյուրները շատ սահմանափակ են յեղել United states Bureau of Mines-ի (ԱՄՆ) բնական գազերից հելիում ստանալու յեղանակների վրա կոտարած աշխատանքներն ողաջնացության նպատակների առնչությամբ՝ անսպասելի կերպով բաց արին հելիումի անսահմանափակ աղբյուր՝ ցած տեմպերատուրներում հետազոտություններ կատարելու համար:

Զորութումսոնի եֆֆեկտը ցրտացման պրոցեսի համար վոչ բավականաչափ դորել միջոց եւ, թեև, ինչպես ասվեց վերևում, այդ մեթոդը շատ հասարամ է եթող եւ Փորձեր են արվել ցրտացման ուրիշ յեղանակներ գոներ՝ համակապես թթվածնի արդյունագործական արտադրության համար հեղուկ ողի ֆրակցիոն թորման միջոցով:

Այնակի վերածված հավասարությունից յերևում ե, վոր Վան-դեր-Ղաալի հավասարման հիման վրա կարելի յի հաշվել կրիտիկական տեմպերատուրը և ննշումը, վորութիւններն կրիտիկական կետն իդոթերմի կեռացման կետն եւ, վորը համապատասխանում ե կրիտիկական տեմպերատուրին:

Յեթե մենք Վան-դեր-Ղաալի հավասարությունը ըստ ա և Ե-ի՝ կեռացման կետի համար, կստանանք հետևյալ հավասարությունը՝

$$b = \frac{1}{3} V_c \quad (1)$$


$$a = \frac{9}{8} V_c RT_c, \quad (2)$$

վորտեղ V_c և T_c ՝ V -ի և T -ի կրիտիկական նշանակություններն են:

Յեթե մենք ա և Ե մեծությունների նշանակությանները տեղադրենք Վան-դեր-Ղաալի հավասարման մեջ, ապա կրիտիկական կետի համար կստանանք հետևյալ հավասարությունը՝

$$p_c V_c = 0,875 RT_c, \quad (3)$$

մինչդեռ ինչպես առաջ ասվեց՝ սույն գլխում, $p_c V_c$ -ի համար վորձով գոնզված միջին նշանակությունը հավասար է մոտավորապես $0,27 RT_c$. Այդ զարմանալի չե՞ս վորովներն Վան-դեր-Ղաալի հավասարությունը



Նկ. 17. Չերմության փոխանակիչ՝ գազեր հեղուկացնելու համար (սկանավ). Սեղմած գազը մոտանում է փոքր տափակ, վորութելը ընծով ոձուելի միջով, և նա լոյնանում է ուղղուցման վեհակից յեղեկիու Դազի մի մուսը հեղուկանում ե, իսկ մացած մոսը յետ է հոսում և վողողերև ոձուելը՝ խլում ե սրբ մեջ մանող գազի ջերմությունը:

Տիշտ պետք և լինի միայն վոչ շատ բարձր ճնշումների համար, հետևաբար սովորություն և դարձել եսի և Եսի նշանակություններն ընտրել այսպես, վոր լավ համընկնում ստացվի ցած ճնշումների տակ կատարած փորձերի ավալների հետո:

Այդպիսի նշանակությունների ամփոփում և տրված 8 աղյուսակում:

Աղյուսակ 8: Ա և Յ կոնստանտների նշանակությունները Վան-դեր-Վաալսի հավասարման մեջ 1 մոլ գոզի համար.

Նյութեր	Ա լիոր.	Յ լիոր. ² առանձ.	Նյութեր	Ա լիոր.	Յ լիոր. ² առանձ.
Արգն	0,0302	1,303	Ազուր	0,0396	1,345
Հելիում	0,0284	0,03258	Ջուր	0,03055	5,47
Ածխածնի գիսերիդ	0,04275	3,600	Ջրածին	0,0267	0,244
Թթվածին	0,03118	1,832			

Նշանակենք T_c , P_c , V_c — կրիտիկական տեմպերատուրը, ճընշումը և ծավալը, իսկ P , V , T — թող լինեն այդ փոփոխականների վորես այլ նշանակությունները. Մոցնենք յերեք նոր փոփոխականներ հետեւյալ հավասարությունով սահմանված:

$$\Theta = \frac{T}{T_c}, \pi = \frac{P}{P_c}, V = \frac{V}{V_c} \quad (4)$$

Θ , π և V մեծությունները կոչվում են համապատասխանորեն — կերած գած տեմպերատուրը, վերածված ճնշում, վերածված ծավալ:

Եթեք մենք այդ արտահայտությունները դնենք Վան-Դեր-Վաալսի հավասարման մեջ, կարող ենք ա և Յ կոնստանտները Փորմուլից գցել և ստանալ վերածված վիճակի հավասարություն՝

$$\left(\pi + \frac{8}{V} \right) \left(V - \frac{1}{3} \right) = \frac{8}{3} \Theta \quad (5)$$

Կարող և թվայ թե (5) հավասարությունը գաղիք ընույթ վորոշող վոչ մի կոնստատ չի պարունակում և հետևաբար կարելի յէ կիրառել այն ամեն մի գաղիք: Բայց իրոք մենք ա և Յ կոնստանտները միմայն փոփոխիչներն են, T_c , P_c , V_c կոնստանտներով (ասե (1), (2) և (4) հավասարությունները): Քանի վոր (5) հավասարությունը արտածված է Վան-Դեր-Վաալսի հավասարություն, նա չի կարող ավելի լավ ներկայացնել նյութերի վարքը կրիտիկական կետի մոտերքում, քան Վան-դեր-Վաալսի հավասարությունը:

Այսուամենայնիվ, ընդհանրապես յենթադրվում է, վոր բոլոր գաղիքի համար կիրառելի պետք և լինի վիճակի մի հավասարություն:

վորն ունի (5) հավասարման ձևը և պարունակում ե, ինչպես (5) հավասարումը, վերածված ճնշումը, տեմպերատուրը և ծավալը Այդ հիպոթետիկ հավասարումը պետք է ունենա հետեւյալ ձևը՝

$$F(\pi, V, \Theta) = \text{const} \quad (6)$$

և պետք է ներկայացնի նամապատասխանող վիճակների ուժնի մաթեմատիկական արտահայտությունը. Թանի վոր բարձր ճնշման տակ միաժամանակ դոյլություն ունի հեղուկ և գոլորշի, ապա (6) հավասարումը պետք է կարելիություն տա մոտավորապես հաշվելու հագեցած դոլորշու ճնշումը կրիտիկական կետում և մի շարք-այլ հատկություններ, վորոնք կապված են հեղուկ վիճակից դոլորշու վիճակն անցնելու հետ. Վոր նման հայցը համար հիմք կա, այդ ապացուցվում է մի շարք եմպիրիկ որինաչափությունների գոյությամբ, վորոնք բավական լավ կերպով արդարացվում են փորձնական տվյալներով; Նրանցից մի քանիսը կհիշատակենք. Վորչափ վոր հեղուկների խտությունը բացի կրիտիկական կետին անմիջապես մոտ մարզից, մոտավորապես անկախ և ճնշումից և տեմպերատուրից, այդ եմպիրիկ կանոնները չեն նկատում ծավալը վորպես փոփոխական մեծություն, չնայելով, վոր ծավալը մտնում է վիճակի վերածված հավասարման մեջ:

Մի բանի նմապիրիկ որինաչափություններ. Գոյորշիացման մոլեկուլար ջերմությունը, կարբիաներով չափված, հավասար և մոտավորապես 21 անգամ յեռման բացարձակ տեմպերատուրին նորմալ ճնշման տակ: Դա Տրոռուառնի կանոնն եւ Յեռման վերածված տեմպերատուրը մի շարք հեղուկների համար, նորմալ ճնշման տակ, մոտավորապես հավասար և $\frac{1}{2}$ -ի: Յեթե յերկու հեղուկ գտնվում են միևնույն վերածված տեմպերատուրում, ապա նրանք ունենում են միահավասար վերածված ճնշում: Սա Ռամզեյի և Յունգի կանոնի մի արտահայտությունն եւ, կան մի շարք ուրիշ եմպիրիկ կանոնները նրանք թեև յերբեմն ոգտակար են, բայց վոչ մի դեպքում չեն կարող բավարար կերպով փոխարինել ֆիզիկական մեծությունների ճշգրիտ (եքական) նշանակությունների աղյուսակներին:


Ներքին ճնշում յիշ մակերեսային լարվածություն Ձգողական ույժը մոլեկուլների միջև նույն աղղեցությունն ունի խտության վրա, ինչպոր արտաքին ճնշումը Այդ պատճառով այդ ույժը համար նկատվում է վորպես ներքին ճնշում: Վանդեր-Վաալը մտցրել է այս գաղափարը վորպես շակում գազային վիճակի՝ ներքին ճնշման համար: Նույն ձգողական ույժերը պետք է հանդիս գան հեղուկ վիճակում, բայց այստեղ նրանք ազդում են շատ ավելի կարճ տարածության վրա. և այդ պատճառով ավելի զորեղ են: Յեթե մենք գազային որենքով հաշվենք այն արտաքին ճնշումը, վորն անհրաժեշտ է գաղի մու-

լեկուլներին մի ծավալ տալու, վորը համապատասխաներ նրանց ձառվալին հեղուկ վիճակում, կզտնենք, վոր այդ ճշգումը հսկայական պիտի լինի: Սակայն հեղուկ վիճակը պահպանելու համար այգափիսի մեծ նշառում չի պահանջվում, վորովհետև նույն կարգի մեծության մի ներքին ճնշում պահում ե նրա մոլեկուլները միմյանց մոտ Այդ ներքին ճնշումն ամենից ակներև գարճառող յերեսույթը մակերեսային լարվածությունն է:

Հեղուկի տվյալ մասսան մի անփոփոխ (ֆիքս) ծավալ ունի և հեղուկի մակերեսը կտրական սահման և հեղուկի և գոլրշու միջև:

Առաջ արդեն այս դիտում առվեց, վոր հեղուկի վերին աղատ մակերեսը ձգտում ե հարթանալ, սակայն այդ սակավ ե իրադորձվում: Յեթե անոթը նեղ ե, հեղուկի մակերեսը կուրանում և պատերին մոտ կապիլար ույժերի չնորհիվ. իսկ յեթե նո լայն ե լինում, հեղուկի մակերեսն ունենում ե յերկրագնդի մակերեսույթին հատուկ կորությունը: Այդ աղատ մակերեսն այնպես և պահում իրեն: Ինչպես պիխոդ ձգված թաղանթը, բայց մի լարվածությամբ, վորը մնում է հաստատուն և անկախ ե ձգվածության աստիճանից:

Նկ. 18. Մակերեսային լարվածության մեխանիկական մեկնաբանումը




Յեթե հեղուկի վորոշ քանակությունն աղատ կերպով կախված է լինում տարածության մեջ, նա ընդունում ե գնդի ձև մակերեսի լարվածության ազդեցության տակ, վորովհետև նույն ծավալին ունեցող մարմիններից նվազագույն մակերեսն ունեցողը գունդն ե: Մոտավորապես գնդաձև տեսք են ստանում փոքրիկ կաթիլները մի մակերեսի վրա վորը նրանցից չի թրջվում:


Մակերեսային լարվածությունը կարելի յե ամենից պարզ կերպով բացարարել: 18 Նկարի ոգնությամբ, Մենք այստեղ ունենք հեղուկի բարակ թաղանթ, վորը ձգված ե յերկու զուգահեռ մետաղյալարերի միջև, վորոնց հետագորությունը միմյանցից 1 ամ ե: Յեթե թաղանթն ավելի ձգենք, շարժելով մետաղյա լարը ուղաքի ուղղությամբ, մենք պետք ե հաղթահարենք մակերեսային լարվածությունը: Իրականում մենք պետք ե հաղթահարենք կրկնակի ույժ, վորովհետև թաղանթը յերկու մակերես ունի: Բայց մակերեսային լարվածության սահմանումը տալիս, ընդունենք, վոր թաղանթի հետեւ մակերեսը գորություն չունի: Մասնեւ աղատ մակերեսային լարվածությունը սահմանվամ ե վայրին մի ուժ, վայն անբահեօս ե աև լայնության բաղամբը ձբգ-

ված վիճակում պահնելու համար: Յեթև լարը տեղափոխենք 1 մմ դեպի
աջ, թաղանթի մակերեսը կսեծացնենք 1 մմ²-ով: Կատարած աշխա-
տանքը հավասար կլինի ույժի և տարածության արտադրյալին, և այդ
մեծությունը դարձյալ հավասար է մակերեսային լարվածության: Այս-
պիսով մակերեսային լարվածության

յերկրորդ բնորոշման համաձայն նա
հավասար է այն աշխատանքին, վորը
կատարվում է, յերբ մակերեսը մեծա-
նում է 1 մմ²-ով: Մակերեսային լար-
վածությունը նշանակվում և սովորա-
բար հունական՝ տառոզ և հաճախ
արահայտվում է դիներով՝ սահմանում-
ներից ածեն մեկց կարելի յերկրա-
կացնել վոր մակերեսային լարվածու-
թյունն ունի [մt⁻²] տարչափում.
քանի վոր աշխատանքն աղատ եներ-
գիս յերկայացնում (V գլ.): Քերես
ավելի հարմար և մեխարամնել մակերեսային լարվածությունը, վորպես
մակերեսային աղատ եներգիս մակերեսութիւնի միավորի համար:



Նկ. 19. Մակերեսային լարվա-
ծությամբ առաջացած ճնշումը
գնդակի կաթելի մեջ.



Նկ. 20. Հեղուկի ըարձացումը կա-
պէլութում:

տանքը, վորն անհրաժեշտ և մոլեկուլները հե-
րեն համար:

Բնարկելով մոլեկուլների վար-
քը հեղուկի մակերեսում՝ մենք
գալիս ենք այն յեղբակացու-
թյան, վոր յուրաքանչյուր մո-
լեկուլի վրա ներգործող ույժն
իրականում ուղղված է մակերե-
սին ուղղահայաց կերպով և
ձգում է տեղափոխել այն մա-
կերեսից գելիս հեղուկի ներսը:
Դրա հետ միասին այդ ույժը
պետք է ունենա նաև մակերեսին
դուրակեռ կոմպոնենտ, վորը յե-
րեան և գալիս վորպես մակերե-
սի լարվածություն: Մոլեկուլար
տեսակետից մակերեսային լար-
վածությունը կարելի յերկայի-
նական աշխատանքի մեջ միա-
վորի համար հաշված աշխա-

Այստեղ մակերես ասելով պետք է հասկանալ վոչ թե մոլեկուլ-ների արագքին շերտը, այլ մի վորոշ մարդ, վորն ամենայն հավանականությամբ ընդգրկում և մոլեկուլների մի քանի շարքի հաստության շերտ, վորտեղ մոլեկուլների վրա ներգործող ուժերը տարբեր են, քան հեղուկի ներում: Փորձի տեսակետից՝ հեղուկի մակերեսի վրա ձգված թաղանթի գոյության պատկերացումն անբավարար ե, ինչպես ցույց են տալիս հետևյալ ֆակտերը: Վերցնենք հեղուկով կիսով չափ լրցված մի բաժակ, գնենք այն թեք դրությամբ և ածենք նրա մակերեսի վրա լիկոպոդիումի փոշի: Եեթե հիմա բաժակը գնենք՝ ուղղահայաց դրության մեջ, մենք մակերեսի համաչափ կրճատում չենք տեսնի, այլ լիկոպոդիումի փոշին կթաշվի մակերեսի այն տեղերը, զորոնք դիպչում չեն պատերին: Ըսդհակառակը, մակերեսային լարվածության պատկերացումը պահպանում և իր ամբողջ նշանակությունը, քանի վոր մակերեսի ընդարձակումը պահանջում ե աշխատանք, և այդ աշխատանքը կարելի յե ներկայացնել վորպես մակերեսին զուգահեռաբար ներգործող ուժով պայմանավորված աշխատանքը, իսկ այդ պատկերացումից մենք կարող ենք մեխանիկայի հասարակ որենքների հիման վրա արտածել մի քանի կարևոր հարաբերություններ:

Նկ. 21. Կաթիլների հաստումը կապիլար իուղովակեց.



Ե հեղուկը, բայց և այնպես մակերեսային լարվածությունն առաջ ե բերում հեղուկի վրա մի լրացուցիչ արտաքին ճնշում (վերջինս չպետք ե շփոթել ներքին ճնշման հետ), վորը կարելի յե հաշվել՝ յիշնելով նմանեցումից, Յերեսակայինք հեղուկի մի գունդ, վորը կազմված ե յերակու կիսագնդերից, վորոնք շփվում են միմյանց կետագծով (նկ. 19):

Մակերեսային լարվածության լրիվ ուժը, վորը ներգործում և եկվատորիալ (հասարակածային) գծի ուղղությամբ, հավասար ե, չունեցած վորտեղ ո գնդի շառավիղն ե: Մակերեսը, վորի վրա այդ ուժը նընշում և գործ դնում, հավասար ե ուժ², Ուստի ճնշումը հավասար ե՝

$$P = \frac{f}{s} = \frac{2\pi r \gamma}{\pi r^2} = \frac{2\gamma}{r}, \quad (7)$$

Այդ ճնշումը նկատելի յե դառնում միմիայն, յերբ ո փոքր ե լինում: Մակերեսային լարվածության չափումը թիչ առաջ ցույց տվինք,

վոր ճնշումը հեղուկի գոգավոր կողմի վրա $\frac{2\gamma}{\Gamma}$ -ով ավելի յէ, քան կուրբնթարդ կողմի վրա Այդ հարաբերությունը կարելի յէ ոգտագործել՝ հաշվելու համար հեղուկի վերելքի բարձրությունը կապիլար խողովակում։ Յենթադրենք, թե հեղուկը թրջում է խողովակի պատերն այսպես, վոր նրա անկյունը հեղուկի և պատի միջև՝ հավասար է զերոյի (նկ. 20)։ Այս գեղցում փոքր շառավղով խողովակի համար կարելի յէ բնդունել, վոր մենիսկը քսդի ձև ունի ճնշումը հեղուկի մեջ մենիսկից անմիջապես ներքեւ՝ $\frac{2\gamma}{\Gamma}$ -ով նվազ ե, քան հեղուկի տափարակ մակերեսի տակ՝ կապիլարից դուրս ճնշումների այդ տարրերությունը պետք է հավասարակոչվի կապիլարում գտնվող հեղուկի սյան հիդրոստատիկ ճնշմամբ, վորը, յեթե արհամարդենք ողի ճնշումների տարրերությունը, հավասար է hgd -ի. այսուեղ հ-հեղուկի վերելման բարձրությունն է, ց-ծանրության ույժի արագացումը, և գ-հեղուկի խոռոչությունը Հավասարեցնելով յերկու արտահայտությունները՝ մենք գտնում ենք

$$\gamma = \frac{rhdg}{2} \quad (8)$$

$rhd = \frac{2\gamma}{gd}$ արտադրյալը բնորոշ մեծություն է յուրաքանչյուր հեղուկի համար և կոչվում է հեղուկի կտպիլար կոնստանտ։ Աղյուսակներում սովորաբար նա տրվում է քառակումի միլիմետրներով։

Կապիլար վերելման չափումն, առնվազն թեղորիխայում, մակերեսային լարվածության չափման ամենահասարակ մեթոդն է և նա բացարձակ մեթոդներից ամենաշիտակն է, ու նրանով են սահմանվում (կալբրվում) ուրիշ մեթոդների չափումները։

Սակայն գործնականում այդ մեթոդով շատ եքզակտ չափումներ կատարելիս մենք հանդիպում ենք գժվարությունների։ Այդ դժվարություններից ամենամեծը համաշափ անցքով նեղ կապիլար պատրաստելն է։ Դրա հետ միասին այդ մեթոդը չափաղանց զգայուն է ամենաճնշին անմաքրությունների դիմաց։

Կարիքի կօքի մերձքը 21 նկարի հիման վրա կարելի յէ յենթադրել թե հավասարակոռությունը հաստատվում է, յերբ կաթիլի կշիռը՝ ոց հավասար է 2 πγ։ Այդ յեզրակացությունը հիմնվում է այն յենթադրության վրա, թե կաթիլը զլանածն է այն աեղում, զորացելն ան կապված է խողովակին, բայց այդ ճիշտ չեւ իրականում նկարի վրա ամենաին հաշվի չի առնված այն, վոր խողովակի ծայրին մոտ, կաթիլի պոկվելուց անմիջապես առաջ, տեղի յէ ոմանակում պրկում,

գորի շնորհիվ կաթիլի մի մասը մնում է խողովակին կալած։ Հարկին սը¹ արտածել է մի եմպիրիկ հավասարում, զորը տայիսե խողովակի ծայրի շառավղի, պոկզող կաթիլի ծավալի և հեղուկի մակերեսային լարվածության հարաբերությունը։

Տ. Ավագուստիկ: Մէ քանի հեղուկների մակերեսային լարվածությունը C 20°-ում

Զուր	72,75	Եթիլ-ակրոլ	22,27
Բենզոլ	28,88	Ացետոն	23,70
Ածխածնի աետրոքլորիդ	26,77	Ֆենոլ	40,0
Սծմբածխածնին	32,88	Անիլին	42,9
Քլորոֆորմ	27,24	Բրոմ	41,5
Մեթիլ-ալիոն	22,61	Մեդիկ	465,0
Թացախական թթու	27,08			

Տեմպերատուրի ազդեցուրյանը մակերեսային լարվածության վրա Մակերեսային լարվածությունը նվազում է տեմպերատուրի աճան հետ և համարում է զերոյի կրիտիկական տեմպերատուրում։ Առաջարկված են յեղել զանազան եմպիրիկ հավասարություններ, զորոնք լավ ներկայացնում են մակերեսային լարվածության փոփոխութեա ըստ տեմպերատուրի՝ մինչև 30°—40° կրիտիկ տեմպերատուրից ցած։ Այդպիսի ներից մեկը Ռամզեյի և Շիլդոսի կլասիկ հավասարությունն է՝

$$\gamma \left(\frac{M}{d} \right)^{1/2} = k(T_c - T - \theta) \quad (9)$$

Այստեղ M հեղուկի մոլեկուլար կշիռն է, d—նրա խտությունը, k—եմպիրիկ կոնստանտ է, T_c — կրիտիկական տեմպերատուրը և T—այն տեմպերատուրն է, զորում մակերեսային լարվածությունը չափում է Ռամզեյի և Շիլդոսի հավասարությունը և համապատասխանող վիճակների որենքին, և այդ նշվում է այն բանով, զոր (9) հավասարման մեջ հանդիս ե զալիս կրիտիկական տեմպերատուրը։ Տարբեր նյութեր իրար հետ համեմատելու համար անհրաժեշտ է հաշվել նրանց մակերեսային ազատ եներգիան մեկ մոլեկուլի համար։ Մակերեսային ազատ եներգիայի միջին նշանակությունը մեկ մոլեկուլի համար կարելի յեւ զորոշել՝ ընդունելով, զոր հեղուկի մոլեկուլները դասավորված են պարզ խորանարդային ցանցում։ Այդ դեղովում մոլեկուլի միջին մակերեսը հավասար կլինի մեկ մոլեկուլին հասնող միջին ծավալին բարձրացնելով, զեթե մոլեկուլի կշիռը բաժանենք հեղուկի խտության վրա։ Քանի զոր (9) հավասարման մեջ մտնում է

¹ Harkins, J. Am. Chem. Soc. 41, 519 (1919):

գրամ-մոլեկուլի կշեռը՝ M , ապա $\gamma \left(\frac{M}{d} \right)^{2/3}$ ներկայացնում է $(6,06 \cdot 10^{22})^{2/3}$

մոլեկուլների մակերեսային ազատ եներգիանուն

Ա. Ի. Բաչինսկու և Մալչ-Լեոպի առաջարկած ավելի հասարակ հավասարությունը հաշվի յի առնում այն ֆակտը, վոր բարձր խտությունների դեպքում զոլորշու ֆաղը պետք է նկատելի ազդեցություն ունենա մակերեսային լարվածության վրա.

$$\gamma = k(D - d)4 \quad (10)$$

Այսուղի Շ նշանակում է հեղուկի խտությունը, d —գոլորշու խըստությունը, Ցեմպերատուրը չի մտնում բացահայտ կերպով այս հավասարման մեջ, բայց հասկանալի յի, վոր այդ յերկու խտությունները տեմպերատուրի ֆունկցիաներ են. Մակերեսային լարվածության վարքը կրիտիկական կետին մոտիկ տեմպերատուրներում կարելի յի ցուցադրել փորձով՝ ածխածնի գիրքսիդի վրա, վորը գտնվում է հաստապատ խոզովակում բարձ ճնշման տակ թանի դեռ մակերեսային լարվածությունը գոյություն ունի, հեղուկը գոյացնում է մենիսկը և պարզ յերկում և անջատման մակերեսը գաղային և հեղուկ ֆաղերի միջև Ցերը կրիտիկական տեմպերատուրը՝ մոտավորապես 31° —մոտենում է, մենիսկն ավելի ու ավելի տափակ և դառնում, և յերկու ֆաղերն անջատող մակերեսն ամփոփանում է. Կրիտիկական տեմպերատուրում մոլեկուլների կինետիկ եներգիան այնքան մեծանում է, վոր ձգողական ույժը մոլեկուլների միջև չքանում է:

Հեղուկին սահմանակից գաղիքնություն ապաւմ է մակերեսային լարվածության վրա. Մակերեսային լարվածության տարբեր մեծություններ են ստացվում, նայած թե մակերեսային լարվածության չափումները կատարվում են ողիք ներկայությամբ, թե վակուումնում, վորտեղ հեղուկը դիպման մեջ և միայն իր սեփական գոլորշու հետ, Ազդեցությունը փոքր է, յեթե ներկա գտնվող ոտար գաղիք ճնշումը չափավոր է:

Կոլարօխացման ջերմության, մակերեսային լարվածության յուկ ներքին ռեզուման կապը Գոլորշիացման ջերմությունը՝ հաշված մեկ մոլեկուլի վրա, գոյն մոտավորապես, հավասար է այն աշխատանքին, վորն անհրաժեշտ է ծախսել վորապես մոլեկուլը հեղուկի ներսից փոխադրվի վորորշու տարածությունը՝ հեղուկից վերև. Մակերեսային լարվածության ազատ եներգիան մեկ մոլեկուլի համար հավասար է այն աշխատանքին, վորն անհրաժեշտ է ծախսել՝ մոլեկուլը հեղուկի ներսից հեղուկի մակերեսը փոխադրելու համար, Ցերե ընդունենք, վոր մոլեկուլը գնդի սիմետրիա ունի, ապա այդ աշխատանքը պետք է յերկու անդամ ավելի փոքր լինի, քան այն աշխատանքը, վորով մոլեկուլը

հեղուկից կատարելապես հեռացվում եւ Այդ հարաբերությունը հայտնի յեւ Ստեֆանի որ ենք անունով և մի քամի դեպքերում բավական լավ արդարացվում եւ փորձով։ Խնչպես ցույց եւ տված լ գլխում, ներքին ճնշումը գազային վիճակում բավական ճշտությամբ արտահայտվում եւ Վան-դեր-Ղաալի շտկման տերմով։

Հեղուկի մոլեկուլար կօրուց Առաջաւմ հեղուկ վիճակի համար մոլեկուլար կշիռների ուղղակի վորոշման մեթոդներ գոյություն չունեն, մենք նույնիսկ չենք կարող ճիշտ սահմանել այսաեղ թե ինչ ենք հասկանում մոլեկուլար կշիռ ասելով։ Թանի վոր հեղուկի մոլեկուլների իրար շատ մոտ են գանվում, կարելի յեւ սպասել վոր հեղուկ վիճակում գոյություն ունենան ասոցման և պոլիմերացման տենդենցիներ։ Այդ ձևով առաջացած ագրեգատները կարող են կազմված լինել վորոշ թվով մոլեկուլներից և ունենալ շատ թե՛քիչ տեսական գոյություն։ Մակար շատ դեպքերում կարելի յեւ սպասել, վոր այդ ագրեգատները բաղկացած լինեն փոփոխական թվով մոլեկուլներից և շարունակ քայլային։

Ֆիզիկո-քիմիկումները բազմիցս փորձել են գանել վորոշ եմակերիկ կրիտերիում՝ նոր մալ հեղուկները ասոցված հեղուկներից տարրերելու համար, Այսպես, որինակի, հաստավել ե, թե նորմալ հեղուկների համար ԾV-ն կրիտիկ կետում մոտավորապես հավասար է 0,27 RT-ի, Մի ուրիշ այզպիսի կանոն և ներկայացնում Ռամզեյի և Շիլդի փորմուլը մակերեսային լարվածության համար [({9}) հավասարումը], վորուեղ կ-կոնստանտը, վորը յերենն կոչվում ե Ետվյոշի կոնստանտ, (վորովհետև առաջին անգամ Ետվյոշն է առաջարկել (9) հավասարման ձևով մի արտահայտություն), պետք ե հավասար լինի 2,2-ի Ետվյոշի կոնստանտն ուղղակի կտպ ունի մոլեկուլար կշիռ հետ Յեթե կ-ա 2,2-ից ավելի փոքր լինի, այդ կարելի յեւ բացատրել այն բանով, վոր հեղուկն ասոցված ե, ուստի փորմուլի մեջ տեղադրած մոլեկուլար կշիռը փոքր ե իսկականի համեմատությամբ։ Այդ իննդրին է վերաբերում և մի այլ ընդհանրացում, այն և թե՛ք Տրոուտոնի կանոնի (յերես 65) կոնստանտը պետք ե լինի մոտավորապիս 21, Հեղուկ վիճակը բնորոշող այդ յերեք կրիտերիումների համար թվական նշանակությունները բերված են 10, 11 և 12 աղյուսակներուն։ Պետք ե նշել, վոր ինչպես այդ ցույց ե տալիս 11 աղյուսակը, Ետվյոշի կոնստանտի նշանակությունը տատանվում է 0,67-ից՝ մեթիլալկոհոլի համար, 6,73-ի միջև՝ տրիստերինի համար։ Յեթե կ փոքր ե 2,2-ից, այդ կարելի յեւ բացատրել ասոցումով։ բայց դժվար թե կ-ի ավելի մեծ նշանակությունը կարելի լինի բացատրել գիսցումով։ Բնենովլ՛ C₆H₆ շնորհալ հեղուկ եւ Գժվար չեւ տեսնել (աղյուսակի թվերից), վոր Շնորմալության տարրեր կրիտերիումներն այնքան ել լավ չեն համաձայն-

վուր միմյանց հետ Մենք կտեսնենք, վոր քացախական թթուն, ջուրը և մնդիկը, ամեն մեին առանձին վերցրած, ներկայացնում են հեղուկի հատուկ տիպեր, վորոնք խոտորվում են նորմալ տիպից Վերջին հաշվով հեղուկներից և վոչ մեկը, վորի յեռման կետը գտնվում ե շատ բարձր կամ շատ ցածր տեմպերատուրներում, չի բավարարում նորմալ հեղուկի կրիտերիումներին:

10 Աղյուսակ: $\frac{pV}{RT}$ հարաբերությունը կրիտիկական կետում՝ մի քանի

նյութերի համար C 20°-ում:

Թթվածին	.	.	0,2027	Ածխածնի դիոքսիդ	.	.	0,2771
Ազոտ	.	.	0,2923	Ածխածնի տետրաքլորիդ	.	.	0,2719
Արգոն	.	.	0,2921	Հելիում	.	.	0,299
Ներոն	.	.	0,2055	Զբուծին	.	.	0,312
Ածխածնի մանրաբիդ	.	.	0,286	Ամմոնիակ	.	.	0,2435
Ազոտի մանրաբիդ	.	.	0,2550	Թուր	.	.	0,275
Քլորջրածին	.	.	0,265	Մերսի դիոքսիդ	.	.	0,271
Բնուղուկ	.	.	0,2697	Զուր	.	.	0,1844
Մեթան	.	.	0,2727				

11 Աղյուսակ: Եավուշի կռնօտանաը տարբեր հեղուկների համար:

Զուր	.	0,9	մինչև 1,05	Մեծը մանրաբլուզիդ	.	.	2,24
Քլորաֆորմ	.	.	2,06	Տրիստեռիլին	.	.	6,75
Ածխածնի մանրաբլուզիդ	.	.	1,95	Ացետոն	.	.	1,57
Աթիլամին	.	.	1,25	Եթիլողիդ	.	.	1,84
Բնուղուկ	.	.	2,73	Մեթիլ—ալինոլ	.	.	0,67
Ցիլուկեցան	.	.	3,22	Եթիլ—ալինոլ	.	.	0,94
Տուրուկ	.	.	2,47	Պրոպիլ—ալինոլ	.	.	1,11
Նիտրոբնուկ	.	.	1,53	Եթիլական յեթեր	.	.	1,70
Բրոմէնուկ	.	.	2,38	Մընական թթու	.	.	0,57
Անիլին	.	.	1,57	Եթիլացետատ	.	.	2,37
Քացախական թթու	.	.	1,3				

Իսկապես նորմալ հեղուկների տիպին պատկանում են գլխավորապես սովորական որգանական հեղուկները, վորոնց յեռման կետերը սենյակի տեմպերատուրից քիչ բարձր են: Նրանց մեծ մասը մաշնելի յե փորձի համար, կարելի յե կարծեր, թե այդ ե յեղել նրանց նորմալ կոչերու պատճառը: Համենայն դեպք պետք ե ընդունել, վոր գոյություն ունեն մի շարք հեղուկներ, վորոնք ասոցման տարբեր աստիճաններ ունեն, և նրանց ասոցման աստիճանը փոխվում ե տեմպերատուրի փոփոխման հետ և տարբեր նյութերի համար՝ տարբեր կերպով:

**12. Աղյուսակի Ցըռաւանի կանոնանենքը հայորհաներով արտահայտված՝
մոլեկուլար գույքը լինացման ջերմությունը՝ բաժանած յեռման բացարձակ տես-
պերատուրի վրա՝ նորմու ճնշման տակ:**

Հելիում	5,53	Եթիլյոդիդ	20,87
Ջրածին	10,48	Մեթիլալկոհոլ	24,92
Նեռն	14,87	Եթիլ ալկոհոլ	26,77
Ազու	17,20	Գրաորիլ ալկոհոլ	26,68
Արգոն	17,20	Եթիլական յեթիր	20,2
Թթվածին	18,05	Մըջական թթու	14,76
Քլոր	20,03	Բացախտական թթու	14,84
Մեղքիկ	22,48	Ացետոն	21,94
Ֆլուորածին	24,85	Ածխածնի սուլֆիդ	20,02
Բլորչլածին	19,06	Բենզոլ	20,83
Բրոմլածին	19,40	Ցիկլոէքսան	20,4
Ցողջլածին	18,42	Տոլուոլ	20,83
Մերը գլուխիդ	23,10	Նիտրօբենզոլ	20,12
Մերմաջլածին	21,22	Բրոմենզոլ	21,05
Ջուր	26,03	Անէլին	21,16
Քլորոֆլոր	21,0	Մերը մոնոթլորիդ	20,94
Ամմոնիակ	23,42	Ածխածնի անարաքլորիդ	20,4

Եթե մենք մինչև անգամ կարողանանք շասոցման աստիճանինք գաղափարը ճշտուած անմանել, այնուամենայնիվ մենք վոչ մի մեթոդ չունենք նրա փորձնական վորոշման համար, Վերջին հաշվով ասոցման առնվազն 2 տիպ գոյություն ունի, փորսնց համար բացախական թթուն և ջուրը կտրող են որինակ ծառայել Բացախական թթուն մինչև անգամ գոլորշու վիճակում վորոշ պոլիմերներ և գոյացնում: Ջուրը չի ցուցաբերում այդ յերկույթը: Այդ խնդրին մենք նորից կանդրագանանք՝ հեղուկների դիելեկտրիկ կոնստանտն ուսումնասիրելիս:

Հեղուկների ջերմութակությունը Մոլեկուլար կշռի գաղափարի սահմանման դժվարությունը յերևան և գալիք նորից, յերը մենք փորձ ենք անում կիրառել կինսետիկ թեորիան հեղուկների մոլեկուլար շարժումներին՝ ջերմունակությունը հաշվելու համար: Հավանական ե թվում, զոր հեղուկների մեծամասնության մոլեկուլները գուրեկ են պառաւային շարժումից, վորը նյուութերն ունեն գազային վիճակում: Նրանց շարժումները սահմանափակվում են տատանումներով; փորսնց ամպլիտուդը շատ փոքր ե՝ համեմատած ազատ վաղքի միջին յերկարության հետ գազային վիճակում: Մինչև հիմա հեղուկների ջերմում մունակության համար չեն յեղել ստեղծել մի հասարակ թեորիա: Գոյություն ունի միայն յերկու եմպիրիկ ընդհանրացում:

Հեղուկների ջերմունակությունը մոտավոր ապես անկախ ե տեղակարագության համար կամ մինչև յեռման

կետը տարածվող ինտերվալում՝ Նյութի ջերմունակությունն այս կամ տյն չտփով տվելի յե հեղուկ վիճակում, քան նրա ջերմունակությունը բյուրեղային վիճակում։ Սակայն այդ յիշի հմզիրիկ կանոնակից բացառություններ կան։ Սահմանման համաձայն՝ կալորիա յե կոչվում ջրի տեսակարար ջերմությունը $C = 15^{\circ}$ -ում։ Ջրի աեսակարար ջերմությունը հալման կետից մինչեւ յեռման կետը մնում է նկատելի կերպով անփափոխ, բայց սառույցի տեսակարար ջերմությունը ջրի տեսակարար ջերմությունից համարյա 2 անգամ ավելի փոքր եւ։

Այսպիսուրյան յավ կարծեւրյաւն Զափազանց կարևոր եւ պարզել վիսկոզ (մածուցիկ) հեղուկի և պլաստիկ կարծր նյութի ֆիզիկական հատկությունների միջև յեղած տարրերությունը, Վիսկոզ հեղուկը, վորին կիրառված և հաստատուն ույժ, հոսում եւ անկախ այն բանից, թե վորքան փոքր և ույժը Մյուս կողմից՝ պլաստիկ կարծր մարմինը դիմադրում եւ դիմումացիային կամ կտրվելուն, քանի դեռ կիրառված ույժը չի անցել մի վորոշ մինիմալ մեծությունից։

Հեղուկի վիսկոզությունը չափ եւ հանդիսանում գեֆորմացիային ցույց տված իր դիմադրությանը Վ. իսկության գործակեցը՝ դիմադրության մեջ միավոր հազորդելու հեղուկի մի քատակուաի միավոր շերտին, վորը հանդատության մեջ գտնվող զուգամեեռ շերտից՝ հեռացված եւ յերկարության մեկ միավորով։ Վիսկոզության գործակեցն ունի հետևյալ տարրափումը (դիմենսիոն) $[m]^{-1\frac{1}{2}-1}$ ։

Կարենի յե ցույց տաք վոր հեղուկի հոսանքի արագությունը՝ Վարտահայտած խոր. սահմանվերը մեկ վայրկյանում, թայուն շըր ջանական հատվածով գլանային կապիլար խողովակում, արտահայտվում եւ հետեւյալ հարարերությումը։

$$v = \frac{\pi pr^4}{8l\eta} \quad (11)$$

վորտեղ 1—խողովակի շառավիղն եւ, 1—յերկարությունը, r —ճնշումը, η —վիսկոզության կոնստանտն եւ, վերը տված սահմանման համապատասխան։

Դերցացած հեղուկներու Սպակի: Վորպես կանոն՝ մտքուր հեղուկները չեն կարող առանց բյուրեղանալու ցրացվել իրենց հալման տեմպերատուրից շատ ցած, սակայն մի քանի մաքուր նյութեր, ինչպես, որինակ քվարցը, զիտրուրինը և ալկոհոլները, նույնպես և բարդ լուծույթները, կամ այսպիսի խառնուրդներ, ինչպես զմուռն եւ, կամ սովորական ապակին, կարելի յե արագորեն ցրացնել առանց բյուրեղացնելու մինչեւ այնպիսի տեղապերատուրներ, վորոնցում հեղուկն այնքան եւ վիսկոզանում, վոր բյուրեղացնելը, յեթե այդ առհասարակ տե-

զի յե ունինում, կտտարվում ե շատ դանդաղ կերպով։ Այսպիսի գերցրտացած հեղուկները կարեր են թվում։ Սակայն նրանք ըյուրեւդային ստրուկտուր չունեն և յերբ տաքացվում են, հետզհետեւ փափկանում են և հոսանուտ դառնում՝ առանց կտրական կետ ցույց տալու ջնուռն առաջին հայացքից գյուրաբեկ ե յերեսում, սակայն յերբ նրա վրա ազդում ե մնայուն մի ույժ, նա հոսում ե՝ ցուցարերելով վիսկոլ հեղուկի հատկությունները։

Ապակիները գրաւորում են այնքան շատ սպեցիֆիկ առանձնահատկություններ, վոր նպատակահարմար ե թվում համարել նրանց վաչ թե վորպես գերցրտացած հեղուկներ, այլ վորպես նյութի առանձին ֆիզիկական վիճակ։ Միայն սահմանափակ թվով նյութեր կարող են ապակիներ գոյացնել և լսու յերեսութիւն ապակի գոյացնելու հատկության և քիմիական բաղադրության միջև գոյություն ունի սերտ կապ։

Խ Ն Դ Ի Բ Ն Ե Բ

1. Վան-դեր-Վասիկ հավասարման սպեցիալը հաշվել ածխածնի գիրքսիզի իզոթերմը՝ 0° , 31° և 50° -ում, տալով V -ի նշանակությունը և լուծելով հավասարումը ք-ի նկատմամբ։

Ստոցված իզոթերմներն անցկացնել գրափեկի վրա, հաշվելով ըսվական թվով կետեր, վորպեսզի կարելի լինի տեսնել կորի ընթացքը կրիտիկական մարզում։

2. Խնչիր յե հավասար գորշշվացման ջերմությունը կրիտիկական կետում։

3. Հաշվել կապիկաց բարձրուցման մեծությունը մի հեղուկի համար, վորի մակերեսույին լարվածությունը հավասար է 48 դին 1 սահմանեարին և խտությունը՝ $2,45$ ։

4. Թթվածինը 200 ատմ. Շնչման տակ և 0° -ում ընդարձակվում ե մինչև մեկ ատմ. հեղուկացման մի տպարտուի մեջ՝ վորը նկարողված ե ոյս գլուխ։ Ընդունելով, վոր Զոուլ-Թոմմոնի եֆֆեկտի գործակիցն անկախ և հնչումից և պրոցեսի եֆֆեկտիվությունը $100/0$ ե, ցույց տալ, վոր թթվածնի $17,5^{\circ}/0$ -ը պետք ե հեղուկանությունը $200/0$ ատմ. մակերեսային լարվածությունը և ներկայացնում է 1 սմ լայնություն և մեկ մոլեկուլոր արամագծի հասառություն ունեցող շերտի կազմունքիմագրությունը, հաշվել խզման գիրագրությունը կիլոգրամմերով 1 ամը վրա, ջրի համար։

5. Հաշվել անդիկի գնդառն կաթիլի մակերեսային լարվածության հետակառությունը գոյացած հնչումը, արտահայտելով վերջինս ատմոսֆերներով, յեթե կաթիլի շառագիրը հավասար է 10^{-4} սմ 20° -ում։

7. Կրիտիկական կետը ներկայացնում ե կետացման կետը քV կորի վրա, այդպատճառով ինչպես $\left(\frac{\partial P}{\partial V}\right)_T$, նույնպես $\left(\frac{\partial^2 P}{\partial V^2}\right)_T$ պետք ե հավասարը $\frac{RT}{(V-b)^2}$ և զերպած հավասարը $\frac{2a}{V^4}$ պարույրի, Ցույց տալ, վոր այդ պայմաններում ստորև բերված հավասարությունը արդարացը յեն։

$$\frac{RT}{(V-b)^2} - \frac{2a}{V^4} = 0,$$

$$\frac{2RT}{(V-b)^3} - \frac{6a}{V^5} = 0.$$

8. Հուծելով զերսէիլլալ հավասարութերը և և Ե համար, ստանալ այս գլխում
1 և 2 արտահայտություններում տված գործակիցների նշանակությունը:

9. Արտածել (5) հավասարությ՝ տեղադրելով (1), (2) և (4) արտահայտությունները վանդեր-վատլով հավասարման մեջ:

10. Հաշվել Վանդեր-վատլով հավասարման միջոցով ածխածնի դիրքորդի տեսակաբար ծավալը $\leq 40^{\circ}$ -ում և 25 ամ. նշանոն տակ:

11. Հաշվել արդունի կրիակական տեմպերատուրն 8-ըդ աղյուսակի տվյալներից:

12. Հաշվել թթվածնի կրիակական մեծություններն ա և Ե մեծություններից և համեմատել 8-ըդ աղյուսակի տվյալների հետ:

13. Ցույց տար թե ի՞նչ ձեռվ կարելի յե գոլորշիացնել հեղուկն անընդհատ պրոցեսով, զորի ընթացքում ամեն մի մոմենտում սիստեմում միայն մի ֆիզիկական վիճակ գոյացնեն ունի:

14. Հաշվել մոկրեստլին լարվածության 8-ըդ սահմանման համաձայն՝ այս աշխատանքը, վարն անհրաժեշտ է ջրի մեկ մագնիսում մակերես փոխադրելու համար. Դի նշանակությունները տված են 9-ըդ աղյուսակում:

15. Հաշվել սնդիկի պատիլոր բարձրացումը $\leq 20^{\circ}$ -ում:

16. 1,045 խոռոչամբ հեղուկը 0,1 մմ շառավիղ ունեցող խողովակում բարձրանում է 4 ամ. Խոնչ թվական նշանակություն ունի 7-ն:

ՄԱՏԵՐԻԱՅԻ ԲՅՈՒՐԵՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

Յերբ բյուրեղային կարծր մաքմինը տաքացվում է բազական մեծ հաջման տակ, վորպեսզի նա չկարողանա գորորդիանալ, յեթե միայն քիմիական քայլայում չի կատարվում, ապա վորոշ ժամանակից հետո հասնում է մի տեմպերատուր, վորում նա հեղուկանում եւ Այդ տեմպերատուրը կոչվում է հալման կետ: Յուրաքանչյուր մաքուր նյութ հալվում է միանգամայն վորոշակի տեմպերատուրում, վորն այնքան ավելի կտրուկ կերպով է արտահայտված լինում, վորքան նյութն ավելի ազատ է լինում խառնուրդների հետքերից:

Հեղուկներն իրենց հալման կետից ավելի ցած ցրտացված լինելով կարծր ֆաղի բացակայությամբ, հանդես են բերում գեր ցըտաց ման յերեսույթը. այդ նշանակում է, վոր նրանք մնում են հեղուկ վիճակում: Յեթե հեղուկը Շվարակիվում է նույն նյութի մի քանի բյուրեղիկներով, ապա բյուրեղացումը տեղի յեռնենում մեծ արագությամբ: Գերցրտացած հեղուկները գերազանցորեն զգայուն են բյուրեղներով և վարակման հանդեպ, Յերբեմն պատճում ե, վոր մի որգանական միացություն, վորը տված լարուատորիայում պատրաստվել է առաջին անգամ, չի բյուրեղանում: Յեթե ի վերջո վորեւ միջոցով բյուրեղանում ե, ապա հետագայում ինչպիսի նախազգուշական միջոցներ ել վոր ձեռնարկեն, նույն լարուատորիայում շատ դժվար լիինի ստանալ այդ նյութը գերցրտացման վիճակում՝ առանց բյուրեղացման: Գերցրտացած հեղուկի բյուրեղացմանը նպաստում է մեխանիկական հարգածը, նույնպես և անհարթ մակերեսների ներկայությունը, ինչպես թեկուղ քերվածքներն անոթի մակերեսին¹:

Բյուրեղային վիճակում բաղադրիչ ատոմների կամ մոլեկուլների միջև գործող ձգողական ույժը՝ նրանց կինետիկ հներգիայի համեմատությամբ այնքան մեծ է, վոր հաստատվում և յերկար ժամանակ պահպանվում է վորոշ յերկրաչափական դասավորությունն և նա յերևան

¹ Բյուրեղացման կենարոնների ընույթի մասին հեղուկների մեջ տես Richards J. Am. Chem. Soc. 54, 479 (1932):

և դալիս նյութի վարոշ յերկրաչափական ձև ընդունելու ձգտման և անիդութը ուղիայի այլ յի ցուցաբերման մեջ, այսինքն՝ հատկությունների (հատկապես ոպտիկ հատկությունները), վորոնք փոփոխվում են ըստ այն ուղղության, վորով նրանք չափվում են բյուրեղում։ Այս դրույթի յերկրորդ մասը կիրառելի չե կանոնավոր սիսածմի բյուրեղուներին, վորոնք սիմմետրիայի այնքան բարձր աստիճան ունեն, վորի դութը ուղի են հանդիսանում։ Այսպես, որինակ, նատրիումի քլորիդի բյուրեղների բեկման ցուցիչը միևնույն նշանակությունն ունի բյուրեղի բոլոր ուղղություններում։ Ամորֆ նյութերը նույնական իզոտրոպ են՝ այն պատճառով, վոր նրանք ամենակի սիմետրիա չունեն։ Միմիայն կարծր մարմինները չեն, վոր անիզոտրոպության հատկություն ունեն։ Մի քանի որգանական հեղուկները ցուցաբերում են առանձին ուղղիկական հատկություններ, որինակ՝ կրկնակի բեկում, վորոնք սովորաբար հատուկ են վոչ կանոնավոր սիսածմի բյուրեղներին և ամորֆ նյութերին՝ լարվածության վիճակում։ Այդպիսի անիզոտրոպիան յուրաքանչյուր հեղուկի համար մի ընորոշ տեմպերատուրում հանկարծ անհետանում է, ինչպես այդ տեղի յև ունենում բյուրեղի հարման դեպքում։ Այդպիսի նյութերը կոչվում են հեղությունը եղաներ, թեև այդ տերմինը կարող է շփոթության առիթ տալ։

Բյուրեղացումը մաքուր նյութերի ուսումնասիրության մի կարևոր յեղանակ է, վորովհետև նրանց մեծամասնությունը լուծույթից անդամ բյուրեղանալիս անջատվում է համեմատաբար մաքուր վիճակում։ Բացի դրանից, բյուրեղային վիճակի հետ կապված վորոշ ֆիզիկական հատկություններ արժեքավոր նշանակություն ունեն մաքուր նյութերի իդենտիֆիկացիայի համար։ Զափազանց զարմանալի յեայն, վոր շատ փոքր թվով մաքուր կարծր նյութեր կան, վորոնք կարող են գոյություն ունենալ ամորֆ վիճակում։ Նույնիսկ որգանական շատ բարդ մոլեկուլներ յերկի միշտ կարող են վորոշ կանոնավոր դասավորություն ընդունել կարծր վիճակում։ Ապացուցված է, վոր այսպես կոչված տմորֆ ածխածինը կազմված է գրաֆիտի տիպի շատ մանր բյուրեղներից։

Բյուրեղագրությունը զարգացել է նշանակալի չոփով միայն բյուրեղների յերկրաչափական ձևի ուսումնասիրության հիման վրա։ Միենույն նյութի բյուրեղներ, մինչև անդամ յեթե նրանք պատրաստվել են կատարելապես նման պայմաններում, կարող են ունենալ արտաքին տեսքի բազմաթիվ տարրերություններ, թեև ամենքը յենթարկվում են բյուրեղագրության յերկու հիմնական որինքի։ Մրանցից առաջինը կոչվում է անկյունների մեջանուրյան առնենք։ Մի առանձին տիպի տարրեր բյուրեղների համապատասխան կողմերով գոյացվող անկյունները,

ինչպես ապացուցված է, միշտ միենույն մեծությունն ունեն Յերկը բրդի որենքը հայտնի յե ուղինմալ պարամետրերի ունենք անունով, վորը հետեւյալն է, Յեթե հարմար ձևով կոորդինատային (կրիստալ-լոգարաֆիկ) առանցքները ընտրենք, ապա ըյուրեզի յերեսներից յուրաքանչյուրը կհատի կոորդինատային առանցքներից վորեն մեկն այնպիսի հեռավորության վրա կոորդինատների սկզբից, վոր հատված կտորներն իրար կհարաբերեն վորպես ամբողջական պարզ թվերը Մասշասաքի միավորները, վորով կարելի յե արտահայտել կտորների յերկարությունը՝ ամբողջական թվերի բաղմապատճեկ հարաբերություններ ստանալու համար, ընդհանրապես տարբեր ե յերեք առանցքներից յուրաքանչյուրի համար Յեթե յերեսը զուգահեռ և առանցքներից մեկին, ապա ի հարկե վերջինովս նա ամենակն չի հատվի, Յերեսներից յուրաքանչյուրի գերքը բյուրեղագրական առանցքների վերաբերմամբ վորոշվում ե Միլլերի ինդեքսներով: Միլլերի ինդեքսները ներկայացնում են յերեսներով առանցքների վրա հատված կտօրների յերկարությունների հակադարձ մեծությունները, այն պայմանով միայն, վոր հատվածները չափված լինեն այդ առանցքների համար հատկորոշ միավորներով: Յեթե յերեսը զուգահեռ և առանցքներից մեկին, ապա Միլլերի ինդեքսը այդ յերեսի համար այդ առանցքի վերաբերմամբ հավասար ե զերոյի:

Բյուրեղների սիմմետրիան Բյուրեղիները դասավորվում են խմբեր՝ ըստ սիմմետրիաի տարբեր տեսակների, վոր նրանք ունեն: Բյուրեղները կարող ե սիմմետրիա ունենալ մի առանցքի, մի հարթության, կամ մի կենարոնի վերաբերմամբ: Ի հավելում այս բանի, լինում ե ավելի բարդ սիմմետրիա, այն ե՝ պտտում մի առանցքի շուրջը և նույնաժամ անդրադարձում մի հարթության մեջ: Գոյություն ունեն սիմմետրիաի յերեսում և մեկ տիպ, վորոնք բնութագրվում են սիմմետրիաի զանազան երեմնաներով, և մեկ տիպ, վորն ամենակն սիմմետրիա չունի, հետևապես յերեսունեյերկու բյուրեղային տիպ գոյություն ունի: Խորանարդային տիպն ունի սիմմետրիաի թված բոլոր ելեմենտները:


Այս յերեսուն և յերկու տիպերը իմբրվում են վեց բյուրեղական սիստեմների: Տիպերի բաժանումը սիստեմների հիմնված ե ըյուրեղագրական առանցքների յերկրաչափական հատկությունների վրա: Ամեն մի սիստեմի պատկանելիությունը վորոշվում ե այն բանով, թե հավասար են, թե անհավասար մասշտաբի միավորները, վորոնցով չափում ենք յերեսներով զանազան տառանցքների վրա հատված կտօրների յերկարությունները, նույնպես և այն բանով, թե ուղիղ են, թե վոչ ուղիղ այն անկյունները, վորոնց տակ հատվում են առանցքները: Բյուրեղների կլասիֆիկացիային ավելի մանրամասնորեն ծանոթանալու համար

ընթերցողը պետք է դիմե բյուրեղագրության մասնագիտական ձեռնարկի ոգնության, վորովհետև հնարավոր չե շարադրել այդ նյութն այսաեղ ավելի ընդարձակ կերպով։ Բյուրեղագրության ընդհանրացումները բերում են այն յեղրակացության, վոր բյուրեղները բաղկացած են առանձին ելեմենտար միավորներից, այսինքն ելեմենտար բջիջներից, վորոնք միանդամայն վորոշակի յերկրաչափական ձև ունեն, վոչ անհրաժեշտորեն խորանարդային կամ նույնիսկ ուղղանկյուն, և վորոնք միմյանց կցված են (կոմպակտ) դասավորման մեջ։

Ազյումների կոմպակտ կանոնավոր դասավորումով կտորուցված շենքը չպետք է անհրաժեշտորեն ունենալողուսի արտաքին ձևը։ այլպես ել բյուրեղի ձևը չպիտի անհրաժեշտորեն լինի ելեմենտար բջիջի ձևութայց բջիջի ձևի մասին կարելի յե դատել՝ հիմնվելով նրա բյուրեղագրական առանցքների սիստեմի վրա։

Բյուրեղագիրները (կրիստալլոգրաֆիները) արդեն վաղուց յենթադրել ելին, վոր բյուրեղագրական ստրուկտուրի միավորը կազմված է վորոշ կերպով դասավորված ատոմներից կամ մոլեկուլներից, բայց այդ մաքի փայլուն ապացույցը տվեց միայն ոյսնտգենյան

ճառագայթների կիրառումը Տիեզերի ինգենիերության մեջ։ Տեսանելի լույսի հանդեպ սովորական բյուրեղները պահում են իրենց այնպես, ինչպես մի հոմոգեն անընդհաա միջավայր, վորը ներքին ստրուկտուրի նվազագույն ցուցմունք չի դրսեվում։ Սակայն, յերբ ոյսնտգենյան ճառագայթները, վորոնք ալիքի արտակարգ փոքր յերկարություններ ունեն, անցնում են բյուրեղի միջով, բյուրեղի ստրուկտուրի դիսկրետությունը յերեան և զալիս դիֆֆրակցիական սպեկտրի գոյացմամբ։ Վերն արդեն հիշատակեցինք այդ փորձը, վոր-



Նկ. 22. Միավորի ինգենիերության 111 հարթություն։
110 հարթությունը գուգահեռական և առանցք-ներից մեկին և հատում և մյուս յերկու առանցքները 100 հարթությունը հատում և միայն մեկ առանցքը և զուգահեռական և մյուս առանցքներին։

պես ատոմների գոյության համոզիչ ապացույցներից մեկը՝ Բյուրեղի
 մեջ ատրածությունն ատոմների կամ մոլեջիումների միջև ունի նույն
 կարգի մեծություն (10⁻⁸մ), ինչ վոր ոյնտպենյան ճառագայթների
 ալիքների յերկարությունը և բյուրեղը ոյնտղենյան ճառագայթների
 դիմաց պահում ե իրեն վորպես դիֆֆրակցիական ցանց, Ոպտիկայում
 գործադրվող ամենահասարակ դիֆֆրակցիական ցանցը, ներկայացնում
 ե մի հարթության վրա տեղափորված դուդահեռ ճեղքերի մի շարք:
 Լույսը անցնելիս ճեղքերից ամեն մեկը վարվում է վորպես լույսի
 գլանային ալիքի աղբյուր: Զանազան ճեղքերով անցնող ալիքները
 ինտերֆերում են՝ փոխադարձարար ուժեղացնելով իրար մի անկյան
 տակ և մարելով այլ անկյան տակ, տալով դիֆֆրակցիական սպեկտր:
 Բյուրեղը տարբերվում է ոպտիկական դիֆֆրակցիական ցանցից նրա-
 նով, վոր նա յեռաչափ ցանց ե, Ծյոնտգինյան ճառագայթները թա-
 փանցում են բյուրեղը, և ատոմներն իրենք գործում են վորպես դիֆ-
 ֆրակցիայի կենտրոնների Բյուրեղներում ատոմները կամ ատոմնային
 խմբերն ունեն կանոնավոր դասավորություն և վորոշ անկյուններից
 նայելիս տեղափորված են յերևում զուգահեռական շերտերում: Յերբ
 բյուրեղի վրա ուղղված է լինում ոյնտգինյան ճառագայթների մի
 փունջ (շող), վերջինս, ընդհանուր առմամբ, անցնում և բյուրեղով
 առանց դիֆֆրակցիայի յենթարկվելու, բայց յեթե ճառագայթի ուղ-
 ղության և շերտի հարթության միջև գոյացած անկյունը բավարա-
 րում ե


$$\pi\lambda = 2d \sin\theta$$

(1)

հարաբերության, վորտեղ λ ալիքի յերկարությունն ե, d —հարևան
 շերտերի հեռավորությունը միմյանցից, իսկ π —մի ամբողջական թիվ,
 ապա տեղի յեռանում դիֆֆրակցիա—փնջի ճառագայթների մի մա-
 սը թեքվում ե Θ անկյունով ճիշտ այնպես, ինչպես յեթե ատոմների
 շերտը հարթ հայելի լիներ, իսկ ընկնող փունջը բաղկացած լիներ սու-
 վորական տեսանելի լույսի ճառագայթներից: $\pi = 1, 2, 3\dots$ և այլն
 նշանակություններին համապատասխան՝ ստացվող անդրադառնումները
 կոչվում են առաջին, յերկրորդ, յերրորդ և այլն կարգի անդրադառնում-
 ներ: Ասած պարզաբանում ե 23-րդ նկարը: Փունջը բյուրեղից անդ-
 րադառնալու համար անհրաժեշտ է, վոր ատոմների յերկրորդ շերտից
 անդրադարձած ճառագայթների անցած ուղին ավելի լինի առաջին
 շերտից անդրադարձած ճառագայթների ուղղուց՝ ալիքների ամբողջա-
 կան թվով: Այս պայմանով ե, վոր կատարվում ե անդրադարձած ճա-
 ռագայթների ուժեղացնումը, ճառագայթների յերկրորդ շերտից անդ-
 րադարձած մասի ուղին ենց տարածությամբ ավելի յե, քան առա-

շին շերտից անդրադարձած ճառագայթների ուղին: Յեռանկյունաշափության սկզբությամբ հեշտ ե ցույց տալ վոր այդ հեռավորությունը հավասար է $2ds \sin \theta$: Միանգամայն նույն ձևով ե կատարվում անդրադարձումը բյուրեղի ներքին շերտերից: Յեթև ուղիների յերկարության տարրերությունը հավասար չե ալիքների ամբողջական թվի, ապա տարրեր շերտերից անդրադարձած ճառագայթները կնանդիպեն միանց տարրեր փակերում և նրանք ինտերֆերելով միմյանց հետ՝ պետք ե թուլացնեն միմյանց:

Բյուրեղի միջով կարելի յե մտավոր կերպով անցկացնել անսահմանափակ մեծ թվով հարթություններ, վորոնցից յուրաքանչյուրը կներկայացնի առողմական կամ առողմական խմբեր, սակայն այդ հարթություններից մեծ մասը չափանց մոտ կլինեն իրարվոր պետքի ոյսնուդինյան ճառագայթարձումը կինդիպի այսուհետեւ առաջանական ճառագայթների գինջի անդրադարձումը տեղի ունենաւ:



Նկ. 23. Դիմագրամ, զորը ցույց ե տալիս անդրադարձումները բյուրեղի ելեմենտար հարթություններից, վորպես գլխավորակցի համար ցցանցից: Վորպեսզի անդրադարձումը լինի և ճառագայթը Շուղին պետք ե ալիքների ամբողջական թվով պահպի լինի և ճառագայթը ուղղուց: այդ պայմանը բավարարվում է $je = ei + ig = 2d \sin \theta$.

23 նկ. ցույց ե տալիս, վոր, վորպեսզի ոյսնտգենյան ճառագայթների անդրադարձումը տեղի ունենա, պետք ե վոր տարածությունը հարևան շերտերի միջև համասար լինի առնվազն ալիքի յերկարության կեսին: Բյուրեղի միջով կարելի յե անցկացնել միայն սահմանափակ թվով այս պայմանին բավարարող հարթություններ, այդպիսիները մենք հետազում անվանելու յննք հիմնական հարթություններ:

Բյուրեղի ոյսնտգենոգրաֆիկ անալիզի առաջին խնդիրն ե՝ զըտանել հիմնական հարթություններին համապատասխանող ատոմների շերտավորումների միջև յեղած տարածությունները: Իմանալով այս տարածությունները և հարթությունների որինտացիան բյուրերագրական առանցքների վերաբերմամբ, կարելի յե կառուցել բյուրեղային ցանցը:

Կարող ե, թված թե այսպիսի հարթությունների համար, վորոնք չափանց մոտ են անդավորված, քան պետք ե վորպեսզի ոյսնտգենյան ճառագայթների անդրադարձում կարողանա տեղի ունենալ, անդրադարձումը կարող է կատարվել այն-

արմասի հարթություններից, վորոնց տեղափոխված են միմյանցից մեկընդմիջ կամ ել ավելի մեծ հեռավորության վրա Սակայն պետք է հիշե՛ զոր յեթե հարթությունները մի ընտանիքի յեն պատկանում, ապա միջանկայլ հարթությունները նույնակա անդրագարձումներ կատա, վորոնց ինտերֆերենսով միմյանցից մեկընդմիջ կամ ել ավելի մեծ հեռավորության վրա դառնվող հարթություններից անդրագարձում նառագա գայթների հետ, կմուռն վերցնենքը Դասառության ընթացքը, զոր թարգմակը կիրառել են նատարիումի ըլորիկի բյուրեղների ստուրուկուրը վորոշելու համար, տալիս ե վերև արժարժեված սկզբունքի կիրաւաման մի հետաքրքիր իւլյուսարացիա Ոգտագործելով պալագիում անականագից ստացված ոյնտպինյան նորագայթները վորոնց ալիքի յերկարությունը հավասար է 0,58 Ա, առաջին կարգի անդրագարձումները նասարիումի քլորիկի 100 և 110 յերեսներից ստոցվում են համապատասխանութեն 50, 70 և 8, 40 անկյունների տակ Ստ լավ համաձայնվում է 26 (C տիպը) նկարում ցույց արված ստուրուկուրի հետ Կարելի յեր նախատեսեր վոր առաջին կարգի անդրագարձումը 111 յերեսից պետք ե տեղի ունենա 10, 40 անկյան տակ, համապատասխանելով հարթությունների ավելի սերս աեղավորման, նկատի ունենալով, զոր ըստ 26 նկարի արածությունները 100, 110 և 111 հարթությունների միջն հետևյալ հարթությանը են կապված.

$$1 : \frac{1}{\sqrt{2}} : \frac{1}{\sqrt{3}}$$

Սակայն առաջին կարգի անդրագարձումը 111 յերեսի համար յերեան և գալիս 5, 20 անկյան տակ. դա սպառուցում ե, զոր ավելալ գեպքում տարածությունն անդրագարձումով հարթությունների միջն քիչ ավելի յե, քան 100 յերեսի համար. Այս դակար կարելի յե բացատրել միտոյն նրանով, զոր 111 հարթությունների զեպքում անդրագարձումը տեղի յե ունենալով գաշ թի յուրաքանչյալը հարթությունների այլ մեկընդմիջ կանգնած հարթություններից, Տվյալ դեպքում այսպիսի բացատրել թյունն ընդունելի յե 100 և 110 հարթությունները պարունակում են միաժամանակ և՛ քլորի, և՛ նատարիումի տառամերը. Այս ընտանիքների բարոր հարթությունները միանդամոյն նման են միմյանց, այս պատճենով ել մեկընդմիջ ընկած հարթություններից անդրագարձումն անհարիմ եր լինդակառակը, 111 հարթությունները հերթականությամբ գրավված են կամ միմիայն նասարիումի ատամներով. Եթեկա տեսակի հարթություններն այսակող ընդմիջում են միմյանց բյուրեղի մեջ, Թանի զոր քլորի տառամերի և նատարիումի տառամերի անդրագարձումով ընդունակությունները միենաւյնը չեն, ընդմիջող շերտերից անդրագարձու ճառագայթները ինտերֆերենսի լրիվ կերպով չեն մարվում, և մեկընդմիջ կանգնած 222 հարթություններից թայլ կերպով անդրագարձու փունջ ե ստացվում. Մյուսուկնյան ճառագայթները անդրագարձունելու կարողությունը կախված է տառամերն կըու միեւնակությունից, Նատարիումի քլորիկին նման ստորուկուրով կալիսամի քլորիկի մեջ անդրագարձումով կարգությունը 111 շերտերից, վորոնք միմիայն կալիսամով կամ միմիոյն քլորով են գրավված, համարյա նույնն, և ինչ զոր նատարիումի քլորիկինը, այս պատճենով մեկընդմիջ կանգնած 111 հարթություններից ընդհանրապես առաջին կարգի անդրագարձում չի ստացվում. Այս փաստով հաստատվում է Բըազգմերի կողմից նատարիումի քլորիկի բյուրեղների ստորուկուրը պարզելու համար արած յենթադրությունը.

Ոգտագիր քարաղի խոռություններից և ավոգադրոյի թվեց, կարելի չեն հաշվել նրա ելեմենտար քիչն չափսերը. Ցեղեն սրանք հայտնի յեն, կարելի յե զորոշել պյուսագենյան ճառագայթի ալիքի յերկարությունը, չափելով այն անկյունը, վորը

տակ առաջին կարգի անդրադարձումը կատարվում է և կիբուհելով (1) հավասարումը հաշվարկման համար Ելեմենտար բջիջի չափսերի հաշվամբ ըստ ըյուրեղի ենաւության կապված և խոզը անհատացյունների հետ, քանի վոր անկատարելիությանից զերծ մեծ չափսերի ըյուրեղները հազվագյուտ են, Վորովինեակ կալիքը գոյացնում և ըստ ամենայնի կատարյալ ըյուրեղները, ուրիշ ըյուրեղների հաըթությունների միջև յեղած հեռավարությունները սովորաբար համեմատում են կալցիոսի հետ, վարպետ սահմանված հետ

Կալցիոսի համապատասխան նշանակությունը կամայաբար ընկունված է, վորովի վորոշ նշառությամբ հայտնի:

Յերբ ատոմը դառնում է ոյոնտգենյան ճառագայթների ցրման կենտրոն, ցրումը կատարվում է կորիզին մերձ ելեկտրոններով: Ատոմի այս գործողության բացատրությունը կախված է նրանից, թե ինչպես և ներկայացվում ճառագայթման թերթիան: Համաձայն ալիքային թեորիայի ելեկտրոնն եներգիա յե կանում իր վրա ընկած ճառագայթներից և այն արձակում գնդային ալիքի ձևով, վորոն ինտերֆերենցի մի ուղղություններում ուժեղանում է, մի այլ ուղղություններում—մարում: Յեթե լույսին վերագրենք կորպուսկուլար բնույթ, կարող ենք ասել թե ֆոտոններն ընդհարվում են ելեկտրոնների հետ և յետ են մրգում վորոշ անկյուններով՝ ըստ տվյալ ուղղության հավանականության աստիճանի, վորը թերագրվում է ալիքային մեխանիկայի որինքներով: Յեթե ըյուրեղի յերեաը ոմբակոծվում է ելեկտրոնների փնջով, ապա պարզվում է, վոր ելեկտրոններն անդրագանում են վորոշ անկյունով և տալիս են դիֆֆրակցիական պատկեր, վորը խիստ նման է ոյոնտգենյան ճառագայթների դիֆֆրակցիական պատկերին: Այս հանդամանքը յերեկի ավելի բանական ե դարձնում կորպուսկուլար մելնաբանությունը:

Ոյոնտգենյան ճառագայթների դիֆֆրակցիան ըյուրեղով և տեսանելի լույսի անդրադարձումը հիմնականում նման են միմյանց: Սակայն վերջինս այնքան ել հասարակ պրոցես չե, ինչպես այդ սովորաբար յենթադրում են:

Լառւեի դիֆֆրակցիական պատկերներն ստացվում են, յերբ ըյուրենիների միջով անցնում է ոյոնտգենյան ճառագայթների վոչ հոմոգեն փունջ (այսինքն՝ ալիքի տարրեր յերկարություններ ունեցող ճառագայթներ): Անկյունները, վորոնց տակ ճառագայթները պետք ե հանդիպեն հիմնական հարթություններին, այնպես են ընտրվում, վոր հարթությունների յուրաքանչյուր ընտանիքից անդրագանում և ոյոնտգենյան ճառագայթների այս կամ այն յերկարության ալիք, և ստացվում է բարդ դիֆֆրակցիական պատկեր: Բյուրեղների ոյոնտգենությունների մի առաջը փնջով: Լավ ձեսավորված առանձին ըյուրեղը կարելի յե այնպիսի խնամքով կողմորոշել, վոր անդրադարձումն ապահով

վարար ստացվի միայն ցանկացած յերեսից Այս և յեղել Բրադբների
սկզբնական մեթոդը:

Բյուրեղը կարելի յե սարքել պատվանդանի վրա և այն դանդաղ
կերպով պատել այնպես, վոր զանազան ելեմնտար հարթությունները
գտնվեն անդրադարձման հատուկ անկյան տակ՝ միմյանցից անկախ։
Հուլլը և Դրայն ու Շերեն, իրարից անկախ, առաջադրել են մի մե-
թոդ, վորը կայանում և նրանում, վոր ոյոնտպենյան ճառագայթների
փունչն անց և կացվում բյուրեղներից բաղկացած փոշու մեջ։ Այս յե-
ղանակով բյուրեղիկները կողմորոշված են լինում ամեն ուղղությամբ,
այսպես, վոր բոլոր հարթությունները տալիս են անդրադարձում։ Դիֆ-
ֆրակցիական սպեկտրը կամ նկարահանվում և լուսանկարչական թա-
գանթի վրա, կամ գործադրվում և իրոնացման խուց (կամերա)՝ անդ-
րադարձ փնջի անկյունը և ինտենսիվությունը չափելու համար։ Ի հար-
կե, յերբ դիֆֆրակցիական սպեկտրները գոյանում են միաժամանակ
շատ հարթություններից, ստացվում և ըստ ամենայնի բարդ ոյոնտ-
դինոգրամ և նրա մեկնաբանումն ավելի դժվարանում են։

Դըրայ-Շերենի մեթոդն ուղարկար և պարզ կառուցվածք ունեցող
բյուրեղների ուսումնասիրությունների համար, այլև այն դեպքում,
յերբ առանձին բավականաչափ մեծ բյուրեղ ստանալը հեշտ չեւ։

Ելեմնեատը քիչը թվով ստրածական ցանցը Բյուրեղադիրների այն
յենթադրությունը, թե բյուրեղը կառուցված և մեծ թվով միանգա-
մայն նույնանման ելեմենտար բջիջներից, լրիվ հաստատված և բյու-
րեղների ուսումնասիրությամբ ոյոնտպենյան ճառագայթների միջոցով։
Ելեմենտար բջիջը ներկայացնում և պարապելեալիքներ և պարունակում
և իր մեջ քիմիական մոլեկուլների վորոշակի թիվ։ Ըսդհանրապես
ելեմենտար բջիջի կողերի ուղղաւթյունը համընկնում և առանցքների
սիստեմի ուղղություններին, վորոնց հարաբերում են մեծ բյուրեղի
յերեսները, իսկ ելեմենտար բջիջի կողերի հարաբերական յերկարու-
թյուններն ընդհանուր առամբ հավասար են բյուրեղի յերեսներով
բյուրեղագրական առանցքների վրա հատած կտորների հարաբերու-
թյան։


Այսպես, որինակ, կանոնավոր սիստեմի բոլոր բյուրեղները բյու-
րեղագրեները հարաբերում են կոորդինատների ուղղանկյուն սիստե-
մին, և ելեմենտար բջիջը կանոնավոր սիստեմում խորանարդի ձև
ունի։

Բյուրեղը կազմված և մեծ թվով այսպիսի ելեմենտար բջիջնե-
րից, վորոնք ընդհանուալ և միանգամայն որինաչափ կերպով կցված են
միմյանց, ելեմենտար բջիջների գագաթները (նույնպես և կենտրոն-
ները և բոլոր մյուս համապատասխան կետերը) կազմում են կետերի
յեռաչափ սիստեմ, վոր մենք անվանում ենք տարածական ցանց։

Կետերը տարածական ցանցի մեջ ընկած են դուգահեռ հարթությունների զանազան շարքերի վրա, և յուրաքանչյուր շարք վորոշ ձևով կողմանորոշված և մյուսի հանդեպ հարթությունների յուրաքանչյուր շարք դուգահեռ և բյուրեղի հարավվոր յերեսներից մեկին։ Առողմաները յուրաքանչյուր ելեմենտար բջիջի մեջ դասավորված են այնպես, վոր նրանք բավարարում են մի տարածական սիմետրիայի։

Ելեմենտար բջիջների ձևի մեջ հարաբերությունը բյուրեղագրական առանցքներին՝ ցույց և տալիս 24 նկարը։

Տարածական խմբեր։
Բյուրեղը կարելի յև կառուցված համարել վորոշ ատոմիներից կամ ատոմական խմբերից, վոր մենք ելեմենտար խմբ է ըստ իր կանվանենք։ Յուրաքանչյուր ելեմենտար խումբը ճշշտությամբ նման և տվյալ բյուրեղի մնա-



Նկ. 24. Բյուրեղնի տարածական ցանցի կարկածքը վոր ցույց և տալիս ելեմենտար բջիջի հարաբերությունն առանցքներին։ Այս ներկայացնում է բյուրեղի հարավոր յերեսներից մեկը։

ցած ելեմենտար խմբերին և այդ պատճառով պետք է պարունակի տվյալ միացության։ Ըոլոր ատոմիները Այսպես, քարաղի ելեմենտար խումբը պետք է բաղկացած լինի մեկ ատոմ նատրիումից և մեկ տառմ քլորից։ Ընդհանրապես ելեմենտար բջիջը կարող է պարունակել ավելի քան մեկ ելեմենտար խումբ։ Ելեմենտար խմբերի դասավորությունը բջիջում՝ կոչվում է տարածական խմբավորում։ Առաջին հայացքից կարող է թվար, թե ելեմենտար խմբերի դասավորումն ելեմենտար բջիջում կարող է կատարվել մնաստիման թվով յեղանակներով։ Այդ ճիշտ կլիներ, յեթե հաշվի չառնելինք այն հանգամանքը, վոր յուրաքանչյուր ելեմենտար խումբը մյուս բոլոր մնացած ելեմենտար խմբերի վերաբերմամբ միևնույն ձևով կողմանորոշված պիտի լինի։

Հաշվումների միջոցով կարելի յև ցույց տալ վոր կարող է գույթյուն ունենալ ընդամենը 230 տարածական խումբ։ Գտնված է, վոր բյուրեղներում այդ խմբերից մի քանիսը միայն գոյություն ունեն։ Յերբ տարածական ցանցն արդեն վորոշված է, հարավոր և դասնում, համենայն դեպք տեսականորեն, վորոշել տարածական խումբը։

Առայժմ ոյսնտգենոգրաֆիկ անալիզի տեխնիկան հասել և այնպիսի կատարելագործման, վոր յերբորդ ինոգիրը, վորը վերաբերում և առողմի դասավորության ելեմենտար խմբի մեջ, կարող և լուծվել միայն ամենապարզ գեղքերի համար:

Թյուրեղ յով մայնկուր Թիմիկոսին տարածական ցանցի յերկրաչափությունն այնքան չի հնտաքրքրում, վորքան մոլեկուլը կազմող ատոմների փոխադարձ կապը, Ըստ կապի բնույթի, մենք կարող ենք վորոշել բյուրեղների յերեք տիպ: Ամենահասարակ տիպը կարելի յի անվանել առողմ ական կապի տիպ, վորտեղ յուրաքանչյուր ատոմ հարեւան ատոմի հետ կապված և վալենտական ույժերով: Քանի վոր ատոմը սովորաբար վալենցի վորոց թիվը ունի, ապա ատոմների տա-


ՏիՊ Ա

Պարզ
խորանարդային ցանց

Խորանարդային ցանց
կենտրոնացած յերես-
ներով:

ՏիՊ Բ

Տարածականորեն կենտ-
րոնացած խորանարդային
ցանց:




Նկ. 25. Խորանարդային ցանցեր:

բածական դասավորումը պետք է համապատասխանի այս թվին: Կապի այսպիսի տիպի մի կատարյալ որինակ և աղամանդի բյուրեղը, վորտեղ ածխածնի յուրաքանչյուր ատոմ զրջապատված և չորս ուրիշ ատոմներով, վորոնք կապված են նրա հետ վալենտական ույժերով: Այստեղ մոլեկուլի գաղափարն իմաստ չունի, յեթե միայն չընդարձակվի այդ գաղափարն այնչափ վոր նա ընդգրկի բյուրեղն իր ամբողջության մեջ: Ազուրը, վորը պարբերական սիստեմում ածխածնից անմիշապես հետո յի կանգնած, չի կարող կազմել ատոմական տիպի բյուրեղներ, վորովհետև նա չունի հարմար թվով վալենց՝ անընդհատ դասավորում կազմելու համար:

Թերկրորդ տիպը ի ո՞ն ական ցանց եւ նատրիումի քլորիդը կազմում և խորանարդային ցանց, վորի մեջ նատրիումի յուրաքանչյուր իրն զրջապատված և քլորի վեց իոներով, վորոնք նրանից հա-


Sht C

«Համարիումի քլորիդի տիոլի» յանց:




Sht D

«Ցեղիումի քլորիդի տիոլի» յանց:




Sht E

«Ազտմանի տիոլի» կամ «ցինկի սուլ-
ֆիդի տիոլի» յանց:




Sht F

«Կալցիումի Ֆլուորիդի տիոլի» յանց:



Sht G

«Պղնձի մանգանիդի տիոլի» յանց:



Նկ. 26. Խորանարդային առածական յանցերի զանազան տիպի
հետեւաբ բջները

վասար հեռավորության վրա յեն գտնվում է Նատրիումի և քլորի իոնները զույգ-զույգ չեն կապված միմյանց հետ և բյուրեղում նատրիումի քլորիդի մոլեկուլին համապատասխանող վոչինչ չկա:

Իոնական բյուրեղում կապի ուժերն են կապուտատիկ բնույթ ունեն, այնպես, վոր այստեղ յուրաքանչյուր իոնի հետ կապված չեն վալենցի փորոշ թիվ: Մի նշան ունեցող իոնը կարող է շրջապատված լինել զանազան թվով հակառակ նշան ունեցող իոններով: Ցեղիումի քլորիդում (26. նկ., տիպ D) յուրաքանչյուր իոն շրջապատված և ութ հակառակ նշան ունեցող իոններով, մինչդեռ ցինկի սուլֆիդի մեջ յուրաքանչյուր իոն շրջապատված և չորս հակառակ լիցք ունեցող իոններով (26 նկ., տիպ E և 27 նկ.):

Բյուրեղների յերրորդ տիպը կարելի յե անվանել մոլեկուլար տիպ: Նման տիպի բյուրեղները կազմված են մոլեկուլներից, վորոնց միջև գործում են նոույն թույլ բնույթի ույժեր, վանդեր-կաալյան ույժերը, վոր մենք ուսումնասիրեցինք II գլխում: Նրանց բնույթն ավելի մանրամասնորեն կպարզաբանվի XVI գլխում:


Մոլեկուլար տիպի բյուրեղների որինակներ են ածխածնի դիոքսիդը կարծր վիճակում և սովորական օրդանական միացություններից կազմված բյուրեղները: Իներտ զարերը, ինչպես հելիումը և նեոնը, պետք և դոյացնեն այս տիպի բյուրեղներ¹:

Խառն ռեպեր: Մետաղներից շատերը գոյացնում են բյուրեղային շատ պարզ ցանցեր, վորոնք ելեմենտար բջիջում պարունակում են միայն վոչ մեծ թվով ատոմներ: Բայց այս դեպքերում ատոմները միմյանց հետ կապ են պահպանում միաժամանակ բոլոր տեսակի ույշերով, վոր մենք քննարկեցինք նախորդ պարագրաֆում: Սկզբանից դիոքսիդը բաղկացած և մոլեկուլներից, վորոնք, սակայն, միմյանց հետ մասամբ կապված են վալենտական ույժերով:

Սառույցն ունի բարձր սիմետրիայի կառուցվածք, վորի մեջ ջրածնի յուրաքանչյուր ատոմը շրջապատված և թթվածնի յերկու ատոմներով, իսկ թթվածնը՝ չորս ջրածնով: Սակայն այստեղ իոնական ցանց չկա և ըստ յերկույթին գլխավոր նշանակություն այստեղ ունի ջրածնային կապը: Դրաֆիտը շերտ ավոր ցանց ու որինակ եւ: Այստեղ ածխածնի յուրաքանչյուր ատոմը շրջապատված և ուրիշ յերեք ատոմներով մի հարթության վրա: Նրանք կազմում են բենզոլական ջրածնազուրկ ողակներից բաղկացած անընդհատ մի ցանց, ճիշտ այնպես, ինչպես աղամանզը ներկայացնում և ջրածնից զրկված ալիքատիկ մի շղթա: Դրաֆիտի բյուրեղները բաղկացած են մեկ ատոմի

¹ Մոլեկուլար բյուրեղի տիպիկ որինակ և կարծր յուղը: Harris, Mack and Blake, Am. Chem. Soc. 30 1583 (1928).

հաստության շերտերից, թույլ կապով կապված միմյանց հետ։ Դրա շնորհիվ առանձին շերտերը հեշտությամբ սահում են միմյանց վրայով, ինչ վոր ընդունակություն և տալիս գրաֆիտի բյուրեղներին ծառայել վրային ոծանելիք (Ըմազա)։ Յուրաքանչյուր ատոմում մեկ ելեկտրոն, վոր «ազատ» և մոռմ, բյուրեղին մտադական հատկություն և տալիս



Նկ. 27. Ցինկի սուլֆիդի (վյուրցիտի) ելեմենտար բջիջը։ Ցինկի իոնները ցույց են տրվոծ կետերով, ծամբինը՝ արջաններով։ Յուրաքանչյուր իոն արջապատված է չորս հակառակ նշան ունեցող իոններով։ Գծադրի վերին մասի կետագծերը ցույց են տալիս, թե ինչ ձևով են յերկու ելեմենտար բջիջները և յերկու ուրիշ բջիջների կետերը հանդիպում միմյանց և դրացնում հեքսագոնալ պլիզմա։ Ցինկի սուլֆիդը բյուրեղանում և նույ աղամանդի տիպի ցանցով (Նկ. 26)։

Խոնական օպուավիդների մեծությունների ազդեցուրյունը կառդինական բվի վրա։ Խոնական բյուրեղների մեջ մենք կարող ենք ճշշտությամբ չափել տարածությունը իոնների կենարունների միջև։ Յեթե յենթադրենք, վոր իոններն ունեն գնդի ձև և նրանք դիպում են մի-

մյանց, ապա այդ տարածությունը հավասար է յերկու իոնական շառավիկի դների գումարին: Առողջի ստրուկտուրի հիման վրա կարելի յև մոտավորապես հաշվել ամեն մի իոնի շառավիկի հարաբերական մեծությունը: Դրական իոնը շրջապատող բացասական իոնների թիվը կոչվում է կոորդինացիոն թիվ: Հնարավոր են հետեւյալ կոորդինացիոն թվերը՝ 2, 3, 4, 6, 8 և 12: Ընդունելով իոնները վորպես տարածության մեջ կանոնավոր կերպով դասավորված գնդեր, կարելի յէ տարրեր կոորդինացիոն թվերի հիմնավորման մեխանիկական պատճեր տալ Որինակ, նատրիումի քլորիդում կոորդինացիոն թիվը 6 ե, մինչդեռ ցեզիումի քլորիդի մեջ ցեզիումի կոորդինացիոն թիվը 8 ե, 13-րդ աղյուսակը ցույց է տալիս, վոր ցեզիումի իոնը նաարիումի իոնից ավելի մեծ ե, ուստի և ցեզիումի մի ատոմի շուրջը կարող են տեղավորվել քլորի 8 ատոմ: Բյուրեղի կոորդինացիոն թիվը կախում ունի դրական իոնի շառավիկի հարաբերությունից բացասական իոնի շառավիկին և նրա հնարավոր նշանակությունն այնքան ավելի բարձր է, վորքան այդ հարաբերությունը մոտ է մեկին (տես աղ. 14): 13 աղյուսմ բերված են իոնական շառավիկների նշանակությունները, վոր հաշվել ե Զախարիադինը փորձնական տվյալներից:

13 Անյուսակի, Խօնների օռավիդները բաւրեղներում՝ անգարեն միավորներով (A^o): Այսաեղ վերաբարդրված է իոնների շառավիկների աղյուսակի մի մասը, վոր հաշվել է Զախարիադինը, [Zelf. I, Krystallographie, 80, 114 (1931)]: Այսաեղ ընթացած նշանակություններից բյուրեղի իոնների միջն յեղած հեռավորությունները հաշվելու համար, բայց գեպերում, բացի ալկալական մետաղների հացագեններից, անհրաժեշտ է ողովովի որիդինալ տվյալներում բերված լրացուցիչ տվյալներից:

	O	S	Se	Te
	1,76	2,20	2,29	2,47
H	F	CL	Br	J
1,38 ¹	1,33	1,81	1,96	2,19
Li	Na	K	Rb	Cs
0,68	0,98	1,33	1,48	1,87
Be	Mg	Ca	Sr	Ba
0,55	0,89	1,17	1,34	1,49
B	Al	Sc	Y	La
0,42	0,79	1,03	1,19	1,30
C	Si	Ti	Zr	Ce
0,38	0,69	0,88	1,07	1,14

Տիպիկ իոնական բյուրեղ գոյացնելու համար իոնները պետք է ակմանեալիս ունենան: Վորոշ դեպքերում իոններից մեկը դեֆորմվում և

¹⁾ Այդ թիվը վերաբերում է բացառապես լիցքավորված ջրածնի իոնին:

պոլարիզվում և մյուս իոնի ելեկտրական դաշտի ազդեցության տակ և գոյանում և խառն տիպի ցանց:

Այդպիսի ցանց ե գոյացնում, որինակ, կազմիումի յոդիլը: Այս գեղքում կազմիում—իոնների շերտն ընկնում և յուր—իոնների յերկու շերտերի միջև:

Աղյուսակ 1: Կոորդինացիոն թիվը և իոնների շառավիղների հարաբերությունը: Ամենամեծ հնարավոր կոորդինացիոն թիվը՝ զբական և բացասական իոնների շառավիղների տվյալ հարաբերության համար:

Շառավիղների հարաբերությունը՝	Ամենամեծ
Թիվը՝	հնարավոր
$R+$	կոորդինացիոնն
0,15—0,23	.
0,23—0,41	.
0,41—0,73	.
0,73—1,00	.
1,00	12
	3
	4
	6
	8

Բյուրեղմերի ժիգիկական հատկությունները յև սարուկառուր (կառուցք): Թանի վոր վերևում քննարկված առաջին և յերկրորդ տիպի բյուրեղների առանձների միջև զործող ուժերը մեծ են, կարելի յե սպասել վորպես կանոն, վոր նրանք կունենան բարձր հալման կետեր, հաճախ նույնական մեծ պնդություն և իզման բարձր դիմադրություն: Բյուրեղները մոլեկուլար ցանցի առկայությունը սովորաբար յերեան և գալիս բյուրեղի փոքր դիմացկունությամբ և հալման կետի ցածրությամբ: Մետաղների ֆիզիկական հատկություններն առանձնապես սերտ կերպով կապված են տարածական ցանցի ստրուկտուրի հետ: Այսպես խղման մեծ դիմադրություն ունեն այն մետաղները, վորոնց առանձների զասավորությունը համապատասխանում և սեղմ ծրարված գընդակների դասավորության, ըստ վորում յուրաքանչյուր ատոմ շըջապատված և տասներկու ուրիշ ատոմներով: Հնարավոր ե ամեն ասեղ ճըրարման յերկու տեսակ, խորանարդային և հեքսագոնալ հեքսագոնալ տիպի ամենասեղմ ծրարման մեջ իրար հաջորդող շերտերը միմյանց վերաբերմամբ քիչ այլ կերպ են տեղարկված, քան խորանարդային ծրարման մեջ: Յերկաթը մետաղի մի որինակ ե, վորը կարող ե գոյություն ունենալ մի քանի բյուրեղային մոդիֆիկացիաներով, յերկաթի ատոմները ցածր տեմպերատուրներում գոյացնում են տարածականութեն կենտրոնացված խորանարդային ցանց (նկ. 25): Բարձր տեմպերատուրներում նրանք փոխվում են կենտրոնացված յերեսներով: ցանցի, սակայն յերկաթի մագնիսական հատկությունների անհայտապումը բարձր տեմպերատուրներում ամենաեն կապված չե բյուրեղի ստրուկտուրի փոփոխման հետ: Իռն տկան ցանցի առկայության անհրաժեշտ

հետևանքն են մի շարք հետաքրքիր Փիդիկական և ելեկարական հատկությունները. այսպես, որինակ, յեթե նատրիումի քլորիդի բյուլեղը կտրենք ըստ 111 հարթության, ապա գոյացող մակերեմները պետք ե պարունակեն կամ միմիայն քլորի, կամ միմիայն նատրիումի իոններ և ելեկարական տեսակետից պետք ե շատ անկայուն լինեն. Այս պատճառով նատրիումի քլորիդի բյուրեղների 111 հարթության յերկարությամբ հերձում (կլիվաժ) առաջացնելը անհնարին եւ Շատ հետաքրքրական պիտեզուելեկարականությունը յերևան են բերում այնպիսի բյուրեղներ, վորոնց ցանցերը գոնե մասամբ իոնական բնույթ ունեն:

Կարող ե ապավորություն ստացվել վոր բյուրեղական մարմինները մեծ կարծրություն ունեն, իսկ ամորֆ մարմինները պետք ե պլաստիկ լինեն, բայց այդ յենթազրությունը հազիվ թե համապատասխանի իրականության: Բյուրեղները հաճախ ավելի հոսուն են, քան ամորֆ նյութերը կամ ապակիները: Հոսունության մեխանիզմը կարող է կայանալ նյութի հուման մեջ բարձր ճնշման տակ, ինչպիս այդ տեղի ունի սառույցի դեպքում, կամ թե այն բանում, վոր ատոմների մեկ շերտը սահում ե մյուս շերտերի վրայով: Ամենից լավ կույլի յեն այն մետաղները, վորոնց բյուրեղները մեծ թվով ելեմննար հարթություններից բաղկացած տարածական ցանցեր ունեն: Այս հանգամանքի շնորհիվ, խորանարդային սերտ ծրարված բյուրեղն ավելի հոսուն ե, քան սերտ ծրարված հեքսագոնալ բյուրեղը: Մետաղը, մի քանի անգամ կորզանի միջով անցկացնելուց հետո, արգեն կորցնում է իր կուլիտությունը և կորզանով նորից քաշելու համար պետք ե վերյեփվի: Դուելիտության անկումը հետևանք ե տարածական ցանցի խախտման, վորը տեղի յի ունենում, յերբ ատոմների շերտերը սահում են միմյանց վրայով: Մետաղի ստրուկտուրը քիչ թե շատ ամորֆին ե մոտենում: Ցերը մետաղը վերյեփման պրոցեսում տաքաշվում ե, առաջներն ինքնին խմբավորվում են՝ առաջացնելով համարյա կատարյալ բյուրեղային ցանցեր:


Մոնորյուրեղները Պարզ բյուրեղային նյութը սովորաբար բաղկացած ե մեծ թվով փոքրիկ բյուրեղեկներից, վորոնք դարսված են միմյանց մոտ վոչ բոլորովին ընդհուպ և վորոնց ցանցերը կողմնորոշված են պատճական ձևով: Ատոմների շերտերը բյուրեղեկների միջև գտնվում են շատ թե քիչ ամորֆ վիճակի պայմաններում: Մետաղի հատկություններն, որինակ, շատ տարբերվում են ոյն հատկություններից, վորը նա կունեար, յեթե մետաղը բաղկացած լիներ մեկ պարզ, մեծ բյուրեղից: Միանգամայն հնարավոր ե աճեցնել շատ մեծ և արտաքուստ միանգամայն կատարյալ կերպով ձևավորված պարզ բյուրեղներ, Բյուրեղի մակերեսը, մասնավորապես ատոմմական կամ իոնական տիպի բյուրեղինը, պիտի ներկայացնե ատոմների շերտ:

վոլոնց փոխագարձ ձգողական ույժերը լլիվ հագեցած չեն, ծվեկեն դարպացրել ե մի տեսություն, վորի համաձայն նման բյուրեղի մակերեսը պետք ե անկայուն լինի և պետք ե ծածկված լինի մինչև բյուրեղի ներսը թափանցող մանրիկ նուռը ճաքերի ցանցով: Ծյոնագենությունության ճշտությունը, Յեթի այս տեսությունն իրավացի յե, ապա անընդհատ և անխախտ տարածական ցանց ունեցող ամենամեծ մունուրյուրեղը, վոր հնարավոր և ստանալ պետք ե սուբմիկրոսկոպիկ չափմէր ունենաւ:

Խառն բյուրեղներ Խառն բյուրեղը կարելի յե բնորոշել վորպես մի բյուրեղ, վորի մեջ ելեմնները բջիջի միենույն տեղը կարող ե զբաղեցնել յերկու տարրեր ատոմներից (կամ ատոմների խմբերից) վորին մեկը և յերկու տեսակների բաշխումն ամբողջ բյուրեղի մասսայում միանգամայն պատահական ե¹: Այս գլխում արդեն նշվել ե քիմիկոսի համար այն բախտավոր հանգամանքը, վոր նյութը բյուրեղանում և սովորաբար մաքուր վիճակում: Գոյություն ունեն մի շարք կանոններ, վորոնք ցույց են տալիս, թե վոր գեպքերում, հակառակ ընդհանուր կանոնի, հնարավոր և խառն բյուրեղի գոյացումը Նյութերը պետք ե ունենան միանման քիմիական կառույց: Նրանք պետք և իրուրի լինեն, ուրիշ խոսքով՝ նրանք պետք ե միենույն բյուրեղային կառույցն ունենան: Յերկու տարածական ցանցերի չափսերը մոտավորապես նույնը պիտի լինեն: Նատրիումի քլորիդը և կալիումի քլորիդը C 25°-ում քիչ թե շատ նշմարելի չափով անդամ խառն բյուրեղներ չեն զոյացնում, վորովհնտև վերջին պայմանին նրանք չեն բավարարում: Վորպեսզի լուծելիությունը բյուրեղային վիճակում ունենա զգալի մեծություն, յերկու ցանցերի ելեմնները բջիջների չափսերի տարրերությունը չպետք ե մի քանի տոկոսից ավելի լինի: Խառն բյուրեղների գոյացման պայմաններն ավելի հեշտ են հալման կետի մոտերում: Խառն բյուրեղների հետաքրքիր որինակ են հանդիսանում իգոր գի մոռ ֆ նյութերը, իզոդիմորֆ զույգ կազմող յերկու նյութեր ունենում են տարրեր տարածական ցանցեր. խառն բյուրեղն ունենում ե այն նյութի տարածական ցանցը, վորի քանակին իրենում ավելի մեծ ե:

¹ Սակայն առանձին գեոլոգիամ շատ դժվար է վորշել, թե խառն բյուրեղը խական լուծույթ ե, թի վորոշակի միացությունների յերկիքաղ խառնուրդ Տես, որինսկ, Wachter, J. Am. Chem. Soc. 54, 919 (1932); Phelps and Davey, Am. Inst of Min. and Met. Eng. Tech. Pub. 448:

բները, ինչպիս յերեռում ե, միմյանց հետ ընդհանուր վոչինչ չունեն: Ասկայն, յեթե C_v նշանակենք զոչ վորպես տեմպերատուրի ֆունկցիա այլ վորպես տեմպերատուրի բոլարիթմի ֆունկցիա (նկ. 29), մենք կստանանք կորերի մի ընտանիք, վորոնցից ամեն մեկը կարելի յև համատեղմայլ մյուսի հետ՝ տեղափոխելով նրանց $\log T$ առանցքի յերկայնքով:



Նկ. 29. C_v -կախումը տեմպերատուրից: $C_v = \log T$ գրաֆիկ

Յեթե Θ -ով նշանակենք էխարակտերիստիկ տեմպերատուրը, այսինքն այն տեմպերատուրը, վորում $C_v = \frac{1}{2} R$ -ի, առա մենք կտեսնենք, վոր Թ (տաս 15 աղյուսակ) մեծ և փոքր աստոմական կշիռութարձր հալման կետ ունեցող հիմնենտների համար, և փոքր և մեծ աստոմական կշիռ. և ցած հալման կետ ունեցող ելեմենտների համար:

15 Առյօնական հիմքներն այն առմագրատուրի նշանակությունը, վորում $C_v = \frac{1}{2} R$ -ի, մի քանի նյութերի համար K^0 -ով:

Կտորաբ	.	.	22	Մնդիկ	.	.	24
Թալլիբում	.	.	26	Կադմիում	.	.	42
Ալոֆում	.	.	78	Սիլիցիում	.	.	180
Ցինկ	.	.	58	Ալյումինիում	.	.	97
Գղինձ	.	.	80	Նատրիում	.	.	48
Ցերկաթ	.	.	98	Մագնեզիում	.	.	77
Կալցիում	.	.	58	Արծաթ	.	.	55
Կալում	.	.	23				

Այսշտայնն առաջինը մատնանշեց, վոր տվյալ դեպքում մենք դորձ ունենք քվանտական: կարգի յերեռյթի հետ: Եներգիայի բաշխումը կարծր վիճակում արժատապես տարրեր և բաշխումից իդեալական դադային վիճակում, վորով զբաղվեցինք II գլխում: Այս տար-

բերությունը, վերջին հաշվով, գոնե մասամբ, կախված ե այն բանից,
վոր ասոմք չի կարող կիսելուկ եներդիա ձեռք բերել այնպես, վոր
նրա դիրքը տարածական ցանցում չփոփոխվի և, հետևապես, նա
ձեռք չըերի նույնպես և պոտենցիալ եներդիա:

Այս պատճառով Մաքսուելի բաշխման որենքը պետք է այնպես
փոփոխվի, վոր վերջին հանդամանքը՝ նկատի առնվիւ Յերկրորդ՝ մենք
գտնում ենք, վոր կարծը վիճակում եներդիան ձեռք և բերդում
դիսկրետ քանակություններով կամ քվանտերով: Ասոմք կարող ե կամ
ամենեին եներդիա չունենալ կամ ունենալ եներդիայի մեկ յերկու և
ավելի քվանտեր: Համաձայն քվանտական տեսության՝ քվանտը հա-
վասար է նայոյինքն՝ Պլանկի կոնստանտի և հաճախության արտա-
դրյալին:

± = ին

(2)

վորտեղ Դ ներկայացնում ե ասոմքի հոճման հիմնական հաճախութ-
յունը տարածական ցանցում: Այս պատճառով և խարակու-
թիակի կոնստանտ ե յուրաքանչյուր ելեկտրական համար: Խոկ իրակա-
նում Ը կորի ձեզ բավարար կերպով բացատրելու համար անհրաժեշտ
է ընդունել, վոր ցած տեսմպերատուրներում նոճման եներդիան, փոխա-
նակ մի հաճախություն ունենալու, բաշխվում և հաճախությունների
մի ամրող տապեկարի» վրա: Մենք կարող ենք պարզորոշ կերպով
հասկանալ: Թե ինչու բյուրեղների ջերմունակությունը տեսլերա-
տուրի փոփոխման հետ պետք ե այդպիսի խիստ փոփոխություն կրի,
յեթե ուսումնասիրենք ջերմական հավասարակշռությունը վորևէ գաղի
և մետաղական ալյումինիումի մի բյուրեղի միջն Կ 100°-ում, վորտեղ
նրա Ը = ½ R-ի: Գաղի մոլեկուլների միջն կիսելուկ եներդիան
բյուրեղի մակերեսին նորմալ ուղղությամբ հավասար է 0,7.10⁻¹⁴ եր-
գի: Եներդիայի քվանտի շահ նշանակությունն ալյումինիումի համար
մոտավորապես հավասար է 3. 10⁻¹⁴ երգի: Ակնհայտ ե, վոր գաղի մո-
լեկուլների մեծ մասն եներդիայի բավական պաշար չունի, վորպեսզի
բյուրեղի ատոմներին հաղորդի թեկուղ մեկական քվանտ եներդիա,
մինչդեռ բյուրեղային ցանցի այն ատոմները վորոնք ունեն մեկ կոմ
մի քանի քվանտ եներդիա, հեշտությամբ կարող են հաղորդել իրենց
եներդիան գաղին: Այսպեսզից ենեկում ե, վոր եներդիան ինքնըս-
տինքյան անհավասար չափերով և բաշխվում գաղի և բյուրեղի միջն
Ատոմների միջն աներդիայի համեմատությամբ ավելի մեծ ե, հաս-
տատվում և եներդիայի հավասար բաշխում, միմիայն վորպես սահմա-
նային դեպք, Յերբ եներդիայի այս հավասար բաշխությունը հաստատվում

հ, բյուրեղի գրամ-տառմը պետք և յերկու անդամ ավելի ջերմունակություն ունենա, քան միատում գազի մեկ գրամ-մոլեկուլը, քանի վոր բյուրեղի տառմները, կինետիկ եներգիայի հետ մեկտեղ, ունեն նաև պատճեցիալ եներգիա, իսկ հավասար ըաշխաման սկզբունքը վերաբերում և եներգիաների այդ յերկու տիսակներին:

Թվանաւային մեխանիկայի յնդրակացությունների համաձայն, քվանտային դերը վիճակում ատոմը պետք $\frac{1}{2}$ ու եներգիա ունենա: Քանի վոր մենք չափում ենք միան եներգիայի փոփոխությունը, ապա վերլուծելով բյուրեղի ջերմունակության խնդիրը, մենք կարող ենք այս մեծությունը հաշվի չառնել:

Մի բանի նմակիրիկ որինաչափությունները: $C_p - \frac{1}{2} C_v - \frac{1}{2}$ տարրերությունը կարծր նյութերի համար կարելի յէ հաշվել կարծր մարմինների վիճակի հավասարումից: Այս տարրերությունը կարծր ելեմենտների մեջ գրամ-տառմի համար, սովորաբար, հավասար և մի քանի տամուրդական կալորիաների, այսինքն՝ դդայի չափով պակաս, քան դազի մեջ մոլի համար:

Թանի վոր շատ ելեմենտների համար ատոմական ջերմությունը 25° -ում մոտավորապես հավասար է $6,2$ կալ-ի, ապա ույժի մեջ և մասում $7,5$ ուն գի և 9 տի ի մոտավոր կան ո՞ւ ը, վորի համաձայն $C_p - \frac{1}{2}$ կարծր վիճակի ելեմենտների համար, սովորաբար, հավասար և $6,2$ կալ-ի: Ենսական տիպի բյուրեղներ դոյցնող միացությունների համար մենք ունենք կոպակի կանոնը, վորի համաձայն միացության ջերմունակությունը հավասար և առանձին բաղադրիչ ելեմենտների ջերմունակությունների գումարին:

Կոպակի կանոնը կիրառելիս անհրաժեշտ ե գործադրել $C_p - \frac{1}{2}$ հատուկ նշանակություններ մի քանի ելեմենտների համար: Այդ նշանակությունները ընդունակ են 16 աղյուսակի մեջ:

16 Աղյուսակ: $C_p - \frac{1}{2}$ նշանակությունները կոպակի կանոնի կիրառման համար:

Ելեմենտ	C_p	Ելեմենտ	C_p
Զբոծին . . .	2,3	Թթվածին . . .	4,0
Կիթիում . . .	3,8	Ֆլուոր . . .	5,0
Բոր . . .	2,7	Ֆլոֆոր . . .	5,4
Ածոտածին . . .	1,8	Մծումբ . . .	5,4

Մոլեկուլար տիպի բյուրեղների համար կոպակի որենքը լավ չի արդարանում: Մի քանի յերկատում մոլեկուլներ, որինակ՝ ջրածնի մո-

լեկուները, հավանաբար պառատային շարժումներ¹⁾ են անում ըյուրեղի մեջ, մինչ վորոշ աստիճան այնպես, ինչպես գաղային վիճակում: Մուրիկուների մեծ մասի համար տարածական ցանցը չափազանց կոչում և պատուային շարժումներ թույլատրելու համար և նրանք այլասերվում են տատանման շարժումների:

Կարեր մարմինների ցրվելու ձգառմքը (Escaping tendency): Կարծր մարմինները նույնպես, ինչպես և հեղուկները, ունեն դորոշու վորոշ ձնշում: Գորոշիացման կամ ինչպես հաճախ այս դեպքում ասում են, սուբլիմացիայի մեխանիզմի մասին կարելի յէ խոսել կինսարիկ թիուրիայի տեսուիկտից ճիշտ այնպես ինչպես արդում և այդ հեղուների համար: Սուբլիմացիայի ջերմությունը մոլեկուլի տարածական ցանցից անջատելու աշխատանքն եւ վորպես կամոն՝ կարծր մարմինների դորոշմիների ճնշումը խոշոր մեծությունների չի համարում: Բորնը իոնային տիպի բյուրեղների ցանցի եներգիան վերտառում և վորպես բյուրեղի սուբլիմացիայի ջերմություն, յերբ բյուրեղն անցնում և դորոշու վիճակը և տալիս և աղատ իոններ՝ դիրոյական ճնշման տակ, այսինքն այն պայմաններում, յերբ իոնները մեկը մյուսից հնաւացված են անվերջ մեծ տարածությամբ կարծր մարմինների լուծույթի մեջ անցնելու տեսնունը ցրման տեսնունցի մի ուրիշ աբանայառությունն եւ:

Ա Ն Դ Ի Ռ Ն Ե Ր

1. Նատորիումի քլորիդի խոռոչունը հավասար եւ 2,163: Յերկաչափական տվյալների հիման վրա (20 նկ.) հաշվել ամենատեղու մոռեցման տարածությունը ցըսը և նատորիումի իոնների միջև:

2. 26 նկ.-ը ներկայացնում է երեմննոտուր բջիջ՝ բջջեւ յերենների, կողեքի և գաղաթմիների վրա գտնվող առողջնորը շրջադատված են հարկան ելեմննոտուր բջիջներով, և ընդունված և հաշվել վրա առողջնորը միայն մոռամբ են պատկանում նկարուց պատկերված բջիջն: Ցույց տալ վրա ըստ հաշվման այսպիսի յեղանակի՝ նատորիումի քրոսվի-ելեմննոտուր բջիջը պարագանակամ և նատորիումի և գլուրի չըրսական առանձ ԲՀիջն թարածության չափանիքը՝ ունի:

3. Նատորիումի քլորիդի բյուրեղներու հարեւեցները կարելի յենարեւեայնպես, վոր նրանք ելեմննոտուր բջիջ յերեններին ուղղահայաց լինեն: Բոլոր յերեց առանցքների վրա յերեններով հատված կարուները չափված են միենույն միավորներով: Հաշվել 100, 110 և 111 հարթություններին համապատասխանապ առամուկան շերտերի հեռավորությունները միմյանցից:

4. Մոնոքրոմատիկ ույնագինյան ճառագայթների վնջի համար ուռաջին կարդ անդրտպարձումը նատորիումի քլորիդի բյուրեղի 100 յերեսից սատրվում և ՅՅ անկյան տակ վերցան և ոյնուգինյան ճառագայթների ալիքի յերկարությունը:

5. Վորոշել թե ցեղիումը քլորիդի բյուրեղների 100, 110 և 111 յերեսները միտյն մեկ աեսակի առօններ մասնակիության բաղկացած, թև միաժամանակ պարունակամ են յերկու աեսակի առօններ:

1) Pauling, Phys. Rev., 36, 444 (1930).

6. 13. աղջուսակում ըերված իրանական շատապինուների մեծություններով հաշվել ցեզիռումն ըլուրիցի և կամունաքար ըշին չտփուիրը:

7. Կոպողի կանոննի ճիման վրա հաշվել տեսակաբորար ջերմությունները հետնյալ նյութերի համար. K_2SO_4 , $CdCO_3$, սառուց, C_6H_6 .

8. Աղավելով Դյաւլենդի և Պըտիկ ու հնագիտական հաշվել նաև այլում, աղջնձի, կապարի և պրատինի ականակարար ջերմությունը ժավալի միավորի (1 սմ²) համար մասյան մոզման առաջ:

9. Մնայալն Ընչան տակ աղծաթի ջերմունակության համար դոյցություն ունեն համեյալ տվյալները.

C_p մել պրամ-ատումի համար	TOK	C_p մել պրամ-ատումի համար	TOK
0,70	25	5,80	130
1,90	40	5,60	160
3,00	55	5,77	190
3,80	70	5,93	235
4,70	85	6,08	285
4,80	100	6,05	295

Գծել C_p -ի կտիման կորը տեմպերատուրից: Գրաֆիկ ինտեգրման վայրեւ յեղանակով վորոշել ջերմության քանակությանը, վերն անհրաժեշտ է մեկ պրամ-ատում արծաթը 0° -ից մինչև 298° տաքացնելու համար: Յեթի կորը զծենք քառակունիների բաժանված թղթի վրա, տպա կորով պարփակված մակերեսը կարելի յեն հեշտությամբ փորչել՝ հողվելով վանդակների թվով:

10. Ալիքացի վերաբերյալ տվյալներն անցկացնել $C_p = \log T$ գրաֆիկի վրա մղամելով 15 աղջուսակի թիվ մեծությունիցից, գտնել C_p -ի հաշակությունները կապարի համար՝ 9 խնդրում, աղծաթի համար պատճ անմպեցատուրի պայմաններում:

ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔԸ


Բոլոր յերևույթներից, վորոնց հետ գործ ունի քիմիան, ամենից լավ ուսումնասիրված են հավասարակշռության յերևույթները Այս պնդումն արդարացնելու մենք կարող ենք ձևակերպել հավասարակշռության եքզակտ քանակական որենքները, և նույնիսկ յեթե հովասարակշռությունը հասած չե, մենք կարող ենք վատահությամբ վորոշել, թե սիստեմում դիտվող վիճակը հաշվածից ինչ ուղղությամբ ե շեղվաւմ: Միևնույն որենքները կիրառելի յեն ինչպես քիմիական հավասարակշռության ընդհանուր դիոքի՝ քիմիական դարձելի ռեակցիաների հավասարակշռության, նույնպես և պարզ հավասարակշռության, վոր աեղի ունի մաքուր նյութի հեղուկի և գորոշու միջն: Այդ պատճառով նպատակահարմար և հավասարակշռության յերևույթների քննարկումն սկսել քիմիական հավասարակշռության ընդհանուր դիոք-քից: Քիմիական հավասարակշռության դաշտափարի իմաստն ամենից հարմար և պարզաբանել տիպիկ դարձելի ռեակցիաների վարքի քըն-նարկմամբ:

Հավասարակոռարյունը դարձելի ռեակցիաների մեջ Յենթադրենք թե մենք ունենք մի շարք ապակյա փակ խողովակներ, վորոնք պարունակում են գաղային ջրածին և կարծր յոդ Մի քանի այսպիսի խողովակներ ևս թող լցված լինեն մաքուր գաղային յոդաջրածնով: Բոլոր այս խողովակները տեղավորված են համապատասխան ռեակտուրատուր ունեցող թերմոստատի մեջ, վորտեղ նրանք պահպատ են յերկար ժամանակ: Այդ ժամանակն անցնելուց հետո բոլոր խողովակները բաց են արգում և նրանց պարունակությունն անալիզվում է: Պարզ-վում ե, վոր նրանցից յուրաքանչյուրի մեջ այժմ գտնվում են բոլոր յերեք նյութերը—գաղային ջրածին, կարծր յոդ և գաղային յոդաջրածին: Թանի վոր փորձի սկզբում, առաջին խողովակների մեջ այս նյութերից մացված ելին տարբեր քանակներ, փորձից հետո նրանց քանակները տարբեր խողովակների մեջ տարբեր կլինեն: Այնուամենայնիվ պարզվում ե, վոր բոլոր դեպքերում, յոդաջրածնի ճնշման քառակուսու-


հալաբերությունը ջրածնի մաշման՝ ներկայացնում և հաստատուն մի մեծություն.

$$\frac{P_{H_2}}{P_{H_2}} = K \quad (1)$$


Խողովակների առաջին սերիայի մեջ տեղի յեւ ունեցել հետևյալ սեակցիան՝



Յերկրորդ սերիայում տեղի յեւ ունեցել հետևյալ սեակցիան՝



Խողովակներից և վոչ մեկում սեակցիան չի ընթացել մինչև վերադը, վորտեղից ակնհայտորեն ըդհում. եւ, վոր մենք գործ ունենք դարձելի մի սեակցիայի հետ, վորն արտահայտվում է հետևյալ հավասարություն՝



Վերը բերված (1) հավասարությունը մտասների ներգործման արհնի մաթեմատիկական արտահայտությունն եւ՝ կիրառված քննվող սեակցիային, խակ Կ հավասարակշռության կոնսանտան եւ՝

«Մասսանների ներդրությունը» արտահայտությունը ճիշտ չի արտահայտում իրորդաթյունը, վորովհնատն կարծը յոդի մասսան հավասարակշռության վրա վոչ մի ազգեցություն չի զործում, քանի զեռ կարծը յոդ կա ներկու և հավասարակշռության կոնսանտի հետ ուղղակի կապված են միայն գազերի պարցիալ ճշգումները. «Մասսանների ներդրություն» արտահայտությունը մնացել ե զեռ այն ժամանակից, յերբ հավասարակշռությունը սահմանադր գործոնների մասին գոյությունը ունիյին միայն շատ մասրոշ պատկերացումներ. Յերթովեն առաջիններից մեկն ե յեղել, վորն ըմբռնել ե, թե սեակցիանները կարող են դարձելի լիներ Արդեն 18-րդ դարի վերջին նաև հայտնել ե այն կարծիքը, թե նատրիումի կարբոնատի շերտերի գոյությունը կարելի կլիներ քացարներ յեթե հաստատված լիներ, վոր նատրիումի հարրոնատն անջատվում ե ծովագյուղին՝ կալցիումի կարբոնատի բավական մեծ մասսայի ներկայությամբ. Դժբախտաբար թերթովեն գրա հետ միասին կարծում եր, վոր ելեմենտները, միացություններ գոյացնելու համար, միանում են վոչ մնայուն քանակական հարաբերություններով, այլ վոր այդ հարաբերությունները կարելի յեւ փոխել կամայականորեն, յեթե սեակցիայի մեջ մուծվող ելեմենտների քանակությունները փոխվեն:

Այս առթիվ նա վեճե մեջ մտավ Պրուէ (Proust) հետ, և քիմիական հավասարակշռության Յերթովեյի շոշափած կարեռ խնդիրը անու-

շաղիք թողնվեց ու մնաց բոլորովմն չպարզված մինչև այս ժամանակ, յերբ Գուլբընը և Վատագին (1867) տվյալն մասսաների ներգործման որենքի ձևակերպումը, վորը հիմնականում համընկնում և վերն առածի հետ:

Մեակցիան յոդի և ջրածնի միջև ներկայացվեց վորպես քիմիական հավասարակշռության որինակ, բայց փորձով հաստատված է, վոր բավական մեծ թվով դարձելի սեակցիաների համար հավասարակշռության պայմաններն արտահայտվում են (1) հավասարման նման հարաբերությամբ: Ավելի ընդհանուր գեղը լուսաբաներու համար յենթադրենք, թե մենք գործ ունենք հետևյալ դարձելի սեակցիայի հետ:

$$n_1A + n_2B = n_3C + n_4D + \dots$$

Վորտեղ հավասարակշռության պայմանն է՝

$$\frac{\frac{n_1}{P_C} + \frac{n_2}{P_D}}{\frac{n_3}{P_A} + \frac{n_4}{P_B}} = K \quad (2)$$


Եթեք և նկատել վոր սեակցով դադերի ստեղծոմետրիկ գործակիցները՝ քիմիական սեակցիայի (2) հավասարման մեջ հանդես են զալիս վորպես պարցիալ ճնշումների առինամետովույցեր: Յեթե սեակցիայի մեջ մտնող նյութերից մեկը մաքուր կարծր մարմին և կամ հեղուկ, առամենք կարող ենք ընդունել վոր (2) հավասարման մեջ նա մտնում է վորուես միավորի հավասար արտադրիչ: Ընդունված է և կարեոր և հիշել այդ, վոր քիմիական սեակցիայի հավասարման աջ մասում մասնակցող նյութերի պարցիալ ճնշումները պետք է գրել մասսաների ներգործման որենքի արտահայտության համարիչում, իսկ ձախ մասում գրված նյութերի պարցիալ ճնշումները՝ հայտաբարում: Միաժամանակ անհրաժեշտ են նշել վոր (2) հավասարումը իստորեն կիրառելի յի միայն ցած ճնշումների համար, վորոնց տակ գաղային նյութերը ճշտությամբ հետևում են գաղային որենքներին:

Համապնդելու համար, վոր իրոք հավասարակշռության վեհակը հասած է, անհրաժեշտ յերկու սերիտ փորձեր կատարել, ինչպես այդ ցույց տրվեց ջրածնի և յոդի սեակցիայի համար: Փորձերի առաջին սերիա յում սեակցիայի մեջ են մտնում քիմիական հավասարման ձախ մասում նշված նյութերը, իսկ յերկրորդ սերիայում՝ հավասարման աջ մասում նշված նյութերը: Խնչպես ընդունված է ասել, հավասարակշռությանը մոտեցվում է չյերկու կողմեցաւ: Յեթե փորձերի առաջին անբավարար և հավասարակշռություն ստեղծելու համար, առաջին սերիայի փորձերից ստացված կրնաւոնտը Կ պետք է փոքր մեծություն ունենա, քան թե յերկրորդ սերիայի փորձերից հաշվածը:

Յեթե փորձերի յերկու շարք չի արվել այլ միակողմանի մոտնցում և յեղեն հավասարակշռությանը, ապա դանդաղ ունեակցիաներում, վորոնց ընթացքի համար բավական յերկար ժամանակ. չի տրվել կարող և վորագիտական հավասարակշռական ընդունվել մի վիճակ, վորոն իրականում հավասարակշռությունից շատ հեռու յեւ:

Ետա ունեակցիաներ դարձելի չեն յերկում: Նրանցից մի քանիսն, իրոք, ընթանում են միայն մի ուղղությամբ: Վորովես որինակ, կարելի յի բերել կրեկինդի պրոցեսում, բարձր ածխաջրածինների ճնշդման ուսակցիայով նավթից գաղողին գոյանալը, Ուրիշ ունեակցիաները ընթանում են այնքան լրիվ (Կ շատ մեծ թվական նշանակություն ունի), վոր հավասարակշռական վիճակում անհնար և լինում վերըրած նյութերից հետքեր անդամ գտննել:

Այսպես և



սեակցիան Ը 500°-ում:

Մեակցիան կարող և ընթանալ այնքան դանդաղ, վոր հավասարակշռության վիճակի համար լր գմբարանաւ: Այսպիսի ունեակցիաները սովորաբար կարելի յն արագացնել՝ տեմպերատուրը բարձրացնելով կամ համապատասխան կատալիզատորը մտցնելով: Կատալիզատորը չի կարող փոխել հավասարակշռության մեջ տոկոս նյութերի հարաբերական քանակությունները: Նա միայն կրճատում և հավասարակշռության հասուներու համար անհրաժեշտ ժամանակիլ:

Մարուր նյութերէ հավասարակշռության գոյությունը գանազան տեսակ մոլեկուլների միջև բարդացնում և «մաքուր նյութ» գաղափարի սահմանումը: Մաքուր նյութը մենք այլև չենք կարող սահմանել վորովես միննույն տեսակի մոլեկուլներից կազմված նյութ: Այսպիս, ջրի գործընն, բացի H_2O մոլեկուլներից, անկասկած պարունակում և նույնպես չնչին քանակությամբ (H_2O)₂ մոլեկուլներ և, ըստ յերենույթին, ավելի բարձր պոլիմերներ: Դնայած դրան, նա մաքուր նյութ և ներկայացնում, վորովինեան տարբեր տեսակի մոլեկուլների միջև հավասարակշռությունը հաստատվում և արագ. H_2O մոլեկուլների հեռանալուց հետո, անմիջապես, նրանց փոխարեն, պոլիմեր մոլեկուլների քայլայման հետևանքով, առաջանում են նոր H_2O մոլեկուլներ և գուլորշին յերենում և այնպես, ինչպիս նա կլիներ, յեթե բաղկացած լիներ միայն H_2O մոլեկուլներից: Հեղուկ ջուրը պարունակում և վոչ միայն պարզ մոլեկուլների զանազան պոլիմերներ, այլև. ջրածին և հիգրոգիլ խններ: Բայց շնորհիվ այն համագամոնքի, վոր թոլոր-այս տարրեր տեսակի մասնիկները միմյանց միջև և H_2O մոլեկուլների հետ գանգում են հավասարակշռության մեջ, հեղուկ ջուրը, այնպիս

ինչպես և գոլորշին, բուրոր այն ռեակցիոններում, վորոնց՝ մեջ մասնակցում են H_2O մոլեկուլները, պահում են իրեն վորպես մաքուր նյութ:

Զրածնի, թթվածնի և ջրի գոլորշիների խառնուրդը 25°-ում մաքուր նյութ չե հանդիսանում նույնիսկ այն գեղջում, յեթե ջրածնը և թթվածնը վերցված են ստեթիումետրական հարաբերությումը, վորովինեաւ ռեակցիոն ջրածնի և թթվածնի միջև չափաղանց դանդաղ ե ընթանում, վորի շնորհիվ հավասարակշռությունը չի կարող հաստատվել: Բայց շատ բարձր տեմպերատուրներում, վորոնցում ջրային գոլորշու հետ հավասարակշռության մեջ են գտնվում նկատելի քանակությամբ ջրածնն և թթվածնն, խառնուրդը պահում ե իրեն վորպես մաքուր նյութ այն ռեակցիոնների համար, վորտեղ մասնակցում և ջուրը, բայց ինացին, վոչ այն ռեակցիոնների համար, վորոնց մեջ մասնակցում են ջրածնը կամ թթվածնը:

Սրա նման՝ որթու և դպարաջրածնի խառնուրդներն իրենց վորոշ հատկություններով հանդիս են գալիք իրեկ մաքուր նյութեր, մինչդեռ ուրիշ գեղջքերում, յերկու տեսակի մոլեկուլների միջև հավասարակշռությունն արագորեն հաստատվելու համար անհրաժեշտ է կատալիզատորի ներկայություն:

Դալամբի որևէ գաղերի խառնուրդի համար Միմյանց հետ հավասարակշռության մեջ գտնվող գաղերի խառնուրդի հետ դորժ ունենալիս, Դալտոնի որենքը (II գլ.) հարմար ե արտահայտել այլ ձևով: Տվյալ դաղի մոլար-բաժինը գաղերի խառնուրդում վորոշվում ե վորպես նրա մոլերի թիվ՝ և ներկա դաշնվող բոլոր գաղերի մոլերի ընդհանուր թիվի հարաբերություն: Դաղային մի խառնուրդում, վորը բաղկացած է A դաղի ու B դաղի, B դաղի ու B մոլից, և այլն, A դաղի մոլար բաժինն է N_A, B դաղինը՝ N_B և այլն. այդ բաժինները վորոշվում են հետեւյալ հավասարությունով:

$$N_A = \frac{n_A}{n_A + n_B + \dots}, \quad N_B = \frac{n_B}{n_A + n_B + \dots}; \quad (3)$$

$$N_A + N_B + \dots = 1 \quad (4)$$

Համաձայն Դալտոնի որենքի ունենք՝

$$p_A = \frac{n_A RT}{V}, \quad p_B = \frac{n_B RT}{V} \text{ և } w_{H_2O}. \quad (5)$$

Նույնպես և՝

$$P = p_A + p_B + \dots$$

Վորտեղ P խառնուրդի ընդհանուր ճնշումն եւ Յեթե (5) հավասարութից աեղագինք պարզիալ ճնշումների նշանակությունները (6) հավասարման մեջ, կստանանք՝

$$P = \frac{n_A RT}{V} + \frac{n_B RT}{V} + \dots \quad (6a)$$

Ցեթեւ այս է (5) հավասարութիւնը յուրաքանչյուրը բաժանենք
(6a) հավասարման վրա, կստանանք Դալտոնի որենքը, արտահայտված
նոր ձևով՝


$$\frac{p_A}{P} = N_A, \quad \frac{p_B}{P} = N_B. \quad (6b)$$

Կամ

$$p_A = N_A P, \quad p_B = N_B P \quad (7)$$

Անակցիաների ցյուղամիջնական հասկումը: Ցույց տանք: Յէ ինչպես պեսը և
հաշվել հավասարակշռության մեջ զանգող գաղերի քանակները մի ռեակցիայի հա-
մար, վարի Կ-ի նշանակությանը տված է:

Քննենք ամենիսակի դոյցումն սեակցիան եւնենաներից՝



Յենթագրենք, թե մենք վերցրել ենք 3 մոլ ջրածին և 1 մոլ ազու: Գոյացած ամմո-
նիակի մոլերի թիվը նշանակենք 2x, իսկ հավասարակշռության հաստատվելուց հետ-
քնականութը ճշգրւմը՝ P: Այդ դեպքում հավասարակշռության վիճակում մենք կունե-
նանք՝

$$2x \text{ } mol \text{ } NH_3, \quad p_{NH_3} = \frac{2x}{4-2x} \cdot P$$

$$3-2x \text{ } mol \text{ } H_2, \quad p_{H_2} = \frac{3-2x}{4-2x} \cdot P$$

$$1-x \text{ } mol \text{ } N_2, \quad p_{N_2} = \frac{1-x}{4-2x} \cdot P$$

$4-2x$ մոլերի ընդհանուր թիվը

Տեղադրելով (8) հավասարման մեջ գաղերի պարզեալ նշանակները, աղտահայտ-
ված իրենց մոլար քանուներով և խունակդիր ընդհանուր ճշգրւմը (Դալտոնի որենք), կստանանք՝

$$\frac{\left(\frac{2x}{4-2x} P \right)^2}{\left(\frac{3-2x}{4-2x} P \right)^3 \left(\frac{1-x}{4-2x} P \right)} = K \quad (8a)$$

Անհամաժամ գործողությունները կատարելուց հետո՝ կստանանք՝

$$\frac{4x^2 (4-2x)^2}{27 (1-x)^4 P^2} = K$$

Այսպիսի հավասարութիւնները սովորաբար հարմար և վճռել կիրառելով հայտնի-

կամ մերձեցման մնջողը՝ Առաջին, տեղադրման համար պեսք և պատել չ-է կամայութեն ընօրութ մեծությամբ, բայց հաջորդական վերահաշվութեարի պրցեսը կարելի յի կրծքաւել, յեթե չ-է տառչին նշանակությունն ընարելի ընթերցող գեկավարվի հետայալ կառավատութմավ, Յեթե Կ-ն փոքր կատորակ է, չ-ը պետք և մաս լինի զերոյի, ընդհակառակին, յեթե Կ-ն մեծ թիվ է, չ-ը մաս և մեկն Յենթաղընք, $K = 0,001$, Յեթե $P=2$, ապա աեզագելով չ-է 0, փակագերում զրված արտահայտության մեջ կատանութ առաջին մատավորությամբ.


$$\frac{64x^2}{27} = 0,001$$

տարվում եւ Եյապես, մենք ավելի հաճախ գործ ունենք այնպիսի սխալ տեմների հետ, վորոնց տաքացումը կատարվում է հաստատուն ճնշման տակ և հետագայում մենք ցույց կտանք, վոր այդ պայմաններում զՊարձ հավասար չեն զ' դառն - զպարձ:

Սակայն, թեև զ' դառն և զպարձ վորեւե պարզ հարաբերությամբ կապված չեն միմյանց հետ, յերկրորդ սկզբունքը մեզ ասում են, թե զ' դառն /T/ և զպարձ /T/ մեծությունների մեջ զոյություն ունի միանդայն վորոշակի կախում:


զ' դառն և զպարձ միջև յեղած կախումը դուրս բերելու համար մենք կոգուվենք ճիշտ այնպիսի մի մեթոդով, վորով ոգտվել ենք ռեակցիայի ջերմության փոփոխությունը սատ աեմպերատորի դուրս բերելու համար, Քննենք մի կոնկրետ դեպք, որինակ, հետեւյալ ռեակցիան:

$$\Delta H = -6950$$



$$\Delta F = -2395$$

Կարելի յեւ ստիպել վոր այս սեակցիան դարձելիորեն ընթանամիւնույն փուլերով, վորոնց հետ մենք գործ ենք ունեցել (35) հավասարումը դուրս բերելիս: Քննենք յերկու պրոցես:



Նկ. 33

1. Ակղում յերկու դրամատում արծաթ և կհս մոլ թթվածին տաքացնենք T տեմպերատուրից մինչև T' տեմպերատուրը, և թույլ տանք վոր այդ տեմպերատուրում նրանք ռեակցիան միմյանց հետ և դոյացնեն արծաթի ոքսիդ:

2. Թող յերկու դրամ-ատոմ արծաթ և կես մոլ թթվածին ռեակցին Տ տեմպերատուրում: Ստացված արծաթե ոքսիդն այնուհետև տաքացնենք մինչև Տ' տեմպերատուրը:

32 Նկարում տված դիագրամը ցույց է տալիս քննվող ցիկլի առանձին փուլերի ջերմական հֆֆելտները: Խոչվես 1 պրոցեսում, նույնական և 2 պրոցեսում, տեմպերատուրի փոփոխությունները կատարվում են դարձելիորեն՝ հաստատուն ճնշման տակ և ուղեկցվում ջերմության մունական և համապատասխանաբար մունակությունների լլանումով: Այստեղ մենք ունենք հաջորդական փոփոխությունների մի շարք, վրանք միննույն սկզբնական վիճակից յերկու տարրեր ճանապարհներով բերում են միննույն վերջնական վիճակին: Ցերկորդ սկզբունքի համաձայն $\Sigma(q_{\text{պար}} / T)$ մեծությունները յերկու ուղիների համար պետք է հավասար լինեն միմյանց.

$$\frac{dq_{1\eta\omega\alpha}}{T} + \frac{q'_{\eta\omega\alpha}}{T} = \frac{q_{\eta\omega\alpha}}{T} + \frac{dq_{2\eta\omega\alpha}}{T} \quad (48)$$

Վճռելով այս հավասարումը զ' դար համար, ստանում ենք՝

$$q'_{\eta\omega\alpha} = \frac{T' q_{\eta\omega\alpha}}{T} + \frac{T' dq_{2\eta\omega\alpha}}{T} - \frac{T' dq_{1\eta\omega\alpha}}{T} \quad (49)$$

զ' դար համար ստացված աբսահայտությունը տեղադրելով (45) հավասարման մեջ դանում ենք՝

$$d\Delta H = \frac{T' q_{\eta\omega\alpha}}{T} + \frac{T' dq_{2\eta\omega\alpha}}{T} - \frac{T' dq_{1\eta\omega\alpha}}{T} - q_{\eta\omega\alpha} + d\Delta F \quad (50)$$

Այնուհետև փոխարինելով T' -ն $T + dT - \eta\omega$, կատարելով համապատասխան պարզեցումներ և դեռ դցելով յերկու դիֆերենցիալների արտադրյալ պարունակող անդամները, ստանում ենք՝

$$d\Delta H = \frac{q_{\eta\omega\alpha} dT}{T} + dq_{2\eta\omega\alpha} - dq_{1\eta\omega\alpha} + d\Delta F. \quad (51)$$

(51) հավասարման նկատմամբ հարկավոր է յերկու դիտողություն անել նախ՝ նա չի պարունակում $dq_{\eta\omega\alpha}$ մեծությունը, վորը կարելի լինել հավասարեցնել $q_{1\eta\omega\alpha} - q_{2\eta\omega\alpha}$ աարեբությանը: Ցերկորդ, $dq_{1\eta\omega\alpha} - \eta\omega$ և $dq_{2\eta\omega\alpha} - \eta\omega$ փոքճական նշանակությունները վոչ այլ ինչ են, յեթե վոչ (35) հավասարման մեջ հանդես յեկող $\Sigma C_{P_1} dT$ և $\Sigma C_{P_2} dT$ մեծությունները:

Այդ պատճառով՝

$$d\Delta H = dq_{2\eta\omega\alpha} - dq_{1\eta\omega\alpha} \quad (52)$$

$$d\Delta F = - \frac{q_{\text{դար}} dT}{T} \quad (53)$$

կամ

$$T \frac{d\Delta F}{dT} = - q_{\text{դար}} \quad (54)$$

Վերը բերված ռեակցիայի համար [(47) հավասարության] ունենք զդար 250 = 4555 կար Ռեակցիայաւմ մասնակցող նյութերի ջերմունակությունները հավասար են՝

$$C_{\text{pAg}} = 6,0, \quad C_{\text{pO}_2} = 7,0, \quad C_{\text{pAg}_2\text{O}} = 16,0$$

$$\text{Ուստի} \quad dq_{\text{դար}} = - 15,5 dT, \quad dq_{\text{դար}} = 16,0 dT$$

$$\frac{d\Delta F}{dT} = - \frac{q_{\text{դար}}}{T} = + \frac{4555}{298} = + 15,3 \text{կար/}^{\circ}\text{C}$$

Ռեակցիայի ազատ ենթգիայի յնվ ռեակցիայի ջերմնահանութեական կապը Մինչև այժմ շարունակում ե գոյություն ունենալ այն միտքը, թե ռեակցիայի ջերմության նշանով վորոշվում ե, թե ռեակցիան կրնթանա թե փոչ Սակայն կասկած չկա, վոր այստեղ վճռական գործոնն ազատ եներգիայի փոփխությունն եւ Նմանապես՝ տվյալ քիմիական միացության կայունությունը չի վորոշվում այն բանով թե նրա գոյացման ռեակցիան եղողոթերմիկ ե թե ենդոթերմիկ, այլ ավելի շուտ ավյալ նյութի գոյացման ռեակցիայի ազատ եներգիայի փոփխության նշանով։ Այդ սխալ հայացքը ΔH -ի նշանակության մասին, ըստ յերկույթին, իր սկզբնավորումն ստացել է Բերթըլուց, վորը կարծել ե, թե քիմիական ռեակցիայի ազատ եներգիան հավասար ե նրա ջերմության։ Հիբավի, կան վորոշ ռեակցիաներ, վորոնց համար ΔF° մեծությունը համարյա համընկնում ե ΔH -ի հետ։ Յեթե ΔH ունի մեծ բացասական մեծություն, ապա ΔF° և միշտ մեծ ե լինում և ունի բացասական նշան։ Մյուս կողմէց, հայտնի յեն ինքնարերարար ընթացող ռեակցիայի համար, ΔF° բացասական ե, վորոնց համար ΔH -ը գրական մեծություն եւ հայտնի յեն նույնպես և հակառակ զերբ (42) և (54) հավասարությունը կոմբինացիայից կարելի յե գտնել ΔF° -ի և ΔH -ի կապը.

$$\Delta F = \Delta H + T \cdot \frac{d\Delta F}{dT} \quad (55)$$

Այստեղ T ներկայացնում ե բացարձակ տեմպերատուրը, իսկ $d\Delta F/dT$ — ազատ եներգիայի տեմպերատուրային գործակիցը։ ΔF արտահայտվում է կալորիաներով, ΔH — նույնպես կալորիաներով, $d\Delta F/dT$ — կալորիաներով մեկ տատիճանի համար։ Այսպիսով տարչափման

իմաստով (55) հավասարումը համասեռ և Այս հավասարումը կարելի յե համարել քիմիական թերմոդինամիկայի հիմքը (55) հավասարումը ճիշտ և բոլոր ռեակցիաների համար, անկախ նրանից, թե յեզանյութերը և ռեակցիայի պրոդուկտները գտնվում են ստանդարտ վիճակում, թե վոչ Միայն անհրաժեշտ ե, վոր ΔF և ΔH չափվեն միևնույն սկզբանական և միևնույն վերջնական վիճակների համար:

Մյուս կողմից (20) հավասարման մեջ

$$\Delta F^\circ = -RT\ln K,$$

Կ հաշվելու համար կարելի յե տեղադրել միայն ազատ են երդի այլ ստանդարտ փոփոխությունը ΔF° :

Ընթերցողն ընտելացել և ոգտվել ընդհանուր որենքները պարզ հանրահազվական ձևով ներկայացնող հավասարումներով, վորոնցից բոլոր ածանցյալներն ինտեղրման միջոցով դուրս են հանված: Այդ պատճառով կարող եք վայը թե (55) հավասարումը մշակված չե մինչեւ վերջը, Սակայն, դա (55) հավասարման միակ ձեռն ե, վոր կարելի յե կիրառել յուրաքանչյուր ռեակցիային: Այդ հավասարումը ինտեղրելու համար, անհրաժեշտ է ΔH° -ը արտահայտել վորպես տեմպերատուրի փունկցիա: Տվյալ ամեն մի ռեակցիայի համար կարելի յե ΔH° -ը ներկայացնել վորպես տեմպերատուրի եմպիրիկ ֆունկցիա, սակայն արդեմ ռեակցիաների համար այդ փունկցիան ունի տարրեր տեսք: Այդ պատճառով (55) հավասարումն ինտեղրվելուց հետո կորցնում ե իր ընդհանրությունը (55) հավասարումը ցուցադրում ե այն փակուր, վոր Փիզիկական հիմնական որենքների եքզակտ բանաձևման համար հաճախ դիմերենցիալ հավասարումներն անխուսափելի յեն:

Հավասարակօնուրյան կոնսամենի ռեմպերատուրային գործակեցը: Հավասարակշռության կոնստանտը կախում չունի ճնշումից, բայց փոփոխվում ե տեմպերատուրի փոփոխման հետ: (20) հավասարումից ΔF° -ի նշանակությունը (55) հավասարումը տեղադրելով (55) հավասարման մեջ, կստանանք՝

$$-RT\ln K = \Delta H + T \left(-R\ln K - RT \frac{d\ln K}{dT} \right), \quad (56)$$

վորը համապատասխան պարզեցումներից հետո՝ տալիս ե

$$\frac{d\ln K}{dT} = \frac{\Delta H}{RT^2} \quad (57)$$


Այս հավասարումը վոր դուրս ե բերել Վան տ' Հոֆֆը (1870) ամենամեծ ընդհանրություն և կարևորություն ունի քիմիական թերմոդինամիկայի մեջ: $d\ln K/dT$ մեծությունը հավասարակշռության կոնստանտի տեմպերատուրային գործակեցն եւ $d\ln K$ արտահայտու-

$$\text{թյունը կարելի յե գրել } \frac{dK}{K}, \text{ վորը նկրկայացնում և Կ մեծության}$$

հարաբերական փոփոխությունը, յերբ տեմպերատուրը փոխվում և dT -ով: Ցեթե dT ընդունենք 1° և (57) հավասարման յերկու մասերը բազմապատկենք 100-ով , կստանանք K -ի տոկոսային փոփոխությունը յուրաքանչյուր մեկ աստիճանի համար, արտահայտված հետեւյալ հարաբերությամբ

$$\frac{100 \cdot \Delta K}{RT^2}$$

Ըսթեցողին կարող ե տարողինակ թվաք թե ինչ իրավունքով անվերջ փոքր dT մեծությունը հավասարեցնում ենք միավորի: Քանի վոր հետագայում ևս հաճախ պետք ե ողովենք: Եթե յեղանակով, նպատակահարմար ե այստեղ ևեթ



Նկ. 33

ճշտությամբ պարզեց թե վոր դեպքերում մենք իրավունք ունենք այդ անելու: ՅՅ-րդ նկարում $\ln K$ ներկայացված ե, վորպես տեմպերատուրի փունկցիա ($վոչ գծային$): $d \ln K / dT$ -ն՝ $\ln K$ կորի շոշափողի թեքությունն ե T կետում: Ցեթե տեմպերատուրը մեկ աստիճանով ավելացնենք, $\ln K$ -ի իրական աճումը հավասար կլինի աշ-ի, մինչդեռ (57) հավասարումով հաշված փոփոխությունը չափվում ե այս հատվածով: (57) հավասարման մեջ dT մեծությունը միավորով փոխարինելու պատճառով առա-

ջացած սիմալը չափվում ե օչ հատվածով: Պարզ ե, վոր օչ սիմալը մեծությունը K -ի իրական տոկոսային փոփոխության համեմատությամբ, յերբ տեմպերատուրը փոխվում և 1° -ով, փոքր կլինի այն գեպքում, յեթե K -ն ինքը քիչ ե փոփոխվում:

ՅՅ-րդ նկարից միանդամայն պարզ ե, վոր (57) հավասարումը չի կարելի ոգտագործել շատ թե քիչ նշանակալի տեմպերատուրային ինտերվալի համար եքստրապոլում անելիս, վորովհետև այս դեպքում սխալը զգալի չափերի կհասնի. K -ն վորպես տեմպերատուրի փունկցիա ստանալու և նրա մեծությունը յուրաքանչյուր տեմպերատուրի համար հաշվելու նպատակով՝ անհրաժեշտ ե (57) հավասարումն ին-

տեղը և նախ քան այդ անել, հարկավոր և ΔH արտահայտել վորպես տեմպերատուրի փունկցիա: Յեթև մենք տռանձին ռեակցիայի համար բավական թվով տվյալներ ունենք, ΔH -ի կախումը տեմպերատուրից կարող ենք արտահայտել եմպիրիկ հավասարման ձևով (սովորաբար վորպես T -ի աստիճանների շարք) և ստանալ ինտեգրումից հետո միմակամայն եքզակտ հավասարում K -ի համար: Բայց յուրաքանչյուր քիմիական ռեակցիայի համար ΔH մեծությունն արտահայտվում է առանձին եմպիրիկ հավասարումով, այդ պատճառով նկարագրված յեղանակով K -ի համար չի կարելի ստանալ ընդհանուր արտահայտություն:

ΔH և ΔF° մեծությունների անդամերատուրային գործակեցները շատ եյտեն միմյանցից տարբերվում են: ΔF° -ի տեմպերատուրային գործակեցը կարող է մեծ լինել, մինչդեռ ΔH -ի տեմպերատուրային գործակեցը սովորաբար մեծ, չեւ և հազիվ հասնում է մի քանի կալորիայի ամեն մեկ տատիճանի համար:

Եթեև ΔH -ը մեծ է, ապա բավականաչափ ճշտությամբ կարելի յի ընդունել վոր նա հաստատուն և և կախում չունի տեմպերատուրից: Այդ դեպքում (57) հավասարումն ինտեգրվում և չափազո՞նց պարզ յեղանակով:

$$\int d\ln K = -\frac{\Delta H}{R} \int \frac{dT}{T^2} \quad (58)$$

Կատարելով ինտեգրումն, ստանում ենք՝

$$\ln K = -\frac{\Delta H}{R} + C \quad (59)$$

Նշանակենք հավասարակության կոնստանտը $K_1 = \pi \cdot T_1$ տեմպերատուրի համար և $K_2 = \pi \cdot T_2$ տեմպերատուրի համար: Ստացվում են՝

$$\ln K_2 = -\frac{\Delta H}{RT_2} + C,$$

$$\ln K_1 = -\frac{\Delta H}{RT_1} + C,$$

Հանելով յերկրորդ հավասարումն առաջնից և նկատի ունենալով, վոր

$$\ln K_2 - \ln K_1 = \ln \left(\frac{K_2}{K_1} \right),$$


կստանանք՝

$$\ln \left(\frac{K_2}{K_1} \right) = \frac{\Delta H}{K} \left(\frac{1}{T_1} - \frac{1}{T_2} \right). \quad (60)$$

Տեղադրելով R-ի նշանակությունը կալորիաներով և անցնելով
տասնորդական լոգարիթմների, գտնում ենք՝

$$\log\left(\frac{K_2}{K_1}\right) = \frac{\Delta H}{4,575} \left(\frac{1}{T_1} - \frac{1}{T_2} \right) \quad (61)$$

Այս ձևը հարմար է Կ-ի հաշվելու տվյալ տեմպերատուրի համար
յիթե նրա մեծությունը հայտնի յէ վորեկ այլ տեմպերատուրի հա-
մար և հայտնի յէ նույնպես ռեակցիայի ջերմությունը Ռեակցիա-



Նկ. 34. Կ-ի տասնորդական լոգարիթմը $H_2 + J_2 = 2H_1$ ռեակցիայի համար, աբ-
տահայտած վորպես բացարձակ տեմպերատուրի հակառակ մեծության ֆունկ-
ցիա: Փորձի ստացված կետերի շեղումն ուղիղից խօսում է այն մտսին, վոր
ΔH փոփոխվում է ըստ տեմպերատուրի, բայց շեղումնը կարելի յէ բա-
ցատրել նույն փորձի սիմեռիոդի և այլ պատճեններով:

Ների մեծամանության համար, տեմպերատուրների վոչ շատ լայն ին-
տերվալում, (61) հավասարումը տալիս ե փորձնական տվյալների հետ
լավ համընկնող արդյունքներ: Ցեթեւ (59) հավասարումն արտադրենք

$$\ln K = -\frac{\Delta H}{R} \left(\frac{1}{T} \right) + C \quad (62)$$

ձևով և համեմատենք ուղիղ գծի հավասարման հետ՝

$$y = mx + b$$

դժվար չի լինի նկատելը վոր ընդունելով ԽԿ և Լ/Տ վորպես կոռըդի-նատներ, կստանանք ուղիղ գիծ (նկ. 34). Այդ ուղիղի թեքման անկյունը արգում է՝ $\frac{\Delta H}{R}$ արտահայտությամբ։ Սովորաբար հավասարակշռության կոնստանտի փորձնական տվյալներն այդ յեղանակով ել անց են կացնում գրաֆիկի վրա, վորովինետն գծային կախման դեպքում մի շարք կետերի համար ուղիղի հավասարումը գտնելը բավական հեշտ եւ Բացի այդ, ինտերպոլումը և եքստրապոլումը շատ պելի մեծ վստահությամբ կարելի յե կատարել յեթե կետերն ընկնում են մի ուղիղի վրա կամ դասավորված են նրան շատ մոտ։

Խ Ն Դ Ի Բ Ն Ե Բ

1. Հավասարակշռության կոնստանտը $H_{\text{H}_2}-J_2(s) = 2HJ_{\text{H}_2}$ սետցիայի համար 25° տեմպերատուրում հավասար է մոտավորապես $0,36$; Հաշվել այդ տեմպերատուրում համատափած հավասարակշռության մեջ տոկա HJ -ի քանակը, յեթե սկզբնական խոռնուրդը կազմված է յեղել 1 մոլ ջրածնից և 1 մոլ յոդից։


2. Հաշվել ամմոնիակի յելանքը, յեթե սկզբնական խանուրդը կազմված է 3 մոլ ջրածնից և մեկ մոլ ազուրից։ Հետեւյալ պայմաններում.

- a) $p=1$, $K=730$;
- b) $p=1$, $K=0,005$;
- c) $p=10$, $K=0,005$;

3. Հաշվել հետեւյալ սետցիաների հավասարակշռության կոնստանտները 25° -ի համար


- a) $\frac{1}{2}\text{H}_2 + \frac{1}{2}\text{N}_2 = \text{NH}_3$,
- b) $3\text{H}_2 + \text{N}_2 = 2\text{NH}_3$,
- c) $2\text{NH}_3 = 3\text{H}_2 + \text{N}_2$.

4. Խնչի՛ յե հավասար հետեւյալ սետցիայի ազատ եներգիայի փոփոխությունը 25° -ում։



Հաշվել 25° -ում ջրի հետ հավասարակշռության մեջ գանգող ջրային գույքը և նոշունը։

5. 25° -ի համար զուրացել հետեւյալ սետցիայի ստանդարտ ազատ եներգիան և հավասարակշռության կոնստանտը։



6. Խնչի՛ գանել զերքը սեղանից հատակի վրա ընկնելու ալիստանքի մեծությունը։ Գանել այս պրոցեսի ազատ եներգիայի փոփոխության մաթեմատիկական արտահայտությունը։


7. Թանիլ $\text{Ag}_2\text{O} = 2\text{Ag} + \frac{1}{2}\text{O}_2$ սետցիայի հավասարակշռության կոնստանտը 25° -ում։

Հաշվել արժաքի և արժաք ոքսիդի հետ հավասարակշռության մեջ գանգող թթվածնի ճնշումը։

Պատ.՝ 0,236 մմ

8. Ացետոքացախական յեթերը սած տեմպերատուրներում կվարվի արդյոք պարզեն մաքուր նյութ:

9. Գրել հավասարակշռության կոնստանտների արտահայտությունը հետևյալ ռեակցիաների համար.



10. Ստանդարտ ազատ եներգիաների աղյուսակում բերված մեծության և (27) հավասարման միջազգային հաշվել գազային թթվածներ մոլար ազատ եներգիան 25°C և 0,01 ատմ. հնչման պայմաններում:

Պատ.—2745 կալ

11. Ցույց տալ վոր $\frac{1}{2}\text{H}_2$ (0,1 ատմ.) + $\frac{1}{2}\text{Cl}_2$ (0,001 ատմ.) = HCl (1 ատմ.) ռեակցիայի ազատ եներգիայի լրական փոփոխությունը հավասար է —19960 կալ

12. Ցույց տալ վոր ջրածնի, աղասի և ամմանիակի խռովուրդում, յեթ ջրածնի և աղասի պարզիալ ճնշումները մեկ ատմ. ե, հավասարակշռության մեջ ամմանիակի պարզիալ ճնշումը պետք է հավասար լինի 731 ատմ.

13. Հաշվել 10 ատմ. ճնշման ազատից և 5 ատմ. ճնշման ջրածնից 1 մոլ տամոնիակի գոյացման ազատ եներգիան 25°C-ում 0,5 ատմ. ճնշման ատել:

14. Վորքմեն է կինետիկ եներգիան (կալորիֆաներով հաշված), վոր մեկ կիլոպրամ մասսան ստանում ե՝ 100 մետրից վայր ընկնելիս. Ողի դիմադրությունը կարելի՞ յև անտեսելը

15. Գոզի ներքին եներգիան ցած ճնշմաների տակ, յերբ կիրառելի յել II դր. (8) հավասարումը, կախված է միայն տեմպերատուրից. Այս դեպքում իզոթերմիկ պրոցեսների համար $\Delta E = 0$. Գանձել ջերմության այն քանակությունը, վոր կախում է 1 մոլ գազը 20-ից մինչև 30 լիտր ընդուրածակվելու համար. գանձել է կատարված աշխատանքը: Տեմպերատուրը 25°C է:

16. Հետո որենքի միջազգով գանձել գոլորշիացման, սուբլիմացիայի և հալման ջերմությունների հարաբերությունները մաքուր քիմիական նյութի վորեն քանակության համար:

17. Վորոշել ջրի գոլորշիացման տեսակաբառ ջերմությունը 50°C-ում. Ջրային գոլորշու համար СР կարելի յել հավասար ընդունել 8,5 կալ/մոլ °C:

18. Եթիլօկտան ալկոհոլի այրման ջերմությունը 25°C-ում հավասար է 323000 կալ/մոլ. Չափումը կատարվել է բաց կալորիմետրի մեջ, վորած սեղակցիայում գոյացած ջուրը խացել է հեղուկի: Հաշվել թե վորքան կինետիկ այրման ջերմությունը, յեթե փորձը տարվի կալորիմետրի մեջ հաստատեն ծավալում:

19. 3 խնդրի (a) ռեակցիայի վերաբերմամբ հաշվել հավասարակշռության կոնստանտները 400°C-ից բարձր տեմպերատուրների համար:

20. Հաշվել թե N_2O_4 ինչ տոկոսով է դիսուցվում NO_2 -ի 25°C-ում 1 ատմ. ճնշման տակ: Խույնը հաշվել 300°C-ի և 1 ատմ.-ի համար:

21. Հաշվել NO_2 -ի դիսուցման տոտիճանը NO -ի և O_2 -ի 300°C-ում և 1 ատմ. ճնշման տակ:

22. Գոնի 1 N_2O_4 -ի խտությունը գրամմերով 1 ամս մեջ 300°C աստիճանում և 1 ատմ. ճնշման տակ, ընդունելով, վոր N_2O_4 դաշտում է հավասարակշռության մեջ իր դիսուցման պրոցերակաների հետ:

23. Հավասարակշռության կոնստանտի տեկուային փոփոխությունը 25°C-ում, տեմպերատուրի յուրաքանչյուր 1 ատմիճանի համար հավասար է 1,5-ի: Հաշվել ռեակցիայի ջերմությունը:

24. Հաշվել 5-րդ խնդրում աված ռեակցիայի հավասարակշռության կոնստանտը՝ 100° -ի համար:

25. Ցույց տալ, վեր 100° անգամերատուրում 5 խնդրում նշած ռեակցիայի համար ազատ հներգիայի ստանդարտ փոփոխությունը հավասար է 19450 կալ:

26. Համեյալ ռեակցիաներից՝



գորտեղ Է-էլեկտրոններ, հաշվել թթվածնի մոլեկուլի գիսոսցման ջերմությունը:

27. $J_2 = 2J_1$, ռեակցիայի համար

$$\Delta F = 26\,310 \text{ կալ}$$


$$\Delta H = 35\,000 \text{ կալ}$$

Հաշվել յոդի գիսոսցմած մոլեկուլների առկուսը՝ 500° -ում և $0,1$ մմ ճնշման տակ:




28. II դիմ. (17) հավասարման ոգնությամբ հաշվել 25° անգամերատուրում 1 մոլ ածխածնի պիոբուիդի 1-ից մինչև 10 լիար ընդարձակվելու աշխատանքի հքականականությունը:

29. Զբանել պիոբուիդի դոյացման ազատ հներգիայի բացասական և Հնայած զրան, ինչպես հայտնի յէ, ջրածնի պիոբուիդը համարվում է պայթացիկ, ի՞նչ ռեակցիայով և անդի անենումը քայլայումը Ցույց ավելք, վեր այս ռեակցիան ազելից ազատ հներգիայի նվազմամբ:

30. Հաշվել համեյալ ռեակցիայի ազատ հներգիայի ստանդարտ և իրական փոփոխությունները.



Պատ.՝ 3910, — 5380



$$\text{Ցույց տալ, վեր } K_3 = (K_1)^{\frac{1}{2}} K_2$$

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՔԻՒՐ ՆՅՈՒԹԻ
ՏԱՐԲԵՐ ՖԱԶԵՐԻ ՄԻՋԵՎ

Այս գլուխ առաջին մասում «Փազդ տերմինը գործ ենք ածելու, վորպես «Փիզիկական վիճակ» գաղափարի սինոնիմ։ Այսպես, հեղուկ ֆազ ասելով՝ նկատի յենք ունենալու հեղուկ վիճակը, Դլիսի յերկրորդ մասում, ֆազերի կանոնի շարադրման կապակցությամբ ֆազ գաղափարին կտանք ավելիք ճշգրիտ սահմանում։

Հեղուկ յևկ կարծ մարմինների գորգութ ձնումը Հեղուկի գոլորշու ճնշումը՝ հեղուկի հետ հավասարակշռության մեջ գտնվող գոլորշու պարցիալ ճնշումն եւ V գլխում դուրս բերված հավասարումը կարելի յեւ ուղղակի կիրառել հեղուկի և իր գոլորշու միջն տիրող հավասարակշռությանը.

$$\text{H}_2\text{O}_{(l)} = \text{H}_2\text{O}_{(v)}, \quad p_{\text{H}_2\text{O}} = K \quad (1)$$

Կիրառելով V գլ. (57) հավասարումը, գտնում ենք՝

$$\frac{dp}{dT} = \frac{\Delta H}{RT^2},$$

վորտեղ ΔH -ը 1 մոլի գոլորշիացման ջերմությունն եւ Տեմպերատուրաների նեղ ինտերվալի համար, բավականաչափ մոտավորությամբ կարելի յեւ ընդունել վոր գոլորշիացման ջերմությունը կախում չունի տեմպերատուրից։ Այդ յենթադրությամբ V գլ. (61) հավասարումից ստանում ենք՝

$$\log \frac{p_2}{p_1} = \frac{\Delta H}{4,575} \left(\frac{1}{T_1} - \frac{1}{T_2} \right), \quad (8)$$


Բայց գոլորշու ճնշման եքզակտ արտահայտման համար մի քանի տասնյակ աստիճանների ինտերվալում, պետք եւ նախ քան (2) հավասարումն ինտեղելլ, արտահայտել ΔH -ը վորպես տեմպերատուրի ֆունկցիա։

35 և 36 նկարներում ցույց են տված մի շաբթ որդանական հե-

դուկիների և ջրի գոլորշիների ճնշումների կորերը 84թև 36 նկարում կորերը կառուցենք ընդունելով վորպես կոորդինատներ լոգ p և $1/T$, ապա (3) հավասարումը հեղուկ-գոլորշի հավասարակշռության համար կունենա հետևյալ տեսքը.

$$\log p = -\frac{\Delta H}{4,575T} + C,$$

վորն ուղիղ գծի հավասարում է, ստացված կառուցման վերև նշան յեղանակով:




Նկ. 35. Զանազան հեղուկների գոլորշու ճնշման կորերը:

36 նկ. ցույց ե տալիս, վոր փոքձնական ավյալներն իրոք համընկնում են ուղիղ գծի հետ: Խնչպես արդեն V գլխում մատնանշվել

և, այս ուղիղների թեքման անկյունը վորոշվում է՝ $\frac{\Delta H}{4,575}$ մեծու-

Քյամբի

Ըստ եյության, շատ զարմանալի յէ, վոր նյութերի մեծամաս-
նության համար փորձնական տվյալներն այդքան ճշտությամբ ընկ-
նում են ուղիղ գծի վրա, յերբ նրանք ներկայացվում են $\log p - 1/T$
գրաֆիկով, ինչպես 36 նկարում. Այս գլխի հետագա պարագրաֆնե-
գրաֆիկով,



Նկ. 36. Նկ. 35-ում տվյած կորերը՝ ներկայացված $\log p - 1/T$ գրաֆիկով:

բում, մենք ցույց կտանք, վոր հիմքեր կան, վոր (4) հավասարումը չկետք ե արդարանա տեմպերատուրների լայն ինտերվալի համար, հատկապես բարձր ճնշումների դեպքում. Այսուամենայի 36 նկ. ակնհայտորեն ապացուցում է, վոր իրականում այդ այդպես չեն:

Համեմատելով 36 նկ. առանձին ուղիղների թեքումները, մենք գալիս ենք այն յեզրակացության, վոր գոլորշիացման համար եմպի-
րիկ կանոնները, որինակ՝ Տրուտոնի կանոնը արդարանում և միայն գոչ մեծ ճշտությամբ:

(2) հավասարումը կարող է մեկնաբանվել ինչպես և V գլխ. (57)
հավասարումը, վորպես գոլորշու ճնշման հարաբերական աճումը տեմ-
պերատուրի T^0 բարձրացման համար:

Ապում ենք հեղուկն իր յեռման կետում ե զտնվում, յերբ
նրա վրա գործող արագին ճշգումը հավասար ե նրա սեփական դր-
լորշու ճնշման Նյութի նորմա յեռման կետ ե կոչվում այն տեմ-
պերատուրը, վորում հեղուկի գոլորշու ճնշումը հավասար է 760 մմ սըն-
դիկի սյան ճնշման: Յեռումը գոյացնում ե դոլորշու բշտիկներ հեղու-
կի մակերեսի տակ: Առաջին բշտիկները, սովորաբար առաջանում են
գոչ թե գոլորշուց, այլ հեղուկի մեջ լուծված գազերի անջատումից: Դոլորշիցումը հեղուկի մակերեսից տեղի յե ունենում ամեն մի տեմ-
պերատուրում, բայց այս պրոցեսը դանդաղ ե ընթանում, վորովինետև
առաջացած գոլորշին պետք ե գիֆֆուզիվ մթնոլորտի մեջ, մինչդեռ,
ընդհակառակը, յերբ հեղուկը յեռում ե, ունենալով բավականաչափ մեծ
ճնշում, դուրս ե մզում շրջապատող ոդը:

Դործնականորեն հեղուկը յերբեք չի յեռում գոլորշու ճնշման
կորով վորոշվող յեռման տեմպերատուրում, այլ փոքր ինչ գերտա-
քանում ե, նախքան սկսում են բշտիկներ գոյանալ Նույնիսկ յե-
ռումն սկսվելուց հետո հեղուկի մեջ դրված թերմոմետրը ցույց ե տա-
լիս սովորաբար յեռման կետից դգալի չափով բարձր տեմպերատուր: Գերտա-
քացումը պարտական ե մասամբ հեղուկի վերին շերտերի հիդ-
րոստատիկ ճնշման շնորհիվ՝ հեղուկի ներսում տիրող պեղի բարձր
ճնշման, քան մթնոլորտի ճնշումն ե: Այսուամենայնիվ գերտաքացումը
հիմնականում պայմանավորվում ե մակերեսային լարվածության ազ-
դեցությամբ, վորը դիմագրում ե բշտիկների գոյացմանը: Ինչպես
գուրս եր բերված III դ.՝ մակերեսային լարվածությամբ պայմանա-
վորված լրացուցիչ ճնշումը՝ հավասար ե 2%: 10⁻⁴ ամ տրամագիծ
ունեցող բշտիկների համար մակերեսային լարվածությամբ պայմա-
նավորված լրացուցիչ ճնշումը, վորն ավելանում ե հեղուկի վրա յե-
ղած արագին ճնշմանը, կազմում ե 1 տամ: Դործնականում միանգա-
մայն հեղտությամբ կարելի յե հեղուկն իր նորմա յեռման կետից
գերտաքացնել 20 աստիճանով, ինչ վոր համապատասխանում ե գոլոր-
շու մոտ 2 տամ ճնշման: Այս տեսակետից կարծես տարորինակ ե, վոր
յեռման կետից արգեն մի քանի աստիճան բարձր գերտաքացած հե-
ղուկի ամբողջ մասսայի մեջ կարող են բշտիկներ առաջանալ: Սակայն
պետք ե հիշել վոր հեղուկի մեջ լուծված գազերի հետքերը նպաս-
տում են բշտիկների գոյացման՝ մինչև վոր սրանց քանակությունն
այսքան ավելանում ե, վոր մակերեսային լարվածությունը հազթա-
հարվում ե: Դրա հետ միասին մակերեսային լարվածության և հե-
ղուկի վրա նրա գործադրած ճնշման միջև յեղած հարաբերու-
թյունը գուրս բերելու համար արված յենթազրությունը, թե հեղուկի
մակերեսի ամբողջ տարածությամբ գործում ե միատեսակ մի լարվա-
ծություն, չի արդարանում այլև բավականաչափ փոքր բշտիկների

չամար, վորոնց մեծությունը մոտենում և մոլեկուլար չափսերի: Հեղուկների գերտաքացման ուժեղ կերպով խանգարում և ծակոտկեն մարմինների ներկայությունը, վորովհետև նրանց ծակոտիների մեջ պահպան ողի բաշիկները ծառայում են իրեն սաղմեր՝ գոլորշու դույցման համար:

Գերտաքացման գոյության պատճառով՝ յեռման տեմպերատուրի եքզակտ վորոշումը բավական մեծ դժվարությունների հետ և կապված: Թորման կոլբայի մեջ սովորաբար թերմոմետրը տեղափորվում և այսպես, վոր նրա գնդակը գտնվի գաղատար խողովակի մոտ, յեխող գոլորշու մեջ, Կոլբայում յեռացող հեղուկը գերտաքացած և և հեռացող գոլորշին ունի նույն տեմպերատուրը, ինչ վոր հեղուկը: Բայց սովորաբար ընդունում են, վոր գոլորշին թերմոմետրի գնդակին հասնելու ժամանակամիջոցում ցրատանում և մինչև իր կոնդենսաման տեմպերատուրը՝ տիրող ճնշման տակ: Թերմոմետրի գնդակի վրա կոնդենսավոր հեղուկը սկզբնական մոմենտում ունենում և հեղուկի յեռման տեմպերատուրը տիրող ճնշման տակ: Այսուամենայնիվ թերմոմետրը չերմություն և կորցնում ճառագայթման և ջերմատարության միջուցով և նրա ցույց տված տեմպերատուրը մի միջին և գոլորշու և շրջապատի տեմպերատուրի, և թերմոմետրի ցուցմունքների փոփոխությունները կախված են դեստիլման արագությունից: Հեղուկի դեստիլման ժամանակ դիտվող տեմպերատուրի փոփոխությունները կարող են պայմանավորված լինել այն փոփոխվող արագությամբ, վորով չերմությունը համում և թերմոմետրին, ինչպես և հեղուկի բաղադրության փոփոխությամբ:

Եեւման կետի գորոշման համար առաջարկված զանազան տիպի ապարատները, սովորաբար սարքված են լինում այնպես, վոր թերմոմետրի գնդակի վրայով անց և կացվում հեղուկի և գոլորշու խառնուրդ: Այսուամենայնիվ, նույնիսկ այսպես սարքված ապարատների վործադրության դեպքում վորոշումների վրա ազդում են ճնշման նույնիսկ փոքր տատանումները, և յեթե յեռման տեմպերատուրը շատ բարձր և շրջապատի տեմպերատուրից, ապա ճառագայթման միջոցով տեղի ունեցող ջերմության կորուսոր կանխիելու համար, անհրաժեշտ է թերմոմետրն եկըրանի ոգնությամբ պաշտպանել Յեթե հնարավորություն կա համապատասխան ձևով կարգավորված թերմոստատ ունենալ, ապա մաքուր հեղուկների յեռման տեմպերատուրի վորոշման ամենալավ մեթոդն եւ չափել գոլորշու մնջումները յեռման կետին մոտիկ մի քանի տեմպերատուրներում և ստացված մեծությունները դժագիքի վրա անցկացնել, ինչպես այդ ցույց և տրված 36 նկարում: Հեղուկների յեռման կետերի վորոշման ժամանակ անհրաժեշտ նախադրուշական միջոցներ չեն արկելու հետևանքով՝ գրականության մեջ

հրապարակված մի շարք տվյալներ, վորոնք վերաբերում են հատկապիս մաքրած և չորացրած հեղուկների յեռման կետերին, խոշոր սխալներ են պարունակում: Սահմանումի հաժածայն 100° -ը ջրի նորմալ յեռման կետն եւ:

Ջրային գոլորշու ճնշումը (18 աղ.) խոշոր նշանակություն ունի յեղանակի ուսումնասիրության տեսակետից: Թանի վոր յերկրագնդի մակերեսի մեծ մասը ծածկված է ջրով, կարելի յեւ սպասել վոր մըթ-նոլորտը բոլոր կետերում պետք է հագեցած լինի ջրային գոլորշիով: Սակայն, իրականում դրան խանդարում են ինչպես տեմպերատուրի տատանումները ծովերի և ցամաքի մակերեսի վրա, նույնպես և գոլորշու դիմուման գանձաղությունն ողում:

Յեթե յերկրի մակերեսի վրա ող չիներ, ապա ջուրը պետք է գոլորշիանար յերկրագնդի ավելի տաք մասերում և կոնդենսվեր ավելի ցուրտ մասերում: Սակայն ողի շարժումը յերկրի մակերեսի մոտ ընդդիմանում է դրան: Հատկապես այդ յերկու հակառակ տենդենցիների առկայությամբ մասամբ կարելի յեւ բացատրել յեղանակի և կլիմայի փոփոխականությունը:

Ողում գանցվող ջրային գոլորշու պարցիալ ճնշման հարաբերությունն այն ճնշմանը, վոր ունի ջրի գոլորշին ողի տեմպերատուրում, կոչվում է հարաբերական խոնավություն: Առում են, թե ողը հազեցած է, յեթե հարաբերական խոնավությունը հավասար է $100^{\circ}/\circ$ -ի, թաղի կետը այն տեմպերատուրն է, մինչև վորը պետք է ցրացնել ոգջ, վորպեսպի նա հագենա ջրային գոլորշիով: Հարաբերական խոնավությունը վորոցում են՝ չափելով ողի տեմպերատուրը յերկու թերմոմետրերով, վորոնցից մեկի գնդակը չոր և լինում, իսկ մյուսինը՝ ջրով թրջած: Չոր գնդակով թերմոմետրը ցույց է տալիս ողի իրական տեմպերատուրը, իսկ խոնավ գնդակով թերմոմետրը՝ ցույց է տալիս ջրի գոլորշիացման հետևանքով ցրտացած ողի ավելի ցածր տեմպերատուրը: Տեսականորեն խոնավ թերմոմետրը չի կարող ցողի կետից ավելի ցածր տեմպերատուր ցույց տալիս Գործնականում, հարաբերական խոնավությունը չոր և խոնավ թերմոմետրերով վորոշելիս, ոգտվում են հմապերիկ, այսպես կոչված պսիխրոմետրական աղյուսակիներով (19 աղ.):

Հսարավոր է, վոր մարդու ֆիզիկական ինքնազգացության համար ամենակարենոր գործոնը հանդիսանում է ընակելի շենքերի ողի հարաբերական խոնավությունը, հետևաբար և շենքերի ջեռուցման և ոգափոխության ռեժիմը քանի վոր մարդու մաշկը պահում է իրեն իրեկ թերմոմետրի խոնավ գնդակ: Նորմալ ինքնազգացության համար անհրաժեշտ է, վոր խոնավ թերմոմետրը ընակելի շենքում ցույց տա մոտ 20° ,

18 Աղյուսակ. Զրի գործուն ձևումը

Տեմպերատուր դոլորշու ճնշումը մմ. Տեմպերատուր Գոլորշու ճնշումը մմ.

Սառելց		30	31,824
		35	42,175
—30	0,285	40	55,824
—25	0,476	45	71,88
—20	0,776	50	92,51
—15	1,241	60	149,38
—10	1,950	70	233,7
—5	3,013	80	355,1
0	4,579	90	525,76
		91	546,05
Հեղուկ ջուր		92	566,99
		93	588,00
—15	1,436	94	610,90
—10	2,149	95	633,90
—5	3,163	96	657,62
0	4,579	97	682,07
5	6,543	98	707,27
10	9,209	99	733,24
15	12,788	100	760,00
20	17,535	101	787,57
25	28,756	102	1489,14

19 Աղյուսակ. Խոնավ թերմոմետրի ցույց և ված և ենթարառությունները զանազան խոնավությունների համար

Զոր թերմոմետրը ցույց և տակի 20°

Զոր թերմոմետրը ցույց և տակի 25°

Խոնավ թերմոմետրի ցույց-մաւրի ցույց-մաւնը	Հարաբերա-կան խոնա-վությունը	Ցողի կետը	Խոնավ թերմոմետրի ցույց-մաւնը	Հարաբերա-կան խոնա-վությունը	Ցողի կետը
19	91	18,5	24	92	23,6
18	83	16,9	23	84	22,2
17	74	15,3	22	77	20,7
16	66	13,5	21	70	19,2
15	59	11,7	20	68	17,5
14	51	9,6	19	57	15,8
13	44	7,4	18	50	14,0
12	37	5,0	17	44	12,0
11	30	2,1	16	38	9,9
10	24	— 1,0	15	33	7,5

Խոնավությունը փակ շենքի մեջ վորոշվում և նրա ավելի ցուրտ մասի տեմպերատուրով: Ձմեռն՝ ողի պակաս խոնավության հետևանաքով տեմպերատուրն ըստ խոնավ թերմոմետրի չափազանց ցածր և լինում, այդ պատճառով մարդը ցրություն և զգում նույնիսկ այն գեպքում, յերբ ողը տաքացված և այն աստիճան, վոր լորձաթաղանթներն արդեն չեն կարողանում գործել նորմալ կերպով: Մյուս

կողմից, ամառն ողի խոնավությունը հաճախ չափազանց մեծ և լինում մտնելի նորմա աշխատանքի համար:

Գոլորշիացումը ջրամբարների մակերսից կախված և ամենից առաջ արեգակից ստացվող ընդհանուր ճառագայթումից, Զրի կը անընդության կորուստը դվախվորապես տեղի յեւ ունենում գոլորշիացման հետեւանքով: Յերբ ջրամբարի վերևի ողը հագենում և ջրի գոլորշիացվ, ջրի տեմպերատուրը բարձրանում և մինչև վոր գոլորշը ճնշման աճման հետեւանքով գոլորշիացման արագությունը հասնում և այսպիսի մեծության, վոր արեգակի ճառագայթումից ստացվող ջերմությունը ճիշտ հավասարվում և գոլորշիացման հետեւանքով տեղի ունեցող ջերմության կորուստին:


Մինչև այժմ մենք խոսում ենք միայն հեղուկների գոլորշիացման մասին: Բայց ամենը, բացի յեռումն ուղեկցող յերեւոյթներին վերաբերող խոսքից, կարելի յեւ տարածել նաև կարծը մարմինների գոլորշիացման մեջ վրա: Սուրբիմացիայի տեմպերատուրը կարելի յեւ սահմանել վորպես մի տեմպերատուր, վորում կարծը մարմինի գոլորշու ճնշումը հավասար է 760 մմ: Սովորաբար կարծը մարմինը հալվում և նախքան նրա տեմպերատուրը բարձրանում և սուրբիմացիայի կետին: Սակայն այս կանոնն ունի իր բացառությունները: Դրանցից մեկը ածխածնի բիոքսիդն է, վորի սուրբիմացիայի կետը՝ 78,2° հ:

Ճետօման ազդեցուրյացումը գործում ձնուման վրա: Թերևս ախճայտ է, վոր արտաքին ճնշման մեծացումը հեղուկի վրա պետք և մեծացնի մոլեկուլների ցրման ձգտումը: Յեթե վորում հարմարանքի ոգնությամբ հեղուկի վրա ճնշումն ավելացն ավելացն այնպես, վոր չխանդարենք մոլեկուլների անցումը գոլորշու ֆազը, ապա պետք և սպասենք, վոր գոլորշու ճնշումը կմեծանա: Այդպիսի եփփեկտը կարելի յեւ հաստատել փորձով: Այսպես, որինակ, Զրի գոլորշու ճնշումը բաց անոթում մթնոլորտի ճնշման տակ քիչ ավելի յեւ քան Զրի գոլորշու ճնշումը փակ անոթում, վորտեղից հանված և ողը, այնպես վոր հեղուկը գանվում է միայն սեփական գոլորշու ճնշման տակ: Աղյուսակներում տված գոլորշու ճնշման չափումների մեծագույն մասը կատարված և սեփական գոլորշու ճնշման տակ գանվող հեղուկների վրա: Հեղուկի վրա արտաքին ճնշման ավելացման և նրա գոլորշիացման ճնշման մեծացման մաթեմատիկական հարաբերությունը կարելի յեւ դուրս բերել հեղուկի և գոլորշու ազատ եներգիաների քննարկումից: Յերբ հեղուկի (1) և գոլորշու (v) միջև հավասարաշղությունը հասաւագած է, նրանց մոլար ազատ եներգիաները պետք և միմյանց հավասար լինեն:


$$F_1 = F_v, \quad \Delta F = 0 \quad (5)$$

Այս պնդումը պահանջում է վորոշ պարզաբանում: Հեղուկի և գոլորշու միջև հավասարակշռությունը լինելու հիմնական պայմանն այն է, վոր տվյալ քանակության հեղուկ նյութի ազատ եներգիան պետք է հավասար լինի նույն քանակության նյութի ազատ եներգիային գաղաւյնի վիճակում: Այդ պատճառով, զուրոցիացման ժամանակ ազատ եներգիայի փոփոխությունը պետք է հավասար լինի զերոյի: Բայնի վոր նախորդ գլխում տրված ցուցմունքների համաձայն, ազատ եներգիայի մեծությունը կախված է նյութի քանակից, ապա անհրաժեշտ է, վոր ազատ եներգիաները ներկայացնեն նյութի միանույն քանակությունը, ինչպես հեղուկ, նույնպես և զուրոցի վիճակներում:

Նյութի քանակի չափման միավորը մոլն է, այդ պատճառով հավասարակշռության պայմանների ձևակերպման համար միայնաց հավասարեցվում էն մոլու ազատ եներգիայի համար: Յերկարագությունը միավորի մեջ տեղակայենք մի գլան, վորի մեջ տեղակայենք մեկ մոլ հեղուկ: Գլանը փակված է մի մխոցով, վորը թափանցելի յե հեղուկի գուրցիւների համար և (37 նկ.) անթափանցելի հեղուկի համար: Յերկարագությունը, թե հեղուկը սեղմելի չե և նրա վրա մխոցի միջոցով ազդում է հաստատում ճնշում P : Այդ ճնշման տակ հեղուկն ստանում է PV_1 պոտենցիալ եներգիան, վորուեղ V_1 մոլ հեղուկի



(a)



(b)

Նկ. 37

ծավալն է: Այս հետևում է այն բանից, վոր յեթե հեղուկը գոլորշիանար և անցներ գոլորշու համար թափանցիկ մխոցի միջով, ապա նակատարեր PV_1 աշխատանքը: Պոտենցիալ եներգիան պետք է մտնի հեղուկի լրիվ ազատ եներգիայի մեջ: Այժմ յեթե ճնշումն ավելացնենք միանչեւ $P+dP$, հեղուկի ազատ եներգիան նույն այս դատողությամբ պետք է աճի $V_1 dP_1$ քանակությամբ: Գործնական նպատակների համար մեծ մասամբ կարծը և հեղուկ մարմինները կարելի յե անսեղմնի համարել: Բայց ընթերցողը կարող է ինքը գուրս բերել նույն արտահայտությունը և սեղմելի հեղուկների համար: 37 նկարից յերկում է, վոր սեղմելի հեղուկի համար ճնշումը $P-\#$ միանչեւ $P+dP$ մեծացնելուց՝ ծավալը փոքրանում է dV_1 -ով: Հաշվելով հեղուկի վրա կատարված լրիվ աշխատանքը և արհամարենով յերկու անվերջ փոքր մեծու-

թյունների արտադրյալը պարունակող անդամը, մենք ստանում ենք նույն արդյունքը, ինչ զոր ստացել եյինք առաջ:

Վորպեսզի հավասարակշռությունը պահպանվի նաև փոփոխված պայմաններում, գոլորշու աղատ եներգիան պետք է ավելանա նույն պիսի մի քանակությամբ, ինչպես և հեղուկի ազատ եներգիանու նույն դատողություններով, ինչպես վերևը, մենք համոզվում ենք, զոր գույրշու աղատ եներգիայի աճումը պետք է հավասար լինի V_v ձր, վորան V_v 1 մոլ գոլորշու ծավալն ե, իսկ $P - \text{գոլորշու } \Delta n_{\text{շումը}} \text{ Այդ}$ պատճառով՝

$$V_1 \cdot dP = V_v \cdot dp \quad (6)$$

Ճնշման մի քանի առմ փոփոխությունների համար $V_1 - P$ կարելի յե հաստատում համարել վարովնեաւ հեղուկները մոտավորապես անս սեղմելի յեն, իսկ գույրշու ծավալը հավասար է

$$V_v = \frac{RT}{P}.$$

Խստեղբերով (6) հավասարումը $P=0$ և $P=P$ սահմաններում ստանում ենք՝

$$V_1 \cdot P = RT \ln \frac{P}{P_0} \quad (7)$$

Այստեղ $P - ն$ գույրշու ճնշումն ե, J_k բար հեղուկը գտնվում է P ճնշման տակ, իսկ $P_0 - \text{գոլորշու } \Delta n_{\text{շումն ե}}, J_k$ բար հեղուկի վրա ազդող ճնշումը հավասար է զերոյի:

(7) հավասարումը դուրս բերելիս մենք վոչ մի յենթադրություն չարինք, զորը սահմանափակեր նրա կիրառելիությունը միայն հեղուկ վիճակի համար, Ընթերցողը կարող է քիչ դժվար պատկերացնել, մի գործիք, զորի միջոցով հեղուկը կարողանար գոլորշիանալ իր գույրշու ճնշումից գերազանցող ճնշման տակ: Ինչպես վերևում ասվեց, այդ կարելի յե իրադրենք յեթե հեղուկը տեղավորենք մխոցավոր մի գլանի մեջ, զորի մխոցը անց է կացնում միայն գոլորշի, բայց վոչ հեղուկը Այսպիսի մխոց պատրաստելու համար կարող է ծառայել զորևե ծակոտկեն նյութ, զորը չի թրջվում տվյալ հեղուկով: Գոլորշիներն աղատ կարող են անցնել նրա միջով, մինչդեռ հեղուկը կազմվի և չի կարող անցնել Այդպես կարող է գործել ծակոտկեն ճենապակու թիթեղը մնդիկի վերաբերմամբ:

Փար կարիների գործօռ ձնումը՝ III գլխում ցույց տրվեց, զոր մակերեսային լարվածությունը հեղուկի կոր մակերեսի վրա ազդում է վորպես ճնշում, Յեթե (7) հավասարումը համակցենք III գլխի (7) հա-

վասարման հետ, յենթադրելով, վոր P ճնշումը մակերեսային լարվածության կատարած ճնշումն է, մենք կգտնենք, վոր հեղուկի մանր կաթելի գոլորշու ճնշումը պետք է ավելի մեծ լինի նույն հեղուկի գոլորշու նորմալ ճնշումից, և այդ յերկու մեծությունների հարաբերությունն արտահայտվում է հետևյալ հավասարման միջոցով՝

$$\ln \frac{P}{P_0} = \frac{2\gamma}{\tau} \cdot \frac{V_1}{RT} \quad (8)$$

Նլապեյրամի հավասարումը ինչպես ցույց տրվեց նախորդ պարագրաֆում, Փազի ազատ եներգիայի փոփոխությունը ճնշման փոփոխմամբ հասաւատուն տեմպերատուրում հավասար է VdP , վարանդ V՝ մեկ մոլի ծավալն է, իսկ P—արտաքին ճնշումը Մաթեմատիկորեն այդ արտահայտվում է հետևյալ ձևով՝

$$\left(-\frac{\partial F}{\partial P} \right)_T = V \quad (9)$$

Յեթև մենք ունենք միմյանց հետ հավասարակշռության մեջ պահպանվող յերկու Փազ (յերկումն ել միենույն ճնշման տակ), ապա յուրաքանչյուր Փազի համար կարող հնք գրել՝

$$\left(\frac{\partial F_1}{\partial P} \right)_T = V_1, \quad \left(\frac{\partial F_2}{\partial P} \right)_T = V_2 \quad (10)$$

Հավասարումներից մեկը մյուսից հանելով, կստանանք՝

$$\left(\frac{\partial F_2}{\partial P} \right)_T - \left(\frac{\partial F_1}{\partial P} \right)_T = V_2 - V_1, \quad (11)$$

կամ ավելի կարեն՝

$$\left(\frac{\partial \Delta F}{\partial P} \right)_T = \Delta V \quad (12)$$

(12) հավասարումը ցույց է տալիս, վոր մեկից մյուսն անցնող և միմյանց հետ հավասարակշռության մեջ գտնվող յերկու Փազերի ազատ եներգիաների ածանցյալն ըստ ճնշման հավասար և նրանց մոլար ծավալների տարրերության։

Յերկու Փազերի ազատ եներգիայի փոփոխության ածանցյալն ըստ տեմպերատուրի հասաւատուն ճնշման տակ ($\Delta F=0$), բղիքում է V գլ. (55) հավասարումից.

$$\left(\frac{\partial \Delta F}{\partial T} \right)_P = - \frac{\Delta H}{T} \quad (13)$$

Այն փաստից, որ $\Delta F=0$ ամենաին չի հետևում, վոր $\partial \Delta F / \partial T = 0$ ՝ թանի դեռ յերկու Փազերը գտնվում են հավասարակշռության մեջ,

$\Delta F = 0$, Բայց, յեթե փոքր ինչ փոխենք տեմպերատուրը, նրանք միշտ այնց հետ հավասարակշռության մեջ չեն լինի, և ΔF մեծությունն այլևս հավասար չի լինի գերոյի:

Եյտղիսով մենք ստացանք տեմպերատուրի և ճնշման փոփոխան ազդեցության արտահայտությունը յերկու ֆազերի միջև տիրող հավասարակշռության վրա: Յեթե այս պարամետրներից մեկը փոխվում է, ապա յերկու ֆազերի միջև հավասարակշռությունը պահպանվում է միմիայն այն դեպքում, յերբ միաժամանակ աեղի յն ունենում յերկրորդ պարամետրի կոմպենսող փոփոխությունը, Մաթեմատիկորեն արտահայտելով՝ այս, ստանում ենք՝

$$\left(\frac{\partial \Delta F}{\partial P} \right)_T dP + \left(-\frac{\partial \Delta F}{\partial T} \right)_P dT = 0 \quad (14)$$

Տեղադրելով մասնակի ածանցյալների նշանակությունները (12) և (13) հավասարություններից (14) հավասարման մեջ, մենք գտնում ենք՝

$$\Delta V dP - \frac{\Delta H}{T} dT = 0, \quad (15)$$

Համ վերջնականապես՝

$$\frac{dP}{dT} = \frac{\Delta H}{T \Delta V} \quad (16)$$

Այս արտահայտությունը կոչվում է Կլառուզիուս—Կլապեյքունի հավասարում և փոխհարաբերությունը յերկու՝ իրար հետ հավասարակշռված ֆազերի միջև, անկախ նրանից, թե նրանք կարծր են, հեղուկ, թե գաղ, ΔH -ը՝ մեկ մոլի կլանած ջերմությունն և մի ֆազից մյոււն անցնելիս, իսկ ΔV ՝ ծավալի փոփոխությունն և առ մեկ մոլ Սեփական գոլորշու հետ հավասարակշռության մեջ գտնվող հեղուկի (կամ կարծր մարմինի) համար, վորը գտնվում է միայն իր սեփական գոլորշու ճշնշման տակ, մենք կարող ենք գրել՝

$$\frac{dP}{dT} = \frac{\Delta H}{(V_v - V_l)T} \quad (17)$$

Փոքր ճնշումների դեպքում հեղուկի կամ կարծր մարմին ծավալը կարելի յէ արհամարել գոլորշու ծավալի համեմատությամբ: Նույն պայմաններում գոլորշու ծավալը գազային որենքի համաձայն հավասար է

$$V_v = \frac{RT}{P}, \quad (18)$$

Տեղադրելով վերջին արտահայտությունը (17) հավասարման մեջ և դեռ դցելով V_l , ստանում ենք (2) հավասարման իդենտիկ մի ար-

աահայտությունս Խնչպես յերեսում ե, (17) և (2) հավասարութիւնը չեն կարող յերկուան ել խստիվ ճիշտ լինել միևնույն պայմաններում: (2) հավասարութիւնը գուրս ե բերված հաստատուն ճնշման տակ տեղի ունեցող քիմիական հավասարակշռության փոփոխության որենքներից: Այսպես; (2) հավասարութիւնը պետք ե ճիշտ լինել հեղուկի գոլորշու ճրնշման համար, յերբ հեղուկը գտնվում ե մթնոլորտային ճնշման տակ, մինչդեռ (17) հավասարութիւնը ճիշտ ե, յերբ հեղուկը գտնվում ե միայն իր սեփական գոլորշու ճնշման տակ, Բացի այդ, քիմիական հավասարակշռության որենքները յենթադրում են գազային որենքի ճշտությունը և բարձր ճնշումների համար նրանք այնքան ճնշումների մեջ ԱԻ ընդունված ե, վորպես հաստատուն մեծությունուն Զնայած այս ամենին, (3) հավասարութիւնը տալիս ե զարմանալի լավ համընկնում փորձի հետ, նույնիսկ շատ բարձր ճնշումների դեպքում: Սա կարող ե լինել միայն, յեթե զանազան յենթադրությունների կապակցությամբ թույլ տված սխանները ծածկեն միմյանց:

Հավասարակօռությանը հալման կենում: Մենք արդեն ասել ենք, վոր հեղուկները կարող են գերցրտացած լինել իրենց բյուրեղվացման կետից յած տեմպերատուրում: Իսկ, հակառակ՝ կարծր մարմինն իր հայման կետից բարձր գերտացացնել մինչև այժմ չի հաջողվել: Հալման կամ կարծրացման կետը կարելի յե սահմանել վորպես մի տեմպերատուր, վորում կարծր և հեղուկ ֆազերը միմյանց հետ գտնվում են հավասարակշռություն մեջ: Այս նշանակում ե, վոր յերկու ֆազերի ազատ եներգիաները և ցնդելու ձգտութիւնները (escaping tendency) պետք ե հավասար լինեն: Ցնդելու ձգտման չափը գոլորշու ճնշումն ե, այդ պատճառով, մենք հաճախ, ավելի ակնառու պատկերացման նպատակով, համարում ենք, թե հավասարակշռությունը հաստատվում ե գազային ֆադի միջնորդությամբ նույնիսկ այն դեպքում, յերբ կարծր և հեղուկ ֆազերի միջև հավասարակշռությունը հաստատվում ե, յերբ նրանք անմիջական դիպման մեջ են լինում: Այսպիս, քանի վոր կարծրացման կետից ցած հեղուկը ձգտում ե անցնել կարծր վիճակի, հեղուկի գոլորշու ճնշումը պետք ե ավելի բարձր լինի, քան կարծր մարմինը նույն նյութի համար, յերբ յերկու ֆազերը գտնվում են միմյանը՝ կարծրացման կետից ցած տեմպերատուրում:

Լ.Բ.-Շատրվանի սկզբունքը մմօման ազդեցությունը հալման կերպ վրա: Լ.Բ.-Շատրվանի սկզբունքն ասում ե, թե յերեւ նավասարակօռության մեջ գտնված սխանեմը յեմբարկվաւ ե մի ազդեցության, վար խախտում ե նաևսարակը սկզբունքը, ապա սխանեմի մեջ առաջանաւ ե այնպիսի պրօցես, վար ձգտում ե մերացմել այդ ազդեցությունը: Այսպես, յեթե հալման կետում կարծր և հեղուկ ֆազերի վրա ճնշումը մեծացնենք,

ավելի մեծ տեսակաբար ծավալ ունեցող փաղը կանհետանաւ: Յեթև կարծր փաղն ավելի փոքր խտություն ունի, ապա ճնշումը մեծացնելիս, նրա մի մասը կհալիքի, ջերմություն կլլամփի և սիստեմի տեսաբերատուրը կիշնի վորոշ ժամանակից հետո հավասարակշռությունը կվերահստատվի, բայց արդեն ավելի ցած տեմպերատուրի համար չետևաբար, այս դեպքում, ճնշման մեծացումը պատճառում է հալման կետի անկում: Ըսդհակառակը, յեթե հեղուկը փոքր խտություն ունի՝ ապա ճնշման մեծացման հետևանքով հալման կետը կրածըրանաւ:

ԼըՇատրվիեի թեորիմի վերև բերած հետևությունների քանակական արտահայտությունը տալիս է Կլաուզիուս-Կապեյրոնի հավասարումը: Դրված լինելով հետեւյալ ձևով.

$$\frac{dT}{dP} = -\frac{T \Delta V}{\Delta H}, \quad (19)$$

սա թույլ եւ տալիս հաշվելու հալման կետի փոփոխումը ճնշման փոփոխման պատճառով՝ հեղուկի ու կարծր փաղի մոլար ծավալներից և հալման ջերմությունից:

Քանի զոր հալման կետը փոխվում է ճնշումից, նյութի նորմալ հալման կետ կոչվում է այն տեմպերատուրը, վորում նրա կարծր և հեղուկ փաղերը հավասարակշռության մեջ են 1 ատմ. ճնշման տակ: Սառույցի նորմալ հալման կետը 100° -ոց թերմոմետրի տեմպերատուրային սկալայի զերոն և Զուրը սակավաթիվ նյութերից մեկն եւ, վորոնց խտությունը կարծր վիճակում ավելի փոքր եւ, քան հեղուկ վիճակում: Այս փակտը կարեսը նշանակություն ունի բնության մի շարք յերևույթների համար: Սառցադաշտերում սառույցի հոսումը պարտական է հալմանը՝ բարձր ճնշման տակ: Հավանաբար, սահուկները շարժվում են շատ փոքր շփումով այն պատճառով, վոր նրանց տակ ճնշման հետևանքով, սառույցը հալվում եւ:


Ճնշման բավական մեծ փոփոխությունների ազգեցությունը հալման կետի վրա հաշվելու համար՝ (19) հավասարումը կարելի յե ինտեղըել շատ պարզ ձևով: ΔH և ΔV մեծությունները կարելի յե հաստատուն համարել Սըանից առաջացած սխալը շատ փոքր եւ: Բացի այդ, սառույցի հալման կետին մոտ՝ տեմպերատուրի փոփոխությունը մեկ սատինանով կազմում է ընդամենը $T - t$ մոտ $1/3|_0^0$ -ը: Այդ պատճառով $T - t$ կարող ենք մի փոքր տոկոս սխալով հաստատուն համարել մինչև անգամ մի քանի սատինաների փոփոխության համար: Այս առումով ստանում ենք՝

$$\int_T^{T+\Delta T} dT = -\frac{T \Delta V}{\Delta H} \int_P^{P+\Delta P} dP \quad (20)$$

$$\Delta T = \frac{T \Delta V}{\Delta H} \cdot \Delta P, \quad (21)$$

(21) հավասարման ոգտագործման հետևանքով առաջացած սխալը ճշնշման մեջ փոփոխությունների համար հեշտ է հաշվի առնել:

Յազային դիագրամը (վիճակի դիագրամը) մտելու նյութի համար: 38 նկարը ներկայացնում է մաքուր նյութի ճնշում—տեմպերատուր դիագրամը՝ չ՝ հեղուկի գոլորշու ճնշման կորն ե, Ե—կարծր մարմնի գոլորշու ճնշման կորը, Ը կորը ներկայացնում է կարծր մարմնի և հեղուկի միջև հավասարակշռության կախումը ճնշումից: Ը կորի թերությունը վորոշվում է (19) հավասարումով: Զրի համար Ը կորը ունի բացասական թերություն, իսկ նյութերի մեծամասնության համար՝ դրական:



Նկ. 38 Յազային դիագրամ ջրի համար: Մասշտաբը
չեղականված:

Հիբրախ հաստացած ֆազերի կանոնն ասում ե, վոր հավասարակշռության մեջ գտնվող սխանմի համար ֆազերի բիվը, գումարած ազատության տարինաների բիվը, նավասար է կամպոնեների բիվն՝ գումարած յերկու.

$$P + F = C + 2 \quad (22)$$

Սիստեմ ասելով մենք հասկանում ենք նյութի վորոշ քանակություն, մեկուսացված զրջապատող միջավայրից այնպես, վոր նա կարող է պահպանվել հաստատուն տեմպերատուրի և ճնշման տակ: Մինչև այժմ

«Փազ» ասելով, մենք նկատի ունեյինք պարզապես նյութի ֆիզիկական (ագրեգատային) վիճակը՝ կարծը հեղուկ կամ գաղային Սակայն, վորու մաքրու նյութեր, միևնույն փիզիկական վիճակում, կարող են դոյլություն ունենալ ավելի քան մեկ ֆաղում, Այսպես որինակ՝ հայտնի յեր կարծը ծծումբը դոյլություն ունի յերկու ձևով՝ ռոմբիկ և մոնոկլինիկ: Չնայելով, վոր այս յերկու ձեերից յուրաքանչյուրը մաքրու ծծումբ ե, նրանք առաջերվում են միմյանցից ըյուրեղային ստրուկտուրով, խառնթյամբ, գոլորշու ճաշումով, գույնով և ընդհանուրապես իրենց ֆիզիկական բոլոր հատկություններով:

Ծծումբի սոմբիկ և մոնոկլինիկ ձեերը կարծը ծծումբի տարբեր ֆազերն են: Սիստեմում ֆազերի թիվը հավասար ե նյութի հոմոգեն, իրենց հատկություններով տարբեր տեսակների թվին, վոր կարելի յեմիմյանցից տարբերել հետազոտման սովորական մեթոդներով: Այստեղից բղիք բղխում ե, վոր յերկու ֆազեր չեն կարող միաժամանակ միենույն տարածությունը բռնել: Այսպես, յեթե մենք ունենք սոմբիկ ծծմբի միքանի բյուրեղներ, նրանցից յուրաքանչյուրը ներկայացնում ե նյութի հոմոգեն բաժին, բայց նրանք ամենքը բյուրեղի միենույն տեսակն են, և հետևաբար ներկայացնում են միենույն ֆազը:

Հակասարակցության մեջ առկա ֆազերի բնույթը կախված ե, ամենից առաջ, սիստեմի տեմպերատուրից և ճնշումից: Տեմպերատուրն ու ճնշումը հանդիսանում են սիստեմի թերմոդինամիկական փոփոխականները: Բացի նրանցից կարող են լինել թերմոդինամիկական ուրիշ փոփոխականներ, վորոնցից մի քանիսը կքննվեն հետազույում: Միակոմպոնենտա սիստեմների մեջ այսինքն՝ միմիայն մեկ մաքուր նյութից կազմված սիստեմների մեջ միայն տեմպերատուրը և ճնշումը կարելի յեմիկատել վորպես փոփոխականներ: Նրանք են ընտրված վորպես կոորդինատներ 38 նկ.-ի դիագրամի համար: 38 նկ.-ի ը կետին համապատասխանող տեմպերատուրի և ճնշման համար մենք ունենք միմյանց հետ հավասարակցության մեջ գտնվող յերեք ֆազեր՝ ստորև, ջուր և ջրային գոլորշի: Այսպիսի կետը կոչվում է յեռյակ կետ: Նա համապատասխանում է ինվարիանության վեհականական վիճակի վեհականական վիճակի գոլորշի: Այսպիսի կետը կոչվում է յեռյակ կետ: Նա համապատասխանում է ավելի առաջ հավասարակշռությանը, վորովհետեւ չի կարելի փոխել վոչ տեմպերատուրը և վոչ ճնշումը առանց անհետացնելու ֆազերից վորեւ մեկը: Այսպես, յեթե բարձրացնենք տեմպերատուրը, ստորև կհայլի: յեթե ճնշումը մեծացնենք, կանհետանու (կոնդենսվելով հեղուկի) գոլորշի ֆազը: Ընդունված է ասել, ինվարիանատ կետը չունի ագատության վոչ մի աստիճան: Մյուս կողմից, հեղուկ ջուրը և ջրային գոլորշին կարող են դոյլություն ունենալ միմյանց հետ հավասարակշռության մեջ մի տեմպերատուրում և ճնշման տակ, վորը համապատասխանում է ա կորի վորեւ կետին: Այսպիսի յերկար սիստեմների համար ասում են, թե նրանք

մոնովարիանտ են, կամ այլ կերպ՝ նրանք ունեն ազատության մեկ աստիճան։ Այս նշանակում ե, վոր սիստեմի վիճակը վորոշ յերկու փոփոխականներից (տեմպերատուրը և ճնշումը) միայն մեկն և հանգիստանում անկախ փոփոխական, մյուսի թվական նշանակությունը սահմանվում և առաջինի նշանակության ընտրությամբ։ Այսպիսով հեղուկ-գոլորշի սիստեմի համար կարող ենք փոխել տեմպերատուրն, ինչպես ուղում ենք (ΔT 38. նկ.) (այն պայմանով, վոր նա մաս հարման կետից բարձր), բայց այս գեղքում P ճնշումը պետք և փոխվի այնպես (ΔP 38 նկ.), վոր սիստեմի վիճակը ներկայացնող կետը շարունակ մնա և կորի վրա, այլապես ֆազերից մեկը կանհետանաւ նույն ձևով, վորոշ սահմաններում մենք կարող ենք կամայականորեն փոխել ճնշումը, բայց վորպեսզի սիստեմը մնա յերկ-ֆազ, տեմպերատուրը պետք և լինի կախյալ փոփոխական, այսինքն՝ վորոշի ճնշման ընտրությամբ։ Մյուս կողմից գոլորշի ֆազը կարող և գոյություն ունենալ ամեն մի տեմպերատուրում և ճնշման տակ, վորոնք համապատասխանում են դիագրամի կորից ցած մարզի վորեն կետին։ Այսպիսի սիստեմը կոչվում է բիվարիանտ, այսինքն ունի ազատության յերկու աստիճան։ Այս նշանակում ե, վոր վորոշ սահմաններում մենք կարող ենք, մեկը մյուսից անկախ, փոխել ինչպես տեմպերատուրը, նույնպես և ճնշումը, առանց փոխելու ֆազերի թիվը։ Հետևաբար՝ սիստեմի ազատության աստիճանների թիվն այնպիսի դործոնների թիվ ե, վորոնք սահմանում են սիստեմի վիճակը և հանդիսանում են վորապես անկախ փոփոխականներ, վորի շնորհիվ նրանց կարելի յերփոխություն առանց պատճառելու հավասարակշռության մեջ ներկա ֆազերից վորեն մեկի անհետացումը։


Միակոմպոնենտ սիստեմների մեջ, վոր մենք ուսումնասիրում ենք այժմ, ազատության աստիճանների մաքսիմալ թիվը հավասար և յերկուսի։ Այս դիպքում ինչպես տեմպերատուրը, նույնպես և ճնշումը կարելի յերփոխորշ սահմաններում փոփոխել մեկը մյուսից անկախ, առանց յերկրորդ ֆազն ել առաջացնելու, բացի այն միակ ֆազից, վորից կազմված և բիվարիանտ սիստեմը։

38 նկ.-ի դիագրամի ա, թ և Ը կորերով սահմանված մակերեսները ներկայացնում են այն աստիճանների և ճնշումների յերկրաչափական տեղերը, վորոնցում բիվարիանտ սիստեմները կարող են գոյություն ունենալ նույն ձևով՝ գծերը համապատասխանում են մոնուվարիանտ սիստեմներին, իսկ կորերի հատման կետերը համապատասխանում են ինվարիանտ սիստեմներին։ Մեկ կոմպոնենտից բաղկացած

սարբեր սիստեմների համար մենք ունենք հետևյալ կարելիությունն ները.

Ախտեմ .	P+F=C+2=3
Ինվարիանտ	3+0=3
Մոնովարիանտ	2+1=3
Դիվարիանտ .	1+2=3

Փոխանցման կետեր կարծր նյութերից շատերը պուլիմոր ֆեն Այդ նշանակում եւ, վոր նրանք կարող են դոյություն ունենալ յերկու կոմ մի քանի բյուրեղային ձևերով կամ ֆազերով, Ըսդհանապես սարեր ձեռքից մեկի գոլորշու ճնշումների կորն ընկնում եւ մյուսի գոլորշու ճնշումների կորից բարձր: Բայց հաճախ գոլորշու ճնշման կորե-



Նկ. 39. Ֆազային գիտաբամը մոնոկլինիկ և ռոմբիկ ձեմքի համար Մասշտաբը չի պահպանված:

ըս հատվում են մեկը մյուսով մի տեմպերատուրում, վորը կոչվում է փոխանցման կետ, և այս տեմպերատուրում յերկու ֆազերը միմյանց հետ հավասարակշռության մեջ են լինում: Պետք ե յինթագրել վոր պոլիմորֆ նյութերի մեծամասնությունը փոխանցման կետեր կցուցարերեյին, յեթե հալումը կամ սուրլիմացիան խոչընդուռ չհանդիսանային: Փոխանցման կետից ցած կայուն և լինում ֆազերից մեկը, իսկ բարձր՝ կայուն և դառնում մյուսը: Արագ տաքացման միջոցով կարելի յե փոխանցման կետից ցածր տստիճաններում կայուն ֆազն ստանալ փոխանցման կետից ավելի բարձր տեմպերատուրներում: Սա կտրուկ

արտահայտված հակադրություն և հալման յերևույթին, վորի դեպքում կուրծը ֆազը հալման կետից բարձր գերտաքացնելն անհնար եւ:

Փոխանցման կետից բարձր գերտաքացված ֆազի մասին տոռում են, թե նո գտնվում եւ մեթաստաբիլ վիճակում: Այս նշանակում եւ, վոր ֆազը կայուն եւ բոլոր հարավոր փոփոխությունների դիմաց, բայց վոչ այլ բյուրեղային ձևի դիմաց, վորի հետ դիպչելուց արդեն փոխվում եւ ամենայն արագությամբ: Նմանապես փոխանցման կետից բարձր կայուն ֆազը կարելի յեւ բերել մեթաստաբիլ վիճակի, ցրտացնելով այն արագորեն փոխանցման աեմպերատորից ցածր:

39 նկ. պատկերացնում եւ թ, Տ դիագրամը ծծմբի համար, վորն ինչպես հայանի յեւ, գոյություն ունի բյուրեղային յերկու մոդիֆիկացիաներով՝ առմբիկ և մոնոկլինիկ: Մոմբրիկ ձևը կայուն եւ ցած տեսմերատուրներում: Փոխանցման կետը գտնվում է 96°-ում: Նկատենք, վոր ծծմբին ունի յերկու հալման կետ, վոր-կարելի յեւ իրագործել փորձառվությունը ջորս ֆազ կա, բայց ֆազերի կանոնը ասում եւ թե վորոշ ընտրված պայմաններում միմյանց հետ հավասարակռության մեջ կարող են լինել վոչ ավելի, քան յերեք ֆազ: Լը-Շատըլիեի սկզբունքը թույլ եւ տալիս կանխազ ասեմ թե ինչ ուղղությամբ կտեղափոխի: Փոխանցման կետը ճնշման փոփոխման հետեւանքով: Ոգտվելով կլառուզիուս-երապելյոնի հավասարումից (19 հավաս.) կարելի յեւ հաշվել ճնշման եֆֆեկտը: Դրա համար պետք եւ իմանալ փոխանցման ջերմությունը և յերկու ֆազերի խառնությունները: Կիրառելով կլառուզիուս-երապելյոնի հավասարումը (17) կարծր մարմին—գոլորշի հավասարակցությանը, տեսնում ենք, վոր սուրբիմացիայի ջերմությունը համեմատական եւ գոլորշու ճնշման կորի թեքությանը 39 նկարում: Դիագրամի քննությունը ցույց է տալիս, վոր սոմբիկ ծծումբը պետք եւ ունենա սուրբիմացիայի ավելի մեծ ջերմություն: Հետեւաբար, ըստ Հեսսի որենքի (ջերմությունների գումարների մայնությունը) սոմբիկ ծծումբը մոնոկլինիկի անցնելիս պետք եւ ջերմություն կլանի: Այս յեղակացությունը կարելի յեւ ընդհանրացնել: Զերմաւրյանը միշտ կլանվում եւ, յերբ փոխանցման կետից ցած կայուն ֆազն անցնում եւ ներանից բարձր կետաւմ կայուն ֆազի:

Պոլիմորֆիզմը ելեմենտների դեպքում սովորաբար անվանվում է ալլոտրոպիա: Յերկու ձևեր, վորոնք կարող են հավասարակշռության մեջ լինել փոխանցման կետում, կոչվում են ենան տիոտրոպ ձևեր: Յեթե ձևերից մեկը բոլոր աեմպերատուրներում ավելի կայուն եւ մյուսի հանդեպ (ուրեմն փոխանցման կետ չկա), ելեմենտը կոչվում է մոնոտրոպ:

Փիսոսցման ձևում (Առանձնականություն), Մի սիստեմ, վորը բաղ-

կացած և մեկ դադից վոր յերկու կարծր ֆաղերի հետ հավասարակշռության մեջ ե, որինակ՝




թերմոպինամիկորեն վարդում ե վորպես մի մաքուր նյութ իր գոլորշու մնշումով, քանի դեռ բոլոր ֆաղերը ներկա յեն, կիրառելով (2) հավասարումը, մենք կարող ենք մնշման չափումներից հաշվել դիսուցման զերմուրյանը, Այս տեսակ գաղի մնշումը, գոլորշու մնշման անալոգիայով, կաչվում ե գիսսոց ման ճնշում և բնուրոշվում և այն ֆակտով, վոր գաղը նույն բաղադրությունը չունի, վորն ունեն կոնդենսված ֆաղերը: Դիսսոց ման տեմպերատուրը կոչվում է այն տեմպերատուրը, վորում դիսուցման մնշումը հավասար է 760 մմ-ի: (23) հավասարումով արտահայտվող սեակցիայի դիսուցման մնշման կորը ցույց ե տված 40 նկարում (տես նաև 20 աղյուսակը):

20 Աղյուսակ: Կալցիումի կարբօնակի դիսուցման ձևումը

Տեմպերատուր C°	Ճնշում մն. ս. մմ.	Տեմպերատուր C°	Ճնշում մն. ս. մմ.
514 . .	0,29	800 . .	192
592 . .	2,63	850 . .	374
733 . .	52	908 . .	760

Կոմպոնենտների թիվը վերոհիշյալ սիստեմում հավասար ե յերկուսի, ըստ վորում վորպես կոմպոնենտներ կարող ենք վերցնել հետեւյալ յերեք նյութերից՝ CaCO_3 , CaO և CO_2 վորմե զույգ: Յեթե վորպես կոմպոնենտներ ընդունենք CaCO_3 և CaO զույգը, ապա CO_2 -ից բաղկացած գաղ-ֆաղի բաղադրությունը կարելի յե արտահայտել վորպես $\text{CaCO}_3 - \text{CaO}$, կոմպոնենտների թիվը հավասար ե քիմիական փորմուլների (այսինքն ինքնուրույն գոյության ընդունակ նյութերի) մինիմալ թվին, վորոնցով կարելի յե արտահայտել յուրաքանչյուր ֆաղի բաղադրությունը: Ընթերցողին կարող ե թվայ թե վերցրած յեռափաղ սիստեմը կարելի յե ստանալ, յենելով միայն մեկ նյութից CaCO_3 -ից, քանի վոր մյուս յերկումն առաջանում են նրա դիսուցումից: Սակայն այս գեպքում սիստեմի վրա բարդվում ե մի նոր պայման, վորովիետե կալցիումի ոքսիդը և ածխածնի դիոքսիդը նրա մեջ կարող են լինել միմիայն եքվիմոլեկուլար քանակներով: Լրացնեցի չպայման դնելն ազատության աստիճանների թիվը պակասեցնում ե

մեկով, և ֆազերի կանոնը ձևականորեն իրագործված ե թվում, բայց մենք այլևս անկարող ենք մնացած յերկու ֆազերից յուրաքանչյուրի բաղադրությունն արտահայտել ընտրած կոմպոնենտի միջոցով: Ընդհակառակի, ամմոնիումի քլորիդի դիսուցման հավասարակշռությունը կարելի յե գիտել վորպես միակոմպոնենտ սիստեմի հավասարակշռություն, յեթե յենիւ միայն ամմոնիումի քլորիդից: Այստեղ դիսուցման յերկու պրոդուկտներն ել գաղեր են, և բացի ամմոնիում քլորիդ կարծր ֆազից, կա գոլորշու մի ֆազ վորն ունի նույն բաղադրությունն, ինչ վոր կարծր ֆազը: Հետեւաբար այս հավասարակշռությունը անալոգ ե մաքուր նյութի և իր գոլորշու հավասարակշռությանը:



Նկ. 40. Կալցիում կարբոնատի դիսուցման կորը.

Իս յին վոչ եքվիմոլեկուլար քանակներով, ապա մենք ունենք յերկու կոմպոնենտ սիստեմ, վորը մաքուր ամմոնիումի քլորիդից կազմված սիստեմի համեմատությամբ, պետք ե ունենա աղատության լրացուցիչ աստիճան: Իրականում այսպես ել լինում ե, վորովհետև բացի տեմպերատուրը և ճնշումը, սիստեմը բնորոշող փոփոխական մեծություն և հանդիսանում և՝ գաղային ֆազի բաղադրությունը:

Դառնալով կալցիումի կարբոնատի դիսուցման քննարկմանը, պետք ե նկատեն վոր թեև դիսուցման տեմպերատուրը 908° ե, այնուամենայնիվ ավելի ցածր տեմպերատուրներում կրաքարը դիֆֆուզան միջոցով դանդաղորեն կարող է կորցնել ածխածնի դիոքսիդ ճիշտ:

այնպես, ինչպես ջուրը կարող ե գոլորշիանալ իր յեռման կետից ցած տեմպերատուրներում:

Կալցիումի կարբոնատից և ածխածնի դիոքսիդից կազմված սիստեմը բիվարիանտ եւ Այդ նշանակում ե, վոր քանի գեռ սիստեմում գոյություն ունեն միայն յերկու ֆագեր, տեմպերատուրի ընտրությամբ ճնշումը զեռևս չի վորոշվում: Վորպեսզի սիստեմում սահմանվի հավասարակշռական ճնշում, անհրաժեշտ է յերրորդ ֆագի՝ կալցիումի ռեսիդի ներկայությունը:

Վ գլ. Քիմիական հավասարակշռությունը քննելիս արդեն ասացինք, վոր հավասարակշռության վիճակը կախում չունի ներկա գտնըվող ֆագերի բացարձակ քանակներից:

Երիտարանիդրատների դիսացման ձնումը կրիստալունիդրատը ներկայացնում է յերկոմպոնենտա սիստեմ: Ջրային գոլորշու պարզեցած ճնշումը հիդրատված աղի վրա դիսոցման ճնշման սովորական որինուկ եւ թագերի կանոնը մեզ ասում ե. վորպեսզի սիստեմում հավասարակշռություն հաստատվի, նրա մեջ գոլորշու հետ միասին պետք է ներկա լինեն յերկու կարծր ֆագեր: Այդ ֆագերը կարող են լինեն կամ տարրեր հիդրատներ, կամ մեկ հիդրատ և անջուր աղը: Յերեւերիտարանիդրատի դիսացման նմումը ավելի լի, բան որշապատճ սղի ջրային գույշու պարզիալ նմումը, ապա աղը ծաղկաւ և (նազմանարկաւմ է):

21-րդ աղյուսակում տված են պղնձի արջասովի հիդրատների միշտաքերի դիսացման ճնշումները:

Տ. Աղյուսակ: Պղնձի արջասովի հիդրատների դիսացման ձնումը

Տեմպերատուր C°	$\text{CuSO}_4 \cdot 5\text{H}_2\text{O}$ — $\text{CuSO}_4 \cdot 8\text{H}_2\text{O}$	$\text{CuSO}_4 \cdot 3\text{H}_2\text{O}$ — $\text{CuSO}_4 \cdot \text{H}_2\text{O}$	$\text{CuSO}_4 \cdot \text{H}_2\text{O}$ — CuSO_4
25 . . .	7,8 մմ.	5,8 մմ	0,8 մմ
30 . . .	11,0 *		
35 . . .	18,5 *	11,8 *	
40 . . .	23,2 *		
45 . . .	32,8 *	22,1 *	
50 . . .	45,4 *	30,9 *	4,5 *
80 . . .	260,1 *	183,1 *	

Խ Ն Դ Ի Բ Ն Ե Ր

1. Հեղուկի յեռման նորմալ կետն 90° եւ Հաջվել հեղուկի դոլորշու ճնշումը 20°-ում, յեթև նրա գոլորշիացման շերմությունը մեկ մոլի համար հավասար է 800 կալ-ի:

2. Հաշվել հեղուկի գոլորչեցման մոլար ջերմությունը հետեւալ ավագաներից.

Տեմպերատուր 0°-ով

Գոլորչու ճնշում,

մնդ. սյան մմ-ով

25

6,6

75

200

3. Գանել հեղուկի նորմալ յեռման կետը, յեթև 40°-ում նըա գոլորչու ճնշումը 50 մմ է:

4. Հաշվել ջրային գոլորչու ճնշման տոկոսային աճումը 20°-ում տեմպերատուրի յուրաքանչյուրը 1°-ի համար:


5. Հաշվել 1 լ խոնավ ողի կշիռը 30°-ում, յեթև բարոմետրը ցույց ե տալիս 750 մմ, իսկ հացաքերական խոնավությունն 90% է:

6. Հաշվել բաց անօթում գանվող ջրի գոլորչու (բարոմետրը ցույց ե տալիս 780 մմ) և փակ անօթում գանվող ջրի գոլորչու ճնշումների տարրերությունը, յեթև փակ անօթից ողը հանված ե և հեղուկ ջուրը դանվում ե սեփական գոլորչու ճնշման առաջ: Տեմպերատուրը 25° է:

7. Եկատուգիտու- Կապակերոնի հավասարման ոգնությամբ ցույց տար վոր ջրի ճամար յեւյալ կետը գանվում է 0,0073°-ում:

8. Հաշվել փոխանցման տեմպերատուրի փոփոխությունը մոնոկլինիկ ծծմբի ճամար, յեթև ճնշումն ազելացվի 1 ասմ-ով: Ըստմբիկ ծծմբի խոռությունն է 2,07, իսկ մոնոկլինիկ ծծմբինը՝ 1,96: Փոխանցման ջերմությունը գրամ-ասամի համար վերցնել 17 աղյուսակից:

9. Ոգտվեալ կացիումի կարբոնակ դիսուցման ճնշումների աղյուսակից զանգան տեմպերատուրների համար, հաշվել՝



առակելայի գիսուցման ջերմությունը և ազատ եներգիայի ստանդարտ փոփոխությունը 500°-ում:

10. Ենթե տեմպերատուրների տարրերությունը փոքր ե (3) հավասարումը (մէ 120) անբավարար ե հաշվելու համար Խնչմաւ:

11. (2) հավատորման ոգնությամբ հաշվել ջրի գոլորչու ճնշումը 100,5°-ում:

12. Դյումայի մեթուով գոլորչու խոռությունը վորոշելիս, կատիլար անցք ունեցող բալոնը վորը պարունակում է վորոշ քանակությումը բացախաթթու պահում են թերմոսաւասի մէջ 30°-ում: Հետո կապված ծայրն ընկղմում են ողով հագեցած ջրով լիբը բաժակի մէջ: Այնուհետև բալոնը տեղափոխում են ստույց պարունակող անօթի մէջ: Արգյունքը լինում է այն, վոր ջուրն սկսում է ծծմբել բալոնի մէջ: Խնչմաւ:

Բալոնի կշիռը բացախաթթվի հետ միասին 15,6 գ.

Բալոնի կշիռը, յերբ ստույցի մէջ դնելուց հետո նա մասամբ

լցվել ե զբազ 21,3 >

Զբով լցված բալոնի կշիռն ե 65,4 >

Ցույց տար վոր 30°-ում քացախաթթվի գոլորչու ճնշումը մոտավորապես հավասար է 30 մմ:

13. Հաշվել 10°-ի մէտ տրամադիծ և նեցող գնդաձեռ ջրի կաթիլի գոլորչու ճնշումը Տեմպերատուրը 25° է:

14. 20-ըդ աղյուսակի ավագաներն անցկացնել $\log p - 1/T$ դիագրամի վրա կորոշել այն տեմպերատուրը, վորում կալցիումի կարբոնատը և մթնոլորտի մէջ

դանդող տծխածնի զիրքսիդը կզմնվեն հավասարակռության մեջ: Ածխաթթու գաղի պարցիւլ ճնշումն ողի մեջ կազմում և մոտ 0,0004 ամ:



15. Մոդիկի գուբրչու ճնշման կախումը տեմպերատուրից բավարար ճշումը արտահարվում և հետեւյալ հավասարակռում:

$$\log p = -\frac{3333,0}{T} - 0,840 \log T + 10,522.$$


Հաշվել 1 մոլ սնդիկի գոլորշիացման ջերմությունը 100°-ում:

16. Վարքամն և կշռում 40 մ² ծավալով սենյակի ողի մեջ գանվող ջրային գուրշին, յեթե տեմպերատուրը 20° է, իսկ ողի հարաբերական խոնավությունը՝ 50°/ս:

17. Արծաթի ամմոնիակատի դիսուցումն արտահայտվում և հետեւյալ հավասարակռուով՝



25°-ում ասացին սեակցիայի դիսուցման ճնշումը հավասար է 977 մմ. յերկրորդ սեակցիայինը՝ 108 մմ. Դանին հավասարակռության կոնստանտների մեծությունները յերկու սեակցիաների համար VI գլ. (20) հավասարման ոգնությամբ հաշվել ազոտ եներգիաների ստանդարտ փոփոխությունները յերկու սեակցիաների համար: Այնուհետև ստացված ավյալներով հաշվել ազատ եներգիայի ստանդարտ փոփոխությունը հետեւյալ սեակցիայի համար:



Ցույց տար վոր դիսուցման ճնշումն այս սեակցիայի համար նույն տեմպերատուրում հավասար է 325 մմ:

ՌՈՒՇՈՒՅՑԲՆԵՐ

Լուծույթը յերկու կամ ավելի թվով մաքուր նյութերի հոմոգեն խառնուրդ եւ Հոմոգեն և նաև քիմիական միացությունը, սակայն նա ունի հաստատուն բաղադրություն, մինչդեռ լուծույթի բաղադրությունը կարող ե փոփոխվել լուծույթի բաղադրությունը կարող ե շատ բարդ լինել Այսպես որինակ, լուծույթում կարող են պարունակվել ավելի քան մեկ միացության մոլեկուլներ:

Լուծույթի հատկությունները կախված են տեսլակերտուրից և վիրոշ չափով՝ ճնշումից: Սակայն ավելի հիմական կերպով նրանք կախված են լուծույթի բաղադրությունից: Միանգամայն պարզ ե, վոր լուծույթի բաղադրությունը վորոշվում է վոչ թե նրա մեջ պարունակվող նյութերի բացարձակ քննակություններով, այլ այդ քանակությունների հարաբերությամբ: Հետագայում լուծույթի բաղադրությունը մենք կարտահայտենք նրա բաղադրիչների մոլար բաժիններով (տես գլ. V), բաղադրության այլ արտահայտությամբ մենք կոպավենք միայն ՏX գլխում:

Դադային լուծութները մանրամասն քննարկում չեն պահանջում, Յուրաքանչյուր գաղ խառնուրդի մեջ պահում ե իրեն այնպես, ինչպես մյուս գաղերի բացակայության գնդքում: Թաճակարար գաղային լուծույթների վարքը լիովին նկարագրվում է Դալտոնի որենքով (II և V գլ.), առնվազն փոքր խառնությունների գեպքում:

Կարծր լուծույթները համեմատաբար ավելի հազվագյուտ են: Նրանք վորոշ նշանակություն ունեն բյուրեղագրության համար (խառն բյուրեղներ, տես IV գլ.), նույնպես և միահալույթների ուսումնասիրության համար մետալոգրաֆիայի մեջ: Թանի վոր քիմիական նյութերի մեծ մասը բյուրեղանում ե մաքուր վիճակում, հետագայում կարծր լուծույթներով մանրամասնորին չենք պարզվելու:

Հեղուկ լուծույթների ուսմունքի տարրական շաբադրումը շատ դժվար ե: Զանազան նյութերից լուծույթներ կազմելով, կարելի յեանսահման թվով կոմբինացիաներ ստանալ և յուրաքանչյուր լուծույթ

կունենա իր առանձնահատկությունները։ Մենք կսահմանափակվենք լուծույթիների «իդեալական» տիպի քննարկմամբ, նույնպես և այդ տիպից գործնականում ամենից հաճախ հանդիպող խոտորություններով։

Բինար հեղուկ լուծույթների ուսումնասիրության մեջ հաճախ ոդասակար և լինում ոդափել լուծիչ (solvent) և լուծիչ ված նյութ (solute) աերմիններով։ Լուծիչ կոչվում ե այն բաղադրիչը, վորը լուծույթի մեջ լինում և համեմատաբար մեծ քանակությամբ, ըստ վորում նա համարյա միշտ հեղուկ և մաքուր վիճակում։ Լուծույթում փոքր քանակությամբ գանգող նյութը կոչվում ե լուծված նյութ (կամ ուղղակի «լուծված») և նա կարող ե լինել կարծր, հեղուկ կամ զաղային։ Համասեռ տերմինի իմաստը՝ կախված ե այն բանից, թե ինչ հասկություններով ենք մենք հաստատում համասեռությունը։ IV գըլխում ցույց տրվեց, վոր նյութի վոչ մի ձև ոյնտպենյան ճառագայթների վերաբերմամբ համասեռ չե։

Լուծույթի մոլեկուլները կամ մոլեկուլների ագրեգատները կարող են սանենալ շատ մեծ չափեր, սոտենարով միկրոսկոպիկ տեսանելիության սահմանին։ Այս դեպքում սովորական ոպտիկական մեթոդներով քննելիս՝ լուծույթն արդեն համասեռ միջավայր չի յերևում։ Այս տեսակի լուծույթներն ընդունված ե անվանել կոլլոիդալ սակայն տարրերությունը կոլլոիդալ և այսպես կոչված իսկական լուծույթի միջև միայն քանսակական ե, դոնե կինսետիկ թեորիայի տեսակետից։

Վերև ասածն ակնհայտ ե դառնում Բըռունյան շարժում անունով հայտնի յերևույթը ուսումնասիրելիս Յեթե լուծույթում դանդող 1 և կամ ավելի փոքր տրամադիծ ունեցող մամնիկները դիտվում են բարձր կարողության միկրոսկոպի տակ, ապա նրանք բռւն շարժման մեջ են յերևում։ Վորքան մասնիկը փոքր ե, այնքան ավելի ուժգին ե շարժումը, և սա լուծույթի մոլեկուլների միջև եներգիայի հավասար բաշխման ակնառու ապացույց եւ Համաձայն II գլխի (3) հավասարման,

$$\left(\frac{1}{2} \pi v^2 \right) = \frac{3}{2} K T,$$

յերևում ե, վոր յեթե մասնիկի մասսան շատ մեծ ե, նրա միջին արագությունը պետք ե այնքան փոքր լինի, վոր այլևս դիտելի չինի, Վորքան փոքր ե միջին արագություն, այնքան մեծ ազդեցություն ե ունենում մասնիկի վրա յերկրի ձգողական ուժը, մի պայմանով միայն, վոր մասնիկի խտությունը ավելի մեծ լինի, քան լուծիչի խտությունը, Յեթե մասնիկները մեծ չեն, ապա նրանց արագությունը բավական կլինի ծանրության ուժը հաղթահարելու համար։ Սա-

կայն նույնիսկ պղնձի արջասպի լուծույթը, յեթե նա բավական ժամանակ հանգիստ և թողնվում և կոնվեկցիայի հոսանքները բացակայում են նրա մեջ, ցույց ե տալիս լուծույթի կոնցենտրացիայի տարբերություն ըստ շերտի բարձրության Կավի սուսապենզիան կանգնած ջրում ամբողջովին նստում ե տակը, վորովհետև նրա մասնիկները տյնքան մեծ են, վոր նրանց ջերմական եներգիայով պայմանավորված միջին արագությունը չափաղանց փոքր և ծանրության ույժը հաղթահարելու համար։ Այսուամենայնիվ վոչ մի հիմք չկա, վորը թույլ տա խիստ սահմանագատում անել սուսապենզիաների և չիսկական լուծույթների միջև Խոչպես լուծույթի գոյացման, նույնպես և տրդեն պատրաստի լուծույթի ամբողջ ծավալի մեջ մշտական կոնցենտրացիա պահպանելու տեսակետից կարևոր գեր ե խաղում դի ֆի ուղի այլ պրոցեսը՝ Դիֆֆուզման պրոցեսն արագ և գաղերի մեջ, դանդաղ՝ հեղուկների մեջ և այնքան գանգաղ կարծր մարմինների մեջ, վոր մենք հաղիկ իրավունք ունենանք ասելու, թե նա առհասարակ տեղի յե ունիենում։ Որինակ, դիֆֆուզիայի մեծ արագության պատճառով մթնոլորտի բաղադրությունը, (մասնավորապես ածխածնի դիոքսիդի պարունակությունը նրա մեջ) գրեթե բոլորովին նույնն ե, ինչպես մեծ քաղաքների մոտ, նույնպես և յերկրագնդի ամեն մի ուրիշ կետում։ Լուծույթների մեջ հավասարակշռության հաստատվելը համարի խիստ թուլանում և դիֆֆուզիայի պրոցեսի փոքր արագության պատճառով։ Հետագայում (XIV գլ.) ավելի մանրամասնորեն կզրադաշնք այս հարցով։

Հավասարակօռության հեղուկ լուծույթի յև գալործու քաղի միջնի նկատական լուծույթներ հղեալական լուծույթի կարելի յի սպասել յերբ յերկու, քիմիական բաղադրությամբ նման նյութեր խառնվում են միմյանց հետ։ Այսպես, յեթե յերկու նյութ Ա և Բ իրենց քիմիական բաղադրությամբ միմյանց շատ նման են, միջմոլեկուլային ույժերը Ա մոլեկուլի և Բ մոլեկուլի միջև պետք ե դորձնականորեն հավասար լինեն յերկու Ա մոլեկուլի կամ յերկու Բ մոլեկուլի միջև գործող ույժերին, և այդ յերկու նյութի մոլեկուլները պետք ե ունենան նույնազիսի ցնդելու ձղուում լուծույթի մեջ, ինչպիսին նրանք ունեն մաքուր հեղուկ վիճակում։ Յուրաքանչյուր կոմպոնենտի՝ լուծույթից գեափի գոլորշու ֆազը ցնդող մոլեկուլների թիվը պետք ե ավելի փոքր լինի, քան մաքուր նյութի համար, վորովհետև 1 սմ³ լուծույթի մեջ պարունակվող նրա մոլեկուլների թիվը ավելի փոքր ե, քան մաքուր հեղուկի մեջ։ Յեթե լուծույթը կազմող յերկու կոմպոնենտների մոլար ծավաները գրեթե հավասար են, ապա Ա մոլեկուլների թիվը լուծույթի 1 սմ³-ի մեջ պետք ե համեմատական լինի Ա նյութի մոլար բաժնին լուծույթի մեջ։ Հավասարակշռության մեջ գոլորշիացման արագու-

Թյումը պետք ե հավասար լինի կոնդենսման արագությանը, բայց կոնդենսման արագությունը համեմատական ե Ա նյութի հազեցած գոր լորշու պարցիալ ճնշմանը, հետևաբար, Ա նյութի գոլորշու պարցիալ ճնշումը լուծույթի վրա պետք ե համեմատական լինի Ա նյութի մոլար բաժնին լուծույթի մեջ.

$$P_A = K N_A . \quad (1)$$

Դրելով (1) հավասարումը հետևյալ ձևով՝

$$\frac{P_A}{N_A} = K, \quad (2)$$

մենք տեսնում ենք, վոր Կ իրականում՝

$$A_{(f_{\text{լուծ})} \rightarrow A_{(\text{g})}} \quad (3)$$

պրոցեսի հավասարակշռության կոնստանտն եւ Նույնպիսի հավասարակշռություն հաստատվում է յերկրորդ նյութի համար. Քանի վոր միավորի հավասար մոլար բաժինը համապատասխանում է մաքուր հեղուկին, ապա (2) հավասարման կոնստանտը Կ ներկայացնում է մաքուր Ա նյութի գոլորշու ճնշումը՝ P_A , և (1) հավասարումը կարելի յերեկ այսպես՝

$$P_A = N_A P_A . \quad (4)$$

Բոլորովին նույնպիսի դատողություններ կարելի յե անել նաև լուծույթի յերկրորդ կոմպոնենտի՝ B նյութի համար, և մենք ստանում ենք՝

$$P_B = N_B \cdot P_B . \quad (5)$$

(4) և (5) հավասարումները ներկայացնում են Ռառուլի որենքի մաթեմատիկական արահայտությունը, վորն ասում է, թե բաղադրիչ նյութի գոլորշու պարցիալ ճնշումը լուծույթի վրա վորեւ տեմպերատուրում հավասար է նրա մոլար բաժնին լուծույթում՝ բաղմապատկան գոլորշու այն ճնշումով, վորն ունի նա մաքուր հեղուկի վիճակում մինույն տեմպերատուրում։

Եսա կարենոր ե, վոր ընթերցողը չփոթի Ռառուլի որենքը Դաշտունի որենքի հետ, այն ձևով, վոր տված ե V գլխում։

Դիմելով 41 նկարին, վորը պարզ կերպով ներկայացնում է Ա և B յերկու կոմպոնենտներից կազմված լուծույթ, վորն իր գոլորշու հետ դաշնվում է հավասարակշռության մեջ, տեսնում ենք, վոր յուրաքանչյուր կոմպոնենտի համար պետք ե նկատի ունենալ յերկու մոլար բաժին՝ մեկը հեղուկի համար, մյուսը՝ գոլորշու կոմպոնենտի մոլար բաժինը հեղուկի մեջ, ընդհանրապես, հավասար չե նրա մոլար բաժնին գոլորշու ֆազում, չամաձայն Դալտոնի որենքի՝ գոլորշի ֆազը նկատվում է վորպես գազերի խառնուրդ, և պարցիալ ճնշումները

կապված են ընդհանուր ճնշման (P_t) հետ հետևյալ հավասարութիւնով՝

$$p_A = N_{A_v} P_t \quad (6)$$


$$p_B = N_{B_v} P_t$$

Մյուս կողմից նառակի որենքը գոլորշու պարզիալ ճնշութիւնը կապում է մաքուր հեղուկ բաղադրիչների դոլորշու ճնշութիւնների հետ.

$$p_A = N_{A_l} P_A \quad (7)$$

$$p_B = N_{B_l} P_B$$

Փորձը ցույց է տվել վոր (7) հավասարումը շատ լավ ճշտվում է քիւմիական բնույթով մոտիկ նյութերի լուծույթների մի շարք դեպ-




Նկ. 41

քերում և կարող է ընդունվել վորպես իդեալական լուծույթի կրիտերիում, ինարկե (7) հավասարութիւն իդեալական լուծույթի վերաբերած պետք և ճիշտ լինի ցանկացած անմաքերատուրի և բաղադրությունների համար, վորովհետու վորով տեմպերատուրների և բաղադրությունների համար հավասարումը կարող է պատահարաբ ճիշտ լինել նաև վոչ իդեալական լուծույթների վերաբերմամբ, եթե վորով յերկու նյութ բավարարում են վերև ասած քիմիական նմանության պահանջին, ասպա մենք դրա հետ միասին կարող ենք սպասել նույնապես, վոր խառնվելիս նրանք ցույց չեն տա վոչ ծավալի և վոչ ել ջերմական եֆֆեկտի փոփոխությունները:

Մոլեկուլար ույժերի նմանության, ծավալների հավասարության

գոլորշիացման ջերմություն: (8) հավասարութիւնը արտահայտում է գաղի լուծենիությունը ճնշումից կախված մոլար բաժիններով, բայց վերջինս կարելի յի հետությամբ վերածել մոլերի, գրամմերի կամ խորանարդ սանտիմետրների 1 լ. լուծույթի մեջ:

Լուծված նյութի բաօխումը յարկու հեղուկ մազերի միջևի Յեթե մասամբ խառնվող յերկու հեղուկների խառնուրդին առ վելացնել քիչ քանակությամբ մի նյութ, վորը յերակու հեղուկների մեջ լուծվում է, ապա նա ինքնին կրաշխվի յերկու հեղուկ շերտերի միջև վորոշակի հարաբերությամբ Յեթե Հենրիի որենքը ճիշտ և հեղուկ շերտերից յուրաքանչյուրի մեջ լուծված նյութի համար, ապա բաշխման ֆակտորը յերկու շերտերի համար կարելի յի հաշվել Հենրիի որենքի կոնստանտների միջոցով.



Նկ. 49. Դեսուխումի և մացորդի մշտկման սքեմը Փափակցիոն թորման միջոցով:

$$p = K_1 N_1 = K_2 N_2, \quad (9)$$


$$\frac{N_2}{N_1} = \frac{K_1}{K_2} = K, \quad (10)$$

Կը աշխան գործակիցն եւ ունի հավասարակշռության կոնստանտի ընդհանուր հատկությունները: Բանի դեռ յերկու ֆազերի համար Հենրիի որենքը գործադրելի յի, բաշխման գործակիցը կախում չունի խառնուրդի մեջ լուծվող նյութի քանակից: Յեթե Հենրիի որենքն անդորձադրելի յի յերկու ֆազերի համար, ապա բաշխման գործակցի թվական արժեքը փոփոխվում եւ խառնուրդին ավելացվող նյութի քանակից:

Ենուման կնքի դիմումը: Լուծույթի յեռման կետ և կոչվում այն տեմպերատուրը, վորում լուծույթի գոլորշու ընդհանուր ճնշումը հավասար եւ արտաքին ճնշման: Իբրև լուծույթի փիզիկական կոնստանտ՝ տրվում է նրա նորմալ յեռման կետն, այսինքն՝ այն տեմպերատուրը, վորում լուծույթի գոլորշու ընդհանուր ճնշումը հավասար է 760 մմ-ի: Ա և Բ կոմպոնենտներից կազմված իդեալական լուծույթի համար յեռման կետը աղադրություն դիագրամը, տվյալ ճնշման տակ ցույց եւ տված 48 նկ.:

մի բաղադրության լուծույթի համար գոլորշու պարզիալ և ընդհանուր ճնշումները տրվում են լուծույթի բաղադրությունը պատկերացնող արացիսաների առանցքի կետերից կանգնեցրած ուղղահայացների և P_A P_B , P_B A , P_A P_B ուղղղոների հատման կետերով:

Խոարումները Խառուլի որենքից համարվում են դրական կամ բացասական, նայած թե գոլորշու պարզիալ ճնշումների կորերը (43 և 44 նկ. անընդհատ գծերը) ընկնում են վերև թե ներքև այն ուղիղներից, վորոնք նախաենավում են այդ որենքով: Նույն կերպով ընդհանուր ճնշման կորերը նույնպես կանցնեն Խառուլի որենքով նախատեսնված գծից վերև կամ ներքև:




Նկ. 43. Դրական խոարումն Խառուլի որենքից:

Բացառական խոտոքումները պայմանավորվում են A մոլեկուլի և B մոլեկուլի միջև գործող ձգողությամբ, վորն ավելի մեծ է քան A -ի յերկու մոլեկուլների կամ B -ի յերկու մոլեկուլների միջև և ընդհանրապես, ցույց են տալիս քիմիական միացության գոյացման ձգում: Դրական շեղումներն ավելի սովորական յերևույթներ են, յերբ յերկու նյութերի մոլեկուլները նման չեն միմյանց և ձգողությունը տարբեր տեսակի մոլեկուլների միջև նվազ է քան մինույն տեսակի մոլեկուլների միջև: Այդ պատճառով բաղադրիչ նյութերի մոլեկուլների ցնդելու ձգումն ավելի մեծ է լուծույթում, քան

մաքուր հեղուկների դեպքում: Խնչպես կարելի յե սպասել վերը բերդած գասաղություններից, լուծույթի յերկու կոմպոնենտներն ել սովորաբար նույն տիպի խոտորություններ ցույց կտան:

Ռառուլի որենքից բացասական խոտորման որինակ և քլորաջրածնի լուծույթը ջրի մեջ, նույնպես և քլորոֆորմի լուծույթը ացետոնի մեջ (45 նկ.): Կարելի յե նույնպես դրական շեղությունների բաղմաթիվ որինակներ բերել Ամենատիպական որինակներն են մեթիլ կամ եթիլ ալիսոլինների լուծույթները ջրի մեջ: Յեթե խոտորություններն Ռառուլի որենքից բավական մեծ են, ապա գոլորշու ընդհանուր ճնշման կորը կարող և մաքսիմում կամ մինիմում ցույց տալ նայած թե խոտո-




Նկ. 44. Բացասական խոտորություններն Ռառուլի որենքից:

րումը դրական ե, թե բացասական (45 նկ.): Վերջին հանգամանքով պայմանավորվում և այդպիսի խառնուրդների առանձնահատուկ վարքը թորման պրոցեսում, վորի մասին մենք մանրամասնորեն կխոսենք յեռման կորերի կապակցությամբ:

Մասամբ խառնվագ հեղուկներու Յեթե հեղուկ խառնուրդի յերկու կոմպոնենտները խիստ տարբերվում են իրենց քիմիական բազավորությամբ, ապա դրական խոտորությունները Ռառուլ որենքից կարող են դառնալ շատ մեծ, և մենք կունենանք 46 նկարում պատկերված վարքը: Այս նկարում ցույց են տրված A նյութի գոլորշու պարզիալ ճշն-

շունթերի կորերը T_1 , T_2 և T_3 տեմպերատուրներում։ Վորպես կանոն՝ ավելի բարձր տեմպերատուրներում խոտորութերը դեռ այնքան մեծ չեն, բայց յերբ տեմպերատուրն իշխում է, նրանք դառնում են ավելի մեծ և կարելի յե սպասել վոր գոլորշու պարցիալ ճնշման կորը ի վերջո ցույց կտա մաքսիմում և մինիմում։ Իրականում այդ տեղի չի ունենում, վորովհետեւ այն տեմպերատուրում, վորում պիտի առաջանային մաքսիմում և մինիմում, լուծույթը բաժանվում է յերկու հեղուկ շերտերի։ Կորի չիրականացվող մասը գծագրի վրա ցույց է տված կետագծով։ Այս կետագծերը հիշեցնում են III գլխի 14 նկ. տված վահագեր-վաալսի կորերը։ 46 նկ. ցույց է տված նույնական մյուս կոմ-




Նկ. 45. Մինիմումի առաջանալն ընդհանուր ճնշման կորի վրա։

պօնենտի գոլորշու պարցիալ ճնշման կորը T_1 տեմպերատուրում, N_1 և N_2 շերտերի բաղադրությունը վորովհում է հետեւյալ պայմանով։ յերկու շերտերում ել յուրաքանչյուր կոմպոնենտի գոլորշու պարցիալ ճնշումները պետք ե հավասար լինեն։

Տեսական գատողությունների հիման վրա կարելի յե ցույց տալ վոր գոլորշու պարցիալ ճնշման մաքսիմումը A նյութի կորի վրա պետք ե ընկնի խառնուրդի այն բաղադրության մարզը, վորում պար-

ցիալ ճնշման կորը Յ նյութի համար մինիմում ունի, և ընդհակառակը՝ N_1 -ի և N_2 -ի միջև ընկնող բաղադրությունների լուծույթներն անկայուն են:

T_1 տեմպերատուրը, վորեց բարձր յերկու կոմպոնենտները խառնվում են միմյանց հետ ամեն հարաբերությամբ, կոչվում ե լուծելիության կրիտիկական տեմպերատուր: Նրա գոյությունն իրոք նկատվել ե մի շաբթ զեպքերում: Իբրև որինակ կարող ե ծառայել Գինուղղուր սիստեմը, վորի համար լուծելիության դիագրամը տված ե 47 նկարում:




Նկ. 48. Սահմանափակ լուծելիություն:

Ցեթեւ հեղուկ խառնուրդի կոմպոնենտներն իրենց քիմիական բաղդրությամբ շատ հեռու յեն միմյանցից, ապա խոտորութերն Ռաուլի որենքից այնքան մեծ են, վոր N_1 և N_2 (նկ. 46) հազեցած լուծույթներն իրենց բաղադրությամբ մոտենում են մաքուր կոմպոնենտներին: Այսպիսի սահմանային գեպքի որինակ և բնագումադիկ սիստեմը: Գործնականորեն այդ յերկու հեղուկները միմյանց մեջ անլուծելի յեն, թեև մանրամասն հետազոտությունը պարզել ե, վոր նրանցից յուրաքանչյուրը պարունակում ե իր մեջ լուծված հետքեր

մյուսից, Այսպիսի դույգերն ամեն հարաբերությամբ չեն խառնվում զույգ մի տեմպերատուրում:

Նիկոտինի ջրային լուծույթն ունի լուծելիության յերկու կրիտիկական տեմպերատուր: Յերկու կոմպոնենտներն ամեն հարաբերությամբ խառնվում են 60° -ից ցած և 210° -ից բարձր տեմպերատուր-ներում: Այս տեմպերատուրային ինտերվալում գոյանում են յերկու հեղուկ շերտեր:



Նկ. 47. Ֆենոլի կշռային սուհայ յուրաքանչյուր ֆագում

Նույն լուծույթներու Բննենք A և B յերկու պոնենտ լուծույթը, վորի դիագրամը արված և 43 նկարում: Յերր A նյութի մոլար բաժինը լուծույթում մոտենում է միավորի, մենք ստանում ենք B նյութի նույր լուծույթը A-ի մեջ, A նյութը կարելի յե անվանել լուծիչ, իսկ B-ն լուծված նյութ: 43 նկ. ցույց ե տալիս, վոր նույնիսկ այն դեղութում, յերր A նյութը լուծույթում լայն խոտորումներ ե ցույց տալիս իդեալական լուծույթի վարքից, խոտորումները մոտենում են զերոյի, յերր մոլար բաժինը մոտենում է միավորի: Փորձերը ցույց են տալիս, վոր ընդհանրապես լուծիչի պարցիալ ճնշումը դիագրամի այս մասում ասսի մաս ու տիկ կերպով մոտենում է իդեալական լուծույթի ճշնշման: Համենայն դեպքում, խոտորումների բացարձակ նշանակությունների փոքրանալու հետևանքով, առկոսային խոտորումը (7) հավասարումից կոնցենտրացիաների լայն ինտերվալի համար դառնում է չափազանց

փոքրութեան Այս սահմաններում ընկած ամեն մի բաղադրության լուծույթ հանդիսանում և Յ նյութի լուծույթին Ա-ի մեջ Ֆիզիկո-քիմիկոսները հաճախ գործ են ածում «նոսք» լուծույթ տերմինը, Նոսք լուծույթ-ները հետաքրքրություն են ներկայացնում և մեծ նշանակություն ունեն վոչ թե իրենց բաղադրության պատճառով, այլ վորովհետեւ Ռառուի որենքն այդ դեպքում կարելի յե կիրառելի համարել լուծիչին, նույնիսկ յերբ լուծույթը հեռու յե իդեալական լուծույթի վարքից:

Լուծված նյութի պարցիալ ճնշումն, ընդհանրապես, չի մոտենում իդեալական լուծույթի ճնշմանը ասիմպտոտիկ կերպով, Բայց նրա գոլորշու պարցիալ ճնշման կորը ասիմպտոտիկ կերպով մոտենում և վորոշու ուղղիքի, վորը Ռառուի որենքն արտահայտող ուղղիքի հետ կազմում և վորոշակի անկյունուն Այս ուղիղի հավասարումը՝

$$P_A = K_A N_A \quad (8)$$


Հենրի որենքի մաթեմատիկական արտահայտությունն եւ Վորոշակագի զանազան լուծույթների համար գանել Հենրիի որենքի կոնստանտները, պիտք եւ յուրաքանչյուր կոմպոնենտի համար յուրաքանչյուր լուծույթում կատարել հատուկ վորձնական վորոշումները Բայց այդ կոնստանտները փոխվում են տեմպերատուրից, այնպես, վոր (8) հավասարումը գործնական նշանակություն չունի: Տվյալ լուծույթի համար լուծված նյութի վերաբերմամբ Հենրիի որենքն ունի նույն նշանակությունը, ինչ վոր (8) հավասարումը լուծիչի համար կոնցենտրացիաների նույն ինտերվալում, Պետք եւ նշել, վոր 43 և 44 նկարում հետևում եւ, վոր այսուղ գոյություն ունի բաղադրության յերկու մարդ, վորտեղ Ռառուի որենքը կիրառելի յե լուծիչի համար և Հենրիի որենքը՝ լուծված նյութի համար: Այս մարդերից մեկը Յ նյութի նոսք լուծույթներն են Ա-ի մեջ, յերկրորդը՝ Ա-ի նոսք լուծույթները Յ-ի մեջ: Հենրիի որենքն ընդհանրապես կիրառելի չե այն լուծված նյութերի համար, վորոնք գոլորշի ֆազում կամ լուծույթում մասամբ աստղված են կամ դիսուցված:

Մինչդեռ գաղային պարզ որենքը կարող եւ բոլոր գաղերի համար կիրառվել առանց լուրջ սխալների, իդեալական լուծույթները հազվադյուս են և սովորաբար շատ գժվար եւ նախորդք ասել, թե Նյութերը լուծույթի մեջ ինչ հատկություններ կունենան:

Հետաքրքիր եւ նշել, վոր (7) հավասարումը մի կողմից կիրառելի յե իդեալական լուծույթներին, մյուս կողմից՝ լուծիչին այն լուծույթների մեջ, վորոնք այնքան հեռու յեն իդեալական վարքից, վոր բաժանվում են յերկու հեղուկ շերտերի, վորոնցից յուրաքանչյուրը

կոմպոնենտներից մեկի նկատմամբ հանդիսանում և նույր լուծույթի Այս ծայրաներ դեպքերի միջն գտնվող ընդարձակ դասին պատկանող լուծույթների վարքը չի կարելի նախատեսել, այլ յուրաքանչյուր դեպքում նա պետք է վորոշվի հատուկ փորձով:

Դազերի լուծելիուրյումը հեղակների մեջ նախորդ բոլոր դատողությունները սահմանափակվում եյին այնպիսի դեպքերով, վորոնց համար լուծույթի յերկու կոմպոնենտները գտնվում են իրենց կրիտի-




Նկ. 48. Յեռման դիտարամն իդեալական լուծույթների համար: N_1 բաղադրության գույքը չեղական է, N_2 բաղադրության գույքը հեղական է:

Կական տեմպերատուրից ցած (վորի սահմանումը արգած և III դըլիում):

Այն դեպքում, յերբ գազի լուծելիությունը հեղուկի մեջ փոքր և (β էնչպես սովորաբար լինում է), հավասարակշռությունը կրիտիկական կետից բարձր գտնվող դազի և լուծույթի միջն կարելի յե բավական ճշտությամբ հաշվիլ (8) հավասարման ոգնությամբ: Կ. մեծության տեմպերատուրային գործակիցը տրվում է V գլխի (57) հավասարումով: ΔH սովորաբար դրական է, բայց վորովհետև գազն իր կրիտիկական տեմպերատուրից բարձր է, ΔH -ը չի կարող նկատվել վորական

դուրսիացման ջերմություն։ (8) հավասարություն արտահայտում է գաղիքությունը և լիությունը ճնշումից կախված մոլար բաժիններով, բայց վերջինս կարելի յեւ հեշտությամբ վերածել մոլերի, գրամների կամ խորանարդ սանտիմետրների։ 1 լ. լուծույթի մեջ։

Լուծված օբյեկտի բախումը յուրաքանչիւ հեղուկ մազերի միջևից Յեթե մասամբ խառնվող յերկու հեղուկների խառնուրդին առ վելացնել քիչ քանակությամբ մի նյութ, վորը յերշ կու հեղուկների մեջ լուծվում է, ապա նա ինքնին կրաշխվի յերկու հեղուկ շերտերի միջև վորոշակի հարաբերությամբ։ Յեթե Հենրիի որենքը ճիշտ է հեղուկ շերտերից յուրաքանչյուրի մեջ լուծված նյութի համար, ապա բաշխման ֆակտորը յերկու շերտերի համար կարելի յեւ հաշվել Հենրիի որենքի կոնստանտների միջոցով։



Նկ. 49. Դեստիլատի և մասցորդի մշակման սրբեմը ֆրակցիոն թորման միջոցով։

$$P = K_1 N_1 = K_2 N_2, \quad (9)$$

$$\frac{N_2}{N_1} = \frac{K_1}{K_2} = K, \quad (10)$$

Կ ըստ լսման՝ գործակիցն է ունի հավասարակշռության կոնստանտի ընդհանուր հատկությունները։ Քանի զեռ յերկու ֆազերի համար Հենրիի որենքը գործադրելի յեւ, բաշխման գործակիցը կախում չունի խառնուրդի մեջ լուծվող նյութի քանակից։ Յեթե Հենրիի որենքն անդորժադրելի յեւ յերկու ֆազերի համար, ապա բաշխման գործակիցը թվական արժեքը փոփոխվում է՝ խառնուրդին ավելացվող նյութի քանակից։

Յեռման կեսի դիտարամը։ Լուծույթի յեռման կետ և կոչվում այն տեմպերատուրը, վորում լուծույթի գոլորշու ընդհանուր ճնշումը հավասար և արտաքին ճնշման։ Իրեւ լուծույթի ֆիզիկական կոնստանտ՝ տրվում է նրա նորմալ յեռման կետն, այսինքն՝ այն տեմպերատուրը, վորում լուծույթի գոլորշու ընդհանուր ճնշումը հավասար է 760 մմ-ի։ Ա և Բ կոմպոնենտներից կազմված խփալական լուծույթի համար յեռման կետը աղադրությունն դիտարամը, տվյալ ճնշման տակ ցույց է տված 48 նկ.։

Ստորին կորի կետերը տալիս են այն տեմպերատուրները, վորոնցում տվյալ բաղադրության լուծույթները յեռում են Վերին կորի կետերը, վորոնք համապատասխանում են նույն տեմպերատուրներին, տալիս են յեռացող հեղուկի հետ հավասարակշռության մեջ գտնվող դոլոր շուրջ բաղադրությունը:

Եթե մաքուր հեղուկների համար գոլորշու ճնշման տվյալները՝ P_A և P_B հայտնի յեն, ապա յերկու կորերի ընթացքը կարելի յէ հաշվել (6) և (7) հավասարութիւնը ոգնությամբ: Այսպես, տվյալ տեմպերատուրում յեռացող հղեալական լուծույթի համար կոմպոնենտների մոլար բաժինները տրվում են հետևյալ հավասարութիւնով:

$$p_A = N_{A_1} P_A; \quad p_B = N_{B_1} P_B \quad (\text{ըստ վորում } N_{A_1} + N_{B_1} = 1), \quad (11)$$

$$\text{և } p_A + p_B = P_1, \quad (12)$$

Վորանդ P_1 արտաքին ճնշումն եւ Գոլորշու համար մոլար բաժինները տրվում են հետևյալ հավասարութիւնով՝

$$N_A = \frac{p_A}{p_A + p_B} \quad (13)$$


$$N_B = \frac{p_B}{p_A + p_B}$$

Յերբ N_1 լուծույթը թորվում է (տես նկ. 48), ցրտաբանի և ընդունարանի հետ կապված հասարակ թորման կոլբայում, ընդունարանում կոնդենսավող հեղուկը պետք է ունենա նույն բաղադրությունը, ինչ վոր N_1 գոլորշին: Այն տեմպերատուրը, վորում կոնդենսումը տեղի յեւ ունենում, պետք եւ ավելի ցած լինի, քան T_1 , վորովհետեւ այս տեմպերատուրում N_1 բաղադրության հեղուկը կյեռաւ Մյուս կողմից, թորման կոլբայում, յեռացող հեղուկի գոլորշու մեջ տեղափորված թերմոմետրը պետք եւ ցույց տա մոտավորապես T_1 տեմպերատուրը, վորը N_1 բաղադրության հեղուկի յեռման կետն եւ:

Այդ այլպես պետք եւ լինի, վորովհետեւ թերմոմետրի⁴ գնդակի վրա տեղի յեւ ունենուեւ գոլորշու մասնակի կոնդենսում: Մակայն կոնդենսավող հեղուկի քանակը չափազանց փոքր եւ գոլորշու բաղադրությունը նկատելի կերպով փոփոխելու համար: Այդ պատճառով թերմոմետրի վրա կոնդենսավող հեղուկը, վոր գոլորշու հետ հավասարակշռության մեջ եւ գտնվում, պետք եւ ունենա մոտավորապես նույն բաղադրությունը, ինչ վոր հեղուկը թորման կոլբայում: Այս դատողություններն այնքան ել ճիշտ չեն, յեթե, ինչպես սովորաբար լինում է, կոլբայի պատերի վրա տեղի յեւ ունենում գոլորշու մասնակի կոնդենսում, վորի հետևանքով գոլորշին արդեն փոխված բաղադրությամբ եւ

համառում թերմոմետրին Գերտաքացումը տեղի յե ունենում լուծույթ-ներում ճիշտ այնպես, ինչպես մաքուր հեղուկների մեջ և այդ պատճառով լուծույթների յեռման տեմպերատուրի եքզակտ չափումը դժվարանում եւ

Կարենոր և նշել, վոր լուծույթի գոլորշու լրիվ կոնդենսումը հավասարակշռական պրոցես չի կարող լինել վորովհետև ընդհանրապես գորոշվին չի կարող գոյություն ունենալ հավասարակշռության մեջ նույն բազագրության հեղուկի հետ Բացառություններն այս կանոնից կքննենք ստորև Ընդհանրապես թորման դուգընթաց լուծույթի բա-




Նկ. 50. Թթվածին-ազոտ սխտեմի յեռման դիագրամը:

դակրությունը փոփոխվում եւ այնպես, վոր յեռման տեմպերատուրն անընդհատ բարձրանում էւ Այս հանգամանքը կարենոր ենթիրիկ կանոն եւ՝ Դիրա հետեանքով բաղադրության դիագրամի վրա գոլորշու կորը միշտ պետք եւ ավելի բարձր լինի, քան հեղուկի կորը՝ 48 նկ. ցույց տված տիպի լուծույթների համար, թորման ընթացքում կոր-րայի հեղուկը շարունակ հարսանում եւ Յ կոմպոնենտով, վորովհետև գոլորշին միշտ ավելի հարուստ եւ Ա նյութով, քան հեղուկը:

Ցեմե թորումն ընդհատել նախքան պարագելը նրա կատար-ված կինի լուծույթի մասնակի բաժանում (Փրակցիոնում) յերկու բաժնի (Փրակցիայի): Ստացված յերկու Փրակցիաներից մեկն ավելի

հարուստ կլինի Ա նյութով, մյուսը՝ Բ նյութով՝ համեմատած սկզբան լուծույթի հետ:


Կրկնակի թորման միջոցով լուծույթը կարելի յէ վերջապես բաժանել յերկու ֆրակցիայի, վորոնք ներկայացնում են գրեթե մաքուր կոմպոնենտներ, սակայն դա չափագանց մեծ աշխատանք պահանջող պլրոցես է, 49 նկ. ցույց ե առաջի գործողության այն սխեման, վորով պետք ե զեկավարվել կրկնակի թորման միջոցով լուծույթը ֆրակցիաների բաժանելու համար (Վորպես որինակ տես նկ. 50-ի դիտարար):



Նկ. 51. Ցեման կետի մինիմում ունեցող լուծույթի
յեման գիտքամբ:

Խառնուրդներ, վարօնք խռովան մաքրիմում յև մինիմում կետեր առնեն: Դոլորու ճաշում—բաղադրության գիտքամբ քնննելիս մինք այն պիսի լուծույթների որինակութեարքինք, վորոնց գոլորշու ընդհանուր ճնշման կորերը մաքսիմում կամ մինիմում ունեյին: Նման լուծույթները, հակադարձարար, ցույց կտան մինիմում կամ մաքսիմում յեռան կորերի վրա. այս նշանակում ե, վոր վորոշակի բաղադրություն ունեցող լուծույթը կունենա ավելի ցած, կամ համապատասխանարար ավելի բարձր յեռան կետ, քան այն լուծույթները, վորոնք իրենց բաղադրությամբ դանդում են նրա յերկու կողմերում: Այսպիսի

տիպերի դիագրամները տված են 51 և 52 նկարներում։ Հարկ է նշել, վոր մաքսիմում և մինիմում կետերում հեղուկի և գոլորշու բաղադրությունները նույնն են։ Այս բաղադրության խառնուրդները թորվում են հասատուն աեմպեր ատուրում և այդ պատճառով կոչվում են մայնորեն յեռացող 51 և 52 նկ. ցույց տված տիպի լուծույթները ֆրակցիոն թորման միջոցավ բաժանվում են մաքուր կոմպոնենտներից մեկի և մայնորեն յեռացող խառնուրդի։ Յեռման ժամանակ յեռման կետի բարձրացման որենքի համաձայն՝ դեստիլատն իր բաղադրությամբ կմոտենա մայնորեն յեռացող խառնուրդին այնպիսի



Նկ. 52. Յեռման կետի մաքսիմում ունեցող լուծույթի յեռման դիագրամը

լուծույթի համար վորն ունի յեռման կետի մինիմում, մինչդեռ յեռման կետի մաքսիմում ունեցող լուծույթի համար թորման կոլթայում մասացած հեղուկն է մոտենում անփոփոխ յեռման կետ ունեցող լուծույթի բաղադրության։ Մաքսիմում և մինիմում յեռման կետեր ունեցող լուծույթների մի ցուցակ տված և 22 աղյուսակում։

Մայնորեն յեռացող խառնուրդները բացառություն են կազմում

այն կանոնից, վորի համաձայն լուծույթի գործըշին չի կարող հավասարակշռության մեջ գտնվել նույն բաղադրության հեղուկի հետ:

22. Ազյուտակ: Մթայնորեն յիռացող խառնութեաններ


A	Յեռմ.		B	Յեռմ.		Ա-ի մոլաք բաժինը մը- հայնորեն յեռացող հե- ղուկի մեջ	Յեռմ. տեմպ. C°
	տեմպ.	C°		տեմպ.	C°		
Զուր	100		Եթիլ ալկոհոլ		78,5	10,57	78,15
Զուր	>		Բաղադրութիլ ալկոհոլ		82,3	31,48	80,37
Զուր	>		Եթիլացետատ		77,1	24	70,4
Քլորոֆորմ	61,2		Մեթիլ ալկոհոլ		84,5	65	53,5
Մեթիլ ալկոհոլ	84,5		Ացետոն		56,1	20	55,7
Ածիխածինի տետրոքլորիդ	76,8		Եթիլ ալկոհոլ		78,5	61,3	64,95
Քլորոֆորմ	81,2		Ացետոն		56,1	65,5	64,95
Զուր	100		Քլորաջրածին		—85	88,9	110
Զուր	>		Մրջնական թթու		100,5	43,3	107

Հետաքրքիր ե նշել, վոր աբսուլուտ եթիլ ալկոհոլ ստանալու հետ կապված դժվարությունները պայմանավորվում են վոչ թե վորևէ ճգողությամբ ալկոհոլիք և ջրի մոլեկուլների միջև, այլ ավելի շուտ հակառակ վարքով:

Մասսամբ խառնված հեղուկներու Յեթե գրական խոտորութիւն իդեալական լուծույթի վարքից բավական մեծ և դառնում, ապա մենք ստանում ենք 46 նկարում ցույց տված տիպի լուծույթներ, վորմնք N₁ և N₂ բաղադրությունների միջև գտնվող ամբողջ ինտերվալում հաստատուն յեռման կետ ունեն նյութերի այսպիսի դույյգերի համար յեռման դիտագրամը ցույց ե տրված 53 նկ.: Քանի դեռ յերկու շերտերը ներկա յեն, յեռման կետը և գոլորշու բաղադրությունը մնում են հաստատուն և սիստեմը վարվում ե վորպես մնայնորեն յեռացող խառնուրդ: Սակայն հեղուկ ֆազերի բաղադրության միջև վոչ մէ վորոշակի հարաբերություն գոյություն չունի:

Սովորաբար յերկփաղ խառնուրդի յեռման կետն ավելի ցած ե գտնվում, քան յուրաքանչյուր առանձին մաքուր կոմպոնենտի յեռման կետը, բայց հայտնի յեն և այնպիսի դեպքեր, յերբ խառնուրդի յեռման կետն ավելի բարձր ե, քան կոմպոնենտներից մեկի յեռման կետը: Յեթե յերկու հեղուկները գործնականորեն չեն լուծվում միմյանց մեջ, ինչպես որինակ բենզոլը և ջուրը, ապա, կարելի յետանալ մնայնորեն յեռացող խառնուրդ, խառնելով նրանց ամեն հարաբերությամբ: Քանի վոր լուծույթը յեռում ե, յերբ նրա գոլորշու ընդհանուր ճնշումը հավասարվում ե արտաքին ճնշմանը, միմյանց հետ չխառնվող հեղուկներից մեկը մյուսի վրա ավելաց-


Նելը կիշեցնի յեռման կետը: Այս հանգամանքը ջրային գոլորշիով թուրելու հիմքն և կազմում է Միմյանց հետ շխառնվող գույզ նեղուկից գյացած գոլոցու կամպանենսների մալար բաժինները նարաբերում են միմյանց այնպիս, ինչպիս այդ յերկու նյութերի գոլոցու նեօւումները: Զը՞ հետ խառնվող և 100° -ից բարձր յեռման կետ ունեցող հեղուկի թորման համար չի կարելի ոգտվել ջրային գոլորշուց առանց գերտա-



Նկ. 53. Յեռման կետը ըստ դրա թուրության՝ դիմագրամը մասամբ
խառնվող հեղուկների զույգի համար:

քացման, բայց նրա փոխարեն կարելի յե գործադրել այլ հեղուկ, վոր չի խառնվում թորվող հեղուկի հետ: Թորումը ջրային գոլորշիով և թորումը վակուումի մեջ գործադրվում են միևնույն նպատակով: յերկումն ել հնարավորություն են տալիս թորումը կատարել ավելի ցած տեմպերատուրում: Թորումը ջրային գոլորշիով այն առավելությունն ունի վակուում-թորման համեմատությամբ, վոր նրա համար չի պահանջվում հերմետիկորեն փակ ապարատուր, և լուծեյթը չի փրփրում: Ցեթե ջրային գոլորշին ունակցում ե թորվող նյութի հետ, ապա անհրաժեշտ է վակուում-թորում կատարել Ռդտվելով վակուում-թորումով, սովորաբար հնարավոր և լինում աշխատել 100° -ից ցածը տեմպերատուրներում, ինչ վոր շատ կարևոր է ավելի բարձր տեմպերատուրներում:

Դեմքնագմացիոն սյաւների և սուռըրբանը Արտադրության մեջ լուծույթների բաժանումը մաքուր կոմպոնենտների կատարվում և անընդհայտ գործող սեկտիֆիկացիայի սյուների միջոցով։ Այս սյուները նախատեսված են դոլորշու և հեղուկի հակընթաց հոսանքի համար, այսպես, վոր միմյանց հանդեպ գնացող գոլորշին և հեղուկը սերտ դիպան մեջ են դրվում սյունի յուրաքանչյուր պնակի վրա։ Մեկտիփի կացիայի սյունի կառուցվածքի սինեման տված է 54 նկարում։ Տարբեր պնակների վրա գտնվող հեղուկի և գոլորշու բաղադրությունների հարաբերությունները արտահայտող հավասարութեաց կարելի յե գուրս բերել սյունի նյութական բարանսից։ Եթե թաղը բնական արագությունները մոլերով մեկ վայրկյանում մնում են հաստատուն պնակից պնակ ամբողջ սյունի մեջ, Այս պայմանն զգալի մոտավորությանը իրագործվում է այն կառուցվածք-



Նկ. 54. Դեմքնագմացիոն սյուն.

ներում, զորտեղ ջերմությունը մուծվում է սյունի ներքեմից, իսկ գոլորշու կոնդենսացիա (ֆլեգմայի առաջացման) համար անհրաժեշտ ցըրտացումը տրվում է սյունի վերևում, մինչեռ վերջինիս կողքերի սակերեռույթը մնակուսացված ե՝ ջերմության կորուստները կանխելու համար։ Գոլորշու հոսանքի արագությունը՝ նշանակեանք V, հեղուկի հոսանքի արագությունը՝ L, իսկ թորման յելանքը՝ սյունի վերենում՝ Q։ Բոլոր այս մեծությունները պետք ե արտահայտված լինեն մոլերով մեկ վայրկյանում։

Այդ պայմաններով՝

$$V - L = Q \quad (14)$$

$$\frac{L}{V} = R, \quad (15)$$

վորտեղ R-ը հանդիսանում է «ֆլեգմայի թիվը» (reflux ratio), լու-

ծույթը և գոլորշու բաղադրությունն արտահայտենք ավելի ցնդող կուպունենափ մոլար բաժիններով: Այդ գեղքում, յեթե յերրորդ պնակի հեղուկի բաղադրությունը նշանակենք x_2 (55 նկ.), այս հեղուկի հետ հավասարակշռության մեջ գտնվող գոլորշու բաղադրությունը՝ յա իսկ այունի գագաթից յեկող ֆրակցիայի բաղադրությունը՝ p , ապա կունենանք՝

$$y_2 V - x_2 L = pQ \quad (16)$$

(14) և (15) հավասարութերից տեղադրելով $|L|$ -ի և Q -ի նշանակությունները, մենք կարող ենք (16) հավասարումից արտաքսել V , և կստանանք՝

$$y_2 - Rx_2 = p(1-R) \quad (17)$$

Վերջին հավասարումը կարելի յի գրել հետեւյալ ձևով.

$$x_2 = \frac{y_2}{R} - \left(\frac{p}{R} - R \right) \quad (18)$$

Եերկրաչափական պարզ կառուցման ունությամբ մենք կարող ենք գտնել հեղուկի և գոլորշու բաղադրությունները սյունի յուրաքանչյուր պնակի համար: 55 նկ. վերաբերում են եթիլ ալկոհոլի և ջրի խառնուրդների թորմանը, այդտեղ աբսցիսների առանցքի վրա վերցված և հեղուկի բաղադրությունը, իսկ որդինատների վրա՝ հեղուկի հետ հավասարակշռության մեջ գտնվող գոլորշու բաղադրությունը: Խնդիրին հասկանալի յի, վոր ստացված կորը տալիս են սիստեմի մասին նույն տեղեկությունները, ինչ վոր յեռման սովորական դիագրամը, բացի տեմպերատորից, վորն այստեղ չի տրված: Յեթե x_2 հանդիսանում է յերկրորդ պնակից թափվող հեղուկի բաղադրությունը, ապա y_2 կլինի նույն պնակից հեռացող գոլորշու բաղադրությունը: Յերրորդ պնակի հեղուկի բաղադրությունը կախված է ֆլեքմայի թվից: թ ներկայացնում է թորված ֆրակցիայի բաղադրությունը, B -ն՝ անկյունագծի հատման կետը թ-ից կանգնեցրած որդինատի հետ: իսկ BAX անկյունը կառուցվում է այնպես, վոր նրա տանգենսը հավասար լինի R -ի, այսինքն ֆլեքմայի թվին: Այս ժամանակ y_2 -ից աւարած հորիզոնական գծի հատումը BA գծի հետ տալիս է յերրորդ պնակից թափվող հեղուկի բաղադրությունը: Այս լիքարակցությանը կարելի յի հանգել (18) հավասարումից, ոգտագործելով յեռանկյունաչափական կամուները: Գծագրի վրա y_2 հավասար է $x_2 z_1$, թ ներկայացված է թ Բ հատվածով, իսկ x_2 ներկայացված է Ox_2 -ով: Յեռանկյունաչափությունից՝ y_2/R հավասար է Ax_2 , p/R հավասար է Ap և p հավասար է Op : Ռեսուի (18) հավասարումը ընդունում է հետեւյալ տեսքը՝


$$x_2 = Ax_2 - Ap + Op \quad (19)$$

Գրեթով այլ կերպ, կատանամք՝

$$x_3 = Op - Ap + Ax_2, \quad (20)$$

Այսպիսով մենք տեմում ենք, վոր դիագրամի վրա x_2 կետը ներկայացնում ե հեղուկի բաղադրությունը յերբորդ պնակում։

Այս կառուցումը կարելի յէ շարունակել անվերջ կերպով, անցնելով մեկ պնակից մյուսին Յեթե ընդունենք, վոր ֆլեգմայի թիվը հավասար ե մեկի (θ որանքը հավասար ե զերոյի), ապա մենք կունե-



Նկ. 55. Դիագրամ ալկոհոլի բեկտիֆիկացիայի համար անհրաժեշտ պնակների թիվը վորոշելու համար

նանք բաղադրության մաքսիմալ տարբերություն պնակից պնակ։ Մյուս կողմից, յեթե պնակների թիվը անսահման ե և բաղադրության փոփոխությունը պնակից պնակ շատ փոքր ե, թորանքի տվյալ բաղադրության համար ֆլեգմայի թիվը ձգտում ե մի վորոշակի մինիմալ սահմանային մեծության։ Գործնականում այս պայմանը կենսագործվում ե զգալի մոտավորությամբ մի սյունի միջոցով, վորի մեջ դրված են մեծ թվով պնակներ։

Նախորդ դատողություններում յենթագրություն արվեց, վոր

պնակից վերև հեռացող գոլորշին հավասարակշռության մեջ և պնակի վրա գտնվող հնդուկի հետ Փորձը ցույց է տալիս, վոր այս յենթադրությունն արդարանում է համապատասխան ձևով նախագծված և կանոնավոր աշխատող սյուներում:

Հավասարակշռության լուծույքի յևկ մարուց նյութից բաղկացած ժաղի միջնութիւնը թիւ ջրային լուծույթը հավասարակշռության մեջ և ստույցի հետ, ասում ենք՝ լուծույթը գտնվում է իր կարծրացման տեմպերատուրում։ Յեթև լուծույթը հավասարակշռության մեջ և դժունվում կարծր աղի հետ, մենք ասում ենք, նա հագեցած է։ Բայց նույնպիսի իրավունքով մենք կարող ենք ասել թե լուծույթը հազեցած և ստույցով կամ թե՝ աղը հալվում է լուծույթի միջավայրում։ Այսուղից պարզ է, վոր հայման ջերմությունը և լուծման ջերմությունը յերկու անալոգ յերեսույթներ են։ Այս ֆակտը, վոր կոմպոնենտներից մեկի կարծր ֆաղը հավասարակշռության մեջ և լուծույթում գտնվող նույն կոմպոնենտի հետ, մենք արտահայտում ենք հետեւյալ հավասարումով։

$$A_{(1)} \rightleftharpoons A_{(2)} \quad (21)$$

Հավասարակշռության պայմանն այն է, վոր A կարծր նյութի մոլար ազատ եներգիան հավասար է լուծույթում գտնվող A նյութի մոլար ազատ եներգիային (այս վերջին մեծությունը տարբերվում է լուծույթի լրիվ ազատ եներգիայից)։

Մենք կարող ենք բանաձեւել հավասարակշռության պայմանները իդեալական լուծույթի համար թող P_A , նշանակի $A_{(1)}$ մաքուր կարծր նյութի գոլորշու ճնշումը $P_A - n_A$ գոլորշու ճնշումը լուծույթի վրա արվում է (7) հավասարումով՝

$$P_A = N_A \cdot P_{A(0)} \quad (22)$$

գորտեղ N_A ՝ A նյութի մոլար բաժինն է լուծույթի մեջ, իսկ $P_{A(0)}$, գոլորշու ճնշումը A մաքուր հեղուկի համար, վորը տվյալ դեպքում ներկայացնում է իր հալման կետից ցածր դերը դեցըտացած հեղուկ։ Հավասարակշռության դեպքում՝

$$P_A = P_{A(1)} \quad (23)$$

վորտեղից՝

$$N_A P_{A(0)} = P_{A(1)} \quad (24)$$

կամ

$$N_A = \frac{P_{A(0)}}{P_{A(1)}} \quad (25)$$

Տվյալ տեմպերատուրում հա կոնստանտ ե, այդ պատճառով
մենք կարող ենք գրել՝

$$N_A = K \quad (26)$$

Կոմպանիանի մոլար բաժինը նույն կոմպանիանով նազեցած խլես-
լական լաւույշի մեջ հավասար ե մաքուր կուգր կոմպանիանով գոյացու-
նեամբ և մաքուր գերցեցած նեղաւի գոյացու նեամբն հարաբերա-
րյան, այս պայմանով, վոր գոլորշու յերկու մնշութիւնը չափված լի-
նեն լուծույթի տեմպերատուրում:

Ախներեարար՝ (26) հավասարումը հավասարակշռության պայմա-
նի առանձնահատուկ է և (V գլ.), Այդ պատճառով, V գլ. (57) հա-
վասարման հիման վրա մենք ունենք

$$\frac{d\ln N_A}{dT} = \frac{\Delta H}{RT^2} \quad (27)$$

Այսուղ ԱՀ լուծման ջերմությունն ե՝ մեկ մոլ լուծված նյութի
համար, թանի վոր հավասարակշռության համար լուծույթը պետք ե
հազեցած լինի, ապա ԱՀ մեծությունը նույնպես կարելի յե սահմանել
վորպիս ջերմություն, վորը կլանվել ե, յերբ լուծված նյութի մեկ մո-
լը լուծվել ե մեծ քանակությամբ հազեցած լուծույթի մեջ: Կարող ե
թվալ թե այս սահմանութիւնը իր մեջ հակասող պաղափարներ և պա-
րունակում (լուծվում հազեցած լուծույթի մեջ): Սակայն ԱՀ մեծու-
թյունն իրոք կարելի յե վորոշել, յեթե զանազան կոնցենտրացիաների
լուծույթների մեջ չափենք լուծման ջերմությունը և հքստրապոլինք
նրա նշանակությունը հազեցած լուծույթի համար: Այս մեծությունը
կոչվում ե լուծման պարցիալ մոլար ջերմություն և ավելի հքզակտ կեր-
պով կսահմանվի Xl գլուխում: Այս ջերմությունն զգալի չափով փոփոխ-
վում ե լուծույթի կոնցենտրացիայի հետ, այնպես, վոր հազեցած լու-
ծույթի մեջ լուծման պարցիալ մոլար ջերմությունը կարող ե նույն-
իսկ հակառակ նշան ունենալ այս նշանին, վոր նա ունի նոսր լու-
ծույթներում: Եթե արհամարենք ԱՀ-ի փոփոխությունը տեմպերա-
տուրից, ապա ինտեգրելով (27) հավասարումը՝ կստանանք:

$$\log \frac{N'_A}{N_A} = \frac{\Delta H}{4,675} \left(\frac{1}{T} - \frac{1}{T'} \right) \quad (28)$$

(28) հավասարումից ոգուվելիս՝ պետք ե տարբերել 3 գեղք.

1. Հավասարակշռություն կոմպանիաներից մեջի մաքուր կարծը
ֆազի և իդեալական լուծույթի միջև:

2. Հավասարակշռություն լուծված նյութի կարծը ֆազի և վոչ
իդեալական նոսր լուծույթի միջև:

3. Հավասարակշռություն կարծր լուծիչի և նոսր վոչ իդեալական լուծույթի միջև:

Դեպք 1. Իդեալական լուծույթի համար լուծված նյութի և լուծիչի միջև վերանում և ամեն մի տարբերություն. մաքուր կարծր կոմոզինենտի լուծման ջերմությունը հավասար և նրա հալման ջերմության (28) հավասարումը կարելի յե նկատել վորպես մի հավասարում կարծրացման կետի կամ լուծելիության համար: Յեթե մենք գերազանց նկատել այն վորպես լուծելիության հավասարում, ապա N_A մոլար բաժնով կէափի Ա նյութի լուծելիությունը, իսկ լուծման ջերմությանը Ճ հավասար կլինի Ա նյութի հալման ջերմության Հալման կետում իդեալական լուծույթի համար լուծելիությունն անսատնման է, $N_A = 1$ և (28) հավասարումը ստանում է հետեւյալ տեսքը՝

$$\log N_A = \frac{\Delta H_f}{4,575} \left(\frac{1}{T_0} - \frac{1}{T'} \right), \quad (29)$$

վորտեղ ΔH_f -ը Ա նյութի հալման ջերմությունն է, իսկ T_0 ՝ նրա հալման տեմպերատուրը (29) հավասարումից հետևում է, վոր N_A լուծելիությունը նվազում է, յերբ տեմպերատուրը իջնում և հալման կետից ցած: Նյութերը սովորաբար շատ լուծելի չեն լինում իրենց հալման կետից նշանակալի չափով ցած տեմպերատուրներում, բացի այն դեպքերից, յերբ լուծված նյութի և լուծիչի մոլեկուլների միջև ուժեղ ձգողություն կա (բացասական խոտորում Ռաուլի որենքից): Մյուս կողմից իրենց քիմիական բաղադրությամբ խիստ տարբերվող նյութերը, նույնիսկ այն դեպքում, յերբ նրանք յերկուան ել հեղուկներ են, կարող են միայն սահմանափակ կերպով լուծելի լինել միմյանց մեջ (դրական խոտորում Ռաուլի որենքից):

Դեպք 2. Թույլ լուծելի նյութերի համար հաճախ ճիշտ և լինում կնքի որենքը, Այս գեղքերում, ինչպես նաև այն դեպքում, յերբ լուծույթը յենթարկվում և Ռաուլի որենքին, հավասարակշռության դիրքը կարելի յե հաշվել (27) հավասարումով: Վերջինից կարելի յե անցնել (28) հավասարմանը, սակայն այժմ ΔH_f -ը լուծման ջերմությունը, սովորաբար նշանակելի կերպով տարբեր կլինի հալման ջերմությունից: Թույլ լուծելի նյութերի համար (28) հավասարման մեջ մոլար բաժնների հարաբերությունը կարելի յե փոխարինել լուծելիությունների հարաբերությամբ, արտահայտելով լուծելիությունը վորմել միավորներով, որինակ՝ գրամներով լիտրի մեջ:

Դեպք 3. Նոսր լուծույթների մեջ լուծիչի համար լուծման ջերմությունը մոտ և նրա հալման ջերմությանը և (29) հավասարումով կարելի յե ոդտվել լուծույթի կարծրացման կետի անկումն անմիջականորեն հաշվելու համար: Բավականաչափ նօսր լուծույթների հա-

ճար (29) հավասարումը կարելի յե ավելի ևս պարզեցնել Նկատելով
Ա նյութը վորպես լուծիչ, իսկ Ե-ն վորպես լուծված նյութ, մնաք
կարող ենք գրել

$$\ln N_A = \ln(1 - N_B) = -N_B \quad (30)$$

և սխալը ավելի չի լինի, քան 10%, յերբ $N_B < 0,02$,
Հնդունելով

$$T' = T + \Delta T,$$

վորտեղ ΔT կարծրացման կետի անկումն եւ, և արհամարհելով ΔT վոր-
պես T' -ի համեմատությամբ աննշան մեծություն, (29) հավասարումից
ստանում ենք մի նոր հավասարում՝

$$\Delta T = -\frac{RT^2}{\Delta H} N_B, \quad (31)$$

Զրային լուծույթների համար

$$N_B = \frac{m}{m+55,5}, \quad (32)$$

վորտեղ մ-ը 1000 գրամ ջրի մեջ լուծված նյութի մոլերի թիվն եւ Ցեթե
մ-ը < 0,555 ապա կատարելով 10% -ից վոչ մեծ սխալ, մնաք կարող ենք
գրել

$$N_B = \frac{m}{55,5}, \quad (33)$$

և այնուհետև

$$\Delta T = -\frac{RT^2}{55,5\Delta H} m \quad (34)$$

Տեղադրելով այսակ հետևյալ նշանակությունները՝ $R = 1,99$,
 $T = 273,2$, $\Delta H = 1440$ կալ, կստանանք

$$\Delta T = -1,858m, \quad (35)$$

1,858 կոնստանտն, այսպես կոչված՝ կարծրացման կետի մոլար ան-
կումն եւ (*դեպքեսիան*) ջրի համար Բայց պետք է նշել, վոր այնպիսի
մեծ կոնցենտրացիա ունեցող լուծույթների համար, ինչպես 1 մոլը
1000 գ. ջրի մեջ, (35) հավասարումը կիրառելի չեւ.

Սառույցի հալման ջերմությունը լուծույթի միջավայրում, փոխ-
վում եւ ինչպես ըստ տեմպերատուրի, նույնպես և ըստ լուծույթի
բաղադրության։ Այդ պատճառով սխալ ենք թույլ տալիս, ընդունե-
լով, վոր (29) հավասարման մեջ ΔH -ը հաստատուն մեծություն եւ
Սակայն ջրային լուծույթները սովորաբար, չառ խիստ տարբերվում

և իդեալականից. այդ պատճառով կոնցենտրիկ ջրային լուծույթների համար (29) հավասարութիւն ինքնին արգեն բավական ճիշտ չեւ.

Եթեման կեսի բարձրացումը. Յեթե լուծիչը ցնդող է, իսկ լուծված նյութը՝ վոչ, ապա (7) հավասարութը յեւման կետի համար ընդունում և հետեւյալ տեսքը

$$N_A P_A = 760 \quad (36)$$

Լոգարիթմելով հավասարութը և դիֆֆերենցելով այն ըստ տեմպերատուրի, կստանանք՝

$$\frac{d \ln N_A}{dT} = - \frac{d \ln P_A}{dT} \quad (37)$$

Տեղադրելով V_1 գլխի (2) հավասարութիւն վերցրած մեծությունը (37) հավասարման աջ մասում, կստանանք՝

$$\frac{d \ln N_A}{dT} = - \frac{\Delta H}{RT^2}$$

Այս հավասարութիւն ինտեղը լուց ստացվում է (28) հավասարման նման մի արտահայտություն, զորակ առաջնականութ և լուծիչի գոլորշիցման ջերմությանը լուծույթից, կատարելով նույն տեղադրութերը և պարզեցութերը, վոր արգեցին (31) հավասարման մեջ, մննք ստանում ենք


$$\Delta T = - \frac{RT^2}{\Delta H} N_B \quad (38)$$

Այս հավասարման ճշտությունն ու սահմանափակութերը նույնն են, ինչ վոր (31) հավասարմանը.

Գոլորշու ճնշման անկման կապը կարծրացման կետի գեպրեսիսայի և յեւման կետի բարձրացման հետ ցույց է տված գրաֆիկով 56-ըդ նկարում, զորակ կետագծով նշանակված և լուծիչի գոլորշու ճնշումը լուծույթի վրա, իսկ անընդհատ գծով՝ մաքուր լուծիչի գոլորշու ճնշումը լուծույթի վրա, իսկ անընդհատ գծով՝ մաքուր լուծիչի գոլորշու ճնշումը լուծույթի կարծրացման կետը և յեւման կետը դիմումամի (F' և B') այն կետերն են, զորակ լուծույթի գոլորշու ճնշման դիմումը հատում և կարծր լուծիչի գոլորշու ճնշման կորը և համապատասխանորեն՝ $P = 760$ մմ իդեալարը.

Լուծված ենուրի մոլեկուլար կոռի հաօվաւեցը լուծիչի համեմատութեանը (31) և (38) հավասարութերի մեջ մտնում. և լուծված նյութի մոլար բաժինը. Յեթե այս հավասարութերից յուրաքանչյուրի մեջ մացած ըոլոր մեծությունները հայտնի յեն, ապա լուծված նյութի մոլեկուլար կշիռը կարելի յեւ գորոշել այն պայմանով,

ի հարկեր, վոր լուծույթը իդեալական ե, կամ այնքան նոսր ե, վոր Ռառուլի որենքը կիրառելի յե լուծիչի համար Քանի վոր լուծույթի կարծրացման կետի դեպքիսիան (անկումը) կարելի յե չափել ավելի ճշտությամբ, քան նրա վորեա ուրիշ հատկություն, տպա (31) հավասարումը կհետազոտենք ավելի մանրամասնորեն՝ Վորովինեռն ճիշտ արդյունքները կարելի յե սպասել միայն նոսր լուծույթներից, լուծված նյութի մոլար բաժինը կարելի յե արտահայտել վորպիս $\frac{W}{M_0}$, վորտեղ ո լուծված նյութի մոլար թիվը ե, իսկ $\frac{W}{M}$ -ը՝ լուծիչի մուլիվ թիվը նրա 1000 գ-ի մեջ: Ո հավասար ե $\frac{W}{M}$, վորտեղ $W -$ լուծված նյութի կշիռն ե, իսկ $M -$ նույն նյութի մոլեկուլար կշիռը, գըամ-



Եղ. 56. Լուծիչի գույքը անկումը չցնդող նյութի լուծույթի դեպքում

ներով արտահայտած: (31) հավասարման մեջ անհրաժեշտ փոփոխություններ կատարելով և վճռելով այն $M -$ ի համար, կստանանք՝

$$M = - \frac{RT^2 W}{m_0 \Delta H \Delta T} \quad (39)$$

Բայց $m_0 \Delta H$ ներկայացնում ե 1000 գ լուծիչի հալման ջերմությունը, այդ պատճառով վոչ մի անհրաժեշտություն չկա լուծույթի մեջ լուծիչի մոլեկուլար կշիռն իւսնալու ձրի համար (39) հավասարումն ստանում ե հետեւյալ տեսքը՝

$$M = - \frac{1,86 W}{\Delta T}, \quad (40)$$

Թերմոդինամիկայի ողնությամբ կարելի յե ցույց տալ, վոր լուծառութիւն կարծրացման կետի դեպքեսիայից վորոշված նյութի մոլեկուլար կշիռը այն մոլեկուլար կշիռն ե, վորը կունենար նյութը գոլորշի վիճակում¹⁾: Սակայն այդ չի նշանակում, վոր լուծույթում նա ունի անհրաժեշտորեն նույն մոլեկուլար կշիռը: Խնչակն արդեն մատնանըշվել է Յ-րդ գլխում, մենք չենք կարող ճիշտ սահմանել թե ինչ պետք և հասկանալ լուծված նյութի մոլեկուլար կշիռ ասելով, և զարմանալի չե, վոր բավարար փորձնական մեթոդներ չունենք նրա վորոշման համար: Հետևաբար, կարեոր և միշտ հիշել վոր յերբ քիմիկոսը լուծում և մի կարծր նյութ մի հեղուկի մեջ և վարսում և նրա մալեկուլար կշիռը, նա իրականորեն գտնում և այդ նյութի մոլեկուլար կշիռը գույրշի վիճակում:

Ասոսցիացիան լուծույթների մեջ նյութի մոլեկուլար կշռի հարցը լուծույթների մեջ բնականաբար բերում և մոլեկուլար աստղման հարցի քննարկմանը: Ասոսցիա ացիա տերմինը մենք չենք գործածում այն ընդհանուր և զոչ բավականաչափ փորոշ իմաստով, վորով մենք հիշատակեցինք այն III գլխում՝ համապատասխան վիճակների որենքի առնչությամբ, այլ նկատի ունենալով պոլիմերացման ռեակցիաների վորոշակի հավասարակշռության գոյությունը: այդպիսի հավասարակշռական ռեակցիայի որինակ և գազային վիճակի համար V գլխում արդեն քննված ռեակցիան:



Դագային որենքը ազոտի դիոքսիդի նման նյութերի համար կիրառելի չե այնպիսի պայմաններում, յերբ նրանք մասամբ դիսոցված են: Նմանապես և չենք կարող սպասել վոր Ռառովի և Հենրիի որենքները կիրառելի լինեն լուծույթի այն կոմպլոքստի համար, վորը գոլորշի ֆազում մասամբ աստղված ե: Մասամբ աստղված նյութի մոլեկուլար կշիռը, վոր ստացվում և լուծույթի կարծրացման կետի անկման չափումից, վոչ ավելի նշանակություն ունի, քան գոլորշու խոտությունից վորոշված առելույթական մոլեկուլար կշիռը: Սակայն պարզ ե, վոր շատ փոքր կոնցենտրացիաների դեղքում լուծված նյութը կարող և կատարելապես դիսոցված լինել գոլորշի ֆազում: այս դեպքում Հենրիի որենքը պետք և ճիշտ վինի և հետևաբար, մոլեկուլար կշռի վորոշումը կատար այնպիսի թվական նշանակություն, վորը համապատասխանում և դիսոցված մոլեկուլին:

Մինչև այժմ ասվածը վերաբերում եր աստղմանը գոլորշի ֆազում: Հեղուկ ֆազում աստղման մասին մենք շատ քիչ բան գիտենք


¹⁾ Այսինքն, յերբ լուծիչը հեռացված լիներ, Ամբ:

թեև մի քանի հեղինակները լուծույթների բոլոր շեղումները իդեալականից, փորձում են բացատրել ասսոցիավումով։ Այնպիսի լուծիչները, ինչպես բենզոլն ե, յերեխն անվանում են ասսոցող լուծիչներ համարելով, վոր այս լուծիչներում լուծված նյութերը ձգտում են պոլիմերանալ։ Սակայն այս տեսակետը հաստատող տվյալներ չկան, իսկապես, վորքան ել ցավալի լինի խոսումվանելը, մենք վոչ մի միջոց չունենք, վորով կարողանանք վորոշել լուծիչի և լուծված նյութի պոլիմերացման վիճակը լուծույթներում։ Կարծրացման կետի անկման միջոցով անսորմալ մոլեկուլար կշիռ կարող է ստացվել (39) հավասարումը՝ արդեն այն պատճառով, վոր լուծույթը բավականաչափ նոորչե, վորպեսզի Ռատուլի որենքը կիրառելի լինի լուծիչի համար։

Լուծիչների և լուծված նյութերի միջև անկայում միացությունների գոյացումը կարելի յի սպասել այն գեպքերում, յերբ բացասական խոտարում տեղի ունի Ռատուլի որենքից։ Այսուամենայնիվ նոոր լուծույթներում լուծված նյութի համար կարելի յի նորմալ մոլեկուլար կշիռ ստանալ (գոլորշու խոտայինը համապատասխանող) նույնիսկ այն ժամանակ, յերբ նյութի մոլեկուլար կշիռը լուծույթում, յեթե միայն նրա մասին ընդհանրապես կարելի յի խոսել պետք է հավասար լինի լուծված նյութի և նրա հետ կապված լուծիչի մոլեկուլների մոլեկուլար կշիռների գումարին։

Դագերի լուծելիության և նմապերառային գործակիցը Յեթե յենթադրենք, թե գապը հաստատուն, որինակ, 1 ատմ. ճնշման տակ հավասարակշռության մեջ և լուծույթի հետ, ապա (27) հավասարումը տալիս ե գազերի լուծելիության տեմպերատուրային գործակիցը։ Մենք պետք ե սպասենք, վոր գազերի համար $\Delta H_{\text{пл}}$. բացասական կլինի. այդ ել հենց ճշգրվում ե իրականում գազերի մեծամասնության համար։ Սակայն մի քանի գազեր, որինակ, ջրածինը, հելիումը և ազոտը ցույց են տալիս մի լուծելիություն ջրի մեջ, վորը գոնս տեմպերատուրային վորոշ ինտերվալում առնւմ ե տեմպերատուրի բարձրացման հետ միասին։ Այս գազերը շատ բարձր են գտնվում իրենց կրիտիկ տեմպերատուրից և նրանց լուծման ջերմությունը վորում կերպով նման չե կոնդենսման ջերմությանը։ Զնայած ջերմություն և կլանվում, յերբ այս գազերը լուծվում են Հեղուկ ֆաղում գտնվող գազային մոլեկուլները չի կարելի համարել վորպես իրականորեն հեղուկ վիճակում գտնվող մոլեկուլներ։ Այսպիսի գազերի լուծելիությունը, բնականարար, շատ փոքր ե։

Դիմիական հավասարակառությանը լուծույթի մեջ Հետազոտենք եսթերացման ռեակցիան։



Յեթև լուծույթում այս բոլոր նյութերը գանվում են հավասարակշռության մեջ, ապա նրանց դոլորշիները լուծույթից վեր հագաւարակղության մեջ կլինեն հեղուկ ֆաղի հետո Հավասարակշռության համար պետք է ճիշտ լինի հետեւյալ պայմանը գոլորշի ֆաղում

$$\frac{P_{\text{CH}_3\text{COOC}_2\text{H}_5} \cdot P_{\text{H}_2\text{O}}}{P_{\text{CH}_3\text{COOH}} + P_{\text{C}_2\text{H}_5\text{OH}}} = K_v \quad (43)$$

Յեթև մենք դորժ ունենք իդեալական լուծույթի կամ թե թթվի, ալիորմ և եսթերի ջրային նոսր լուծույթի հետ, ապա Ռաուլի որենքի և Հենրիի որենքի ոգնությամբ մենք կարող ենք պարզիալ ճշշումները (43) հավասարման մեջ փոխարինել մոլար բաժիններով, բազմապատկած գորմեն կոնստանտներով:

Յեթև Ռաուլի որենքը կիրառելի յե, ապա ինքնին հասկանալի յե, վոր այս կոնստանտները ներկայացնում են մաքուր կամպոնենտների գոլորշու ճշշումները, Բոլոր այս կոնստանտները կարենիլ յե տեղափոխել (43) հավասարման աջ մասը, վորից հետո մենք կստանանք

$$\frac{N_{\text{CH}_3\text{COOC}_2\text{H}_5} \cdot N_{\text{H}_2\text{O}}}{N_{\text{CH}_3\text{COOH}} + N_{\text{C}_2\text{H}_5\text{OH}}} = K_v \quad \frac{K_{\text{CH}_3\text{COOH}} \cdot K_{\text{C}_2\text{H}_5\text{OH}}}{K_{\text{CH}_3\text{COOC}_2\text{H}_5} \cdot K_{\text{H}_2\text{O}}} = K, \quad (44)$$

Բանի վոր ներկա նյութերը հավասարակշռության մեջ են գոլորշի ֆաղում, նրանք պետք են հավասարակշռության մեջ լինեն և հեղուկ ֆաղում. այդ պատճառով (44) հավասարումը տալիս են հավասարակշռության պայմանները լուծույթում թերթը լուսն-ժիլ առաջինն են յեղել, վոր ուսումնասիրելով այս հավասարակշռությունը, ստացել են K_1 -ի նշանակության համար՝ 4: Իրենց արդյունքները նրանք ստացել են մի քանի տարի տուաջ, քանի Գուլբրեդը և Վատգեն ձեակերպել են մասսաների ներգրածման որենքը:

Եզրարը և Շյույլը նորերս վերանայել են գրականությունը¹⁾ լուծույթի մեջ տեղի ունեցող հավասարակշռության մասին և ուսումնասիրել հավասարակշռությունը գոլորշի ֆաղում: Նրանք մատնաշել են, վոր (44) հավասարման արտածման մեջ Ռաուլի և Հենրիի որենքների կիրառումը հանդիպում ենք դժվարությունների, վորովհետև շնորհման իդեալական լուծույթից շատ մեծ և այսուհետ Հայտնի յե նույնպես, վոր քացախական թթուն գոլորշի վիճակում ասսոցված եւ Բայց և այնպես, նրանք գտել են, վոր K_1 -ն հավասարակշռության համար լուծույթում ըստ յերկույթին անկախ և վոչ միայն ուեակցող նյութերի կոնցենտրացիաներից, այլ և տեսպերատուրից և նրա թվական նշանակությունը մոտավորապես հավասար է 4-ի: Գոլորշի ֆա-


1) J. Am. Chem. Soc., 46, 64 (1924).

զում նույն ռեակցիայի հավասարակշռության կոնստանտը՝ K_v 75° -ում
նրանք գտել են 450; Եսթերիֆիկացիայի ռեակցիան գոլորշիների մեջ
հասնում ե դրեթե մինչև վերջը, այսինքն՝ ավելի լրիվ ե, քան լու-
ծույթի մեջ:

Լուծույթներում հավասարակշռության ուսումնասիրված որինակ-
ների մեծ մասը վերաբերում է իոնական ռեակցիաներին, իոնների
հավասարակշռության քննարկումը մենք կհետաձգենք մինչև IX
դրույթը:

Տաղերի կանոնը յակ լուծույթներու ֆազերի կանոնը լուծույթնե-
րին կիրառելիս՝ մենք գտնում ենք, վոր բացի տեմպերատուրը և ճշն-
շումը՝ մենք պետք ե թեր-
մոդինամիկական մի նոր
փոփոխական մտցնենք. դա
լուծույթի բաղադրությունն
եւ Սովորաբար մենք գործ
ենք ունենում լուծույթների
հետ, վորոնք գտնվում են
մինուրային, այսինքն՝
հաստատուն ճնշման տակ,
Յեթե լուծույթը մթնոլոր-
տի հետ հաղորդակցության
մեջ չե, ապա հաստատվում
ե լուծույթի վորոշակի սե-
փական ճնշում: Ամեն պա-
րագայում, կարևոր թերմու-
դինամիկական փոփոխա-
կանները լուծույթների հա-
մար տեմպերատուրը և բա-
ղադրությունն են:

Նկ. 57. Համառ դիտարմը ոյն հյութերի
համար, վորոնք անշատվում են մաքուր
բյուրեղների ձևով:




Քանի վոր գազերը միմյանց հետ խառնվում են ամեն հարաբե-
րությամբ, մենք յերբեք չենք ունենալ ավելի քան մեկ գազային ֆազը:
Բայց միմյանց մեջ լիովին լուծվում են վաշ բոլոր հեղուկները, այդ
պատճառով մենք կարող ենք ունենալ յերկու կամ ավելի հեղուկ ֆազ: Սիստեմի մեջ կարող են լինել մի քանի կարծր ֆազեր:

Ցերկու հեղուկ ժագ: Յեթե յերկոմպոնենտ սիստեմը կազմում է
յերկու հեղուկ ֆազ և միաժամանակ ներկա յե գոլորշի ֆազը, ապա
նա կարող ե ունենալ ազատության մեկ աստիճան փոփոխականների
համար, այսինքն՝ կամայաբար կարելի յե փոփոխել կամ տեմպերա-
տուրը: կամ հեղուկ ֆազերից մեկի բաղադրությունը լուծման կրի-
տիկ տեմպերատուրից բարձր, յեթե այդպիսին դոյություն ունի տվյալ

սիստեմի համար, ազատության աստիճանների թիվը, ակնհայտ եր պեսք և յերկու լինի:

Հավասարակոռուրբեամբ լուծույթի շեմ միբանի այլ ժամկերի միջև՝ յերկում սիստեմների ճազային դիագրամները 57 նկարը տալիս ե տիպական ֆազային դիագրամը բինար լուծույթի համար, վորի կոմպոնենտները՝ A և B բյուրեղանում են լուծույթից մաքուր վիճակում: ՏԱ և ՏՅ ներկայացնում են A նյութի և համապատասխանաբար B նյութի հալման կետերը: ՏԱX կորը ներկայացնում է B նյութի ներկայությամբ: A նյութի կարծրացման տեմպերատուրի կորը նմանապես տեղ ներկայացնում է B-ի կարծրացման տեմպերատուրական կորը համար: Ա նյութի կարծրացման տեմպերատուրի կորը նմանապես տեղ ներկայացնում է B-ի կարծրացման տեմպերատուրական կորը համար: Ա նյութը պարունակող լուծույթների համար: Այս յերկու կորերի հատման կետը՝ X կոչվում է և վու կատել կ առել կ ետ վորակող մենք ունենք չորս ֆազ (յեթև գոլորշին ներկա յե) և, հետևաբար աղատության վոչ մի տատիճան, ըստ ֆազերի կանոնի: Ուրեմն, եվտեկտիկ կետը ինչ վարիանտ է:




Նկ. 58. Հալման կետի գիտական վորը ցույց է ավելի բինար միացության գոյացումը:

Այս գեղեցում, յեթե A և B գոյացնում են բյուրեղային միացություն նոր ֆազի հանդես գալն արտահայտվում ե այն բանով, վոր հալման կետերի կորի վը առաջանում ե մաքսիմում (նկ. 58), Հալման կետերի կորի մաքսիմումը համապատասխանում է միացության բաղադրության: Այս բաղադրությամբ սիստեմի իրեն գրանորում ե վորպիս մաքուր նյութ, բաղադրության յուրաքանչյուր փոփոխություն հավասարագոր ե անմաքրություն (կողմանակի նյութ) ավելացնելուն և այդ պատճառով առաջանում ե հալման կետի անկում: Կորի մաքսիմումը կարող ե լինել տափակ կամ սուր, ինչ վոր կախված ե այն բանից, թե հալման ժամանակ միացությունն ուժեղ ե դիմուգվում, թե բոլորովին չի դիմուցում: Այս սիստեմները, վորոնք նման են 58 նկ. ցույց տրվածին, ունեն յերկու եվտեկտիկներ:

Այս գեղեցում, յեթե A և B գոյացնում են բյուրեղային միացություն նոր ֆազի հանդես գալն արտահայտվում ե այն բանով, վոր հալման կետերի կորի վը առաջանում ե մաքսիմում (նկ. 58), Հալման կետերի կորի մաքսիմումը համապատասխանում է միացության բաղադրության: Այս բաղադրությամբ սիստեմի իրեն գրանորում ե վորպիս մաքուր նյութ, բաղադրության յուրաքանչյուր փոփոխություն հավասարագոր ե անմաքրություն (կողմանակի նյութ) ավելացնելուն և այդ պատճառով առաջանում ե հալման կետի անկում: Կորի մաքսիմումը կարող ե լինել տափակ կամ սուր, ինչ վոր կախված ե այն բանից, թե հալման ժամանակ միացությունն ուժեղ ե դիմուգվում, թե բոլորովին չի դիմուցում: Այս սիստեմները, վորոնք նման են 58 նկ. ցույց տրվածին, ունեն յերկու եվտեկտիկներ:

Կարծրացման պրացեսը Ցերե մենք յենենք N_1 բաղադրության լուծույթից (Նկ. 58), վորը գտնվում է կարծրացման կետից բարձր տեմպերատուրում, և ցրտացնենք լուծույթը, բյուրեղները կերևան (յեթե գերցրտացում չկա) և տեմպերատուրում:


Անջատվող կարծր ֆազը A նյութի բյուրեղներն են մաքուր վիճակում Ցերե ջերմություն Խլելը լուծույթից շարունակվում են, ապա հեղուկի բաղադրությունը փոխվում է, գառնալով ավելի հարուստ B նյութով, և կարծր ֆազի հետ հավասարակշռության մեջ գտնվող լուծույթի բաղադրությունը և տեմպերատուրը ներկայացնող կետը ԱՀ կորի վրայով տեղափոխվում են ներքեւ Ցերե լուծույթի բաղա-



Նկ. 59. «Հայման կետ—բաղադրություն» դիտդրամ $\text{Ag}-\text{Au}$ սիստեմի համար

դրությունը հասնում է N_0 կետին, սկսում են յերևալ նույնպես AB միացության բյուրեղները և A ու AB ֆազերն անջատվում են այն հարաբերությամբ, վոր հարաբերությամբ այդ նյութերը գտնվում են N_0 բաղադրության լուծույթի մեջ կուծույթն ամբողջովին կարծրանում և առանց այլնս փոփոխելու իր բաղադրությունը, կամ բյուրեղացման տեմպերատուրը, գրանորելով իրեն այզպիսով վորպես մաքուր նյութ։ Եվտեկտիկ պեմպերատուրում անջատվող բյուրեղների խառնուրդը, յերբեմն կոչվում են եվտեկտիկ խառնուրդ։ Այդ խառնուրդը վոչ մի իմաստով քիմիական միացություն չե, չայելով իր անփոփոխ


բաղադրության և հալման կետին Նա ակնհայտորեն չի համապահաժամանում այն սահմանմանը, վոր մենք տալիս ենք քիմիական միացությանը, վորովհետեւ նա հոմոգեն խառնուրդ չեւ Յեթե մենք յերենք N_2 բաղադրության լուծույթից, փոխանակ N_1 -ի, ապա սկզբանում անջատվող կարծր ֆազը կներկայացնի AB կարծր միացությունը և լուծույթի բաղադրությունը այս անդամ կշարժվի 2X կորի վրայով և, վերջապես, կհասնի չ կետին, վորից հետո եվտեկտիկ խառնուրդի բյուրեղացումը տեղի կունենա վերը նկարագրված ձևով:



Նկ. 60. Կալցիումի բլորիցի հիդրատների լուծելիության կորը:

57 և 58 նկ. դեպքեր են IV զվարում ձևակերպված կանոնը պատկերելու համար, վորի համաձայն ելեմենտները և միացությունները սովորաբ բյուրեղանում են մաքուր վիճակում: Սրանով արդարացվում են նաև այն կանոնը, թե անմաքրության հետքերից պետք են հալման կետի իջնցում ապասեր Սակայն այս կանոնից բացառություններ գոյացություն ունեն, վորոնց որինակ կարող ե ծառայել 59. նկ. ցույց տված բյուրեղացման կորը վոսկի-արծաթ լուծույթների համար: Վերևի կորը ներկայացնում է լուծույթի բաղադրությունը, ներքեւի կորը՝

բաղադրությունը կարծր Փաղի համար, վորը զանազան տեմպերա-
տուրներում հավասարակշռության մեջ և դժոնվում հեղուկ Փաղի հետ
Անջատվող կարծր Փաղը խառն ը յուրեղ և կամ կարծր
լուծույթ Այդ նշանակում ե, վոր վոսկու և արծաթի ատոմները
բյուրեղանում են միննույն տարածական ցանցում Վոսկու և արծաթի
ատոմների բաշխումը ցանցում բոլորովին պատահական ե, և նրանց
հարաբերական քանակությունները կարող են փոխվել մաքուր վոս-



Նկ. 61. Ցերկաբ շրջերի կրիստալո-հիդրատների լուծելիության կորը

կուց մինչև մաքուր արծաթ ամեն կերպ, Դիագրամից կարելի յե տես-
նել, վոր արծաթին ավելացրած վոսկու հետքերը պետք ե բարձրաց-
նեն նրա հալման կետը, Անսահման լուծելիությունը կարծր վիճակում

հաղվագրուտ յերեսությթ ե (IV դլ.), մինչդեռ հայունի յին սահմանափակ լուծելիության բազմաթիվ դեպքեր։

60 և 61 նկարներում ցույց են տված կալիքիումի քլորիդի և համապատասխանար յերկաթի քլորիդի լուծույթների լուծելիության և բյուրեղագրման կորերը։ Այս աղերը ցույց են տալիս չափաղանց բարդ պատկեր, բաղմաթիվ հիդրատների և եվտեկտիկների առկայության շնորհիվ։

Աղերի վարել խոնավ ողում։ 62 նկ. ցույց է տված մի դիագրամ, վորը գրաֆիկ պատկեր և տալիս այն պայմանների մասին, վորուց ցով վորոշվում և կրիստալու

հիդրատների կարտնությունը

խոնավ ողում, Յեթե ջրային գու

լորշու պարցիքալ ճնշումը ողում

ավելի բարձր ե, քան ովլյալ

աղի հագեցած լուծույթի գուր-

շու ճնշումը, ապա աղն ողում

լիվում ե, այսինքն՝ լուծվում և

ողից խտացող ջրի մեջ։ Յեթե

աղի կայուն հիդրատ դոյլու-

թյուն ունի, ապա նրա գիս-

սոցման ճնշումը պետք է ավելի

ցածր լինի, քան հագեցած լու-

ծույթի գոլորշու ճնշումը։ Աղի

հողմահարման պայմանի մասին

արդեն խոսվել ե VI գլուխու-

Յեթե ջրային գոլորշու պարցիքալ

ճնշումը ողում ընկած և այ մար-

դում, ապա հիդրատը կայուն կլի-

նի։ Յեթե ողի խոնավությունն ավելի բարձր ե Յ կետից, տեղի կու-

նենա լկում, իսկ յեթե ողի խոնավությունը ավելի ցած է Յ կետից—

աղը հողմահարվի (կծաղկի)։

Սամոնիկ հնօտում։ Սովորությունն է գարձել Փիզիկական քիմիայի

դասագրքերում վերոշ տեղ հատկացնել ոսմոտիկ ճնշմանը, թեև ոսմո-

տիկ յերեսությունն ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում Քիզիլողդի համար, քան քիմիկոսի։

Ենթադրենք, թե մենք ունենք յերկու բաժակ, վորոնցից մեկը

պարունակում է մաքուր ջուր, իսկ մյուսը՝ չցնողող նյութի լուծույթ ջրի մեջ և յերկուաը գտնվում են միենույն տեմպերատուրում։ Զրի գոլորշու ճնշումը լուծույթի վրա ավելի ցած կլինի, քան մաքուր ջրի վրա։ Համաձայն VI գլխի (6) հավասարման, մենք կարող ենք մե-

նը գոլորշու ճնշումը

Հագեցած լուծույթի
գոլորշու ճնշումը

Հիդրատի գիսսոցման
ճնշումը

Նկ. 62.

ճացնել ջրային գոլորշու ճնշումը լուծույթի վրա, բարձրացնելով ճրնշումը հեղուկ ֆաղի վրա: Ուստի ննշումը ստիմոնիվամ և վարպետ մի ննշում: Վար պետք ե գարծադրել լուծույթի վրա, վարպետի լուծիչի գործու ննշումը լուծույթի վրա նավասարդի մաքուր լուծիչի զօլուսու: Այս պայմանի մաթեմատիկական արտահայտությունն ե՝

$$\frac{\partial p}{\partial N} dN + \frac{\partial p}{\partial P} dP = 0: \quad (45)$$

(7) Հավասարումից մենք ունենք.

$$\frac{\partial p}{\partial N} = P_0,$$

վարտեղ P_0 մաքուր լուծիչի գոլորշու ճնշումն եւ VI գլուխ (8) հավասարման համաձայն՝

$$\frac{\partial p}{\partial P} = \frac{V_1}{V_v},$$

Տեղադրելով այդ արժեքները (45) հավասարման մեջ ստանում ենք՝

$$P_0 dN + \frac{V_1}{V_v} dP = 0 \quad (46)$$

Նույր լուծույթների համար գոլորշու ճնշումը լուծույթի վրա մոտ և մաքուր ջրի գոլորշու ճնշմանը. ուստի մենք կարող ենք գրել

$$V_v = \frac{RT}{P_0}, \quad (47)$$

Տեղադրելով վերջինս (46) հավասարման մեջ, ստանում ենք՝

$$dN = -\frac{V_1 dP}{RT} \quad (48)$$

VI—հեղուկ ջրի մեջ մեկ մոլի ծագալն ե, վոր գրեթե անկախ է ճնշումից: Խնտեղը (48) հավասարումը հաստատուն տեմպերատուրի համար, ստանում ենք՝

$$N = -\frac{PV_1}{RT} + C, \quad (49)$$

Յեթե $N=0$ ՝ ջրի մոլար բաժինը հավասար է 1-ի, ապա սսմուտիկ ճնշումը հավասար է զերոյին: Ուստի խնտեղըման կոնստանտը հավասար է մեկի: (49) հավասարումը դառնում է.

$$\frac{PV_1}{RT} = 1 - N = N, \quad (50)$$

վորտեղ N₂ լուծված նյութի մոլար բաժինն է, Նոսր լուծույթի համար


$$N_2 = \frac{n_2}{\Pi}, \quad (51)$$

և (50) հավասարութիւնը ընդունում է հետևյալ տեսքը՝

$$P = \frac{n_2 RT}{V}, \quad (52)$$

վորտեղ V ջրի այն ծավալն է, զորի մեջ լուծված և Π₂ մոլ նյութ։ Պետք է հիշել, վոր (52) հավասարումը կարելի յե կիրառել միայն շատ նոսր լուծույթներին։ 0,05 մոլար լուծույթը պետք է ունենա մոտավար վորապես 1 տոմ. ոսմոտիկ ճնշում։

Ոսմոտիկ ճնշումը ներկայացնում է այն հիպոթետիկ ճնշումը, վորը պետք է կիրառված յենթադրել լուծույթին։ Բաժակի մեջ գտնընդուղութեալ վորչ միայն կիսաթափանցիկ թաղանթի միջոցով։ Ոսմոտիկ ճնշման դաշտային անալոգիա կարելի յե ստեղծել յեթե ջրածինը և ազուր բաժանել միժյանացից պալազիումի բարակ թիթեղով։ Ջրածինը պալազիումի թաղանթից կտիֆֆուզի, մինչև վոր յերկու կողմից ջրածնի պարզիալ ճնշումը կհավասարվի, մինչ դեռ ազուրը թաղանթից վրա ճնշում կգործի, վորը կարելի յե (52) հավասարման միջոցով ուղղակի հաշվեր դադերի մեջ ոսմոտիկ ճնշ-



Նկ. 63. Փորձ, վորը ցույց է տալիս կիսաթափանցիկ թաղանթից լուծիչի անցնելու և նրանով պայմանավորված հիգրոսոստիկ ճնշման կազմը.

թաղերի մեջ ոսմոտիկ ճնշ-

ման այս որինակը ներկայացնում է իդեալական սահմանային այն դեպքը, յերբ լուծիչը և լուծված նյութը միմյանց վրա վոչ մի ազդեցություն չեն գործում։ Շարքի մյուս ծայրում կոնցենտրած լուծույթներն են, վորոնք նկատելի կիրագով շեղվում են իդեալական լուծույթներից։

Ենթե փակ անոթում լուծույթն անջատված է մաքուր լուծիչից

մի թաղանթով, վորը թափանցիկ ե լուծիչի համար, և անթափանցիկ լուծված նյութի համար, տպա լուծիչը կդիմքուզի անոթի մեջ, մինչև վոր հողբոստատիկ ճնշումը հավասարվի ոսմոտիկ ճնշմանը, ինչպես այդ մենք վերը սահմանեցինք (նկ. 63): Ցեմե լուծույթն անջատված ե լուծիչից թաղանթով, վորը թափանցիկ ե միայն լուծիչի համար, տպա նրա միջով լուծիչից գեղի լուծույթն անցնում են ավելի շատ լուծիչի մոլեկուլներ, քան հակառակ ուղղությամբ, Հավասարակշռության մեջ հողբոստատիկ ճնշումն ավելացնում ե լուծիչի մոլեկուլների հեռանալու ձգտումը լուծույթից, վորի հետևանքով լուծիչի մոլեկուլների շարժումը յերկու ուղղությամբ հովասարվում է կարորատորիայում գժվար և մեխանիկորեն բավական ամուր, անհրաժեշտ չափով ընտրող հատկություն (selectivity) ունեցող կիսաթափանցիկ թաղանթպատրաստել Սակայն կենդանի որդանիզմներում, ինչպես ըուսական, նույնպես և կենդանական, կան այնպիսի թաղանթներ, վորոնք ունեն խիստ յուրահատուկ թափանցելիություն, բույսերի և կենդանիների փիզիոլոգիայում ոսմոսը կարենոր պրոցես է: Շատ գեղքերում կիսաթափանցիկ թաղանթների սելեկտիվ գործողության մեխանիզմը պարզ չէ հասկացվում: Վորոշ դեղքերում նա գործում է իրեն մաղ, անցկացնելով իր միջով փոքր մոլեկուլները և պահելով ավելի մնաները: Այնուամենայնիվ այսպիսի բացատրությունը կիրառելի յէ վոչ միջությունը:

Ավելիք ճիշտ, քան այդ թույլ են տալիս անմիջական չափումները, ոսմոտիկ ճնշման մեծույթյունը կարելի յէ հաշվել լուծույթի կարծրացման կետից: Գ. Ն. Լյուիսը¹⁾ դուրս ե բերել հետեւյալ հավասարումը, վորը ջրային լուծույթների ոսմոտիկ ճնշումը կապում է նրանց կարծրացման կետի անկան հետ՝

$$P = 12,060 - 0,21 \cdot h^2, \quad (58)$$

Վորտեղ P ոսմոտիկ ճնշումն ե, արտահայտած ատմոսֆերներով, իսկ 0—կարծրացման կետի անկումը՝ արտահայտած Ցեմենտի աստիճաններով:

Խ Ն Գ Ի Բ Ն Ե Բ

1. Բենզոլը և տոլուոլը խառնված են հավասար կշռային քանակներով, ինչպիսի մոլար բաժիններ ունեն նրանց ստացված լուծույթներ:

2. Նախորդ խնդըսաւ արված լուծույթը կարելի յէ իդեալական համարեր 50—ում բենզոլի գործընու ճնշումը հավասար է 271 մմ, առլուսլինը՝ 102,6 մմ: Հաշվել լուծույթի գործընուը ընդունուը ճնշումը և կամունենաների մոլար բաժինները դուրս կազմում:

3. Ցույց տած վեր հենրիկ սրենը համաձայն՝ ովյալ քանակության հեղուկի մեջ լուծվող գաղի ծագութը ունկալու և ճնշումից:

4. Դաշտային թթվածներ լուծվելությունը չէի մեջ 20—ում հավասար է մոտ 30

¹⁾ G. N. Lewis, J. Am. Chem. Soc., 30, 668 (1908):

ամ. 1 լիստի մեջ, Հայվել ջրի մեջ լուծված թթվածնի մոլերի թիվը, յիշե չումը դիպանի մեջ և ողի հետ.

5. Խռչական կփոխվի յեռման կերպը, յիշե 10/0 ջուր ավելացնենք 2) ընթզովին 3) մեթիլ ալիքոնին, 4) սեֆիլ ալիքոնին (մեթիլ ալիքոնը ջրի հետ մնայնութեն յեռացող խառնուրդ չի առնեն):

6. Լը-Շատալիք սպիրութիվ հիման վրա, կամ, ավելի լավ՝ Հենրիկ սրբների և (27) հավասարման միջնորդ ցույց տալ ընդհանուր առմամբ տեմպերատուրի բարձրացման ազդեցությունը գազերի լուծելիության վրա հեղուկներում:

7. Պորոց գազեր ունեն լուծելիության անսուրմալ տեմպերատուրային գործակից, Այսպէս, որինակ, հելիումը, ջրածինը և աղոտ ավելի լավ լուծվում են տաք, բան թւ ցուրտ ջրի մեջ: Ի՞նչ և ցուցում այս Փակտը գազերի լուծման ջերմության վերաբերմամբ:

8. Հայվել Հենրիկ սրբների կրնառանաը թթվածնի համար 4-րդ ինդքի ավալ-ներից:

9. Աժխածնի տեսաբլուրիդի և ջրի մեջ յոդի բաշխման գործակիցը 25°-ում համաստ են:

$$\frac{J_3(\text{CCl}_4)}{J_3(\text{H}_2\text{O})} = 85, 1,$$

գործակից $J_3(\text{CCl}_4)$ և $J_3(\text{H}_2\text{O})$ դա ածխածնի տեսաբլուրիդի և համապատասխանաբար ջրի մեջ լուծված յոդի մոլերի թիվն և Յոդի լուծելիությունը ջրի մեջ հավասար ե 0,034 գ/ր Հայվել յոդի լուծելիությունն ածխածնի տեսաբլուրիդի մեջ, ընդունելով, վոր բաշխման գործակիցը անկախ և կոնցենտրացիայից:

10. Յոդի հագեցած ջրային լուծույթը խառնում են համաստ ծավալով ած-խածնի տեսաբլուրիդի հետ: Հագասաբակառությունը հաստավելուց հետո ածխածնի տեսաբլուրիդը հետացնում են, իսկ ջրային լուծույթը հանում են նորից նույն քա-նակությամբ ածխածնի տեսաբլուրիդով: Հայվել թի ինչ քանակությամբ յոդ և մուռ ջրի մեջ յերբուզ երսարակիցներից հետո:

11. Ջուրը և եթիլացետատը, մասսմբ լուծվելով մեկը մյուսի մեջ, կազմում են յերկու հեղուկ փափ: 40°-ում ջրային շերտը պարանակում և ըստ կշռի 8,88%/₀ եթիլացետատ, իսկ եթիլացետատը շերտը պարանակում և 4%/₀ ջուրը եթիլացետատի գորոշու հաջամը նույն տեմպերատուրամ համաստ ե 186 մմ. Կիրառակազմ Ռատլի սրբները յուրաքանչյուր շերտի հաշվել լուծույթի գործընթաց ընդունանում ըն-շումը:

12. 109 գ ջուր և 50 գ եթիլացետատ 40°-ում խառնում են միմյանց հետ: Հայվել գոյացած շերտերից յուրաքանչյուրի կշռը:

13. Ջուրը և նիտրոբենզոլը գործնականութեն չեն խառնվում միմյանց հետ 100°-ում նիտրոբենզոլի գորոշու հաջամը համաստ ե 20,8 մմ. Ի՞նչ ածխաբլուրում (մասավորապես) կյանու նիտրոբենզոլի և ջրի խառնուրդը: Ի՞նչ հաշվային հա-րաբերությամբ են պարանակվում յերկու հեղուկը դիստիլուտի մեջ:

14. Սատրի բերված աղյուսակում աված են բնագովի և առլուովի գործընթաց հնարիները վրայու ածխաբլուրատուրներում: Գործընթաց նոշումներն արտահայտված են միլ-լիմետրներով:


Տեմպերա-

Բնագով	Տուրուու	առլու C°
760	290	80
1 008	404	90
1 335	557	100
1 770	760	110,7

Բնագույնելով, վոր բենզոլի լուծույթին տոլուոլի մեջ կերառվի յև Ռաուլի սրբնաթը, հաշվել 90° և 100° -ում յետացող լուծույթների բաղադրությունը, նույնպես և յետման տեմպերատուրում այս լուծույթների հետ հավասարակշռության մեջ գտնվող գործընթացությունը Կառուցիլ առլուղը բենզոլ սիստեմի յետման դիտագրամը:

15. Խոչվիսի հարաբերություն գործություն ունի լուծման ջերմության և լուծելիության տեմպերատուրային գործողիքի մեջն Յեթե նյութի լուծելիությունը ինչպես բարձր նույնական է ցած տեմպերատուրներում նույնն է, ապա ի՞նչ կարող է տաել նրա լուծման ջերմության մասին:

16. Կարելի յև ընդունել վոր նախթալինը բենզոլի հետ տալիս և իգեալական լուծույթի նախթալինի հարման տեմպերատուրը հավասար է 80° , հակառակ ջերմությունը՝ $35,6$ կալ/գ: Ցույց տալ վոր 25° -ում նախթալինի լուծելիությունը բենզոլի մեջ պետք է հավասար լինի 708 գ-ի 1000 գ բենզոլի մեջ:



Նկ. 64.

Կարծրացման կետի անկումը, վարը 1000 գ բենզոլի մեջ պարունակում և 1 մոլ լուծված նյութը, ս) նույնը, յիթե 1000 գ բենզոլի մեջ պարունակում և $0,01$ մոլ լուծված նյութը:

Պատասխանն ա) $5,14$, ս) $4,87$, ս) $0,051$.

17. Հաշվիլ նյութի մոլեկուլար կիմիայ, յիթե նրա 5 գ-ը 100 գ բենզոլի մեջ լուծվելիս կարծրացման կետն կլինում է 0 , 65 առանձնանուլ:

18. Հաշվիլ $10^{\circ}/\text{o}-\text{անոց}$ յիշեցնա-շաքարի ջրային լուծույթի նորմալ յետման կետը, ի՞նչ տեմպերատուր ունի յետացող լուծույթից թռչող գործընթացը պարագայում ամփոփն փոքր է, վոր կարելի յև արհամարդեր:

20. 25° -ում յազի լուծելիությունը ջրում հավասար է $0,034$ գ-ի 1 լ. մեջ, 45° -ում՝ $0,065$ գ-ի 1 լ. մեջ, Հաշվիլ լուծման մոլոր ջերմությունը ինչն այս խնդրի լուծման համար մենք կարող ենք ոգտվել (28) հավասարությունը՝ չնայելիս, վոր լուծույթն իցեալական չեն. Ցույց տաս վայ այս խնդրում (28) հավասարման մեջ մուլութինների փակութեն ուստի նկատելի սխալ կատարելու կարելի յև աեղադիր գրանիքներ լիսը մեջ: Ցույց համար ջերմությունը հավասար է 4000 կալ-

բիայի մեկ մոլի համար Բացատրելու թի ինչու լուծման ջերմությունը հավասար չէ հարման ջերմությանը:

22. Սովոր ջրի սոմոտիկ ճնշումը հավասար և մոտավորապես 25 ամֆ.-ի: Հաշվել մետրերով ջրի ույան այն բարձրությունը, վորի ճնշումը կարող և կանգնեցնել մաքուր ջրի դիֆփուզիան կիսաթափանցիկ թաղանթով դեղի ծովի ջուրը:

23. Հաշվել շաքարի (յեղեգնա-շաքարի)— $0,520^{\circ}$ -ում կարծրացող լուծույթի սոմոտիկ ճնշումը:

24. Աղաթթիկի խառնուրդները, վորոնք ավելի կոնցենտրիկ են քան մասնարին յեսացող լուծույթը, միում են ոգում ծույց տալ, թե այս յերմույթն ինչպն և կոռզված այն ֆակտի հետ, վոր գոլորշու ճնշում-բաղադրությունն դիտագրամի վրա դուրսած ճնշման կորը մինիմամ կետ ունի:

25. 64 նկ. ցույց և աված գոլորշու ճնշանց կորերը յերկու միմյանց հետ մուսաք խառնուրդ հեղուկների համար Յենթագրենք, թե ավելա սիստեմի համար հնարավոր են ամեն բաղադրության լուծույթներ Յենթագրենք, թե ինեւրո դազով լըժված փակ տարածության մեջ դրված են տարբեր կոնցենտրացիաների լուծույթներով լցված անոթներու Նրանց միջն գոլորշի փազի միջոցավ դանդաղընն հավատարականություն կհաստատվի, վորովնեակ անոթներից մեկում հեղուկը կուրուցիանա, զոլորշին կդիֆփուզի և կկոնցենտրվի մյուս անոթների միջն ծույց տան վոր N₀ լուծույթը N₁ կամ N₂ բաղադրության լուծույթների ներկայությամբ անկայուն կլինի:

26. 20°-ում, ջրի և բենզոլի խառնուրդի մեջ, բենզոլի շերտը պարունակում և 0,57 գ ջուր 1000 գ բենզոլի միջն թանի վոր ջրի շերտը պարունակում և շատ փոքր քանակությամբ բենզոլ կարելի յենթագույն վոր ջրի գոլորշու պացցիալ ճնշումը խառնուրդի վրա հավասար և մաքուր ջրի գոլորշու ճնշմանը՝ Հաշվել ա) Հենրի որենքի կոնստանտը ջրի համար բենզոլի շերտի միջն օ) բենզոլի պարցիալ ճնշումը բենզոլի շերտի վրա սպավել թառուի որենքից. օ) Բնչ քանակությամբ ջուր պիտի և ավելացնել մաքուր բենզոլին, վորակեազի լուծույթի գոլորշու ընդհանուր ճնշումը մաքուր բենզոլի գոլորշու ճնշմարից 1 մմ ավելի բարձր լինի: Բենզոլի գոլորշու ճնշումը 20°-ում հավասար է 74,5 մմ:

ՑԱՆԿ

ԲՈՒՆԵՐԻՆ Թարգմանության խմբագրի առաջընթացը	5
Հեղինակի առաջընթացը	12
Գտփման միտքորեները, հրանց առշագութեաներն ու	
նշանակությունները C. G. S. սիստեմավ	9
Դրույի I—Առաջ և մոլոկուլ	13
Դրույի II—Մատերիայի կինհոտիկ անությունը Գաղեր	21
Դրույի III—Մատերիայի կինեաիկ անությունը Հեղուկներ	54
Դրույի IV—Մատերիայի ըյուքեղային վիճակը	78
Դրույի V—Թիմբական հավասարակշռության որենքը	102
Դրույի VI—Հավասարակշռությունը մաքուր հյութի տոր- սեր Գաղերի միջն	142
Դրույի VII—Լուծույթներ	155



ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂՂԱԽԱՄՆԵՐ

Խ	Տաղ	Ցաված է	Գետ և լինք
3	հ. 1	խղում	խղում
9	հ. 11	աղջման	աղջման
10	հ. 13	ինչ	ինչ 1
10	հ. 5	վայրկացնել	վայր հայն
14	գ. 3	շրջապատ	մուկակուլը
18	հ. 9	ելեմնոնի	ելեմնոնի
19	գ. 22	վահնցը	վահնցը
25	հ. 17	անդրազառահալով	անդրազառահալով
27	հ. 17	կինեսիկի	կինեսիկ
29	հ. 2	յեղած	յեղած
34	հ. 8	—	—
36	գ. 3	աբուհասումնդ	աբուհասումնդ
71	գ. 7	=K(D-d) 4	= (D-d) 4
84	գ. 9	անտիկոթողից	անտիկոթողից
106	հ. 18	Դալանի	Դալանի
108	գ. 9	0,2	0,02
113	գ. 1	= n ₁ RT ρ _{HJ} ²	— n ₁ RT ρ ² _{HJ}
116	գ. 11	ρ _{HJ}	ρ _{HJ}
116	հ. 1	ρ _{HJ}	ρ _{HJ}
117	գ. 9	ρ _{HJ} ρ ² _{HJ}	ρ _{HJ} ρ ² HJ
120	հ. 5	97	114
126	հ. 1	CpdT	CpdT
137	Փարմուլ (60)	= ΔH K $\left(\frac{1}{T_1} - \frac{1}{T_2} \right)$	= ΔH R $\left(\frac{1}{T_1} - \frac{1}{T_2} \right)$
165	գ. 2	հեղումն	հեղումն
171	գ. 2	—	—
191	գ. 13	= $\frac{1}{T'}$	— T'
197	գ. 15	NCH ₂ COOC ₂ H ₅ + NH ₃ O NCH ₂ COOH + NC ₂ H ₅ OH PVI	NCH ₂ COOC ₂ H ₅ + NH ₃ O NCH ₂ COOH + NC ₂ H ₅ OH PVI
204	հ. 5	RT	— RT
204	հ. 9	VldP	Vld
207	գ. 17	J ₂ (CCl ₄) J ₂ (H ₂ O)	J ₂ (CCl ₄) J ₂ (H ₂ O)

Դաստիարակության Ռ. ՏԱՐԱՎՈՐՈՒ
Սբութեակադեմիայի թագավորական

Հանձնված և արտադրության՝ 15/IX 1938 թ.

Ստորագրված և տպագրության՝ 20/I 1939 թ.

Խղթի չափը 62×94 ս/մ, տիրաժ 1000

13 տպագրության մամուլը. 1 տպագր. մամուլում նիշ՝ 43580, հեղինակին՝ 14¹/₄ մամ.
Գլավիթի լիազոր և 1669 Պատվեր № 406

Գեղհամալսարանի Գրատարականության տպարան, Թերեհան, Տեղյան 72.

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0011372

26 AMPLA

A ^{II}
14931